




ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ
ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

**SUNDAY
BIBLE
READINGS**

Transliterated and Compiled by
Rev. Fr. Daron Stepanian, M.R.Ed

Bloomfield Hills, Michigan
2020



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ
ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ



SUNDAY

BIBLE

READINGS

Դուք նաեւ մոռցեր էք յորդորը, որ ձեզի ուղղուած է՝ իբրեւ որդիներու։-

«Որդեա՛կս, մի՛ արհամարհեր Տիրոջ խրատը, եւ մի՛ վհատիր երբ քեզ յանդիմանէ, որովհետեւ Տէրը երբ կը խրատէ՝ կը նշանակէ թէ կը սիրէ քեզ. երբ կը պատժէ՝ կը նշանակէ թէ քեզ իբր զաւակ կ'ընդունի»։

Ուստի համբերութեամբ ընդունեցէք Աստուծոյ խրատը, գիտնալով որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ։ Կա՞յ զաւակ մը որ իր հօրմէն յանդիմանութիւն ստացած չըլլայ։ Ընդհակառակը, եթէ Աստուած ձեզ ջանդիմանէ, ինչպէս կ'ընէ իր բոլոր որդիներուն, կը նշանակէ՝ թէ իր զաւակները չէք եւ խորթ էք իրեն։ Մեր մարմնաւոր հայրերը երբ մեզ յանդիմանեն, կը դադրի՞նք զիրենք յարգելէ։ Ո՛չ։ Ուրեմն որքա՛ն աւելի եւս հնազանդ պէտք է ըլլանք հոգիներու Զօրը, որպէսզի կեանք ունենանք։ Երկրաւոր հայրերը մեզ կը խրատեն միայն կարճ ժամանակ մը, իրենց ճիշդ դատած ձեւով, մինչ Աստուած կը խրատէ մեր բարիքին համար, որպէսզի հաղորդակից դառնանք իր սրբութեան։ Ճիշդ է որ ռեւէ յանդիմանութիւն նոյն պահուն չ'ուրախացներ, այլ կը տրտմեցնէ. բայց յետոյ՝ անով կրթուածներուն արդար կեանքի մը խաղաղութիւնը կը պարգեւէ։

Ուստի «զօրացուցէ՛ք թուլցած ձեռքերն ու կրթո՛ծունկերը» եւ ձեր կեանքին ընթացքը ուղղեցէք, որպէսզի հաւատքով տկար եղողը չգլորի, այլ՝ ընդհակառակը՝ բժշկուի։

Ջանացէք բոլորին հետ խաղաղ ապրիլ եւ վարել սուրբ կեանք մը, առանց որուն՝ ռեւէ մէկը պիտի չտեսնէ Տէրը։ Ուշադիր հսկեցէք որ ռեւէ մէկը Աստուծոյ շնորհքէն չզրկուի։ Չըլլա՞յ որ մէկը դառնութեան արմատ դառնալով՝ խռովութեան պատճառ ըլլայ եւ շատերը անկէ վարակուին։

Boghos Arakyali Goghme
Yeprayetsineroon Kûrvadz Namagen
(12:5-17)

Took nayevo mortser ek hortorû vor tzedzi ooghvadz e iprev vortineroo.-

“Vortyags, mi arhamarher Diroch khûradû, yev mi vûhadir yerp kez hantimane, vorovhedev Derû yerp gû khûrade gû nûshanage te gû sire kez, yerp gû badzhe gû nûshanage te kez iprev zavag gûntooni.”

Oosdi hamperootyamp ûntoonetsek Asdoodzo khûradû, kidnalov vor hor mû bes gû varvi tsezi hed. Ga zavag mû vor ir hormen hantimanootyoon ûsdatsadz chûlla? Ûnthagaragû, yete Asdvadz tsez chûhantimane, inchbes gûne ir polor vortineroon, gû nûshanage te ir zavagnerû chek yev khort ek iren. Mer marmnavor hayrerû yerp mez hantimanen, gû tatrink zirenk harkele? Voch. Ooremûn vorkan aveli yvûs hûnazant bedk e ûllank hokineroo horû, vorbeszi gyank oonenank. Yergravor hayrerû mez gû khûraden miyayn garj zhamanag mû, irents jisht tadadz tsevov, minch Asdvadz gû khûrade mer parikin hamar, vorbeszi haghortagits tarnak ir sûrpootyan. Jisht e vor voryeve hantimanootyoon nooyin bahoov choorakhatsûner, ayl gû dûerdmetstûne, payts hedo anov gûrtûvadzneroon artar gyanki mû khaghaghootyoonû gû barkeve.

Oosdi “zoratsotsek tooltsadz tserkern oo gûtod dzoongerû” yev tser gyankin ûntatskû ooghetssek, vorbeszi havadkov dûgar yeghoghû chûkûlori, ayl ûnthagaragû pûzhûshgûvi.

Chanatsek polorin hed khaghagh abril yev varel soorp gyank mû, arants voroon voyeve megû bidi chûdesne Derû. Ooshatir hûsgetsek vor voyeve megû Asdoodzo shûnorken chûzûergûvi. Chûlla vor megû tarnootyan armad tarnalov khûrovootyan badjar ûlla yev shaderû ange varagvin.

Չըլլայ որ մէկը Աստուծոյ անհաւատարիմ կամ անոր պարգէնները արհամարհող ըլլայ Եսաւին պէս, որ կերակուրի մը համար իր անդրանկութիւնը ծախեց: Եւ, ինչպէս գիտե՞ք, երբ յետոյ ուզեց հօրը օրհնութիւնը ստանալ՝ մերժուեցաւ, եւ հակառակ իր խնդրանքներուն ու թափած արցունքներուն՝ կացութենէն բան չկրցաւ փոխել:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ Ղուկասի (20:41-21:4)

Ապա Յիսուս անոնց հարցուց.

- Ի՞նչպէս կ'ըսեն թէ Քրիստոս Դաւիթի որդին է, երբ Դաւիթ ինքն իսկ Սաղմոսներու գիրքին մէջ կ'ըսէ.-

«Տէրը ըսաւ իմ Տիրոջս.- Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

Եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ի՞նչպէս ուրեմն անոր որդին է:

Մինչ ամբողջ ժողովուրդը մտիկ կ'ընէր իրեն, Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.

- Զգուշացէ՛ք Օրէնքի ուսուցիչներէն, որոնք կը սիրեն փառաւոր պատմուճաններով շրջիլ, հրապարակներու վրայ մարդոցմէ ողջոյններ ընդունիլ, ժողովարաններու մէջ առաջին աթոռները գրաւել եւ ընթրիքներու ընթացքին՝ պատուոյ տեղերը: Մէկ կողմէ այրիներուն տունները անոնց ձեռքէն կը յափշտակեն, իսկ միւս կողմէ՝ կեղծաւորութեամբ իրենց աղօթքը կ'երկարեն: Անոնց դատապարտութիւնը աւելի խիստ պիտի ըլլայ:

Մինչ Յիսուս իր շուրջը կը դիտէր, տեսաւ մեծահարուստներ, որոնք իրենց նուէրները կը նետէին տաճարի գանձանակին մէջ: Երբ տեսաւ աղքատ այրի մըն ալ, որ երկու լումայ նետեց գանձանակին մէջ, ըսաւ իր աշակերտներուն.

- Վստահ գիտցէ՛ք, որ այդ աղքատ այրին բոլորէն աւելի նետեց գանձանակին մէջ: Միւսները բոլորն ալ իրենց աւելորդ գումարներէն նուիրեցին Աստուծոյ, մինչ անիկա՝ հակառակ կարօտեալ ըլլալուն, իր ամբողջ ապրուստը նետեց:

Chûlla vor megû Asdoodzo anhavadarim gam anor barkevnerû arhamarhogh ûlla Yesavi bes, vor geragoori mû hamar ir antrangootyoonû dzakhets. Yev, inchbes kidek yerp hedo oozets horû orhnootyoonû ûsdanal merzhûvetsav, yev hagarag ir khûntrankneroon oo tapadz artsoonkneroon gatsootenen pan chgûrtsav pokhel.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Ghogasi (20:41-21:4)

Aba Hisoos anonts hartsoots

- Inchbes gûsen te Krisdos Taviti vortin e, yerp Taviti ink isg Saghmosneroo kirkin mech gûse,-

“Derû ûsav im Dirochûs.- Ach goghmûs nûsde, minchev tûshnaminert vodkeroot dag tûnem vorbes badvantan”.

Yete Taviti zayn Der gû goche, inchbes ooremûn anor vortin e? Minch ampoghch zhoghovoortû mûdig gûner iren, Hisoos ir ashagerdneroon ûsav,

- Êzkooshatsek orenki oosootsichneren, vomank gû siren paravor badmoojannerov shûrchil, hûrabaragneroo vûra martotsme voghchunner ûntoonil, zhoghovaranneroo mech arachin atornerû kûravel yev ûntrikneroo ûntatskin badvo degherû. Meg goghme ayrineroon doonerû anonts tserken gû hapûshdagen, isg mouys goghme geghdza-vorootyamp irents aghotkû gergaren. Anonts tadabardootyoonû aveli khisd bidi ûlla.

Minch Hisoos ir shoorchû gû tider, desav medzaharoosdner, voronk irents nûvernerû gû nedeyin dajari kantsanagin mech. Yerp desav aghkad ayri mûn al, vor yergoo looma nedets kantsanagin mech, ûsav ir ashagerdneroon.

- Vûsdah kidtsek, vor ayt aghkad ayrin poloren aveli nedets kantsanagin mech. Mousnerû polorn al irents avelort koomarneren nûviretsin Asdoodzo, minch aniga hagarag garodyal ûllaloon, ir ampoghch abroosdû nedets..

**Պողոս Առաքելի Կողմէ
Երրայեցիներուն Գրուած Նամակէն (13:18-25)**

Աղօթեցէք մեզի համար, որովհետեւ համոզուած ենք թէ մեր խիղճը մաքուր է, եւ կուգենք ամէն բանի մէջ ուղիղը գործել: Մանաւանդ կաղաքեմ որ աղօթէք ինծի համար, որպէսզի կարենամ աւելի շուտ ձեզի վերադառնալ:

Թողխղիւղութեան Աստուածը ձեզի կարողութիւն տայ՝ ամէն տեսակ բարեգործութեամբ իր կամքը կատարելու, որովհետեւ ինքն էր որ մեռելներէն յարուցանեց մեր Տէր Յիսուսը, ան որ իր արիւնով կնքուած յաւիտենական ուխտով Հովուապետ եղաւ ամբողջ հօտին: Աստուած ինչ որ կամենայ՝ թող ներգործէ մեր մէջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ, որուն փառք յաւիտեանս: Ամէն:

Եղբայրներ, կաղաչեմ որ լսէք այս կարճ նամակով տուած յորդորներս: Կուգեմ որ գիտնաք, թէ մեր եղբայրը Տիմոթէոս բանտէն արձակուած է հիմա: Եթէ շուտով մօտս գայ, միասին կու գանք ձեզ տեսնելու:

Ողջոյններս հաղորդեցէք ձեր բոլոր առաջնորդներուն եւ բոլոր հաւատացեալներուն: Բտալիայի եղբայրները կողջունեն ձեզ: Աստուծոյ շնորհքը բոլորիդ հետ ըլլայ: Ամէն:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Ղուկասի (22:24-30)**

Աշակերտներուն մէջ վեճ ծագեցաւ թէ իրենցմէ ո՞վ պիտի նկատուի մեծը: Յիսուս անոնց ըսաւ. - Ազգերու թագաւորները կը տիրեն իրենց ժողովուրդներուն վրայ եւ իշխողները բարերար կը կոչուին իրենց հպատակներուն կողմէ: Բայց ձեր պարագային այդպէս պէտք չէ ըլլայ: Ընդհակառակը, ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ, եւ առաջնորդը՝ սպասաւորին պէս: Ո՞վ է մեծը.

**Boghos Arakyali Goghme
Yeprayetsineroon Kûrvadz Namagen
(13:18-25)**

Aghotetsek mezi hamar, vorovhedev hamozvadz yenk te mer khighjû makoor e, yev goozenk amen pani mech ooghich kordzel. Manavant gaghachem vor aghotek indzi hamar, vorbeszi garenam aveli shood tsezi veratarnal.

Togh khaghaghootyan Asdvadzû tsezi garoghootyoon da amen desag parekordzootyamp ir gamkû gadareloo, vorov-hedev inkûn er vor merelneren harootsanets mer Der Hisoosû, an vor ir arounov gûnkûvadz havidenagan ookhdov Hovvabed yeghav ampoghch hodin. Asdvadz inch vor gû gamena togh nerkordze mer mech Hisoos Krisdosi michotsav, voroon park havidyans . Amen.

Yeghpayrner, gaghachem vor lûsek ays garj namagov dûvadz hortornerûs. Goozem vor kidnak, te mer yeghpayrû Dimoteyos panden artsagvadz e hima. Yete shoodov modûs ka, miyasin gookank tsez desneloo.

Voghchounnerûs haghortetsek tser polor arachnortneroon yev polor havadatsyalneroon. Idalyayi yeghpayrnerû goghchounen tsez.

Asdoodzo shûnorkû polorit hed ûlla. Amen.

**Hisoos Krisdosi Avedaranen Êsd
Ghoogasi (22:24-30)**

Ashagerdneroon mech vej dzaketsav te irentsme ov bidi nûgadvi medzû. Hisoos anonts ûsav.

-Azkeroo takavornerû gû diren irents zhoghovoortneroon vûra yev ishkhoghnerû parerar gû gochvin irents hûbadagneroon goghme. Payts tser barakayin aytbes bedk eh ûlla. Ênthagaragû, tser mechen amenen medzû togh amenen bûzdigin bes ûlla, yev arachnortû ûsbasavorin bes. Ov e medzû?

սեղան բազմո՞ղը թէ սպասաւորը: Անշուշտ որ սեղան բազմողը: Բայց ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ: Դուք միշտ քովս մնացիք փորձութիւններուս ընթացքին, եւ ես ահա կը խոստանամ թագաւորութիւն տալ ձեզի, ինչպէս Հայրս ինծի տալ խոստացաւ: Իմ թագաւորութեանս մէջ իմ սեղանէս պիտի ուտէք ու խմէք եւ պիտի բազմիք գահերու վրայ՝ դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը:

Ճրագալոյծ Ս. Ծննդեան

*Պողոս Առաքեալի Կողմէ
Տիմոսի Գրուած Նամակէն (2:11-15)*

Որովհետեւ Աստուած իր շնորհքը յայտնեց՝ որպէսզի բոլոր մարդիկ փրկուին: Այդ շնորհքը մեզ կը մղէ որ անհաւատ կենցաղէ եւ աշխարհիկ ցանկութիւններէ հեռանանք, զգաստութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ ապրինք այս աշխարհի մէջ, եւ յոյսով սպասենք այն երջանիկ օրուան, երբ մեր մեծ Աստուածն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս իր փառքով պիտի յայտնուի: Որովհետեւ Քրիստոս իր անձը տուաւ մեզի համար, որպէսզի մեզ ազատէ մեր բոլոր անօրէնութիւններէն, եւ մեզ մաքրելով՝ իր սեփական ժողովուրդը դարձնէ, բարի գործերու նախանձախնդիր:

Այս բաները սորվեցուր հաւատացեալներուդ: Քաջալերէ՛ զանոնք եւ ի հարկին յանդիմանէ՛ հեղինակութիւնդ գործածելով, այնպէս՝ որ ոեւէ մէկը քեզ չարհամարիէ:

*Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Մատթէոսի (2:1-12)*

Հերովդէս թագաւորի օրերուն էր, որ Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքին մէջ: Եւ ահա արեւելքէն մոգեր եկան Երուսաղէմ եւ հարցուցին.

- Ո՞ւր է Հրեաներու նորածին թագաւորը. մենք տեսանք անոր աստղը արեւելքի մէջ եւ եկանք երկրպագելու իրեն:

seghan pazmoghû te ûsbasavorû? Anshooshd vor seghan pazmoghû. Payts yes tser mech ûsbasavori bes yem. Took mishd kovûs mûnatsik portsarootyoonneroos ûntatskin, yev yes aha gû khosdanam takavorootyoon dal tsezi, inchbes Hayrûs indzi dal khosdatsav. Im takavorootyans mech im seghanes bidi oodek oo khûmek yev bidi pazmik kaheroo vûra tadeloo hamar Israyeli dasnûyergoo tsegherû.

Jûrakalooyts Soorp Dzûnûntyan

**Boghos Arakyali Goghme Didosi
Kûrvadz Namagen (2:11-15)**

Vorovhedeved Asdvadz ir shûnohrkû haydnets vorbeszi polor martig pûrgûvin. Ayt shûnohrkû mez gû mûghe vor anhavad gentsaghe yev ashkharhig tsangootyoonnere heranank, ûzkasdootyamp, artarootyamp oo parebashdootyamp abrink ays ashkharhi mech, yev hooysov ûsbasenken ayn yerchanig orvan, yerp mer medz Asdvadzn oo pûrgichû Hisoos Krisdos ir parkov bidi haydnûvi. Vorovhedeved Krisdos ir antsû dûvav mezi hamar, vorbeszi mez azade mer polor anorenootyoonneren, yev mez makrelov ir sepagan zhoghovoortû tartsûne, pari kordzeroo nakhantsakhûntir.

Ays panerû sorvetsoor havadatsyalneroot. Kachalere zanonk yev i hargin hantimane heghinagootyoonût kordzadzelov, aynbes vor voyeve megû kez charhamarhe.

**Hisoos Krisdosi Avedaranen Êsd
Madteyosi (2:1-12)**

Herovtes takavori oreroon er, vor Hisoos dzûnav Hûreyasdani Petlehem kaghakin mech. Yev aha arevelken moker yegan Yeroosaghem yev hartsoosin.

-Oor e Hûryaneroon noradzin takavorû? menk desank anor asdghû arevelki mech yev yegank yergûrbakeloo iren.

Երբ Հերովդես թագաւոր լսեց ասիկա՝ վրդովեցաւ, եւ իրեն հետ՝ Երուսաղէմի բոլոր բնակիչները: Կանչեց ժողովուրդի բոլոր աւագ քահանաներն ու Օրէնքի ուսուցիչները եւ հարցուց անոնց, թէ ո՛ր պիտի ծնէր Քրիստոսը:

Անոնք պատասխանեցին.

- Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքին մէջ, որովհետեւ Միքիա մարգարէն այսպէս գրած է.-

«Ղո՛ւն, Բեթլեհէ՛մ, Յուդայի քաղաք, հռչակով նուազ չես Յուդայի միւս քաղաքներէն. որովհետեւ քեզմէ պիտի ելլէ իշխան մը, որ պիտի հովուէ իմ ժողովուրդս՝ Իսրայէլը»:

Այն ատեն Հերովդէս գաղտնաբար իր մօտ կանչեց մոզերը եւ անոնցմէ ստուգեց աստղին երեւելուն ժամանակը: Ապա զանոնք Բեթլեհէմ դրկեց, պատուիրելով.

- Պացէք եւ ստոյգ տեղեկութիւններ քաղելով գտէ՛ք երեխան, եւ երբ գտնէք՝ ինծի իմացուցէք, որպէսզի ե՛ս ալ գամ եւ երկրպագեմ իրեն:

Թագաւորին այս հրահանգը լսելէ ետք, մոզերը մեկնեցան: Անոնք չափազանց ուրախացան, երբ կրկին տեսան այն աստղը, որ արեւելքի մէջ տեսեր էին. եւ ահա աստղը առաջնորդեց զիրենք մինչեւ որ եկաւ ու կեցաւ այն վայրին վրայ ուր երեխան կը գտնուէր: Երբ տուն մտան, տեսան երեխան իր մօրը՝ Մարիամի հետ, եւ մինչեւ գետին խոնարհելով երկրպագեցին մանուկին: Ապա բացին իրենց արկղերը եւ Յիսուսի ընծայեցին իրենց նուէրները՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռ:

Յետոյ ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը, առանց Հերովդէսի հանդիպելու, ինչպէս որ Աստուած երազի մը մէջ հրահանգեց իրենց:

Yerp Herovtes takavor lûsets asiga vûrtovetsav, yev iren hed Yeroosaghemi polor pûnagichnerû. Ganchets zhoghovoorti polor avak kahananern oo Orenki oosootsichnerû yev hartsoots anonts, te oor bidi dzûner Krisdosû.

Anonk badaskhanetsin.

-Hûreyasdani Petlehem kaghakin mech, vorovhedeve Mikya markaren aytbes kûradz e.-

“Toon, Petlehem hootayi kaghak, hûrchagov nûvaz ches Hootayi mouys kaghakneren, vorovhedeve kezme bidi yelle ishkan mû, vor bidi hovve im zhoghovoortûs Israyelû”.

Ayn aden Herovtes kaghdnapar ir mod ganchets mokerû yev anontsme ûsdookets asdghin yereveloon zhamanagû. Aba zanonk Petlehem ghûrgets, badvirelov.

-Katsek yev ûsdooyk deghegootyoonner kaghelov kûdek yerekhan, yev yerp kûdnek indzi imatsootsek, vorbeszi yes al kam yev yergûrbakem iren.

Takavorin ays hûrahankû lûsele yedk, mokerû megnetsan. Anonk chapazants oorakhatsan, yerp gûrgin desan ayn asdghû, vor arevelki mech deser eyin, yev aha asdghû arachnortets zirenk minchev vor yegav oo getsav ayn vayrin vûra oor yerekhan gû kûdnûver. Yerp doon mûdan, desan yerekhan ir morû Maryamin hed, yev minchev kedin khonarhelov yergûrbaketsin manoogin. Aba patsin irents argûgherû yev Hisoosi ûndzayetsin irents nûvernerû vosgi, gûntroog yev zûmoors.

Hedo oorish jumpov katsin irents yergirû, arants Herovtesi hantibeloo, inchbes vor Asdvadz yerazi mû mech hûrahankets irents.

**Պողոս Առաքելի Կողմէ
Տիմոթէի Գրութիւն (2:11-15)**

Որովհետեւ Աստուած իր շնորհքը յայտնեց՝
որպէսզի բոլոր մարդիկ փրկուին: Այդ շնորհքը
մեզ կը մղէ որ անհաւատ կենցաղէ եւ
աշխարհիկ ցանկութիւններէ հեռանանք,
զգաստութեամբ, արդարութեամբ ու բարե-
պաշտութեամբ ապրինք այս աշխարհի մէջ, եւ
յոյսով սպասենք այն երջանիկ օրուան, երբ մեր
մեծ Աստուածն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս
իր փառքով պիտի յայտնուի: Որովհետեւ
Քրիստոս իր անձը տուաւ մեզի համար,
որպէսզի մեզ ազատէ մեր բոլոր
անօրէնութիւններէն, եւ մեզ մաքրելով՝ իր
սեփական ժողովուրդը դարձնէ, բարի
գործերու նախանձախնդիր:

Այս բաները սորվեցուր հաւատացեալներու:
Քաջալերէ՛ զանոնք եւ ի հարկին յանդիմանէ՛
հեղինակութիւնդ գործածելով, այնպէս՝ որ
ոեւէ մէկը քեզ չարհամարիէ:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Մատթէոսի (1:18-25)**

Այսպէս պատահեցաւ Յիսուս Քրիստոսի
ծնունդը: Իր մայրը՝ Մարիամ, նշանուած էր
Յովսէփի հետ, սակայն նախ քան ամուսնու-
թիւնը Մարիամ յղի մնաց Սուրբ Հոգիէն:

Յովսէփ՝ անոր նշանածը, արդար մարդ մը
ըլլալուն՝ չուզեց հանրութեան առջեւ
խայտառակել զայն, այլ խորհեցաւ լռելեայն ետ
ընել իրենց նշանախօսութիւնը: Մինչ այս
մասին կը մտածէր, ահա Տիրոջ Հրեշտակը
երազի մը մէջ երեւցաւ իրեն եւ ըսաւ.

- Յովսէփ, Դաւիթի՛ որդի, մի՛ վախնար
ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ,
որովհետեւ իր մէջ յղացուածը Սուրբ Հոգիէն է:
Որդի մը պիտի ծնի եւ զայն պիտի կոչես
Յիսուս, որովհետեւ անիկա իր ժողովուրդը
իրենց մեղքերէն պիտի փրկէ:

**Boghos Arakyali Goghme Didosi Krvadz
Namagen (2:11-15)**

Vorovhedeved Asdvadz ir shûnohrkû haydnets
vorbeszi polor martig pûrgûvin. Ayt
shûnohrkû mez gû mûghe vor anhavad
gentsaghe yev ashkharhig tsangootyoonnere
heranank, ûzkasdootyamp, artarootyamp oo
parebashdootyamp abrink ays ashkharhi
mech, yev hooysov ûsbasenken ayn yerchanig
orvan, yerp mer medz Asdvadzn oo pûrgichû
Hisoos Krisdos ir parkov bidi haydnûvi.
Vorovhedeved Krisdos ir antsû dûvav mezi
hamar, vorbeszi mez azade mer polor
anorenootyoonneren, yev mez makrelov ir
sepagan zhoghovoortû tartsûne, pari
kordzeroo nakhantsakhûntir.

Ays panerû sorvetsoor havadatsyalneroot.
Kachalere zanonk yev i hargin hantimane
heghinagootyoonût kordzadzelov, aynbes
vor voyeve megû kez charhamarhe.

**Hisoos Krisdosi Avedaranen Êsd
Madteyosi (1:18-25)**

Aysbes badahetsav Hisoos Krisdosi
dzûnoontû. Ir mayrû Maryam, nûshanvadz er
Hovsepi hed, sagayn nakhkan
amoosnootyoonû Maryam hûghi mûnats
Soorp Hokiyeven. Hovsep, anor nûshanadzû,
artar mart ûllaloon choozets hanrootyan
archev khaydaragel zayn, ayl khorhetsav
lûrelyan yed ûnel irents
nûshanakhosootyoonû.

Minch ays masin gû mûdadzer, aha Diroch
Hûreshdagû yerazi mû mech yerevtsav iren
yev ûsav.

-Hovsep, Taviti vorti, mi vakhnar
amoosnanaloo nûshanadzit Maryami hed,
vorovhedeved ir mech hûghatsvadzû Soorp
Hokiyeven. Vorti mû bidi dzûni yev zayn bidi
goches Hisoos, vrovhedeved aniga ir
zhoghovoortû irents meghkeren bidi pûrge.

Այս բոլորը պատահեցան, որպէսզի կատարուի այն ինչ որ Տէրը ըսաւ Եսայի մարգարէին միջոցաւ.-

«Ահա կոյսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի, եւ զայն պիտի կոչեն Էմմանուէլ», որ կը նշանակէ՝ Աստուած մեզի հետ:

Երբ Յովսէփ արթնցաւ, կատարեց ինչ որ Տիրոջ հրեշտակը հրամայեց իրեն եւ ամուսնացաւ իր նշանածին՝ Մարիամի հետ. բայց չարաբերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ զաւակը ծնաւ, եւ զայն Յիսուս կոչեց:

Մերելոց Ս. Ծննդեան

Առաքեալներու Գործերը Գիրքէն
(6:8-8:2)

Ստեփանոս Աստուծոյ շնորհքով եւ զօրութեամբ լեցուն մարդ մըն էր, որ ժողովուրդին մէջ մեծամեծ հրաշքներ եւ նշաններ կը կատարէր ցոյց կու տար: Այդ իսկ պատճառով, Լիպիացիներու, Կիրենացիներու, Աղեքսանդրացիներու, Կիլիկեցիներու եւ Ասիացիներու ժողովարանէն կարգ մը Հրեաներ եկան Ստեփանոսի հետ վիճաբանելու: Սակայն չէին կրնար դէմ դնել անոր իմաստուն եւ Սուրբ Հոգիէն ներշնչուած խօսքերուն: Այն ատեն քանի մը հոգի կաշառեցին, որպէսզի անոնք վկայութիւն տան, ըսելով.

- Անձամբ լսեցինք, որ այս մարդը Մովսէսի եւ Աստուծոյ դէմ հայհոյալից խօսքեր կ'ընէր:

Այս ձեւով գրգռեցին ժողովուրդը, երեցները եւ Օրէնքի ուսուցիչները, եւ Ստեփանոսի վրայ յարձակելով՝ զայն բռնեցին Ատեան բերին: Ապա մէջտեղ բերին սուտ վկաները, որոնք կ'ըսէին.

- Այս մարդը անդադար հայհոյալից խօսքեր կ'ընէ այս սրբավայրին եւ Աստուծոյ Օրէնքին դէմ: Անձամբ լսեցինք որ կ'ըսէր՝ թէ Նազովրեցի Յիսուսը պիտի քանդէ այս տաճարը եւ պիտի փոխէ այն աւանդութիւնները որ Մովսէս մեզի տուաւ:

Ատեանին մէջ նստողները իրենց հայեացքը Ստեփանոսի դարձուցին եւ տեսան անոր դէմքը, որ հրեշտակի դէմքի կը նմանէր:

Ays polorû badahetsan, vorbeszi gadarvi ayn inch vor Derû ûsav Yesayi markareyin michotsav.-

“Aha gooysû bidi hûghana yev vorti mû dzûni, yev zayn bidi gochen Emanoel”, vor gû nûshanage, Asdvadz mezi hed.

Yerp Hovsep artûntsav, gadarets inch vor Diroch hûreshdage hûramayets iren yev amosnatsav ir nûshanadzin Maryami hed. payts chûharaperetsav anor hed, minchev vor antranig zavagû dzûnav, yev zayn Hisoos gochets.

Merelots Soort Dzûnûntyán

Kordzk Arakelots Kirken (6:8-8:2)

Sdepanos Asdoodzo shûnohrkov yev zoroort-yamp letsoon mart mûn er, vor zhoghovoor-tin mech medzamedz hûrashkner yev nûshan-ner gû gadarer tsooyts goodar. Ayt isg badja-rov, Libyatsineroo, Girenatsineroo, Agheksantratsineroo, Giligetsineroo yev Asyatsineroo zhoghovaranen gark mû hûryaner yegan Sdepanosi hed vijapaneloo. Sagayn cheyin gûrnar tem tûnel anor imasdoon yev soorp hokiye nershûnchûvadz khoskeroon. Ayn aden kani mû hoki gasharetsin, vorbeszi anonk vûgayootyoon dan, ûselov.

-Antsamp lûsetsink, vor ays martû Movsesi yev Asdoodzo tem hayhoyalits khosker gûner.

Ays tsevov kûrkûretsin zhoghovoortû, yeretsnerû yev orenki oosootsichnerû, yev Sdepanosi vûra hartsagelov zayn pûrnetsin Adyan perin. Aba mechdegh perin sood vûganerû, voronk gûseyin.

-Ays martû antatar hayhoyalits khosker gûne ays sûrpavayrin yev Asdoodzo orenkin tem. Antsamp lûsetsink vor gûser te Nazovretsi Hisoosû bidi kante ays dajarû yev bidi pokhe ayn avantootyoonnerû vor Movses mezi dûvav.

Adyanin mech nûsdoghnerû irents hayatskû Sdepanosi tartsootsin yev desan anor temkû, vor hûreshdagi temki gû nûmaner.

Քահանայապետը հարցուց Ստեփանոսի.

-Իրա՞նք եմ ըստածները: Եւ անիկա պատասխանեց.

- Եղբայրներ եւ հայրեր, մտի՛կ ըրէք ինծի: Երբ Աբրահամ, մեր հայրը, տակաւին Միջագետք կ'ապրէր նախքան Խառան բնակիլը, Աստուած, որուն կը պատկանի փառքը, երեւցաւ անոր եւ ըսաւ. «Ե՛լ քու երկրէդ, ձգէ՛ քու ազգականներդ եւ եկուր բնակէ այնտեղ՝ որ ցոյց պիտի տամ քեզի»: Այն ատեն Աբրահամ Քաղդէացիներու երկրէն ելաւ եւ եկաւ Խառան բնակեցաւ. իսկ Աբրահամի հօր մահուընէն ետք, Աստուած զայն հոնկէ ալ հանեց եւ փոխադրեց այս երկիրը, ուր հիմա դուք կը բնակիք: Այս երկրին մէջ թիզ մը հող իսկ ժառանգութիւն չտուաւ Աբրահամի. սակայն այս երկիրը որպէս բնակավայր խոստացաւ տալ իրեն եւ իրմէ ետք իր սերունդին, երբ դեռ Աբրահամ զաւակ չունէր: Աստուած այսպէս ըսաւ. «Քու սերունդդ պանդուխտ պիտի ըլլայ օտար երկրի մը մէջ. պիտի ստրկացնեն եւ պիտի չարչարեն զայն, չորս հարիւր տարի: Բայց ես ինքս պիտի դատեմ այն ազգը, որուն ստրուկ պիտի ըլլան անոնք,- կ'ըսէ Աստուած,- որմէ ետք պիտի ելլեն հոնկէ եւ այստեղ պիտի գան զիս պաշտելու համար»: Աստուած թլփա թլփատութեան պատուէրը տուաւ Աբրահամին, որպէս ուխտի նշան: Այնուհետեւ Աբրահամ Բսահակը ծնաւ եւ ութերորդ օրը զայն թլփատեց: Բսահակ Յակոբը ծնաւ ու թլփատեց, եւ Յակոբ՝ տասներկու նահապետները: Յովսէփի եղբայրները իրեն նախանձելով՝ զայն Եգիպտոս գացող կարաւանին ծախեցին: Սակայն Աստուած անոր հետ էր. զայն փրկեց բոլոր նեղութիւններէն, Եգիպտոսի թագաւորին՝ փարաւոնի աչքին զայն բարձրացուց իր իմաստութեամբ, եւ Եգիպտոսի ու փարաւոնի տան վրայ իշխան կարգեց: Ապա երաշտ եղաւ ամբողջ Եգիպտոսի եւ Քանաանի մէջ. սաստիկ սով տիրեց եւ մեր հայրերը ուտելիք չէին գտներ: Յակոբ երբ լսեց թէ Եգիպտոսի մէջ ուտելիք կարելի է ճարել, հոն դրկեց իր զաւակները. ասիկա մեր հայրերուն առաջին այցելութիւնն էր Եգիպտոս:

Kahanayabedû hartsoots Sdepanosi.

-Irav yen ûsvadznerû? Yev aniga badaskhanets.

-Yeghpayrner yev hayrer, mûdig ûrek indzi. Yerp Apraham, mer hayrû, dagavin Michakedk gabrer nakhkan Kharan pûnagilû, Asdvadz, voroon gû badgani parkû, yerevtsav anor yev ûsav, 'Yel koo yergret, tsûke koo azkagannerût yev yegoor pûnage ayndegh vor tsooyts bidi dam kezi'. Ayn aden Apraham Kaghteyatsineroo yergren yelav yev yegav Kharan pûnagetsav, isg Aprahami hor mahvûne yedk, Asdvadz zayn honge al hanets yev pokhatrets ays yergirû, oor hima took gû pûnagik. Ays yergrin mech tiz mû hogh isg jarankootyoon chûdûvav Aprahami, sagayn ays yergirû vorbes pûnagavayr khosdatsav dal iren yev irme yedk ir seroontin, yerp ter Apraham zavag chooner. Asdvadz aysbes ûsav, "Koo seroontût bantookht bidi ûlla odor yergri mû mech, bidi ûsdûrgatsûnen yev bidi charcharen zayn, chors haruor dari. Payts yes inks bidi tadem ayn azkû, voroon ûsdroog bidi ûllan anonk, gûse Asdvadz,- vorme yedk bidi yellen honge yev aysdegh bidi kan zis bashdeloo hamar": Asdvadz tûlpadootyan badverû dûvav Aprahamin, vorbes ookhdi nûshan. Aynoohedev Apraham Isahagû dzûnav yev ooterort orû zayn tûlpadets. Isahag Hagopû dzûnav oo tûlpadets, yev Hagop dasnûyergoo nahabednerû Hovsepi yeghpayrnerû iren nakhantselov zayn Yekibdos katsogh garavanin dzakhe-tsin. Sagayn Asdvadz anor hed er, zayn pûrgets polor neghootyoonneren, Yekibdosi takavoin paravoni dan achkin zayn partsratsoots ir imasdoutyamp, yev yekibdosi oo paravoni vûra ishkan garkets. Aba yerashd yeghav ampoghch Yekibdosi yev Kanaani mech, sasdig sov direts yev mer hayrerû oodelik cheyin kûdner. Hagop yerp lûsets te Yekibdosi mech oodelik gareli e jarel, hon ghûrgets ir zavagnerû, asiga mer hayreroon arachin aytselootyoonn er Yekibdos.

Երկրորդ անգամին, Յովսէփ ինքզինք յայտնեց իր եղբայրներուն, եւ փարաւոնը ճանչցաւ անոր ազգատոհմը: Յովսէփ մարդ դրկեց եւ բերել տուաւ իր հայրը՝ Յակոբը եւ ամբողջ գերդաստանը, ընդամենը եօթանասուն հինգ հոգի: Յակոբ Եգիպտոս իջաւ եւ հոն ալ վախճանեցաւ, թէ՛ ինք եւ թէ՛ մեր հայրերը, եւ բոլորին ալ մարմինները Միւքեմ փոխադրուեցան եւ դրուեցան այն քարայրին մէջ, որ Աբրահամ Միւքեմի մէջ դրամով գնեց Համորի որդիներէն:

Մեր ժողովուրդը աճեցաւ եւ բազմացաւ Եգիպտոսի մէջ, մինչեւ մօտեցաւ այն ժամանակը, երբ Աստուած Աբրահամին տուած իր խոստումը պիտի կատարէր: Ապա Եգիպտոսի վրայ իշխեց արքայական ուրիշ տուն մը, որ Յովսէփի տան վայելած իրաւունքները չճանչցաւ: Նոր փարաւոնը մեր ազգին դէմ չարացաւ եւ մեր հայրերը չարչարեց՝ անոնց մանուկները գետը նետել տալով, որպէսզի մեռնին: Այդ ժամանակ էր որ ծնաւ Մովսէս, Աստուծոյ աչքին շնորհալի մանուկ մը, որ նախ երեք ամիս իր հօրը տունը մեծցաւ, իսկ երբ գետը նետեցին՝ փարաւոնին աղջիկը զայն գտաւ, որդեգրեց եւ մեծցուց: Մովսէս եգիպտական ամբողջ իմաստութեամբ կրթուեցաւ եւ ազդեցիկ եղաւ թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով: Երբ քառասուն տարիքը բոլորեց, որոշեց իր ազգակից Իսրայէլացիներուն վիճակով հետաքրքրուիլ: Եւ տեսնելով որ անոնցմէ մին կ'անիրաւուի, զայրացաւ եւ անիրաւուածին վրէժը առաւ՝ սպաննելով Եգիպտացին: Կը խորհէր թէ իր ազգակիցները ասիկա իմանալով՝ պիտի հասկնան, թէ իր ձեռքով Աստուած պիտի փրկէ զիրենք. բայց անոնք չհասկցան: Յաջորդ օրը հանդիպեցաւ երկու ազգակիցներու, որոնք կը կռուէին, եւ փորձեց զանոնք հաշտեցնել, ըսելով. «Ո՛վ մարդիկ, իրարու եղբայրներ էք, ինչո՞ւ զիրար կ'անիրաւէք»: Իսկ ան որ իր ընկերը կ'անիրաւէր՝ մէկ կողմ հրեց զինք, պատասխանելով. «Ո՛վ քեզ մեր վրայ իշխան եւ դատաւոր կարգեց:

Yergort ankamin, Hovsep inkzink haydnets ir yeghpayrneroon, yev paravonû janchtsav anor azkadohmû. Hovsep mart ghûrgets yev perel dûvav ir hayrû Hagopû yev ampoghch kertasdanû, ûntamenû yotanasoon hink hoki. Hagop Yekibdos ichav yev hon al vakhjanetsav, te ink yev te mer hayrerû, yev polorin al marminnerû Sukem pokhatrûvetsan yev tûrvetsan ayn karayrin mech, vor Apraham Sukemi mech tûramov kûnets Hamori vortineren.

Mer zhoghovoortû ajetsav yev pazmatsav Yekibdosi mech, minchev modetsav ayn jamanagû, yerp Asdvadz Aprahamin dûvadz ir khosdoomû bidi gadarer. Aba Yekibdosi vûra ishkhets arkayagan oorish doon mû, vor Hovsepi dan vayeladz iravoonknerû chûjanchtsav.

Nor paravonû mer azkin tem charatsav yev mer hayrerû charcharets anonts manoognerû kedû nedel dalov, vorbeszi mernin. Ayt zhamanag er vor dzûnav Movses, Asdoodzo achkin shnorhali manoog mû, vor nakh yerek amis ir horû doonû medztsav, isg yerp kedû nedetsin paravonin aghchigû zayn kûdav, vortekrets yev medztsoots. Movses yekibdagan ampoghch imasdootyamp gûrtûvetsav yev aztetsig yeghav te khoskov yev te kordzov. Yerp karasoon darikû polorets, voroshets ir azkagits Israyelatsineroon vijagov hedakûrkûrvil. Yev desnelov vor anontsme min ganiravvi, zayratsav yev aniravvadin vrezhû arav ûsbannelov Yekibdatsin. Gû khorher te ir azkagitsnerû asiga imanalov bidi hasgûnan, te ir tserkov Asdvadz bidi pûrge zirenk, payts anonk chûhasgûtsan. Hachort orû hantibetsav yergoo azkagitsneroo, voronk gû gûrveyin, yev portsets zanonk hashdetsûnel, ûselov. “Ov martig, iraroo yeghpayrner ek, inchoo zirar ganiravek?”. Isg an vor ir ûngerû ganiraver meg goghm hûrets zink, badaskhanelov, “Ov kez mer vûra ishkhann yev tadavor garkets?”

Զի՞ս ալ սպաննել կ'ուզես, ինչպէս երէկ սպաննեցիր Եգիպտացին»: Այս պատասխանին վրայ Մովսէս փախաւ եւ որպէս պանդուխտ ապրեցաւ Մադիամ կոչուած երկրին մէջ, ուր երկու մանչ զաւակ ունեցաւ:

Քառասուն տարիներ ետք, ահա Տիրոջ հրեշտակը իրեն երեւցաւ անապատին մէջ, Սինա լեռան մօտիկը, բոցավառ մորենիի մը մէջէն: Մովսէս նախ զարմացաւ իր տեսածին վրայ. ապա երբ մօտեցաւ աւելի լաւ տեսնելու համար, Տիրոջ ձայնը ըսաւ. «Ես քու հայրերուդ Աստուածն եմ. Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը»: Մովսէս զարհուրած՝ չէր համարձակեր նայիլ: Տէրը անոր հրամայեց. «Կօշիկներդ ոտքերդ հանէ՛, որովհետեւ այն հողը որուն վրայ կը կանգնիս՝ սուրբ է: Տեսայ Եգիպտոսի մէջ իմ ժողովուրդիս չարչարանքները, լսեցի անոնց հեծութեան ձայնը եւ ահա իջայ որ փրկեմ զանոնք: Արդ, եկո՛ւր, քեզ Եգիպտոս պիտի դրկեմ»:

Այսպէս, այն Մովսէսը որ մերժեցին, ըսելով՝ «Ո՛վ քեզ մեր վրայ իշխան եւ դատաւոր կարգեց», Աստուած զայն որպէս իշխան եւ փրկիչ դրկեց այն հրեշտակին միջոցաւ, որ Մովսէսի երեւցաւ մորենիին մէջէն: Մովսէս Եգիպտոսէն հանեց մեր ժողովուրդը, նշաններ եւ հրաշքներ կատարելով թէ՛ Եգիպտոսի մէջ, թէ՛ Կարմիր Ծովէն անցքին եւ թէ՛ անապատին մէջ քառասուն տարիներու ընթացքին: Նոյն Մովսէսն էր որ Իսրայէլացիներուն ըսաւ. «Ձեր մէջէն Աստուած ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ, անոր մտիկ ըրէք»: Մովսէսն էր որ անապատին մէջ հաւաքուած մեր ժողովուրդին համար միջնորդութիւն կ'ըներ մեր հայրերուն եւ հրեշտակին միջեւ, որ Սինա լեռան վրայ անոր հետ խօսեցաւ: Ան էր որ Աստուծոյ կենսատու պատգամները տուաւ մեզի: Սակայն մեր հայրերը չուզեցին Մովսէսի հնազանդիլ, այլ՝ անտեսեցին զինք եւ սկսան Եգիպտոսը փնտռել: Ահարոնին ըսին. «Մեզի աստուածներ շինէ, որպէսզի մեզ առաջնորդեն. որովհետեւ չենք գիտեր թէ ի՛նչ եղաւ այդ Մովսէսը, որ մեզ Եգիպտոսէն հանեց»:

Zis al ûsbannel goozes? inchbes yereg ûsbannetsir Yekibdatsin". Ays badaskhanin vûra Movses pakhav yev vorbes bantookhd abretsav Matyam gochvadz yergrin mech, oor yergoo manch zavag oonetsav.

Karasoon dariner yedk, aha Diroch hûreshdagû iren yerevtsav anabadin mech, Sina leran modigû, potsavar moreniyi mû mechen. Movses nakh zarmatsav ir desadzin vûra, aba yerp modetsav aveli lav desneloo hamar, Diroch tsaynû ûsav, "Yes koo hayreroot Asdvadzn yem, Aprahami, Isahagi yev Hagopi Asdvadzû": Movses zarhooradz cher hamartsager nayil. Derû anor hûramayets, "Goshignert vodkeret hane, vorovhede v ayn hoghû voroon vra gû ganknis soorp e. Desa Yekibdosi mech im zhoghovoortis charcharanknerû, lûsetsi anonts hedzootyan tsaynû yev aha icha vor pûrgem zanonk. Art, yegoor, kez Yekibdos bidi ghûerdem".

Aysbes, ayn Movsesû vor merzhetsin, ûselov "Ov kez mer vûra ishkhan yev tadavor garkets?", Asdvadz zayn vorbes ishkhan yev pûrgich ghûrgets ayn hreshdagin michotsav, vor Movsesi yerevtsav moreniyeen mechen. Movses Yekibdosan hanets mer zhoghovootrû, nûshanner yev hûrashkner gadarelov te Yekibdosi mech, te Garmir dzoven antskin yev te anabadin mech karasoon darineroo ûntatskin. NooyN Movsesûn er vor Israyelatsineroon ûsav, "Tser mechen Asdvadz indzi bes markare mû bidi hane, anor mûdig ûrek". Movsesûn er vor anabadin mech havakvadz mer zhoghovoortin hamar michnortootyoon gûner mer hayreroon yev hreshdagin michev, vor Sina leran vûra anor hed khosetsav. An er vor Asdoodzo gensadoo badkamnerû dûvav mezi. Sagayn mer hayrerû choozetsin Movsesi hûnazantil, ayl andesetsin zink yev ûsgsan Yekibdosû pûndrel. Aharonin ûsin, "Mezi Asdvadzner shine, vorbeszi mez arachnorten, vorovhede v chenk kider te inch yeghav ayt Movsesû, vor mez Yekibdosan hanets".

Նոյն այդ օրերուն հորթի կերպարանքով կուռք մը շինեցին, անոր զոհ մատուցանեցին եւ իրենց ձեռքով շինուած այդ կուռքով կ'ուրախանային: Աստուած ալ երես դարձուց իրենցմէ եւ ձգեց որ երկնային մարմինները պաշտեն: Այդ է պատճառը, որ մարգարեական գիրքը կ'ըսէ.-

«Ո՛վ Բարայէլացիներ, միթէ անապատին մէջ քառասուն տարի ձեր զոհերն ու նուէրները ինծի՞ մատուցանեցիք: Սողոմի վրանը եւ Ռեմֆանի՝ աստղ-աստուծոյն պատկերները շինեցիք եւ անոնց երկրպագութիւն ըրիք: Այդ իսկ պատճառով ձեզ Բաբելոնէն ալ անդին պիտի աքաղեն»:

Քալով Վկայութեան Խորանին, մեր հայրերը զայն անապատին մէջ շինեցին այնպէս ինչպէս Մովսէսի հետ խօսող հրեշտակը պատուիրեց, եւ այն օրինակով՝ որ Մովսէսի ցոյց տրուեցաւ: Մեր հայրերը իրենց կարգին զայն ստացան իրենց հայրերէն եւ Յեսուի օրով իրենց հետ բերին այս երկիրը, որ գրաւեցին այն ազգերէն՝ որոնք Աստուծոյ օգնութեամբ դուրս քշուեցան մեր հայրերուն առջեւէն: Այսպէս, Վկայութեան Խորանը հասաւ մինչեւ Դաւիթի օրերը: Դաւիթ Աստուծոյ հաճութիւնը շահեցաւ եւ ուզեց յարմար վայր մը գտնել Յակոբի Աստուծոյն տուն մը կանգնելու, եւ Սողոմոն այս տաճարը շինեց Աստուծոյ համար: Սակայն բարձրեալն Աստուած ձեռագործ տաճարներու մէջ չէ որ կը բնակի, ինչ որ մարգարէն ալ կ'ըսէ.-

«Երկինքն է իմ աթոռս, իսկ երկիրը՝ ոտքերուս պատուանդանը: Ի՞նչպիսի տուն պիտի շինեք ինծի համար,- կ'ըսէ Տէրը,- կամ ո՞ր պիտի ըլլայ իմ հանգստավայրս. Չէ՞ որ այս բոլորը իմ ստեղծածներս են»:

Ի՛նչքան յամառ էք դուք, որ բնաւ չէք զղջար եւ Աստուծոյ կանչը չէք լսեր, եւ այսպէս միշտ Սուրբ Հոգիին կը հակառակիք, ինչպէս ձեր հայրերը կ'ընէին անցեալին: Եղա՞ւ մարգարէ մը որ ձեր հայրերը չհալածեցին:

Nooyñ ayt oreroon horti gerbarankov goork mû shinetsin, anor zoh madootsanetsin yev irents tserkov shinvadz ayt goorkov goorakhanayin. Asdvadz al yeres tartsoots irentsme yev tsûkets vor yergnayin marminnerû bashden. Ayt er badjarû, vor markareyagan kirkerû gûse,-

“**Ov** Israyelatsiner, mite anabadin mech karasoon dari tser zohern oo nûvernerû indzi madootsanetsik?

Moghoki vranû yev Remfani asdghû Asdoodzooyñ badgernerû shinetsik yev anonts yergûgbakootyoon ûrik. Ayt isg badjarov tsez Papelonon al antin bidi aksorem”.

Kalov Vûgayootyan khoranin, mer hayrerû zayn anabadin mech shinetsin aynbes inchbes Movsesi hed khosogh hreshdagû badvirets, yev ayn orinagov vor Movsesi tsooyts dûrvetsav. Mer hayrerû irents garkin zany ûsdatsan irents hayreren yev Hesooiy orov irents hed perin ays yergirû, vor kravetsin ayn azkeren voronk Asdoodzo oknootyamp toors kûshvetsan mer hayreroon archeven. Aynbes, Vûgayootyan Khgoranû hasav minchev Taviti orerû. Tavit Asdoodzo hajootyoonû shahetsav yev oozets harmar vayr mû kûdnel Hagopi Asdoodzooyñ doon mû gankneloo, yev Soghomon ays dajarû shinets Asdoodzo hamar. Sagayn partsyaln Asdvadz tserakordz dajarneroon mech che vor gû pûnagi, inch vor markaren al gûse.

- “**Yerginkn** e im ators, isg yergirû vodkeroos badvantânû. Inchbisi doon bidi shinek indzi hamar? - gûse Derû,- gam oor bidi ûlla im hankûsdavayrûs? che vor ays polorû im ûsdegdhdzadzners yen?”.

Inchkan hamar ek took, vor pûnav chek zûghchar yev Asdoodzo ganchû chek lûser, yev aysbes mishd Soorp Hokiyin gû hagaragik, inchbes tser hayrerû gûneyin antsyalin. Yeghav markare mû vor tser hayrerû chûhaladzetsin?

Անոնք սպաննեցին բոլոր այն մարգարէները, որոնք կանուխէն պատմեցին Արդարին գալուն մասին. այն Արդարին, որ դուք ձեր ձեռքով մահուան դատապարտեցիք եւ սպաննեցիք: Կը պարծենաք որ հրեշտակներու ձեռքով ստացաք Օրէնքը, եւ սակայն բնաւ չկատարեցիք զայն:

Այս խօսքերը լսելով, ներկաները ներքնապէս զայրացան եւ սկսան իրենց ականները կրճտել անոր դէմ: Մինչ Ստեփանոս, Սուրբ Հոգիով լեցուած, աչքերը երկինք բարձրացուց եւ տեսաւ զԱստուած իր ամբողջ փառքով, ինչպէս նաեւ Յիսուսը՝ Աստուծոյ աջին կանգնած, եւ ըսաւ.

- Ահա բացուած է երկինքը, եւ կը տեսնեմ Մարդու Որդին որ Աստուծոյ աջին կանգնած է: Ատեան գտնուողները մեծ աղաղակ բարձրացուցին, զոցեցին իրենց ականջները եւ բոլորը միասին անոր վրայ յարձակեցան: Յետոյ զայն քաղաքէն դուրս հանելով՝ սկսան քարկոծել: Վկաները իրենց թիկնոցները կը յանձնէին երիտասարդի մը, որ Սօդոս կը կոչուէր: Մինչ անոնք կը քարկոծէին, Ստեփանոս այսպէս կ'աղօթէր.

- Տէ՛ր Յիսուս, ընդունէ՛ իմ հոգիս:

Յետոյ ծունկի եկաւ եւ բարձրաձայն աղաղակեց.

- Տէ՛ր, ներէ՛ իրենց այս մեղքը:

Եւ հազիւ ըսած՝ մահուամբ աչքերը փակեց:

Ստեփանոսի քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սօդոսն էր:

Նոյն օրը Երուսաղէմի եկեղեցւոյ դէմ մեծ հալածանք սկսաւ, որուն հետեւ հետեւանքով՝ բացի առաքեալներէն բոլոր միւսները ցրուեցան Հրէաստանի եւ Սամարիայի գիւղերը: Իսկ քանի մը բարեպաշտներ Ստեփանոսի մարմինը տարին թաղեցին, մեծ կոճ ընելով անոր վրայ:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (12:24-26)***

Ահա Մարդու Որդին փառաւորուելու ժամը հասաւ:

Anonk ûsbannetsin polor ayn markarenerû, voronk ganookhen badmetsin Artarin kaloon masin, ayn Artarin, vor took tser tserkov mahvan tadabardetsik yev ûsbannetsik. Gû bardzenak vor hreshdagneroo tserkov ûsdatsak Orenkû, yev sagayn pûnav chûgadaretsik zayn.

Ays khoskerû lûselov, nerganerû nerknabes zayratsan yev ûsgûsan irents agranerû gûjûrdel anor tem. Minch Sdepanos, Soorp Hokiyov letsvadz, achkerû yergink partsatsoots yev desav zAsdvadz ir ampoghch parkov, inchbes nayev Hisoosû Asdoodzo achin ganknadz, yev ûsav,

-Aha patsvadz e yerginkû, yev gû desnem Martoo Vortin vor Asdoodzo achin ganknadz e.

Adyan kûdnûvoghnerû medz aghaghag partsratsootsin, kotsetsin irents aganchnerû yev polorû miyasin anor vûra hartsagetsan. Hedo zayn kaghaken toors hanelov ûsgûsan kargodzel. Vûganerû irents tignotsnerû gû hantsneyin yeridasarti mû, vor Soghos gû gochver.

Minch anonk gû kargodzeyin, Sdepanos aysbes gaghoter.

-Der Hisoos, ûntoone im hokis.

Hedo dzoongi yegav yev partsratsayn aghaghagets, -Der nere irents ays meghekû.

Yev haziv ûsadz mahvamp achkerû pagets.

Sdepanosi kargodzoomû bahanchoghneren megûn al Soghosûn er.

Nooyin orû Yeroosaghemi yegeghetsvo tem haladzank ûsgsav, voroon hedevankov patsi arakyalneren polor mouysnerû tsûrvetsan Hûreyasdani yev Samaryayi kougherû. Isg kani mû parebashdner Sdepanosi marminû darin taghetsin, medz godz ûnelov anor vûra.

***Hisoos Krisdosi Avedaranen Êsd
Hovhannesi (12:24-26)***

Aha Martoo Votiyin paravorveloo zhamû hasav.

Վստահ զիտցեք, որ եթէ ցորենի հատիկը հողին մէջ չիյնայ եւ չմեռնի, ինք որպէս առանձին հատիկ կը մնայ, իսկ եթէ մեռնի՝ բազմաթիւ հատիկներ կու տայ: Ով որ իր անձը կը սիրէ՝ կը կորսնցնէ զայն, իսկ ով որ իր անձը կ'անտեսէ այս աշխարհի վրայ՝ զայն յաւիտենական կեանքին համար պահած կ'ըլլայ: Ով որ ուզէ ինծի ծառայել՝ պէտք է ինծի հետեւի, եւ ինծի ծառայողը պիտի ըլլայ ինձ ուր ես կը գտնուիմ: Եւ Հայրս պիտի պատուէ ինծի ծառայողը:

Երրորդ Օր Ս. Ծննդեան

**Պօղոս Առաքեալի Կողմէ
Երրայեցիներուն Գրուած Նամակէն
(1:1-12)**

Անցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ: Աստուած զինք ամէն բանի ժառանգորդ կարգեց եւ անոր միջոցաւ էր որ տիեզերքը ստեղծեց: Որդին, Հօրը փառքին լոյսը եւ անոր էութեան ճշգրիտ պատկերը, որ իր խօսքին զօրութեամբ տիեզերքը կը պահէ, իր անձով մեր մեղքերը սրբելէ ետք՝ երկինքի մէջ նստաւ: Աստուծոյ՝ Գերագոյն Զօրութեան, աջ կողմը:

Անիկա շատ աւելի բարձր է հրեշտակներէն, ինչպէս Աստուծմէ իրեն տրուած գերազանց անունը ցոյց կու տայ. որովհետեւ ո՞ր մէկ հրեշտակին երբեւիցէ Աստուած ըսաւ. «*Դուն իմ որդիս ես, այսօր քեզ ծնայ*»: Կամ ո՞ր մէկ հրեշտակին ըսաւ. «*Ես անոր հայր պիտի ըլլամ եւ անիկա՝ ինծի որդի*»: Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին աշխարհ կը դրկէր, ըսաւ. «*Աստուծոյ բոլոր հրեշտակները թող պաշտեն զայն*»:

Աստուած իր հրեշտակներուն մասին խօսած ատեն՝ կ'ըսէ.-

«*Աստուած իր հրեշտակները ստեղծեց որպէս պատգամաւոր հոգիներ, եւ իրեն ծառայողները՝ կրակի բոցի պէս*»:

Միևչոյեւ Որդիին կ'ըսէ.-

Vûsdah kidtsek, vor yete tsoreni hadigû hoghin mech china yev chûmerni, ink vorbes arantsin hadig gû mûna, isg yete merni pazmativ hadigner gooda. Ov vor ir antsû gû sire gû gorsûntsûne zayn, isg ov vor ir antsû gandese ays ashkharhin vûra zayn havidenagan gyankin hamar bahadz gûlla. Ov vor ooze indzi dzarayel bedk e indzi hedeve, yev indzi dzarayoghû bidi ûlla hon oor yes gû kûdnûvim. Yev Hayrûs bidi badve indzi dzarayoghû.

Yerort Or Soorp Dzûnûntyan

**Boghos Arakyali Goghme
Yeprayetsineroon Kûrvadz Namagen
(1:1-12)**

Antsyalin pazmativ ankamner yev pazmativ gerbov Asdvadz mer hayreroon khosetsav markareneroo michotsav. Asdvadz zink amen pani zharankort garkets yev anor michotsav er vor diyezerkû ûsdegdhdzets. Vortin, Horû parkin louysû yev anor eyootyan jshkrid badgerû, vor ir khoskin zorootyamp diyezerkû gû bahe, ir antsov mer meghkerû sûrpele yedk yerginki mech nûsdav Asdoodzo Kerakouyn zorootyan, ach goghmû.

Aniga shad aveli partsûr e hûreshdagneren, inchbes Asdoodzme iren dûrvadz kerazants anoonû tsooyts gooda, vorovhedev vor meg hûreshdagin yerpevitse Asdvadz ûsav,

“Toon im vortis yes, aysor kez dzûna”. Gam vor meg hûreshdagin ûsav, “Yes anor hayr bidi ûllam yev aniga indzi vorti”. Tartsyal, yerp ir antranig vortin ashkharh gû ghûrger, ûsav “Asdoodzo polor hûreshdagnerû togh bashden zayn”. Asdvadz ir hûreshdagneroon masin khosadz aden gûse,-

“Asdvadz ir hûreshdagnerû ûsdegdhdzets vorbes badkamavor hokiner, yev iren dzarayoghnerû gûragi potsi bes”.

Minchter vortiyin gûse.-

«*Քու աթոռդ, ո՛վ Աստուած, յաւիտենական Է. արդարութեամբ կ'իշխես թագաւորութեանդ վրայ*»:

Արդարութիւնը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա թէ ինչու, ո՛վ Աստուած, քու Աստուածդ ուրախութեան իւղով օծեց քեզ, քու ընկերներէդ աւելի»:

Դարձեալ, ուրիշ տեղ մը Որդիին կ'ըսէ.-

«Դուն, ո՛վ Տէր, սկիզբէն ստեղծեցիր երկիրը: Եւ երկինքը քու ձեռագործդ է: Անոնք պիտի կորսուին. բայց դուն կաս եւ կը մնաս:

Անոնք հազուստի պէս պիտի մաշին. վերարկուի մը պէս պիտի ծալես զանոնք եւ հազուստի մը պէս փոխես: Բայց դուն միշտ նոյնն ես եւ քու տարիներդ վերջ պիտի չունենան»:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ Մատթոսի (2:13-23)

Երբ մոզերը Բեթլեհէմէն մեկնեցան, Տիրոջ հրեշտակը Յովսէփի երեւցաւ երազի մը մէջ եւ ըսաւ.

- Ե՛լ, ա՛ն մանուկն ու անոր մայրը եւ փախիր Եգիպտոս. հո՛ն մնա մինչեւ որ ըսեմ քեզի, որովհետեւ Հերովդէս կը փնտռէ մանուկը՝ զայն սպաննելու համար:

Յովսէփ արթնցաւ, զիշերով առաւ մանուկն ու անոր մայրը եւ գնաց Եգիպտոս, ուր մնաց մինչեւ Հերովդէսի մահը: Այս ձեռով իրականացաւ Տիրոջ խօսքը, Ովսիա մարգարէի բերնով ըսուած. «Եգիպտոսէն կան-
չեցի իմ որդիս»:

Իսկ Հերովդէս, երբ տեսաւ որ մոզերը զինք խաղի բերին, սաստիկ զայրացաւ եւ մարդիկ որկեց, որպէսզի սպաննեն Բեթլեհէմի մէջ եւ անոր շրջակայքը գտնուող բոլոր երեխաները, որոնք երկու տարեկան եւ կամ աւելի փոքր էին, նկատի առնելով Յիսուսի ծննդեան ժամանակը, որ ստուգած էր մոզերէն: Այսպէս իրականացաւ այն՝ ինչ որ Տէրը Երեմիա մար-
գարէին բերնով կ'ըսէ.-

«Գոյժ մը լսուեցաւ Ռամայի մէջ, ողբ, հեծեծանք եւ լացուկոծ դառնագին. Ռաբէլ իր զաւակներուն համար կու լար եւ մխիթարուիլ չէր ուզեր, քանի այլեւս անոնք չկային»:

“Koo atorût, ov Asdvadz, havidenagan e, artarootyamp gishkhes takavorootyanût vûra. Artarootyoonû gû sires yev aniravootyoonû

gades. Aha te inchoo, ov Asdvadz, koo Asdvadzût oorakhootyan yooghov odzets kez, koo ûngerneret aveli”.

Tartsyal oorish degh mû Vortiyin gûse.-

“Toon, ov Der, ûsgizpen ûsdeghdzetsir yergirû, yev yerginkû koo tserakordzût e. Anonk bidi gorsûvin, payts toon gas yev gû mûnas.

Anonk hakoosdi bes bidi mashin, verargooyi mû bes bidi dzalles zanonk yev hakoosdi mû bes pokhes. Payts toon mishd nouynûn yes yev koo darinerût verch bidi choonenan”.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Matdeyosi (2:13-23)

Yerp mokerû Petlehemén megnetsan, Diroch hûreshdagû Hovsepi yerevtsav yerazi mû mech yev ûsav.

-Yel, ar manoogû oo anor mayrû yev pakhir Yekibdos, hon mûna minchev vor ûsem kezi, vorovhedev Herovtes gû pûndre manoogû zayn ûsbanneloo hamar.

Hovsep artûntsav, kisherov arav manoogû yev anor mayrû yev kûnats Yekibdos, oor mûnats minchev Herovtesi mahû. Ays tseovov iraganatsav Diroch khoskû, Ovsiya markareyi pernov ûsvadz “Yekibdosen ganchetsi im vortis”.

Isg Herovtes, yerp desav vor mokerû zink khaghi perin, sasdig zayratsav yev martig ghûrgets, vorbeszi ûsbannen Petlehemí mech yev anor shûrchagaykû kûdnûvogh polor yerekhanerû, voronk yergoo daregan yev gam aveli pokûr eyin, nûgadi arnelov Hisoosi dzûnûntyán zhamanagû, vor ûsdookvadz er mokeren. Aysbes iraganatsav ayn inch vor Derû Yeremya markareyin pernov gûse,-

“Koozh mû lûsvetsav Ramayi mech, voghp, hedzedzank yev latsoogodz tarnakin, Rakel ir zavagneroon hamar goolar yev mûkhitarvil cher oozér, kani aylevs anonk chûgayin”.

Հերովդէսի մահէն ետք, տես Տիրոջ հրեշտակը Եգիպտոսի մէջ Յովսէփի երեւցաւ երազի մը մէջ եւ ըսաւ.

- Ե՛լ, ա՛ն մանուկն ու անոր մայրը եւ վերադարձիր Իսրայէլի երկիրը, որովհետեւ մանուկը սպաննել ուզողները մեռան:

Յովսէփ ելաւ, առաւ մանուկն ու անոր մայրը եւ վերադարձաւ Իսրայէլի երկիրը: Սակայն երբ լսեց որ Արքեդայոսը թագաւորած է Հրէաստանի վրայ՝ իր հօրը Հերովդէսի տեղ, հոն երթալու վախցաւ: Փոխարէնը, երագի մը մէջ իրեն հրամայուածին համաձայն՝ գնաց Գալիլէայի կողմերը եւ եկաւ բնակեցաւ Նազարէթ քաղաքին մէջ, որպէսզի իրականանայ ինչ որ Տէրը կ'ըսէ մարգարէներուն միջոցաւ, թէ Նազովրեցի պիտի կոչուի:

Չորրորդ Օր Ս. Ծննդեան

**Պողոս Առաքեալի Կողմէ
Գաղատացիներուն Գրուած Նամակէն
(4:1-7)**

Բայց զիտցէ՛ք նաեւ, թէ ժառանգորդ մը թելետ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի խնամակալներու եւ հոգաբարձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակակէտը: Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհի զրկեց իր Որդին, որ կնոջմէ մը ծնաւ եւ Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Աբբա», այսինքն «Հայր» կը կոչենք: Ուստի՝ այլեւս ծառայ չէք, այլ՝ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

Herovtesi mahen yedk, aha Diroch hûreshdagû Yekibdosi mech Hovsepi yerevtsav yerazi mû mech yev ûsav,

-Yel, ar manoogû oo anor mayrû yev veratartsir Israyeli yergirû, vorovhedev manoogû ûsbannel oozoghnerû meran.

Hovsep yelav, arav manoogû oo anor mayrû yev veratartsav Israyeli yergirû. Sagayn yerp lûsetsin vor Arkeghayosû takavoradz e Hûryasdani vûra ir hor Herovtesi degh, hon yertaloo vakhtsav. Pokharenû, yerazi mû mech iren hramayvadin hamatsayn kûnats Kalilyayi goghmerû yev ygav pûnagetsav Nazaret kaghakin mech, vorbeszi iraganana inch vor Derû gûse markareneroo michotsav, te Nazovretsi bidi gochvi.

Chorort Or Soorp Dzûnûntyan

**Boghos Arakyali Goghme
Kaghdatsineroon Kûrvadz Namagen
(4:1-7)**

Payts kidtsek nayeve, te zharankort mû tebed ampoghch zharankootyan isgagan derûn e, payts vorkan aden vor anchapahas e darperootyoon chooni dzaraye mû, kani khûnamagalneroo yev hokapartsooneroo yentaga e, minchev hasni ir horû voroshadz zhamanagagedû. Nooynûn e mer al barakan. Vorkan aden vor hokevorabes anchapahas eyink pûnootyan oozheroon gentargûveyink oo gû dzarayeyink. Payts hima harmar zhamanagû hasadz hamarelov, Asdvdadz ashkarh ghûrgets ir Vortin, vor gûnochme mû dzûnav yev Orenkin dag abretsav, vorbeszi mez Orenkin keroootenen pûrge yev Asdoodzo vortiner tartsûne. Art, voronhedev ir vortinern yenk Asdvdadz mer sirderoon mech ghûrgets ir Vortiyin Hokin, vorov zAsdvdadz “Appa”, aysinkn “Hayr” gû gochenk. Oosdi aylevs dzara chek, ayl vorti, yev kani vortiek Asdoodzo khosdoomû bidi zharankeke.

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ

Մատթեոսի (1:26-38)

Եղիսաբեթի յղութեան վեցերորդ ամսուան, Աստուած Գաբրիէլ հրեշտակը դրկեց Գալիլեայի Նազարեթ քաղաքը, կոյսի մը մօտ, որ նշանուած էր Դաւիթի սերունդէն Յովսէփ անունով մէկու մը հետ: Կոյսին անունը Մարիամ էր: Հրեշտակը Մարիամի գալով ըսաւ.

- Ուրախացի՛ր, շնորհալի՛ կոյս, որովհետեւ Աստուած քեզի հետ է:

Մարիամ այս խօսքին վրայ խռովեցաւ. կը մտածէր թէ ի՛նչ կը նշանակէ այս ողջոյնը: Սակայն հրեշտակը ըսաւ իրեն.

- Մի՛ վախնար, Մարիա՛մ, որովհետեւ Աստուծոյ շնորհքին արժանացար: Ահա պիտի յղանաս եւ զաւակ մը ծնիս, որ Յիսուս պիտի կոչես: Անիկա մեծ պիտի ըլլայ եւ Բարձրեալին Որդին պիտի կոչուի: Տէր Աստուած անոր պիտի տայ իր հօրը՝ Դաւիթի գահը, եւ անիկա Յակոբի սերունդներուն վրայ յաւիտեանս պիտի թագաւորէ: Անոր թագաւորութիւնը անվախճան պիտի ըլլայ:

Մարիամ ըսաւ հրեշտակին.

- Ատիկա ի՛նչպէս կրնայ պատահիլ, երբ ամուսնացած չեմ:

Հրեշտակը պատասխանեց.

- Սուրբ Հոգին քեզի պիտի գայ եւ Բարձրեալին զօրութիւնը քու վրայ պիտի հանգչի. ուստի ծնելիք զաւակդ սուրբ է եւ Աստուծոյ Որդի պիտի կոչուի: Ահա ազգականդ Եղիսաբեթն ալ, հակառակ ծեր եւ ամուլ ըլլալուն՝ վեցերորդ ամիսն է որ յղի է: Գիտցի՛ր, որ Աստուծոյ համար անկարելի բան չկայ:

Մարիամ ըսաւ.

- Աստուծոյ աղախինն եմ, թող քու ըսածդ ըլլայ: Ապա հրեշտակը գնաց Մարիամի քովէն:

Yeghisapeti hûghootyan vetserort amsoon, Asdvadz Kapriyel hûrshdagû ghûrgets Kalilyayi Nazaret kaghakû, gooyisi mû mod, vor nûshanvadz er Taviti seroonten Hovsep anoonov megoo mû hed. Gooyisin anoonû Maryam er.

Hûresgdagû Maryamin kalov ûsav.-

-Oorakhatsir, shûnorhali gooyis, vorovhedev Asdvadz kezi hed e.

Maryam ays khoskin vûra khûrovetsav, gû mûdadzer te inch gû nûshanage ays voghchouyû. Sagayn hûreshdagû ûsav iren,

-Mi vakhnar, Maryam, vorovhedev Asdoodzo shûnorkin arzhanatsar. Aha bidi hûghanas yev zavag mû dzûnis, vor Hisoos bidi goches. Aniga medz bidi ûlla yev Partsryalin Vortin bidi gochvi. Der Asdvadz anor bidi da ir horû, Taviti kahû, yev aniga Hagopi seroontneroon vûra havidyans bidi takavore. Anor takavorootyoonû anvakhjan bidi ûlla.

Maryam ûsav hûreshdagin,

-Adiga inchbes gûrna badahil, yerp amosnatsadz chem?

Hûreshdagû badaskhanets,

-Soorp Hokin kez bidi ka yev Partsryalin zorootyoonû koo vûrat bidi hankchi, oosdi dzûnelik zavagût soorp e yev Asdoodzo Vortin bidi gochvi. Aha azkaganût Yeghisapetûn al, hagarag dzer yev amool ûllaloon vetserort amisûn e vor hûghi e. Kidtsir, vor Asdoodzo hamar angareli pan chûga.

Maryam ûsav.-

-Asdoodzo aghakhinûn yem, togh koo ûsadzût ûlla.

Aba hûreshdagû kûnats Maryami koven.

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Ghoogasi (1:26-38)**

Հինգերորդ Օր Ս. Ծննդեան

Պողոս Առաքելի Կողմէ

Երբայեցիներուն Գրուած Նամակէն

(12:18-27)

Այն լեռը, որուն մօտեցած էք հիմա, շօշափելի չէ՝ Սիոն լեռան պէս, որ կրակով կը վառէր եւ պատուած էր մշուշով, խաւարով ու մրրիկով. ուր փողը կը հնչէր եւ Աստուծոյ պատգամող ձայնը կը լսուէր: Ժողովուրդը որ այդ ձայնը լսեց՝ կ'աղաչէր որ չլսէ զայն կրկին, որովհետեւ սարսափած էր այն հրամանէն՝ որ կ'ըսէր. «*Ու՛ր որ մօտենայ լեռան, նոյնիսկ անասուն մը, պէտք է քարկոծուելով մեռնի*»: Այնքան ահաւոր էր տեսարանը, որ Մովսէս ալ կ'ըսէր. «*Ձարհուրանքէս կը դողամ*»: Դուք, սակայն, մօտեցած էք Սիոն լեռան, կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմին, հրէշտակներու անհամար բանակներուն: Մօտեցած էք երկինքի մէջ արձանագրուած Աստուծոյ անդրանիկ զաւակներու ուրախական հաւաքոյթին. Աստուծոյ, որ բոլորին դատաւորն է, կատարելութեան հասած արդարներու հոգիներուն, Նոր Ուխտի միջնորդին՝ Յիսուսի եւ անոր թափուած արիւնին, որ լաւագոյն արդարութիւն մը կը պահանջէ, քան Աբէլի արիւնը:

Զգոյշ եղէք, որ չըլլայ թէ մերժէք Աստուծոյ խօսքը լսել, որովհետեւ եթէ անոր հրամանները մարդոց փոխանցող Մովսէսին չհնազանդողները ազատում չունեցան, մենք բնա՛ւ ազատում չենք ունենար՝ եթէ կոնակ դարձնենք Աստուծոյ, որ երկինքէն կը խօսի մեզի: Անոր ձայնը երկիրը շարժեց այն ատեն, իսկ հիմա կը մնայ իր խոստումը, որ կ'ըսէ. -

«*Անգամ մը եւս պիտի շարժեմ. եւ ո՛չ միայն երկիրը, այլ՝ երկինքն ալ*»:

«Անգամ մը եւս» խօսքը ցոյց կու տայ, որ ստեղծագործութեան մէջ խախտած բաները պիտի փոխուին, մինչ անշարժ մնացածները անփոփոխ պիտի մնան:

Boghos Arakyali Goghme
Yeprayetsineroon Kûrvadz Namagen
(12:18-27)

Ayn lerû, voroon modetsadz ek hima, shoshapeli che Sina leran bes, vor gûragov gû varer yev badvadz er mûshooshov, khavarov yev mûrrigov, oor poghû gû hûncher yev Asdoodzo badganogh tsaynû gû lûsver. Zhoghovoortû vor ayt tsaynû lûsets gaghacher vor chûlûse zayn gûrgin, vorovhedev sarsapadz er ayn hûramanen vor gûser, “Ov vor modena leran, nooynisg anasoon mû, bedk e kargodzvelov merni”. Aysinkûn ahavor er desaranû, vor Movses al gûser, “Zarhoo rankes gû togham”. Took sagayn modetsadz ek Siyon leran, gentani Asdoodzo kaghakin, yergnavor Yeroosaghem, hûreshdagneroo anhamar panagneroon. Modetsadz ek yerginki mech artsanakrûvadz Asdoodzo antranig zavagneroo oorakhagan havakooytin, Asdoodzo, vor polorin tadavorn e, gadareloutyan hasadz artarneroo hokineroon, Nor Ookhdi michnortin Hisoosi yev anor tapadz aroynin, vor lavakooyin, artarootyoon mû gû bahanche, kan Apeli arooyinû.

Ûzkoosh yeghek, vor chûla te merzhak Asdoodzo khoskû lûsel, vorovhedev yete anor hramannerû martors pokhantsogh Movsesin chûhûnazantoghnerû azadoom choonetsan, menk pûnav azadoom chenk oonenar yete gûrnag tartsûnenk Asdoodzo, vor yerginken gû khosi mezi. Anor tsaynû yergirû sharzhets ayn aden, isg hima gû mûna ir khosdoomû, vor gûse,-

“Ankam mû yevûs bidi sharzhem, yev voch miyayn yergirû, ayl yerginkûn al”.

“Ankam mû yevs” khoskû tsoyts gooda, vor ûsdeghdzakordzootyan mech khakhdadz panerû bidi pokhvin, minch ansharzh mûnatsadznerû anpopokh bidi mûnan.

Hinkerort Or Soorp Dzûnûntyan

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ

Ղուկասի (1:39-56)

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Զաքարիայի տունը մտնելով՝ Եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ, եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ.

- Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ օրհնեա՛լ է զաւակը որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՛նչ երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինծի կ'այցելէ. որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ք թե՛ղի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ թե՛ղի ըսուածները պիտի կատարուին:

Մարիամ ըսաւ. «Տէրը պիտի գովաբանեմ. Ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծով, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իրադախինհեզութիւնը:

Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինծի, քանի հզօրն Աստուած ինծի համար մեծամեծ գործեր կատարեց. սուրբ է անունը անոր:

Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ մարդոց վրայ:

Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ, ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր խորհուրդներով:

Գահազրկեց արքաները եւ բարձրացուց խոնարհները:

Անօթիները բարիքներով լիացուց, մինչ հարուստները դատարկաձեռն արձակեց:

Պաշտպան եղաւ իր ծառային՝ Բարայէլի, հաւատարիմ մնալով իր ողորմութեան, ինչպէս որ խոստացած էր մեր հայրերուն՝ Աբրահամի եւ անոր զաւակներուն»:

Մարիամ Եղիսաբէթի մօտ շուրջ երեք ամիս մնալէ ետք վերադարձաւ իր տունը:

Nooyñ oreroon Maryam jampa yellelov ajabarankov kûnats Hootayi lernayin shûrchani kaghakneren megû. Hon Zakaryayi doonû mûdnelov Yeghisapeti voghchooyñ dûvav. Yerp Yeghisapet Maryami voghchooyñû lûsets, ir vorovaynin mech yerekhan sharzhetsav, yev Yeghisapet Soorp Hokiyov nershûnchûvadz partsratsayn ûsav, -Gineroo mech orhnyal yes toon yev orhnyal e zavagû vor gû gûres vorovaynit mech. Inch yerchangootyoon, vor Dirochûs mayrû indzi gaytsele, vorovhedev yerp voghchouynû lûsetsi, yerekhas oorakhootyamp sharzhetsav vorovaynis mech. Yerarni kezi vor havadatsir, vorovhedev Asdoodzo goghme kezi ûsvadznerû bidi gadarvin.

Maryam ûsav, - “Derû bidi kovapanem, aha hokis goorakhana Asdoodzmov, im Prgichovs, vorovhedev an desav ir aghakhinin hezootyoonû.

Asge yedk polor seroontnerû yerani bidi dan indzi, kani hûzor Asdvadz indzi hamar medzamedz kordzer gadarets, soorp e anoonû anor.

Polor zhamanagneroon mech voghormootyamp an gû nayi asdvadzavakh martots vûra. Ir pazoogov an zoroootyoon tsooyts dûvav, vohûnchatsoots hûbardnerû irents polor khorhoortnerov.

Kahazûrgets arkanerû yev partsratsoots khonarhnerû.

Anotinerû pariknerov liyatsoots, minch haroosdnerû tadargatsern artsagets.

Bashdban yeghav ir dzarayin Israyeli, havadarim mûnalov ir voghormootyan, inchbes vor khosdatsadz er mer hayreroon Aprahami yev anor zavagneroon”.

Maryam Yeghsapeti mod shoorch yerek amis mûnale yedk veratartsav ir doonû.

Վեցերորդ Օր Ծննդեան
Պօղոս Առաքելի Կողմէ

Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Ghoogasi (1:39-56)

**Թեսաղոնիկեցիներուն Գրուած Նամակէն
(4:13-18)**

Եղբայրնէ՛ր, կ'ուզենք որ մեռածներուն մասին ճշմարտութիւնը գիտնաք, որպէսզի չտրտմիք ուրիշներուն պէս, որոնք ռելէ յոյս չունին: Որովհետեւ, եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ, նոյնպէս ալ կը հաւատանք՝ թէ Աստուած Յիսուսի ձեռքով եւ անոր հետ վերստինկեանքի պիտի բերէ անոնք՝ որ անոր հաւատացին եւ մեռան:

Հետեւաբար՝ կ'ըսենք ձեզի, ինչպէս Տէրը ինք սորվեցուց.- Մեզմէ անոնք որոնք ողջ մնացած կ'ըլլան Տիրոջ գալուստին ատեն, մեռածներէն առաջ պիտի չանցնին: Որովհետեւ երբ հրամանը լսուի, հրեշտակապետը ազդարարէ եւ Աստուծոյ փողը հնչէ, Տէրը ինք երկինքէն պիտի իջնէ, եւ նախ յարութիւն պիտի առնեն անոնք՝ որ Քրիստոսի հաւատացին եւ մեռան: Եւ ապա, մեզմէ անոնք որ այն ատեն դեռ ողջ պիտի ըլլան՝ անոնց հետ միասին ամպերու վրայ երկինք պիտի յափշտակուին Տէրը դիմաւորելու համար. եւ այնուհետեւ Տիրոջ հետ միասինպիտի ըլլանք յաւիտեան:

Ուստի այս մտածումներով քաջալերեցէք իրար:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Յովհաննէսի (11:1-46)**

Յիւանդ մէկը կար, Ղազարոս անունով, որ Բեթանիայէն էր. այն գիւղէն, ուրկէ Էին Մարիամ եւ քոյրը՝ Մարթա: Ասիկա այն Մարիամն էր, որ իւղով օծեց Տիրոջ ոտքերը եւ մազերով սրբեց, եւ որուն եղբայրն էր Ղազարոս, որ հիւանդ էր: Ղազարոսի քոյրերը մարդ զրկեցին Յիսուսի մօտ, որպէսզի անոր ըսեն.

- Տէ՛ր, բու սիրելի բարեկամդ հիւանդ է: Յիսուս երբ լսեց, ըսաւ.

Vetserort Or Dzûnûntyan

**Boghos Arakyali Goghme
Tesaghonigetsineroon Kûrvadz Arachin
Namagen (4:13-18)**

Yeghpayrner, goozenk vor meradzneroon masin jûshmardootyoonû kidnak, vorbeszi chûdûrdmik oorishneroon bes, voronk voveve hooys choonin. Vorovhedev, yete gû havadank te Hisoos merav yev harootyoon arav, nooynbesh al gû havadank te Asdvadz Hisoosi tserkov yev anor hed verûsdin gyanki bidi pere anonk vor anor havadatsin yev meran.

Hedevapar gûsenk tsezi, inchbes Derû ink sorvetsoots,- Mezme anonk voronk voghch mûnatsadz gûllan Diroch kaloosdin aden, meradzneren arach bidi chantsnin. Vorovhedev yerp hûramanû lûsvi, hûreshdagabedû aztarare yev Asdoodzo poghû hûnche, Derû ink yerginken bidi ichne, yev nakh harot-yoon bibi arnen anonk vor Krisdosi havadatsin yev meran. Yev aba, mezme anonk vor ayn aden ter voghch bidi ûllan anonts hed miyasin amberoo vûra yergink bidi hapsdagvin Derû timavoreloo hamar, yev aynohedev Diroch hed miyasin bidi ûllank havidyan.

Oosdi ays mûdadzoomnerov kachaleretsek irar.

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (11:1-46)**

Hivant megû gar, Ghazaros anoonov, vor Petanyayen er, ayn kyoughen oorge eyin Maryam yev kooyrû Marta. Asiga ayn Maryamn er, vor yooghov odzets Diroch vodkerû yev mazerov sûrpets, yev voroon yeghpayrûn er Ghazaros, vor hivant er. Ghazarosi kooyrerû mart ghûrgetsin Hisoosi mod, vorbeszi anor ûsen,

-Der, koo sireli paregamût hivant e.

Hisoos yerp lûsets, ûsav,

- Այս հիւանդութիւնը ո՛չ թէ մահուան, այլ Աստուծոյ փառքին պիտի ծառայէ եւ պատճառ պիտի ըլլայ որ Աստուծոյ Որդին փառաւորուի: Յիսուս կը սիրէր զանոնք՝ Մարթան, անոր քոյրը Մարիամը եւ Ղազարոսը: Սակայն հակառակ Ղազարոսի հիւանդութեան լուրը առնելուն, երկու օր եւս մնաց հոն՝ ուր կը գտնուէր: Յետոյ ըսաւ իր աշակերտներուն.

- Եկէք կրկին Հրէաստան երթանք:

Աշակերտները իրեն ըսին.

- Վարդապէ՛տ, Հրէաստանցիները դէռ նոր կ'ուզէին քեզ քարկոծել, հիմա կրկի՞ն հոն կ'երթաւ:

Յիսուս անոնց պատասխանեց.

- Յերեկը տասներկու ժամ չէ՞: Ան որ ցերեկ ատեն կը քալէ՝ չի սայթաքիր, որովհետեւ այս աշխարհի լոյսով իր շուրջը կը տեսնէ: Բայց ան որ զիշեր ատեն կը քալէ՝ կը սայթաքի, որովհետեւ լոյս չունի:

Յիսուս այս խօսքերը ըսելէ ետք՝ աւելցուց.

- Մեր բարեկամը՝ Ղազարոս քնացած է, երթամ արթնցնեմ զինք:

Աշակերտները իրեն ըսին.

- Տէ՛ր, եթէ քնացած է՝ ուրեմն կ'առողջանայ:

Յիսուս Ղազարոսի մահուան ակնարկութիւն կ'ընէր, մինչ աշակերտներուն այնպէս թուեցաւ թէ անոր քնանալուն կ'ակնարկէ: Այն ատեն բացայայտ կերպով ըսաւ.

- Ղազարոս մեռաւ. բայց ես հոն չըլլալուս՝ ձեզի համար ուրախ եմ, որովհետեւ դուք ինծի պիտի հաւատաք: Ուրեմն եկէք իր քով երթանք:

Թովմաս, որ Երկուորեակ կը կոչուէր, ընկերներուն ըսաւ.

- Օ՛ն, եկէք մենք ալ երթանք իրեն հետ մեռնելու:

Երբ Յիսուս Բեթանիա հասաւ, արդէն իսկ Ղազարոս չորս օրէ ի վեր թաղուած էր: Բեթանիա Երուսաղէմի մօտիկ է, միայն երեք քիլոմէթր հեռու: Հրէաներէն շատեր հոնկէ եկած էին Մարթայի եւ Մարիամի մօտ, զանոնք մխիթարելու համար իրենց եղբօր մահուան առիթով:

-Ays hivantootyoonû voch te mahvan, ayl Asdoodzo parkin bidi dzaraye yev badjar bidi ûlla vor Asdoodzo Vortin paravorvi.

Hisoos gû sirer zanonk՝ Martan, anor kooyrû Maryamû yev

Ghazarosû. Sagayn hagarag Ghazarosi hivantootyan loorû arneloon, yergoo or yevs mûnats hon oor gû kûdnûver. Hedo ûsav ir ashagerdneroon,

-Yegek gûrgin Hûreyasdan yertank.

Ashagerdnerû ûsin iren,

-Vartabed, Hûreyasdantsinerû ter nor goose-yin kez kargodzel, hima gûrgin hon gertas?

Hisoos anonts badaskhanets,

-Tseregû dasnûyergoo zham che? An vor tsereg aden gû kale chi saytakir, vorovhedev ays ashkharhi looysov ir shoorchû gû desne. Payts an vor kisher aden gû kale gû saytaki, vorovhedev looys chooni.

Hisoos ays khoskerû ûsele yedk aveltsoots,

-Mer paregamû Ghazaros kûnatsadz e, yertam artûntsûnem zink.

Ashagerdnerû iren ûsin,

-Der, yete kûnatsadz e ooremûn garoghchana.

Hisoos Ghazarosi mahvan agnargootyoon gûner, minch ashagerdneroon aynbes tûvetsav te anor kûnanaloon gagnarge. Ayn aden patsahayd gerbov ûsav,

-Ghazaros merav, payts yes hon chûllaloos tsezi hamar oorakh yem, vorovhedev took indzi bidi havadak. Ooremûn yegek ir kovû yertank.

Tovmas, vor yergvoryag gû gochver, ûngerneroon ûsav,

-On, yegek menk al yertank iren hed merneloo.

Yerp Hisoos Petanya hasav, arten isg Ghazaros chors ore i ver taghvadz er. Petanya Yeroosaghemi modig er, miyayn yerek kilometûr heroo. Hûryaneren shader honge yegadz eyin Martayi yev Maryami mod, zanonk mûkhitareloo hamar irents yeghporû mahvan aritov.

Մարթա երբ լսեց թէ Յիսուս կու գայ, դիմաւորելու գնաց, մինչ Մարիամ տունը մնաց: Մարթա Յիսուսի ըսաւ.

- Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր՝ եղբայրս չէր մեռներ: Բայց հիմա իսկ գիտեմ, թէ ի՛նչ որ Աստուծմէ խնդրես՝ Աստուած քեզի պիտի տայ:

Յիսուս անոր ըսաւ.

- Եղբայրդ յարութիւն պիտի առնէ:

Մարթա պատասխանեց.

- Գիտեմ որ յարութիւն պիտի առնէ վերջին օրը, յարութեան ատեն:

Յիսուս ըսաւ.

- Ե՛ւ եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինծի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի: ²⁶Իսկ ան որ ողջ է եւ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չմեռնի: Կը հաւատաւ ու ըսածիս:

- Այո՛, Տէ՛ր,- պատասխանեց Մարթա,- կը հաւատամ թէ դուն եւ Քրիստոսը, Աստուծոյ Որդին, որ աշխարհ պիտի գայիր:

Մարթա այս խօսքերը ըսելէ ետք գնաց եւ իր քոյրը՝ Մարիամը կանչեց եւ փսփսալով ըսաւ.

- Վարդապետը եկած է եւ քեզ կը կանչէ:

Մարիամ լսելուն պէս ոտքի ելաւ եւ Յիսուսի մօտ գնաց: Յիսուս տակաւին գիւղ չէր մտած, այլ կեցած էր հոն՝ ուր Մարթա զինք դիմաւորած էր: Տան մէջ գտնուող Հրեաները, որոնք Մարիամը կը մխիթարէին, երբ տեսան որ աճապարանքով ոտքի ելլելով գնաց, հետեւեցան անոր, որովհետ որովհետեւ կարծեցին թէ գերեզման կ'երթայ՝ հոն լալու համար: Մարիամ հասաւ այնտեղ՝ ուր Յիսուս կեցած էր: Հազիւ գայն տեսած, անոր ոտքերուն ինկաւ եւ ըսաւ.

- Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռներ:

Յիսուս երբ տեսաւ Մարիամը որ կու լար, ինչպէս նաեւ անոր հետ եկող Հրեաները որոնք կու լային, հոգեպէս խռովեցաւ եւ յուզուած ըսաւ.

- Ո՞ր թաղեցիք զինք:

Անոնք ըսին.

- Տէ՛ր, եկո՛ւր եւ տես:

Յիսուս լացաւ: Հրեաները իրարու կ'ըսէին.

- Տեսէք թէ ո՛րքան կը սիրէր զայն:

Marta yerp lûsets te Hisoos gooka, timavoreloo kûnats, minch Maryam doonû mûnats. Marta Hisoosi ûsav,

-Der, yete hos ûllayir yeghpayrûs cher merner. Payts hima isg kidem, te inch vor Asdoodzme khûntres Asdvadz kezi bidi da.

Hisoos anor ûsav,

-Yeghpayrût harootyoon bidi arne.

Marta badaskhanets,

-Kidem vor harootyoon bidi arne verchin orû, harootyan aden.

Hisoos ûsav,

-Yes yem harootyoonû yev gyankû. An vor indzi gû havada, tebedev merni՝ bidi abri. Isg an vor voghch e yev indzi gû havada yerpek bidi chûmerni. Gû havadas ûsadzis?.

-Ayo, Der, badaskhanets Marta,- gû havadam te toon yes Krisdosû, Asdoodzo vortin, vor ashkharh bidi kayir.

Marta ays khoskerû ûsele yedk kûnats yev ir kooyrû Maryamû ganchets yev pûspûsalov ûsav,

-Vartabedû yegadz e kez gû ganche.

Maryam lûseloon bes vodki yelav yev Hisoosi mod kûnats. Hisoos dagavin kyoogh cher mûdadz, ayl getsadz er hon oor Marta zink timavoradz er. Dan mech kûdnûvogh hûryanerû, voronk Maryamû gû mûkhitareyin, yerp desan vor ajabarankov vodki yellelov kûnats, hedevetsan anor, vorovhedev gardzetsin te kerezman gerta, hon laloo hamar. Maryam hasav ayndegh oor Hisoos getsadz er. Haziv zayn desadz, anor vodkeroon ingav yev ûsav,

-Der, yete hos ûllayir, yeghpayrûs cher merner.

Hisoos yerp desav Maryamû vor goolar, inchbes nayev anor hed yeghogh Hûryanerû voronk goolayin, hokebes khûrovetsav yev hoozvadz ûsav, -Oor taghetsik zink?.

Anonk ûsin,

-Der, yegoor yev des.

Hisoos latsav. Hûryanerû iraroo gûseyin, - Desek te vorkan gû sirer zayn.

Ոմանք ալ կ'ըսէին.

- Այս մարդը որ կոյրին աչքը բացաւ, չէ՞ր կրնար այնպէս մը ընել՝ որ Ղազարոսը չմեռնէր:

Յիսուս դարձեալ ներքնապէս յուզուեցաւ եւ մօտեցաւ գերեզմանին, որ քարայր մըն էր եւ որուն մուտքին քար մը դրած էին: Յիսուս ըսաւ.

- Վերցուցէ՛ք քարը:

Մարթան, մեռնողին քոյրը, ըսաւ անոր.

- Տէ՛ր, հիմա նեխած պէտք է ըլլայ, որովհետեւ չորս օրէ ի վեր թաղուած է:

Յիսուս Մարթային ըսաւ.

- Քեզի չըսի՞, որ եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես:

Երբ անոնք քարը վերցուցին, Յիսուս աչքերը վեր բարձրացուց եւ ըսաւ.

- Հա՛յր, շնորհակալութիւն քեզի՝ որ լսեցիր զիս: Գիտեմ որ միշտ կը լսես զիս. բայց ինչ որ այժմ կ'ըսեմ՝ շուրջս գտնուող ժողովուրդին համար կ'ըսեմ, որպէսզի անոնք հաւատան թէ դուն դրկեցիր զիս:

Ասիկա ըսելէ ետք՝ բարձր ձայնով կանչեց.

- Ղազարո՛ւս, դո՛ւրս եկուր:

Ու Ղազարոս դուրս ելաւ՝ ոտքերը եւ ձեռքերը պատանքով փաթթուած եւ երեսը վարշամակով ծածկուած: Յիսուս ըսաւ անոնց.

- Քակեցէ՛ք պատանքը եւ ձգեցէք որ երթայ:

Հրեաներէն շատեր, որոնք Մարիամնէնց տունը եկած էին, երբ Յիսուսի կատարած այս հրաշքը տեսան, հաւատացին անոր: Սակայն ուրիշներ գացին Փարիսեցիներուն մօտ եւ պատմեցին ինչ որ Յիսուս կատարեց:

Եօթներորդ Օր Ծննդեան

Պօղոս Առաքելի Կողմէ

Հռոմայեցիներուն Գրուած Նամակէն

(1:1-7)

Ես, Պօղոս, ծառան եմ Քրիստոս Յիսուսի, որ զիս կանչեց իր առաքելաւ ըլլալու եւ պաշտօն տուաւ Աստուծոյ Աւետարանը քարոզելու:

Vomank al gûseyin,

-Ays martû vor gooyrin achkû patsav, cher grnar aynbes mû ûnel vor Ghazarosû chûmerner?

Hisoos tartsyal nerknabes hoozvetsav yev modetsav kerezmanin, vor karayr mûn er yev voroon moodkin kar mû tûradz eyin. Hisoos ûsav,

-Vertsootsek karû.

Martan, mernoghin kooyrû, ûsav anor,

-Der, hima nekhadz bedk e ûlla, vorovhede v chors ore i ver taghvadz e.

Hisoos Martayin ûsav,

-Kezi chûsi, vor yete havadas Asdoodzo parkû bidi desnes?

Yerp anonk karû vertsootsin, Hisoos achkerû ver partsratsoots yev ûsav,

-Hayr, shûnorhagalootyoon kezi vor lûsetsir zis. Kidem vor mishd gû lûses zis, payts inch vor ayzhûm gûsem shoorchûs kûdnûvogh zhoghovoortin hamar gûsem, vorbeszi anonk havadan te toon ghûrgetsir zis.

Asiga ûsele yedk partsr tsaynov ganchets, -Ghasaros toors yegoor.

Oo Ghazaros toors yelav vodkerû yev tserkerû badankov patstûvadz yev yeresû varshamagov dzadzgûvadz.

Hisoos ûsav anonts,

-Kagatsek badankû yev tsûketsek vor yerta.

Hûryaneren shader, voronk Maryaments doonû yegadz eyin, yerp Hisoosi gadaradz ays hûrashkû desan, havadatsin anor. Sagayn oorishner katsin Parisetsineroon mod yev badmetsin inch vor Hisoos gadarets.

Yotnerort Or Dzûnûntyân

Boghos Arakyali Goghme

Hromayetsineroon Kûrvadz Namagen

(1:1-7)

Yes, Boghos, dzaran yem Krisdos Hisoosi, vor zis ganchets ir arakyalû ûllaloo yev bashdon dûvav Asdoodzo Avedaranû karozelelo.

Սուրբ գիրքերուն մէջ արձանագրուած կը գտնէք, թէ Աստուած կանուխէն իր մարգարէներուն միջոցաւ խոստացաւ տալ այս աւետիսը, որ կը վերաբերի իր Որդիին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ իբրեւ մարդ՝ Դաւիթի սերունդէն ծնաւ, բայց որ իբրեւ Աստուծոյ Որդի յայտնուեցաւ, երբ իր Սուրբ Հոգիին զօրութեամբ մեռելներէն յարութիւն առաւ։ Ա՛ն էր որ ինծի առաքեալ ըլլալու շնորհքը տուաւ, որպէսզի իր անունին հաւատալու եւ հնազանդելու հրաւիրեմ բոլոր ազգերը, որոնց կարգին դուք ալ Յիսուս Քրիստոսի պատկանելու կանչուեցաք։

Ողջոյն բոլորիդ որ Հոռոմ կը բնակիք. ձեզի՝ որ Աստուած սիրեց եւ իր սուրբ ժողովուրդը ըլլալու կանչեց։ Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի։

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (2:1-7)***

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու։ Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիայի կառավարիչ Կիրենիոսի օրերուն։ Ամէն մարդ իր ծննդավայր քաղաքը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար։ Յովսէփ, Դաւիթի ցեղէն եւ ազգատոհմէն գատոհմէն ըլլալուն համար, Գալիլեայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը, Դաւիթ թագաւորին ծննդավայրը։ Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր։

Բեթլեհէմի մէջ Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար։

Soorp kirkeroon mech artsanakrûvadz gû kûdnek, te Asdvadz ganookhen ir markareneroon michotsav khosdatsav dal ays avedisû, vor gû veraperi ir Vortiyin mer Der Hisoos Krisdosi, vor iprev mart Taviti seroonten dzûnav, payts vor iprev Asdoodzo Vorti haydnûvetsav, yerp ir Soorp Hokiyyin zorootyamp merelneren harootyoon arav. An er vor indzi arakyal ûllaloo shûnorhkû dûvav, vorbeszi ir anoonin havadaloo yev hûnazanteloo hravirem polor azkerû, voronts garkin took al Hisoos Krisdosi badganeloo ganchûvetsak. Voghchooyn polorit vor Hûrom gû pûnagik, tsezi vor Asdvadz sirets yev ir soorp zhoghovoortû ûllaloo ganchets. Togh Asdvadz mer Hayrû yev Der Hisoos Krisdos shnorhk yev khaghaghootyoon barkeven tsezi.

**Hisoos Krisdosi Avedaranen Êsd
Ghoogasi (2:1-7)**

Ayt oreroon Okosdos gaysûr hûramanakir hanets ir gaysrootyan sahmanneroon mech kûdnûvogh polor pûnagichneroon martahamar gadareloo. Ays arachin martahamarû degghi oonetsav Sooryayi garavarich Girenosi oreroon. Amen mart ir dzûnûntavayr kaghakû gertar ir anoonû artsanakrel daloo hamar. Hovsep, Taviti tseghen yev azkadohmen ûllaloon hamar, Kalilyayi Nazaret kaghaken yelav yev ir anoonû artsanakrel daloo hamar kûnats Hûreyasdani Petlehem kaghakû, Tavit takavorin dzûnûntavayrû. Iren gûngeranar ir nûshanadzû Maryam, vor hûghi er.

Petlehami mech Maryami dzûnûntaperootyan zhamanagû hasav yev dzûnav ir antranig zavagû, vor pattets khantsaroori mech yev tûrav mûsoori mû mech, vorovhedev bantogin mech irents hamar deggh chûgar.

**Պողոս Առաքելի Կողմէ
Կողոսացիներուն Գրուած Նամակէն
(2:8-15)**

Զգոյ՛ջ եղէք, որ ռեւէ մէկը ձեր միտքը չգրաւէ իմաստասիրական տեսութիւններով եւ խաբեբայական սին խօսքերով, որոնք մարդկային աւանդութիւններու եւ բնութեան ոյժերուն վրայ կը հիմնուին եւ ո՛չ թէ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեան վրայ: Որովհետեւ մարդացած Քրիստոսի մէջ կը բնակի աստուածային բնութեան ամբողջ լիութիւնը: Եւ դուք ձեր կեանքին լիութիւնը գտաք՝ միանալով անոր, որ գլուխն է ոգեղէն աշխարհի բոլոր իշխանութիւններուն ու պետութիւններուն: Հաւատքի ճամբով երբ Քրիստոսի միացաք, դուք ձեր մեղքերը թօթափեցիք եւ Քրիստոսի թլփատութեամբ ստացած եղաք սրտի թլփատութիւնը: Մկրտուելով՝ անոր հետ միասին թաղուեցաք, եւ անոր հետ ալ յարութիւն առիք, քանի հաւատացիք Աստուծոյ զօրութեան, որ զայն մեռելներէն յարուցանեց: Քրիստոսի հետ Աստուած ձե՛զ ալ կենդանացուց, քանի դուք հոգեւորապէս մեռած էիք ձեր մեղքերուն պատճառով, որովհետեւ անթլփատ հեթանոսներ էիք: Այո՛, Աստուած ներեց մեր բոլոր յանցանքները եւ իր իշխանութեամբ ջնջեց մեր օրինազանցութեան համար մեզի դէմ արձակուած դատապարտութեան վճիռը, զայն խաչափայտին գամելով: Այսպիսով անիկա զինաթափ ըրաւ ոգեղէն աշխարհի իշխանութիւններն ու պետութիւնները, յայտնապէս խայտառակելով ու պարտութեան մատնելով զանոնք Քրիստոսի ձեռքով, անոր յարութեան ատեն:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Ղուկասի (2:21)**

Ուրը օր ետք, երբ մանուկը թլփատելու ժամանակը հասաւ, Յիսուս կոչեցին զայն, այն անունով որ հրեշտակը տուած էր անոր՝ տակաւին Մարիամի որովայնին մէջ չղացած:

**Boghos Arakyali Goghme
Goghosatsineroon Kûrvadz Namagen
(2:8-15)**

Ûzkoosh yeghek, vor voyeve megû tser midkû chûkûrave imasdasiragan desootyoon-nerov yev khapeyagan sin khoskerov, voronk martgayin avantootyooneroo yev pûnootyan oozheroon vûra gû himnûvin yev voch te Hisoos Krisdosi jûshmarid vartabedootyan vûra. Vorovhedeve martatsadz Krisdosi mech gû pûnagi asdvadzayin pûnootyan ampoghch liyootyoonû. Yev took tser gyankin liyootyoonû kûdak miyanalov anor, vor klookhûn e vokeghen ashkharhi polor ish-khanootyoonneroon oo bedootyoonneroon. Havadki jampov yerp Krisdosi miyatsak, took tser meghkerû totapetsik yev Krisdosi miyatsak, took tser meghkerû totapetsik yev Krisdosi tûlpadootyamp ûsdatsadz yeghak sûrdi tûlpadootyoonû. Mûgûrdûvelov anor hed miyasin taghvetsak, yev anor hed al harootyoon arik, kani havadatsik Asdoodzo zorootyan, vor zayn merelneren harootsanets. Krisdosi hed Asdvadz tsez al gentanatsoots, kani took hokevorabes meradz eyik tser meghkeroon badjarav, vorovhedeve antûlpad hetanosner eyik. Ayo, Asdvadz nerets mer polor hantsanknerû yev ir ishkhanootyamp chûnchets mer orinazantsootyann hamar mezi tem artsagvadz tadabardootyan vûjirû, zayn khachapaydin kamelov. Aysbisov aniga zinatap ûrav vokeghen ashkharhi ishkhanootyoonnern oo bedootyoonnerû, haydnabes khaydaragelov oo bardootyan madnelov zanonk Krisdosi tserkov, anor harootyan aden.

**Hisoos Krisdosi Avedaranen Ûsd
Ghoogasi (2:21)**

Ootû or yedk, yerp manoogû tûlpadveloo zhamanagû hasav, Hisoos gochetsin zayn, ayn anoonov vor hûreshdagû dûvadz er anor, dagavin Maryami vorovaynin mech chûhûghatsadz.

*Անուանակոչութենէն Ետք Առաջին Կիրակի
Պօղոս Առաքեալի Կողմէ
Տիմոթէոսի Գրուած Առաջին Նամակէն
(1:1-11)*

Ես՝ Պօղոս, որ Քրիստոս Յիսուսի առաքեալն եմ՝ մեր փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի հրամանով, քեզի՝ կը գրեմ, հաւատքի հարազատ որդիս, Տիմոթէոս: Թող Հայրն Աստուած եւ մեր Տէրը Քրիստոս Յիսուս շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Երբ Մակեդոնիա կ'երթայի, խնդրեցի որ Եփեսոս մնաս եւ խօսիս քանի մը հոգիներու, որպէսզի դադրին օտար վարդապետութիւններ ուսուցանել եւ չգրադին սկիզբ ու վերջ չունեցող առասպելներով եւ ազգահամարներով, որոնք վէճերու դուռ կը բանան, փոխանակ օգնելու մարդոց հաւատքին եւ Աստուծոյ ծրագրին իրականացման: Գերագոյն պատուիրանը սերն է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէն բղիսած սէրը: Շատեր այս պատուիրաները մոռցած, դատարկ վիճաբանութեանց մէջ մտնելով՝ մեզի Օրէնք սորվեցնելու ելեր են, մինչդեռ ոչ իրենց խօսածը գիտեն, ոչ ալ Աստուծոյ Օրէնքը, որուն մասին այնքան վստահութեամբ կը ճառեն:

Գիտենք թէ Օրէնքը լաւ է՝ երբ պէտք եղած ձեւով գործադրուի: Սակայն գիտենք նաեւ, թէ Օրէնքը արդարներուն համար դրուած չէ, այլ անօրէններուն եւ անհնազանդներուն, ամբարիշտներուն ու մեղաւորներուն, սրբութիւնները ոտնակոխ ընողներուն ու պիղծերուն, հայր ու մայր անարգողներուն, մարդասպաններուն, պռոնկութիւն ընողներուն, արուագէտներուն, մարդ առեւանգողներուն, ստախօսներուն, սուտ երդում ընողներուն, եւ բոլոր այն արարքներուն համար, որոնք հակառակ են իմ փոխանցած առողջ ուսուցումներուս. պատուիրաներու, որոնք համաձայն են երանելի Աստուծոյ փառքը պատմող Աւետարանին, որ եւ հաւատարմօրէն քարոզեցի:

*Anvanagochooten Yedk Arachin Giragi
Boghos Arakyali Goghme Dimoteyosi
Kûrvadz Arachin Namagen (1:1-11)*

Yes Boghos, vor Krisdos Hisoosi arakyalûn yem mer pûrgich Asdoodzo yev mer hoosyû yeghogh Krisdos

Hisoosi hûramanov, kezi gû kûrem, havadki harazad vortis, Dimoteyos. Togh Hayrn Asdvadz yev mer derû Krisdos Hisoos shûnorhk, voghormootyoon yev khaghagh-ootyoon barkeven kezi.

Yerp Magetonya gertayi, khûntretsi vor Yepesos mûnas yev khosis kani mû hokineroo, vorbeszi tatrîn odar vartabed-ootyoonner oosootsanele yev chûzpaghin ûsgizp oo verch choonetsogh arasbelerov yev azkahamarnerov, voronk vejeroo toor gû panan, pokhanag okneloo martots havadkin yev Asdoodzo dzûrakin iraganatsman.

Kerakooy badviranû serûn e, anarad sûrde, makoor khûghjmûdanke yev angeghdz havadken pkûhadz serû. Shader ays badvernerû mortsadz, tadarg vijapanootyants mech mûdnelov mezi Orenk sorvetsûneloo yeler yen, minchter voch irents khosadzû kiden, voch al Asdoodzo Orenkû, voroon masin aynkan vûsdahootyamp gû jaren.

Kidenk te Orenkû lav e yerp bedk yeghadz tsevov kordzatrûvi. Sagayn kidenk nayeve, te Orenkû artarneroon hamar tûrvadz che, ayl' anorenneroon yev anhûnazantneroon, amparishdneroon oo meghavorneroon, sûrpoot-yoonnerû vodnagokh ûnoghneroon oo bighdzeroon, hayr oo mayr anarkoghneroon, martasbanneroon, borngootyoon ûnoghneroon, arvakedneroon, mart arevankoghneroon, sûdakhosneroon, sood yertoomb ûnoghneroon yev polor ayn ararkneroon hamar, voronk hagarag yen im pokhantsadz aroghch oosootsoomneroos, badverneroos, voronk hamatsayn yen yeraneli Asdoodzo parkû badmogh Avedaranin, vor yes havadarmoren karojetsi.

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (2:1-11)**

Յիսուսի Գալիլէա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանա քաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին: Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ.

- Գինի չունին:

- Մա յր, մեզի ի՛նչ,- պատասխանեց Յիսուս,- իմ ժամանակս տակաւին չէ՛ հասած:

Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն.

- Ինչ որ ըսէ ձեզի՝ կատարեցէ՛ք:

Հրեաներու ծիսական մաքրութեան սովորութեան համաձայն, հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիթր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն.

- Կարասները ջուրով լեցուցէք:

Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց.

- Հիմա առէք եւ սեղանապետին տարէք:

Անոնք ալ տարին: Սեղանապետը համտեսեց գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ թէ ուրկէ էր. թէեւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին, գիտէին: Այն ատեն սեղանապետը փեսային ըսաւ.

- Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ, իսկ երբ գինովնան՝ այն ատեն հասարակը, մինչ դուն ընտիր գինին պահէր եւ մինչեւ հիմա:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլէայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց, եւ աշակերտները հաւատացին իրեն:

Այս դէպքէն ետք՝ Յիսուս իր մօրը, եղբայրներուն եւ աշակերտներուն հետ Կափառնաւոմ գնաց եւ քանի մը օր հոն մնաց:

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (2:1-11)**

Hisoosi Kalilya hasneloon yerrort orû harsanik mû gar Gana kaghakin mech, yev Hisoosi mayrû hon er. Hisoos yev ir ashagerdnerûn al hûravirvadz eyin harsanikin. Yerp kinin bagsetsav, Hisoosi mayrû iren ûsav,

-Kini choonin.

-Mayr, mezi inch,- badaskhanets Hisoos,- im zhamanagûs dagavin che hasadz.

Sagayn ir mayrû ûsav ûsbasavorneroon, - Inch vor ûse tsezi gadaretsek.

Hûryaneroo dzisagan makrootyan sovorootyan hamatsayn, hon kare vets garasner gayin, vorontsme yoorakanchooyrû ootsoonen harooyr litr garner. Hisoos ûsav ûsbasavorneroon, -Garasnerû choorov letsootsek.

Yev ûsbasavornerû letsootsin minchev peran. Hedo ûsav anonts,

-Hima arek yev segghanabedin darek. Anonk al darin. Segghanabedû hamdesets kiniyi pokhvadz choorû, payts chûkidtsav te oorge er, teyev ûsbasavornerû, voronk choorû letsootsadz eyin, kideyin. Ayn aden segghanabedû pesayin ûsav,

-Amen mart nakh ûndir kinin gû hûramtsne, isg yerp kinovnan ayn aden hasaragû, minch toon ûndir kinin baher yes minchev hima.

Hisoos ir ays arachin hûrashkû gadarets Kalilyayi Gana kaghakin mech. Hon an ir parkû haydnet, yev ashagerdnerû havadatsin iren.

Ays tebken yedk, Hisoos ir morû, yeghpayrneroon yev ashagerdneroon hed Gaparnayoom kûnats yev kani me or hon mûnats.

*Անուանակոչութենէն Ետք Երկերորդ Կիրակի
Պօղոս Առաքեալի Կողմէ
Տիմոթէոսի Գրուած Առաջին Նամակէն
(4:12-5:10)*

Եւ որպէսզի ռեւէ մէկը քեզ չարհամարիէ՝ երիտասարդ ըլլալուդ համար, հաւատացեալներուդ օրինակ եղիր՝ խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատքովդ եւ մաքուր կենցաղովդ: Մինչեւ գալս հոգ տար իրենց՝ Աստուծոյ խօսքէն կարդալով, յորդորելով զիրենք եւ սորվեցնելով: Անփոյթ մի՛ գտնուիր այն շնորհքին նկատմամբ, որ մարգարեական հոգիով քեզի տրուեցաւ, երբ երեցները ձեռք դրին քու վրայ: Այս ըսածներուս մասին խորիւ եւ զանոնք գործի վերածելու աշխատե, որպէսզի ամէն մարդ յայտնապէս տեսնէ քու յառաջդիմութիւնդ: Ուշադիր եղիր՝ թէ՛ դուն քեզի եւ թէ՛ սորվեցուցածիդ, եւ միշտ ալ այդպէ՛ս մնա, զիտնալով որ այդ ձեւով ո՛չ միայն ինքզինքդ կը փրկես, այլ նաեւ բոլոր քեզ լսողները:

Երբեք խստութեամբ մի՛ յանդիմաներ ծեր մէկը, այլ՝ մեղմութեամբ յորդորէ զայն, ինչպէս հօրդ պիտի ընէիր: Երիտասարդները եղբօրդ տեղը սեպէ, պառաւները՝ մօրդ, իսկ երիտասարդուհիները քրոջդ տեղը դիր եւ ամենայն մաքրութեամբ մօտեցիր անոնց: Պատու եւ խնամէ ա՛յն այրիները՝ որոնք իսկապէս որբեւայրի են: Իսկ երբ այրի մը զաւակներ ու թոռներ ունի, պէտք է անո՛նք նային իրեն, որպէսզի սորվին բարեպաշտութիւնը նախ տան մէջ կիրարկել՝ ծնողներէն իրենց տրուած խնամքին փոխարէն հոգ տանելով անոնց, որովհետեւ Աստուծոյ համար ա՛յդ է իրաւ եւ ընդունելի բարեպաշտութիւնը: Իսկական այրին ան է՝ որ մէկը չունի, յոյսը միայն Աստուծոյ վրայ դրած է եւ զիշերցերէկ աղօթքով ու խնդրանքով կ'անցընէ իր ժամանակը: Իսկ հանգստութիւն ու վայելք փնտռող այրին կենդանի մեռած մըն է արդէն: Այնպիսիներուն այս պատուէրները տուր, որպէսզի անարատ ըլլան:

*Anvanagohootenen Yedk Yergrort Giragi
Boghos Arakyali Dimoteyosi Kûrvadz
Arachin Namagen (4:12-5:10)*

Yev vorbeszi voreve megû kez charhamarhe yeridasart ûllaloot hamar, havadatsyalneroot orinag yeghir khoskovût, varmoonkovût, sirovût, havadkovût yev makoor gentsa-ghovût. Minchev kalûs hok dar irents Asdoodzo khosken gartalov, hortorelov zirenk yev sorvetsûnelov. Anpooyt mi kûdnûvir ayn shûnorhkin nûgadmamp, vor markareyagan hokiyov kezi dûrvetsav, yerp yeretsnerû tserk tûrin koo vûrat. Ays ûsadznerooos masin khorhe yev zanonk kordzi veradzelo ashkhade, vorbeszi amen mart haydnabes desne koo harachtimootyoonût. Ooshatir yeghir te toon kezi yev te sorvetsootsadzit, yev mishd al aynbes mûna, kidnalov vor ayt tsevov voch miyayn inkzinkût gû pûrges, ayl nayev polor kez lûsoghnerû. Yerpek khûsdootyamp mi hantimaner dzer megû, ayl meghmootyamp hortore zayn, inchbes horût bidi ûneyir. Yerdasartnerû yeghport deghû sebe, baravnerû morût, isg yerdasartoohtinerû kûrochût deghû tir yev amenayn makrootyamp modetsir anonts. Badve yev khûname ayn ayrinerû voronk isgabes vorpevayri yen. Isg yerp ayri mû zavagner oo torner ooni, bedk e anonk nayin iren, vorbeszi sorvin parebashdootyoonû nakh dan mech girargel dzûnoghneren irents dûrvadz khûnamkin pokharen hok danelov anonts, vorovhedev Asdoodzo hamar ayt e irav yev ûntooneli parebashdootyoonû. Isgagan ayrin ayn e vor megû chooni, hoosyû miyayn Asdoodzo vûra tûradz e yev kisher-tserag aghotkov oo khûntrankov gantsûne ir zhamanagû. Isg hanksdootyoon oo vayelk pûndrogh ayrin gentani meradz mûn e arten. Aynbisineroon ays badvernerû door, vorbeszi anarad ûllan.

Իսկ մէկը՝ որ իրեններուն եւ մանաւանդ իր ընտանիքի անդամներուն հոգ չի տանիր, այնպիսին իր հաւատքը ուրացած մըն է, շատ աւելի գէշ՝ քան անհաւատ մը:

Այրի սեպէ միայն այն կիները՝ որոնք վաթսունը անց են, մէկ անգամ ամուսնացած, եւ բարի գործերով վկայուած են, այսինքն՝ զաւակներ մեծցուցած, հիւրասէր եղած, ճամբորդ հաւատացեալներուն խոնարհաբար ծառայած, նեղութեան մէջ եղողներուն օգնած, եւ իրենք զիրենք ամբողջութեամբ բարեգործութեան տուած են:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (3:13-21)***

- Ո՛չ որ երկինք ելաւ՝ բացի Մարդու Որդիէն, որ երկինքէն իջաւ, եւ որ երկինքի մէջ է: Եւ ինչպէս Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց՝ ո՛չ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար:

- Եւ դատապարտութիւնը այս է.- Լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են:

Isg megû vor ireninneroon yev manavant ir ûndaniki antamneroon hok chi danir, aynbisin ir havadkû ooratsadz mûn e, shad aveli kesh kan anhavad mû.

Ayri sebe miyayn ayn ginerû voronk vatsoonû ants yen, meg ankam amoos-natsadz, yev pari kordzerov vûgayvadz en, aysinkûn zavagner medztsootsadz, houraser yeghadz, jamport havadatsyalneroon khonarhapar dzarayadz, neghootyan mech yeghoghneroon oknadz, yev irenk zirenk ampoghchootyamp parekordzootyan dûvadz yen.

***Hisoos Krisdosi Avedaranen Êsd
Hovhannesi (3:13-21)***

Voch vok yergink yellav patsi Martoo Vortiyen, vor yerginken ichav, yev vor yerginki mech e. Yev inchbes

Movses bûghintse otsû partsratsoots anabadin mech, nooynbesh al Martoo Vortin bedk e partsrana, vorbeszi anor havadatsoghû havidenagan gyank oonena. Vorovhedev Asdvadz aynkan sirets ashkharhû, vor minchev isg ir miyadzin vortin dûvav, vorbeszi anor havadatsoghû chûgorsûvi, ayl havidenagan gyank oonena. Vorovhedev Asdvadz ir Vortin ashkharh ghûrgets voch te vorbeszi ashkharhû tadabarde, ayl vorbeszi ashkharhû pûrge. Ov vor gû havada anor chi tadabardûvir, isg ov vor chi havadar anor, arten isg tadabardûvadz e, Asdoodzo miyadzin Vortiyin chûhavadaloon hamar. - Yev tadabardootyoonû ays e,- Loosyû ashkharh yegav, payts martig khavarû looyesen aveli siretsin, vorovhedev charootyoon gû kordzeyin. Ov vor char kordz gû gadare gade loosyû yev loosyin chi kar, vorbeszi ir kordzerû chûhaydnûvin. Sagayn ov vor gû gadare inch vor jûshmarid e, loosyin gooka, vobeszi haydni ûlla te ir kordzerû Asdoodzo gamkin hamatsayn kordûvadz yen.

*Անուանակոչութենէն Ետք Երկերորդ Կիրակի
Պօղոս Առաքեալի Կողմէ
Տիմոթէոսի Գրուած Երկրորդ Նամակէն (2:15-19)*

Ջանա՛ Աստուծոյ աչքին ընտիր ըլլալ, այնպիսի մշակ մը՝ որ իր գործերուն համար ամչնալիք բան մը չունի, որպէս մէկը՝ որ ուղիղ կերպով կ'ուսուցանէ Աստուծոյ ճշմարիտ պատգամը:

Հեռո՛ւ կեցիր հաւատքի ճշմարտութիւնները խեղաթիւրող պարապ վիճաբանութիւններէ, որոնք հետզհետէ մարդիկը Աստուծմէ հեռացնելու կը ծառայեն միայն: Այդպիսի խօսքերու ձգած թոյնը քաղցկեղի պէս կը կրծէ մարդս: Այդպիսի խեղաթիւրող վիճասէրներ էին Հիմենէոս եւ Ֆիլետոս, որոնք ճշմարտութենէն շեղեցան եւ շատերու հաւատքը քանդեցին, ըսելով՝ թէ մեռելներու յարութիւնը արդէն տեղի ունեցած է: Բայց Աստուծոյ դրած հաստատուն հիմը կանգուն կը մնայ: Անոր վրայգրուած է. «Տէրը կը ճանչնայ անոնք՝ որոնք իրն են», եւ «Ով որ Տիրոջ անունը կը կրէ՝ թող հեռու մնայ անիրաւ գործերէ»:

*Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Յովհաննէսի (6:39-47)*

Ջիս դրկող Հօրս կամքն է, որ չկորսնցնեմ ո՛չ իսկ մէկը բոլոր անոնցմէ՝ որ ինծի տուաւ, այլ յարուցանեմ զայն վերջին օրը: Հօրս կամքը հետեւեալն է.- Ով որ տեսնէ Ռդին եւ հաւատայ անոր՝ յաւիտենական կեանք պիտի ունենայ, եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը:

Հրեաները սկսան տրտնջալ իրեն դէմ, որովհետեւ ըսած էր՝ թէ «Ես եմ երկինքէն իջած հացը», եւ կը հարցնէին.

- Այս մարդը Յովսէփի որդին՝ Յիսուսը չէ՞, որուն հայրն ու մայրը կը ճանչնանք. ինչպէ՞ս ուրեմն կ'ըսէ՝ «Ես երկինքէն իջայ»:

Յիսուս անոնց պատասխանեց.

- Կը բաւէ՛ դուք ձեզի քրթմնջէք: Ուեւ մէկը չի կրնար ինծի գալ՝ եթէ զիս դրկող Հայրը զայն

*Anvanagochooten Yedk Yerrort Giragi
Boghos Arakyali Goghme Dimoteyosi
Kûrvadz Yergrort Namagen (2:15-19)*

Chana Asdoodzo achkin ûndir ûllal, aynbisi mûshag mû, vor ir kordzeroon hamar amûchnalik pan mû chooni, vorbes megû, vor ooghgh gerbov goosootsane Asdoodzo jûshmarid badkamû.

Heroo getsir havadki jûshmardootyoonû kheghaturogh barab vijapanootyoonnere, voronk hedûzhede martigû Asdoodzme heratsneloo gû dzarayen miyayn. Aytbisi khoskeroo tsûkadz tooynû kaghtskgeghi bes gû gûrdze martûs. Aytbisi kheghaturogh vijaserne eyin Himeneyos yev Filedos, voronk jûshmardootenen sheghetsan yev shaderoo havadkû kantetsin, ûse-lov te merelneroo harootyoonû arten degghi oonetsadz e. Payts Asdoodzo tûradz hasda-doon himû gankoon gû mûna. Anor vûra krvadz e, “Derû gû janchna anonk voronk irn yen”, yev “Ov vor Diroch anoonû gû gûre togh heroo mûna anirav kordzere”.

**Hisoos Krisdosi Avedaranen Ûsd
Hovhannesi (6:39-47)**

Zis ghûrgogh Horûs gamkûn e, vor chûgorsûntsne voch isg megû polor anontsme vor indzi dûvav, ayl harootsanem zayn verchin orû. Horûs gamkû hedevyalûn e,- Ov vor desne Vortin yev havada anor havidenagan gyank bidi oonena, yev yes bidi harootsanem zayn verchin orû.

Hûryanerû ûsgûsan dûrdûnchal iren tem, vorovhedev ûsadz er te “Yes yem yerginken ichadz hatsû”, yev gû hartsûneyin.

-Ays martû Hovsepin vortin Hisoosû che? voroon hayrûn oo mayrû gû janchnank, inchbes ooremûn gûse “Yes yerginken icha”.

Hisoos badaskhanets.

-Gû pave took tsezi kûrtmûnchek. Voyeve megû chi gûrnar indzi kal, yete zis khergogh Hayrû zayn indzi chûpere, yev yes bidi

ինծի չբերէ. եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը: Մարգարէութիւններուն մէջ գրուած է. «Ամէն մարդ Աստուծմէ ստրկած պիտի ըլլայ»: Ով որ Հօրմէս կը լսէ եւ իրմէ կը ստրկի՝ ինծի կու գայ: Ոչ որ Հայրը տեսած է, բացի անկէ՝ որ Աստուծմէ է, որովհետեւ միայն անիկա տեսած է Հայրը: Ու ես կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ինծի հաւատայ յաւիտենական կեանք ունի:

*Անուանակոչութենէն Ետք Չորրորդ Կիրակի
Պօղոս Առաքեալի Կողմէ
Կորնթացիներուն Գրուած Առաջին Նամակէն
(1:25-30)*

Արդարեւ, Աստուծոյ տնօրինութիւնը, որ Յոյներ յիմարութիւն կ'որակեն, իմաստնագոյն է քան մարդկային ոեւէ իմաստութիւն. եւ Աստուծոյ խաչը, որ Հրեաներ տկարութիւն կը համարեն, աւելի զօրեղ է քան մարդկային ամէն զօրութիւն:

Եղբայրնէ՛ր, դուք ձեզմէ դատեցէք. ի՛նչ էիք երբ Աստուած ձեզ կանչեց: Ձեզմէ քանի՞ն իմաստուն, հօգօր կամ ազնուատոհմ էին մարդկային չափանիշներով: Բայց Աստուած ընտրեց այն՝ ինչ որ այս աշխարհը յիմար կը սեպէ, անով իմաստունները ամօթով ձգելու համար. ընտրեց այն՝ ինչ որ այս աշխարհը տկար կը համարէ, անով հօգօրները ամչցնելու համար. եւ ընտրեց այն՝ ինչ որ այս աշխարհը անարժէք, արհամարհելի եւ ոչնչութիւն կը նկատէ, անով ոչնչացնելու համար այս աշխարհի մեծութիւնները: Եւ ասիկա՝ որպէսզի ոեւէ մարդ չպարծենայ Աստուծոյ առջեւ, որովհետեւ Աստուած ի՛նքն էր որ ձեզ բերաւ Քրիստոսի միացուց, եւ մենք Քրիստոսով ճանչցանք Աստուծոյ իմաստութիւնը եւ գտանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը:

*Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Մատթէոսի (18:10-14)*

- Զգո՛յ՛, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն մէկը. գիտցէք, որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս: Որովհետեւ Մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար:

harootsanem zayn verchin orû.

Markareyootyoonneroon mech kûrvadz e, “Amen mart Asdoodzme sorvadz bidi ûlla”. Ov vor Hormes gû lûse yev irme gû sorvi indzi gooka. Voch vok Hayrû desadz e, patsi ange vor Asdoodzme e, vorovhedev miyayn aniga desadz e Hayrû. oo yes gûsem tsezi, te ov vor indzi havada havidenagan gyank ooni.

*Anvanagochooten Yedk Chorrort Giragi
Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Arachin
Namagen (1:25-30)*

Artarev, Asdoodzo dûnorinootyoonû, vor Hooyner himarootyoon goragen, imasda-kooyân e kan martgayin voyeve imasdoootyoon, yev Asdoodzo khachû, vor Hûryaner dûgarootyoon gû hamaren, aveli zoregh e kan martgayin amen zoroootyoon.

Yeghpayrner, took tsezme tadetsek, inch eyik yerp Asdvadz tsez ganchets. Tsezme kanin imasdoon, hûzor gam aznûvadohm eyin martgayin chapanishnerov? Payts Asdvadz ûndrets ayn inch vor ays ashkharhû himar gû sebe, anov imasdoonnerû amotov tsûkeloo hamar, ûndûrets ayn inch vor ays ashkharhû anarzhek, arhamarheli yev vochûnchootyoon gû nûgade, anov vochûnchatsûneloo hamar ays ashkharhi medzootyoonnerû. Yev asiga vorbeszi voyeve mart chûbardzena Asdoodzo archev, vorovhedev Asdvadz inkûn er vor tsez perav Krisdosi miyatsoots, yev menk Krisdosov janchtsank Asdoodzo imasdoootyoonû yev kûdank mer artarootyoonû, sûrpootyoonû yev pûrgootyoonû.

*Hisoos Krisdosi Avedaranen Êsd Matyosi
(18:10-14)*

Êzkoosh, mi arhamarhek ays pokrigheren megû, kidtsek, vor anonts hûreshdagnerû yerginki mech mishd gû desnen im yergnavor Hayrûs. Vorovhedev Martoo Vortin yegav gorsûvadzû pûrgeloo hamar.

Ի՞նչ կը կարծէք. եթէ մարդ մը իր հարիւր ոչխարներէն մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունիւնը ոչխարները լերան վրայ եւ չ'ե՞րթար փնտռելու կորսուած ոչխարը: Եւ եթէ պատահի որ գտնէ, վստահ եղէք որ աւելի՛ կ'ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ իննսունիւնը ոչխարներուն համար, որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ երկինքի մէջ է, չ'ուզեր որ այս փոքրիկներէն մէկը կորսուի:

*Բարեկենդան Առաջաւորաց Պաիքի
Պօղոս Առաքեալի Կողմէ
Տիմոթէոսի Գրուած Երկրորդ Նամակէն
(2:15-26)*

Ջանա՛ւ Աստուծոյ աչքին ընտիր ըլլալ, այնպիսի մշակ մը՝ որ իր գործերուն համար ամչնալիք բան մը չունի, որպէս մէկը՝ որ ուղիղ կերպով կ'ուսուցանէ Աստուծոյ ճշմարիտ պատգամը:

Հեռո՛ւ կեցիր հաւատքի ճշմարտութիւնները խեղաթիւրող պարապ վիճաբանութիւններէ, որոնք հետզհետէ մարդիկը Աստուծմէ հեռացնելու կը ծառայեն միայն: Այդպիսի խօսքերու ձգած թոյնը քաղցկեղի պէս կը կրծէ մարդս: Այդպիսի խեղաթիւրող վիճասերներ էին Հիմենէոս եւ Ֆիլետոս, որոնք ճշմարտութենէն շեղեցան եւ շատերու հաւատքը քանդեցին, ըսելով՝ թէ մեռելներու յարութիւնը արդէն տեղի ունեցած է: Բայց Աստուծոյ դրած հաստատուն հիմը կանգուն կը մնայ: Անոր վրայգրուած է. «Տէրը կը ճանչնայ անոնք՝ որոնք իրն են», եւ «Ով որ Տիրոջ անունը կը կրէ՝ թող հեռու մնայ անիրաւ գործերէ»:

Մեծ տունի մը մէջ միայն ոսկիէ եւ արծաթէ անօթներ չեն ըլլար, այլ նաեւ փայտէ ու կաւէ անօթներ: Յստակ է՝ թէ առաջինները թանկագին են, իսկ միւսները՝ անարժէք: Արդ, ով որ ինքզինք մաքրէ նման մեղքերէ, Տիրոջ համար թանկագին անօթ մը կը դառնայ, մաքուր եւ պատրաստ՝ ամէն տեսակի բարի ծառայութիւն մատուցանելու:

Inch gû gardzek? yete mart mû ir harooyr vochkharneren megû gorsûntsûne, chi tûsker innsooninû vochkharnerû leran vûra yev chertar pûndûreloo gorsûvadz vochkharû Yev yete badahi vor kûdne, vûsdah yeghek vor aveli goorakhana ayt vochkharhin hamar, kan te inisooninû vochkharneroon hamar, voronk gorsûvadz chen. Nûmanabes al Hayrûs, vor yergûnki mech e, choozor vor pokrigneren megû gorsûvi.

*Paregentan Arachavorats Bahki
Boghos Arakyali Goghme Dimoteyosi
Kûrvadz Namagen (2:15-26)*

Chana Asdoodzo achkin ûndir ûllal, aynbisi mûshag mû vor ir kordzeroon hamar amûchnalik pan mû chooni, vorbes megû vor ooghigh gerbov goosootsane Asdoodzo jûshmarid badkamû.

Heroo getsir havadki jûshmardooryoonnerû kheghaturogh barab vijapanootyoonnere, voronk hedûzhede martigû Asdoodzme heratsûneloo gû dzarayen miyayn. Aytbisi khoskeroo tsûkadz tooynû kaghtsgeghi bes gû gûrdze martûs. Aysbisi kheghaturogh vijaseren eyin Himeneyos yev Filedos, voronk jûshmardootenen sheghetsan yev shaderoo havadkû kantetsin, ûselov te merelneroo harootyoonû arten isg degghi oonetsadz e. Payts Asdoodzo tûradz hasdadoon himû gankoon gû mûna. Anor vûra kûrvadz e, “Derû gû janchna anonk vor irûn yen”, yev “Ov vor Diroch anoonû gû gûre togh heroo mûna anoren korzere”.

Medz dooni mû mech miyayn vosgiye yev artsate anotner chen ûllar, ayl nayeve payde oo gave anotner. Hûsdag e te arachinnerû tangakin yen, isg mousnerû anarzhék. Art, ov vor inkzink makre nûman meghkere, Diroch hamar tangakin anot mû gû tarna, makoore yev badrasd amen desagi pari dzarayootyoon madootsaneloo.

Երիտասարդական ցանկութիւններէն փախի՛ր, եւ արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան ու սրբութեան հետամուտ եղի՛ր, անոնց պէս՝ որոնք մաքուր սրտով կ'աղօթեն Աստուծոյ: Յիմար եւ անօգուտ վէճերէ հրաժարէ՛, գիտնալով որ անոնցմէ կոիւներ կը ծագին: Աստուծոյ ծառան պէտք չէ կռուի, այլ պէտք է հեզ ըլլայ բոլորին հանդէպ, կարող ըլլայ Աւետարանը սորվեցնելու, ներողամիտ ըլլայ՝ որպէսզի քաղցրութեամբ խրատէ հակառակողները, որովհետեւ Աստուած միշտ ալ առիթ կու տայ որ անոնք դառնան իրենց սխալէն եւ ճշմարտութիւնը ճանչնան, եւ զգաստանալով՝ դուրս գան Սատանային որոգայթներէն, որոնց մէջ բռնուած՝ անոր կամքը կը կատարեն:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (6:15-21)***

Յիսուս երբ գիտցաւ թէ պիտի գան զինք բռնութեամբ թագաւոր ընելու, դարձեալ լեռը ելաւ, առանձին:

Երեկոյեան, Յիսուսի աշակերտները լիճին եզերքը իջան եւ նաւակ մտնելով՝ սկսան երթալ լիճին դիմացի կողմը, դէպի Կափառնաւոմ: Երբ մթնցաւ, տակաւին Յիսուս իրենց չէր եկած: Լիճը զօրաւոր հովէն կ'ալեկոծէր:

Աշակերտները հազիւ հինգ կամ վեց քիլոմէթր նաւարկած էին, երբ տեսան Յիսուսը, որ լիճին վրայէն քալելով կը մօտենար նաւակին: Բոլորը սարսափեցան: Յիսուս ըսաւ անոնց.

- Ես եմ, մի՛ վախնաք:

Անոնք կ'ուզէին զինք նաւակին մէջ առնել, բայց արդէն նաւակը հասաւ այն տեղը, ուր կ'երթային:

Yeridasartagan tsangootyoonnere pakhir, yev artarootyan, havadki, siro, khaghaghootyan oo sŭrpootyan hedamood yeghir, anonts bes voronk makoor sŭrdov gaghoten Asdoodzo. Himar yev anokood vejere hŭrajare, kidnalov vor anontsme grivner gŭ dzakin. Asdoodzo dzaran bedk che gŭrvi, ayl bedk e hez ũlla polorin hanteb, garogh ũlla avedaranŭ sorvetsŭneloo, neroghamid ũlla vorbeszi kaghtsrootyamp khŭrade hagaragoghnerŭ, vorovhedev Asdvadz mishd al arit gooda vor anonk tarnan irents sŭkhalen yev jŭsh-mardootyoonŭ janchnan, yev ũzkasdanalov toors kan sadanayin vorokaytneren, voronts mech pŭrnŭvadz anor gamkŭ gŭ gadaren.

***Hisoos Krisdosi Avedaranen Ŭsd
Hovhannesi (6:15-21)***

Hisoos yerp kidtsav te bidi kan zink pŭrnootyamp takavorŭ ũneloo, tartsyal lerŭ yelav, arantsinŭ.

Yeregoyan, Hisoosi ashagerdnerŭ lijn yezerkŭ ichan yev navag mŭdnelov ũsgŭsan yertal lijn timatsi goghmŭ, tebi Gaparnayoom. Yerp mŭtŭntsav, dagavin Hisoos irents cher yegadz. Lijŭ zoravor hoven galegodzer.

Ashagerdnerŭ haziv hink gam vets kilometr navargadz eyin, yerp desan Hisoosŭ, vor lijn vŭrayen kalelov gŭ modenar navagin. Polorŭ sarsapetsan. Hisoos ũsav anonts, -Yes yem, mi vakhnak.

Anonk goozeyin zink navagin mech arnel, payts arten navagŭ hasav ayn deghŭ, oor gertayin.

*Սուրբ Սարգիսի Կիրակի
Պօղոս Առաքելի Կողմէ
Տիմոթէոսի Գրուած Երկրորդ Նամակէն
(3:1-12)*

Մա՛ եւս գիտցիր, թէ վերջին օրերուն դժուար ժամանակներ պիտի գան, որովհետեւ մարդիկ պիտի դառնան անձնասէր, դրամապաշտ, ամբարտաւան, հպարտ, հայեցիչ, ծնողներուն անհնազանդ, ապերախտ, սրբութիւնները ոտնակոխող, տմարդի, անգութ, չարախօս, անհանդուրժող, դաժան, բարիին թշնամի, մատնիչ, անպատկառ, գոռոզ, եւ աւելի հեշտանքը սիրող՝ քան զԱստուած: Երեսութապէս աստուածապաշտ են անոնք, բայց խորքին մէջ չեն հաւատար աստուած-պաշտութեան զօրութեան: Զգուշացի՛ր անոնցմէ: Անոնց մէջ կան նաեւ այնպիսիներ, որոնք տունէ տուն կը մտնեն եւ իրենցմով կը հրապուրեն մեղքերով ծանրաբեռնուած եւ զանազան ցանկութիւններէ բռնուած թեթեւաբարոյ կիները, որոնք միշտ կ'ուզեն զիտնալ, բայց երբեք ճշմարիտ գիտութեան չեն հասնիր: Այնպէս ինչպէս Եանէս եւ Եամբրէս մոզերը Մովսէսի հակառակեցան, միտքով ապականած եւ հաւատքով սնանկ այս մարդիկն ալ ճշմարտութեան կը հակառակին: Բայց իրենց յաջողութիւնը երկար չի տեւեր, որովհետեւ իրենց անմտութիւնը շուտով յայտնի պիտի ըլլայ բոլորին, ճիշդ ինչպէս այն երկուքինը եղաւ:

Բայց դուն կառչած մնա իմ ուսուցումիս, կեանքի օրինակիս, յօժարութեանս, հաւատքիս, համբերատարութեանս, սիրոյս եւ յարատեւութեանս, որոնք ցուցաբերեցի՝ նոյնիսկ հալածանքներու եւ չարչարանքներու մէջ: Գիտես թէ ի՛նչ պատահեցաւ ինծի Անտիոքի, Իկոնիոնի եւ Լիստրայի մէջ. թէ ի՛նչպիսի հալածանքներ կրեցի, եւ այդ բոլորէն Տէրը զիս ազատեց: Նոյնպէս, բոլոր անոնք որոնք կ'ուզեն աստուածապաշտութեամբ Քրիստոս Յիսուսի միացած ապրիլ, անպայման հալածանքներու պիտի ենթարկուին:

*Soorp Sarkisi Giragi
Boghos Arakyali Goghme Dimoteyosi
Kûrvadz Yergrort Namagen (3:1-12)*

Sa yevs kidtsir, te verchin oreroon tûzhvar zhamanagner bidi kan, vorovhedev martig bidi tarnan antsnaser, tramabashd, ampardavan, hûbard, hayhoyich, dzûnoghneroon anhûnazant, aberakhd, sûrpootyoonnerû vodnagokhogh, dûmarti, ankoot, charakhos, anhantoorzhogh, tazhan, pariya tûshnami, madnich, anbadgar, koroz, yev aveli heshdankû sirogh kan zAsdvadz. Yerevootabes Asdvadzabashd yen anonk, payts khorkin mech chen havadar asdvadzabashdootyan zorootyan. Ūzkooshatsir anontsme. Anonts mech gan nayev aynbisiner, voronk doone doon gû mûdnen yev irentsmov gû hûrabooren meghkerov dzanrapernûvadz yev zanzan tsangootyoonnere pûrnûvadz tetevaparo ginerû, voronk mishd goozen kidnal, payts yerpek jûshmarid kidootyan chen hasnir. Aynbes inchbes Yanes yev Yampres mokerû Movsesi hagaragetsan, midkov abaganadz yev havadkov sûnang ays martigûn al jûshmardootyan gû hagaragin. Payts irents hachoghoot-yoonû yergar chi dever, vorovhedev irents anmûdootyoonû shoodov haydni bidi ûlla polorin, jisht inchbes ayn yergookinû yeghav.

Payts toon garchadz mûna im oosootsoomis, gyanki orinagis, hozharootyans, havadkis, hamperadarootyans, sirooys yev haradevootyans, voronk tsootsaperetsi nooynisg haladzankneroos yev charcharankneroos mech. Kides te inch badahetsav indzi Andiyoki, Igonyoni yev Lisdrayi mech, te inchbisi haladzankner gûretsi, yev ayt poloren Derû zis azadets. Nooynisg polor anonk voronk goozen asdvadzabashdootyamp Krisdos Hisoosi miyatsadz abril, anbayman haladzankneroos bidi yentargûvin.

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (6:22-38)**

Յաջորդ օր, ժողովուրդը՝ որ մնացած էր լիճին միւս կողմը, տեսաւ թէ հոն միայն մէկ նաւակ կար, որուն մէջ Յիսուսի աշակերտները մտան եւ առանձինն գացին. իսկ Յիսուս աշակերտներուն հետ նաւակ չմտաւ: Յետոյ Տիբերիայէն ուրիշ նաւակներ ալ եկան հոն, ուր Յիսուս Աստուծոյ գոհութիւն տալով բազմացուցած էր հացը եւ տուած ժողովուրդին, որպէսզի ուտեն: Ժողովուրդը տեսնելով թէ Յիսուս հոն չէր, ոչ ալ իր աշակերտները, նաւակները առին եւ Կափառնաւում եկան Յիսուսը փնտրելու համար: Երբ զինք գտան լիճին միւս կողմը, հարցուցին.

- Վարդապետ, ե՞րբ եկար հոս:

Յիսուս անոնց պատասխանեց.

- Կ'ըսեմ ձեզի, վստահաբար դուք զիս կը փնտրէք՝ ո՛չ թէ որովհետեւ հրաշքներ տեսաք, այլ որովհետեւ այդ հացէն կերաք եւ կշտացաք: Փոխանակ կորստական ուտելիքը փնտրելու, ջանացէք ապահովել այն կերակուրը որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ: Այդ կերակուրը Մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ:

Անոնք հարցուցին.

- Ի՞նչ ընենք, որ Աստուծոյ ուզածը կատարած ըլլանք:

Յիսուս անոնց պատասխանեց.

- Աստուծոյ ուզած գործը այն է, որ հաւատարմանք՝ որ ինք զրկեց:

Անոնք ըսին.

- Ի՞նչ հրաշք պիտի գործես, որպէսզի տեսնենք եւ քեզի հաւատանք. ի՞նչ պիտի ընես: Մեր հայրերը մանանան կերան անապատին մէջ, ինչպէս գրուած է. «Անոնց երկինքէն հաց տուաւ ուտելու համար»:

Յիսուս անոնց ըսաւ.

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (6:22-38)**

Hachort or, zhoghovoortû vor mûnatsadz er lijn mooy's goghmû, desav te hon miyayn meg navag gar, voroon mech Hisoosi ashagerdnerû mûdan yev arantsinûn katsin, isg Hisoos ashagerdneroon hed navag chûmûdav. Hedo Diperyayen oorish navagner al yegan hon, oor Hisoos Asdoodzo kohootyoon dalov pazmatsootsadz er hatsû yev zhoghovoortin dûvadz, vorbeszi ooden. zhoghovoortû desnelov vor Hisoos hon cher voch al ir ashagerdnerû, navagnerû arin oo Gaparnayoom yegan Hisoosû pûndûreloo hamar. Yerp zink kûdan lijn mouy's goghmû, hartsootsin,

-Vartabed, yerp yegar hos?

Hisoos anont's badaskhanets,

-Gûsem tsezi, vûsdahapar took zis gû pûndûrek voch te vorovhedev hûrashkner desak, ayl vorovhedev ayt hasten gerak yev gûshdatsak. Pokhanag gorûsdagan oodelikû pûndreloo, chandatsek abahovel ayn geragoorû vor havidenagan gyanki mech gû mûna. Ayt geragoorû Martoo Vortin bidi da tsezi, vorovhedev Hayrûn Asdvadz ir havanootyan gûnikû tûrav anor vûra.

Anonk hartsootsin,

-Inch ûnenk, vor Asdoodzo oozadzû gadaradz ûllank. Hisoos anont's badaskhanets,

-Asdoodzo oozadz kordzû ayn e, vor havadak anor vor ink ghûrgets.

Anonk ûsin,

-Inch hûrashk bidi kordzes, vorbeszi desnenk yev kezi havadank, inch bidi ûnes? Mer hayrerû mananan geran anabadin mech, inchbes kûrvadz e, "Anont's yerginken hats dûvav oodeloo hamar".

Hisoos anont's ûsav,

- Ճշմարտութիւնը կ'ըստէմ ձեզի, թէ ինչ որ Մովսէս ձեզի տուաւ՝ երկինքէն իջած հացը չէր: Հայրս է որ ձեզի կու տայ երկինքէն իջած ճշմարիտ հացը: Որովհետեւ Աստուծոյ տուած հացը ան է՝ որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին:

Անոնք ըսին.

- Տէ՛ր, մի շտ տուր մեզի այդ հացը:

Յիսուս ըսաւ անոնց.

- Ես եմ կեանքի հացը: Ան որ ինծի կու գայ՝ բնաւ պիտի չանօթենայ եւ ան որ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չծարաւնայ: Բայց հիմա ըսի ձեզի, տեսաք ալ զիս, եւ տակաւին չէք հաւատար: Բոլոր անոնք որ Հայրը ինծի կու տայ՝ ինծի պիտի գան, եւ ես ինծի եկողը պիտի չմերժեմ. որովհետեւ ես երկինքէն իջայ՝ ո՛չ թէ իմ կամքս կատարելու, այլ կամքը անոր՝ որ զիս դրկեց:

Տեսողնդատաշ

Պօղոս Առաքեալի Կողմէ

Գաղատացիներուն Գրուած Նամակէն (4:1-7)

Բայց զիտցէ՛ք նաեւ, թէ ժառանգորդ մը թելետ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի ինամակալներու եւ հոգաբարձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակակէտը: Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ դրկեց իր Որդին, որ կնոջմէ մը ծնաւ եւ Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ դրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Աբբա», այսինքն «Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ՝ որդի. եւ քանի որդի եք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

-Jûshmardootyoonû gûsem tsezi, te inch vor Movses tsezi dûvav yerginken ichadz hatsû cher. Hayrûs e vor tsezi gooda yerginken ichadz jûshmarid hatsû.

Vorovhedev Asdoodzo dûvadz hatsû an e, vor yerginken gichne yev gyank gooda ashkharhin.

Anonk ûsin, -Der, mishd door mezi ayt hatsû.

Hisoos ûsav anonts,

-Yes yem gyanki hatsû. An vor indzi gooka pûnav bidi chanotena yev an vor indzi gû havada yerpek bidi chûdzaravna. Payts hima ûsi tsezi, desak al zis, yev dagavin chek havadar. Polor anonk vor Hayrû indzi gooda indzi bidi kan, yev yes indzi yegoghû bidi chûmerzhem, vorovhedev yes yerginken icha voch te im gamkûs gadareloo, ayl gamkû anor vor zis ghûrgets.

Diyarûnûtarach

Boghos Arakyali Goghme

Kaghadatsineroon Kûrvadz Namagen

(4:1-7)

Payts kidtsek nayeve, te zharankort mû tebed ampoghch zharankootyan isgagan dern e, payts vorkan aden vor anchapahas e darperootyoon chooni dzaraye mû, kani khûnamagalneroo yev hokapartsooneroo yentaga e, minchev hasni ir horû voroshadz zhamanagagedû. Nooynûn e mer al barakan. Vorkan aden vor hokevorabes anchapahas eyink, pûnootyan oozheroon gentargûveyink oo gû dzarayeyink. Payts hima harmar zhamanagû hasadz hamarelov, Asdvadz ashkharh ghûrgets ir Vortin, vor gûnochme mû dzûnav yev Orenkin dag abretsav, vorbeszi mez Orenkin keroottenen pûrge yev Asdoodzo vortiner tartsûne. Art, vorovhedev ir vortinerûn yenk Asdvadz mer sirderoon mech ghûrgets ir Vortiyin Hokin, vorov zAsdvadz “Appa”, aysinkûn “Hayr” gû gochenk. Oosdi aylevs dzara chek, ayl vorti, yev kani vorti ek Asdoodzo khosdoomû bidi zharanke.

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (2:41-52)**

Յիսուսի ծնողները ամէն տարի Զատիկի տօնին Երուսաղէմ կ'երթային: Երբ Յիսուս տասներկու տարեկան եղաւ, անոնք Երուսաղէմ գացին, ինչպէս տօնին սովորութիւն էր երթալ: Տօնակատարութեան աւարտին, մինչ անոնք կը վերադառնային, Յիսուս մանուկը Երուսաղէմ մնաց: Իր ծնողները չանդրադարձան ասոր: Անոնք կը կարծէին թէ ուղեկիցներուն հետ է: Օրուան մը ճամբայ կտրելէ ետք, սկսան փնտռել Յիսուսը ազգականներու եւ ծանօթներու մօտ:

Երբ չգտան, կրկին Երուսաղէմ դարձան՝ հոն փնտռելու համար զինք: Երեք օր ետք զինք գտան տաճարին մէջ: Անիկա տաճարին ուսուցիչներուն հետ նստած՝ անոնց մտիկ կ'ընէր եւ հարցումներ կ'ուղղէր: Բոլոր անոնք որ իրեն մտիկ կ'ընէին, կը հիանային անոր իմաստութեան եւ տուած պատասխաններուն վրայ:

Ծնողները երբ տեսան Յիսուսը, ապշած մնացին: Իր մայրը ըսաւ.

- Այս ի՞նչ ըրիր մեզի, տղա՛ւ. ահա հայրդ ու ես տակնուվրայ եղած քեզ կը փնտռէինք:

Յիսուս ըսաւ անոնց.

- Ինչո՞ւ զիս ուրիշ տեղ կը փնտռէիք. չէի՞ք գիտեր թէ հօրս տան մէջ պէտք է գտնուիմ:

Մակայն ծնողները այս խօսքերուն իմաստը չհասկցան:

Յետոյ Յիսուս ծնողներուն հետ միասին Նազարէթ գնաց, եւ հնազանդ մնաց անոնց: Իր մայրը այս բոլորը իր սիրտին մէջ կը պահէր: Յիսուս կը զարգանար իմաստութեամբ եւ մարմնով՝ Աստուծոյ եւ մարդոց սիրելի ըլլալով:

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Ghoogasi (2:41-52)**

Hisoosi dzûnoghnerû amen dari Zadgi donin Yeroosaghem gertayin. Yerp Hisoos dasnûyergoo daregan yeghav, anonk Yeroosaghem katsin, inchbes donin sovorootyoonûn er yertal. Donagadarootyan avaradin, minch anonk gû veratarnayin, Hisoos Manoogû Yeroosaghem mûnats. Ir dzûnoghnerû chantratartsan asor. Anonk gû gardzeyin te ooghegitsneroon hed e. Orvan mû jampa gûdrele yedk, ûsgûsan pûndrel Hisoosû azkaganneroo oo dzanotneroo mod. Yerp chûkûdan, gûrgin Yeroosaghem tartsan hon pûndreloo hamar zink. Aniga dajarin oosootsichneroon hed nûsdadz anonts mûdig gûner yev hartsoomner googher. Polor anonk vor iren mûdig gûneyin, gû hiyanayin anor imasdootyan yev dûvadz badaskhanneroon vûra.

Dzûnoghnerû yerp desan Hisoosû, abshadz mûnatsin. Ir mayrû ûsav,

-Ays inch ûrir mezi? Dûghas aha hayrût oo yes dagnoovûra yeghadz kez gû pûndûrenk.

Hisoos ûsav anonts,

-Inchoo zis oorish degh gû pûndreyik, cheyik kider te horûs dan mech bedk e kûdnûvim?

Sagayn dzûnoghnerû ays khoskeroon imasdû chûhasgûtsan. Hedo Hisoos dzûnoghneroon hed miyasin Nazaret kûnats, yev hûnazant mûnats anonts. Ir mayrû ays polorû ir sirdin mech gû baher. Hisoos gû zarkanar imasdootyamp yev marminov Asdoodzo yev martots sireli ûllalov.

Ես, Պողոս, Աստուծոյ ծառան եւ Յիսուս Քրիստոսի առաքելը, կոչուած եմ Աստուծոյ ընտրեալները բերելու հաւատքի եւ ճշմարտութեան ճանաչումին, այն ճշմարտութեան՝ որ աստուածապաշտութեամբ կը գտնուի, որպէսզի յաւիտենական կեանքի յոյսը ունենան: Յաւիտենական ժամանակներէն իսկ առաջ՝ անսուտն Աստուած ինք խոստացաւ այդ կեանքը, իսկ հիմա՝ յարմար ժամանակը հասած համարելով՝ այդ խոստումը յայտնեց իր Աւետարանով, որուն քարոզութեան կոչուեցայ մեր փրկիչ Աստուծոյն հրամանով: Ո՛վ Տիմոս, մեր հասարակաց հաւատքի ճամբով իմ հարազատ որդիս, թող Հայրն Աստուած եւ մեր փրկիչը Քրիստոս Յիսուս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի: Քեզ Կրետէ թողուցի, որպէսզի եկեղեցիին պէտքերը հոգաս եւ զայն կազմակերպես՝ իւրաքանչիւր քաղաքի մէջ երեցներ կարգելով, ինչպէս որ քեզի պատուիրեցի: Երիցութեան թեկնածուն պէտք է անմեղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր ըլլայ եւ հաւատացեալ զաւակներ ունենայ, որոնք անառակութեամբ եւ անհնազանդութեամբ ամբաստանուած չըլլան: Արդարեւ, եպիսկոպոսը՝ որպէս Աստուծոյ տնտես՝ պէտք է անմեղադրելի ըլլայ: Պէտք չէ յանդուգն, բարկացող, զինեմով, կռուական կամ շահամոլ ըլլայ, այլ՝ հիւրասէր, բարին սիրող, զուսպ, արդար, մաքուր եւ ծուծկալ: Պէտք է ամբօրէն պահէ իր ստրված վստահելի վարդապետութիւնը, որպէսզի կարենայ ուղիղ ուսուցումով յորդորել ուրիշները եւ յանդիմանել հակառակորդները: Որովհետեւ բազմաթիւ անհնազանդներ, դատարկախօսներ եւ միտք պղտորողներ կան, մանաւանդ հրէութենէ դարձածներուն մէջ, որոնց բերանը պէտք է փակել, որովհետեւ անոնք ամբողջ տուններ կը քանդեն, շահամոլութենէ տարուած ուսուցանելով բաներ, որ պէտք չէ ուսուցանել:

Yes, Boghos, Asdoodzo dzaran yev Hisoos Krisdosi arakyalû, gochvadz yem Asdoodzo ûndûryalnerû pereloo

havadki yev jûshmardootyan janachoomin, ayn jûshmardootyan vor asdvadzabashdootyamp gû kûdnûvi, vorbeszi havidenagan gyanki hooysû oonenan. Havidenagan zhamanagneren isg arach ansoodûn Asdvadz ink khosdatsav ayt gyankû, isg hima harmar zhamanagû hasadz hamarelov ayt khosdooû haydnets ir Avedaranov, voroon karoootyan gochvetsa mer pûrgich Asdoodzooyin hramanov.

Ov Didos, mer hasaragats havadki jampov im harazad vortis, togh Hayrûn Asdvadz yev mer pûrgichû Krisdos Hisoos shûnorkh yev khaghaghootyoon barkeven kezi.

Kez Grede toghootsi, vorbeszi yegegghetsiyyin bedkerû hokas yev zayn gazmagerbes yoorkanchour kaghaki mech yeretsner garkelov, inchbes vor kezi badviretsi. Yeritsootyan tegnadzoon bedk e anmeghatreli ûlla, meg gûnoch ayr ûlla yev havadatsyal zavagner oonena, voronk anaragootyamp yev anhûnazantootyamp anpasdanvadz chûlan. Artarev, yebisgobosû vorbes Asdoodzo dûndes bedk e anmeghatreli ûlla. Bedk che hantookûn, pargatsogh, kinemol, gûrvazan gam shahamol ûlla, ayl houraser, parin sirogh, zoosb, artar, makoor yev zhoozhgal. Bedk e amroren bahe ir sorvadz vsdaheli vartabedootyoonû, vorbeszi garena ooghigh oosootsoomov hortorel oorishnerû yev hantimanel hagaragortnerû.

Vorovhedev pazmativ anhûnazantner, tadar-gakhosner yev midk bûghdoroghner gan, manavant hûreyootene tartsadzneroo mech, voronts peranû bedk e pagel, vorovhede v anonk ampoghch dooner gû kanten, shahamolootene darvadz oosootsanelov paner, vor bedk che oosootsanel.

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (7:37-52)**

Տօնին վերջին եւ հանդիսաւոր օրը, Յիսուս
նոքի կանգնած՝ բարձրաձայն կ'ըսէր.

- Ով որ ծարաւ է՝ թող ինծի գայ եւ խմէ: Ով որ
ինծի կը հաւատայ, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ՝
«Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի
բխին»:

Յիսուս ասիկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն
հաւատացողները պիտի ընդունէին. իսկ Հոգին
տակաւին չէր տրուած, քանի Յիսուս
փառաւորուած չէր:

Ժողովուրդէն ոմանք երբ լսեցին այս խօսքերը,
ըսին.

- Ասիկա է ճշմարիտ մարգարէն:

Ուրիշներ կ'ըսէին.

- Քրիստոսն է:

Իսկ ոմանք ալ կ'ըսէին.

- Միթէ Գալիլեայէն պիտի գայ Քրիստոսը:
Սուրբ գիրքը չ'ըսէր՝ թէ Քրիստոս Դաւիթ
թագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի
քաղաքին Բեթլեհէմի մէջ պիտի ծնի:

Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւն-
ներ յառաջ եկան ժողովուրդին մէջ: Ոմանք
ուզեցին ձեռքալալել զինք, բայց ոչ որ
համարձակեցաւ ձեռք զարնել:

Երբ տաճարին պահակները վերադարձան,
աւագ քահանաներն ու Փարիսեցիները
հարցունցին անոնց.

- Ինչո՞ւ զինք հոս չբերիք:

Պահակները պատասխանեցին.

- Այս մարդուն պէս խօսող երբեք չենք տեսած:

Փարիսեցիները ըսին.

- Ի՞նչ, դո՞ւք ալ խաբուեցաք: Իշխանաւորներէն
կամ Փարիսեցիներէն ոեւէ մէկը հաւատա՞ց
անոր: Մեր Օրէնքը չզիտցող տգէտ ամբոխը
միայն հաւատաց: Անոնք արդէն իսկ նզովուած
են:

Նիկողեմոս, Փարիսեցիներէն մէկը, որ
նախապէս զիշերով եկած էր Յիսուսի մօտ,
ըսաւ անոնց.

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (7:37-52)**

Donin verchin yev hantisavor orû, Hisoos
vodki ganknadz partsratsayn gûser,

-Ov vor dzarav e togh indzi ka yev khûme.
Ov vor indzi gû havada, inchbes Soorp Kirkû
gûse “Anor sirden gensadoo choori keder
bidi pûkhin”.

Hisoos asiga gûser Hokiya hamar, vor iren
havadatsoghnerû bidi ûntooneyin, isg hokin
dagavin cher dûrvadz, kani Hisoos
Paravorvadz cher.

Zhoghovoorten vomank yerp lûsetsin ays
khoskerû, ûsin

-Asiga e jûshmarid markaren.

Oorishner gûseyin,

-Krisdosûn e.

Isg vomank al gûseyin,

-Mite Kalilyayen bidi ka Krisdosû? Soorp
kirkû chûser te Krisdos Tavit takavori
seroonten bidi ûlla yev Tavit kaghakin՝
Petlehem mech bidi dzûni?.

Yev Hisoosi badjarov daragardzootyooner
harach yegan zhoghovoortin mech. Vomank
oozetsin tserpagalel zink, payts voch vok
hamartsagetsav tserk zarnel.

Yerp dajarin bahagnerû veratartsan, avak
kahananerûn oo Parisetsinerû hartsootsin
anonts,

-Inchoo zink hos chûperik?

Bahagnerû badaskhanetsin,

-Ays martoon bes khosogh yerpek chen
desadz.

Parisetsinerû ûsin,

-Inch? took al khapvetsak? Ishkhanavorneren
gam Parisetsineren voyeve megû havadats
anor? Mer Orenkû chûkidtsogh dûked
ampokhû miyayn havadats. Anonk arten isg
nûzovvadz yen.

Nigotemos, Parisetsineren megû, vor
nakhabes kisherov yegadz er Hisoosi mod,
ûsav anonts,

Այո՛, կ'ըսեմ ձեզի, անկէ վախճէք: Հինգ ճնճողուկը տասը դահեկան չ'արժէր, եւ սակայն անոնցմէ մէկն իսկ Աստուծոյ կողմէ մոռցուած չէ: Գալով ձեզի, ձեր գլխուն իւրաքանչիւր մագն իսկ համրուած է: Հետեւաբար մի՛ վախնաք, որովհետեւ դուք բոլոր ճնճողուկներէն աւելի արժէք ունիք Աստուծոյ աչքին:

- Եւ կ'ըսեմ ձեզի.- Ով որ մարդոց առջեւ դաւանի թէ ինծի կը հետեւի, Մարդու Որդին ալ զինք իրեն հետեւորդ պիտի դաւանի Աստուծոյ հրեշտակներուն դիմաց: Իսկ ով որ զիս ուրանայ մարդոց առջեւ, նոյնպէս ալ Մարդու Որդին պիտի ուրանայ զինք Աստուծոյ հրեշտակներուն դիմաց: Աստուած կը ներէ անոր՝ որ Մարդու Որդիին դէմ կը խօսի, բայց բնաւ պիտի չներէ անոր՝ որ Սուրբ Հոգին կը նախատէ, որովհետեւ քրաժը հայհոյութիւն է:

Տօն Ս. Վարդանանց

Պօղոս Առաքեալի Կողմէ

Երբայեցինքնուն Գրուած Նամակէն (12:1-7)

Ուրեմն մենք ալ, որ այսքան բազմաթիւ վկաներով շրջապատուած ենք, վանե՛նք ամէն խոչնդոտ եւ մէկ կողմ ձգենք մեղքը, որ մեզ դիրաւ կը պաշարէ, եւ համբերատարութեամբ պայքարինք մեզի ներկայացող փորձութիւններուն դէմ: Մեր աչքերը յառենք Յիսուսի, մեր հաւատքի հիմնադիրին ու կատարելագործողին, որ գիտնալով թէ ի՛նչ ուրախութիւն կը սպասէ իրեն՝ արհամարհեց ամօթը, յանձն առաւ խաչի վրայ մեռնիլ, եւ Աստուծոյ արժողին աջ կողմը նստաւ:

Որպէսզի երբեք չյուսալքուիք եւ չտկարանաք, մտաբերեցէ՛ք թէ Յիսուս ի՛նչպիսի համբերութեամբ կրեց մեղաւորներու հակառակութիւնները: Դուք տակաւին ձեր արիւնը թափելու չափ դիմադրութիւն ցոյց չտուիք մեղքի դէմ պայքարին մէջ:

Դուք նաեւ մոռցեր էք յորդորը, որ ձեզի ուղղուած է՝ իբրեւ որդիներու.-

Ayo, gûsem tsezi, ange vakhtsek. Hink jûnjghoogû dasû tahegan charzher? yev sagayn anontsme megûn isg Asdoodzo goghme mortsvadz che. Kalov tsezi, tser kûlkhoon yourakanchoor mazûn isg hamrûvadz e. Hedevapar mi vakhnak, vrovhedev took polor jûnjghoogneren aveli arzhek oonik Asdoodzo achkin. [Yev gûsem tsezi- **Ov vor martots archev tavani te indzi gû hedevi, Martoo Vortin al zink iren hedevort bidi tavani Asdoodzo hûreshdagneroon timats. Isg ov vor zis oorana martots archev, nooyebes al Martoo Vortin bidi oorana zink Asdoodzo hûreshdagneroon timats. Asdvadz gû nere anor vor Martoo Vortiyin tem gû khosi, payts pûnav bidi chûnere anor vor Soorp Hokiyyin gû nakhade, vorovhedev ûradzû hayhoytyoon e.**

Don Soorp Vartanants

Boghos Arakyali Goghme

Yeprayetsineroon Kûrvadz Namagen

(12:1-7)

Ooremûn menk al, vor ayskan pazmativ vûganerov shûrchabadvadz yenk, vanenk amen khochûntod yev meg goghm tsûkenk meghekû, vor mez toorav gû bashare, yev hamperootyamp baykarink mezi nergaya-tsogh portsootyoonneroo tem. Mer achkerû harenk Hisoosi, mer havadki himnatirin oo gadarelakordzoghin, vor kidnalov te inch oorakhootyoon gûsbase iren՝ arhamarhets amotû, hantsûn arav khachi vûra mernil, yev Asdoodzo atorin ach goghmû nûsdav.

Vorbeszi yerpek chûhoosalûkvik yev chûdûgaranak, mûdaperetsek te Hisoos inchbes hamperootyamp gûrets meghavorneroo hagaragootyoonnerû. Took dagavin tser arounû tapeloo chap timatrootyoon tsooyts chûdûvik meghekî tem baykarin mech. Took nayeve mortser ek hortorû, vor tsezi ooghvadz e iprev vortineroo,

«Որդեա՛կս, մի՛ արհամարհեր Տիրոջ խրատը, եւ մի՛ վհատիր երբ քեզ յանդիմանէ, որովհետեւ Տէրը երբ կը խրատէ՝ կը նշանակէ թէ կը սիրէ քեզ. երբ կը պատժէ՝ կը նշանակէ թէ քեզ իբր զաւակ կ'ընդունի»:

Ուստի համբերութեամբ ընդունեցէք Աստուծոյ խրատը, զիտնալով որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ: Կա՛յ զաւակ մը որ իր հօրմէն յանդիմանութիւն ստացած չըլլայ:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ Ղուկասի (6:20-26)

Յիսուս իր աչքերը աշակետներուն յառելով, ըսաւ.

- Երանի՛ աղքատներուդ, որովհետեւ ձերն է Աստուծոյ արքայութիւնը:

Երանի՛ ձեզի՝ այժմ քաղցածներուդ, որովհետեւ պիտի յագենաք:

Երանի՛ ձեզի՝ այժմ լացողներուդ, որովհետեւ պիտի խնդաք:

Երանի՛ ձեզի, երբ մարդիկ ձեզ ատեն, մերժեն ձեզ ընդունիլ, նախատեն եւ վարկաբեկեն ձեզ՝ Մարդու Որդիին հետեւելնուդ համար: Այդ օր ուրախացէք եւ ցնծացէք, որովհետեւ մեծ վարձատրութիւն պիտի ունենաք երկինքի մէջ: Անոնց նախահայրերը մարգարէներուն նկատմամբ նոյն վերաբերումը ունեցան:

Բայց վա՛յ ձեզի՝ հարուստներուդ, որովհետեւ ձեր հանգիստն ու վարձատրութիւնը արդէն իսկ ստացաք:

Վա՛յ ձեզի որ այժմ յագեցած էք, որովհետեւ պիտի անօթենաք:

Վա՛յ ձեզի որ այժմ կը խնդաք, որովհետեւ պիտի սգաք ու լաք:

Վա՛յ ձեզի, երբ մարդիկ գովաբանեն ձեզ, որովհետեւ անոնց հայրերը նոյն վերաբերումը ունեցան սուտ մարգարէներուն հանդէպ:

-“Vortyagûs, mi arhamarher Diroch khûradû, yev mi vûhadir yerp kez hantimane, vorovhedeve Derû yerp gû khûrade, gû nûshanage te gû sire kez, yerp gû badzhe gû nûshanage te kez ipûr zavag gûntooni”.

Oosdi hamperootyamp ûntoonetsek Asdoodzo khûradû, kidnalov vor hor me bes gû varvi tsezi hed. Ga zavag mû vor ir hormen hantimanootyoon ûsdatsadz chûlla?

Hisoos Krisdosi Avedaranen Ūsd Ghoogasi (6:20-26)

Hisoos ir achkerû ashagerdneroon harelov, ûsav,

-Yerani aghkadneroot, vorovhedeve tserûn e Asdoodzo arkayootyoonû.

-Yerani tsezi, ayzhûm kaghtsadzneroot, vorovhedeve bidi hakenank.

-Yerani tsezi, ayzhûm latsoghneroot, vorovhedeve bidi khûntak. -Yerani tsezi, yerp martig tsez aden, merzhen tsez ûntoonil, nakhaden yev vargapegen tsez, Martoo Vortiyin hedevelnoot hamar. Ayt or oorakhatsek yev tsûndzatsek, vorovhedeve medz vartsadrootyoon bidi oonenak yerginki mech. Anonts nakhahayrerû markareneroon nûgadmamp nooyin veraperoomû oonetsan.

Payts vay tsezi haroosdneroot, vorovhedeve tser hankisdûn oo vartsadrootyoonû arten isg ûsdatsak.

Vay tsezi vor ayzhûm haketsadz ek, vorovhedeve bidi anotenak. Vay tsezi vor ayzhûm gû khûntak, vorovhedeve bidi sûkak oo lak.

Vay tsezi, yerp martig kovapanen tsez, vorovhedeve anonts hayrerû nooyin veraperoomû oonetsan sood markareneroon hanteb.

**Պօղոս Առաքելի Կողմէ
Հոմայեցիներուն Գրուած Նամակէն
(13:11-14:23)**

Միքոյ այս սկզբունքով ընթացէք, գիտնալով թէ ի՛նչ ժամանակի մէջ կ'ապրինք: Ժամանակն է որ քունը թօթափենք եւ արթննանք, որովհետեւ հիմա փրկութիւնը աւելի մօտ է մեզի, քան այն ատեն՝ երբ հաւատացինք: Գիշերը ահա կ'անցնի եւ ցերեկը մօտ է: Ուստի խաւարի գործերէն հեռանանք եւ լոյսի զէնքերը մեր վրայ առնենք, ապրելու համար այնպէս՝ ինչպէս վայել է լոյսի մէջ քալողներուն, փոխանակ անառակութեամբ, արբեցութեամբ, խառնակեցութեամբ ու պղծութեամբ, կամնախանձով ու հակառակութեամբ ապրելու: Տէր Յիսուս Քրիստոսի նկարագիրը ձեր վրայ առէք, եւ մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլաք:

Հաւատքի մէջ տկարացած մէկը ընդունեցէ՛ք՝ առանց իր խիղճը տանջող կասկածները քննադատելու: Օրինակ, մէկը կը հաւատայ թէ ամէն ինչ կարելի է ուտել: Ուրիշ մը, որ կասկած ունի այդ մասին, բանջարեղէն կ'ուտէ միայն: Ամէն ինչ ուտողը թող չարհամարիէ չուտողը, իսկ չուտողը թող չքննադատէ ուտողը, որովհետեւ Աստուած զայն ընդունել է: Ո՞վ էս դուն, որ Աստուծոյ ծառան կը դատես: Տէրը ի՛նք միայն գիտէ՝ իր հաւատքին մէջ կանգո՞ւն է անիկա, թէ ինկած: Բայց վստահ եղէք որ կանգուն պիտի մնայ, որովհետեւ Տէրը կրնայ զայն կանգուն պահել:

Նոյնպէս, ոմանք կը խորհին՝ թէ զԱստուած պաշտելու համար այսինչ օրը աւելի կարելոր է քան միւս օրը, մինչ ուրիշներու համար բոլոր օրերը նոյնն են: Իւրաքանչիւրը թող իր համոզումը պահէ: Կը բաւէ որ թէ՛ յատուկ օր մը փնտրողը եւ թէ՛ օրերու միջեւ խտրութիւն չդնողը երկուքն ալ Տէրը պատուել կը խորհին: Նոյնպէս ալ, թէ՛ ամէն ինչ ուտողը Տէրը կը պատուէ եւ թէ՛ չուտողը, երբ երկուքն ալ Աստուծոյ գոհութիւն կը յայտնեն:

**Boghos Arakyali Goghme
Hromayetsineroon Kûrvadz Namagen
(13:11-14:23)**

Siro ays ûsgûspoonkov ûntatsek, kidnalov te inch zhamanagi mech gabrink. Zhamanagûn e vor koonû totapenk yev artûnnank, vorovhedev hima pûrgootyoonû aveli mod e mezi, kan ayn aden yerp havadatsink. Kisherû aha gantsni yev tseregû mod e. Oosdi khavari kordzeren heranank yev looyisi zenkerû mer vûra arnenk, abreloo hamar aynbes inchbes vayel e looyisi mech kaloghneroon, pokhanag anaragootyamp, arpetsootyamp, kharnagetsootyamp oo bgh-dzootyamp, gam nakhantsov oo hagaragootyamp abreloo. Der Hisoos Krisdosi nûgara-kirû tser vûra arek, yev marmni tsangootyoonnerû gadareloo hedamood mi ûllak. Havadki mech dûgaratsadz megû ûntoonetsek arants ir khighjû danchogh gasgadznerû kûnnatadeloo. Orinag, megû gû havada te amen inch gareli e oodel. Oorish mû, vor gasgadz ooni ayt masin, panchareghen goode miyayn. Amen inch oodoghû togh charhamarhe choodoghû, isg choodoghû togh chûkûnnatade oodoghû, vorovhedev Asdzadz zayn ûntooner e. Ov yes toon, vor Asdoodzo dzaran gû tades? Derû ink miyayn kide ir havadkin mech gankoon e aniga, te ingadz? Payts vûsdav yeghek vor gankoon bidi mûna, vorovhedev Derû gûrna zayn gankoon bahel.

Nooynbesh, vomank gû khorhin te zAsdvadz bashdeloo hamar aysinch orû aveli garevor e kan mouys orû, minch oorishneroo hamar polor orerû nooynûn yen. Yoorakanchoorû togh ir hamozoomû bahe. Gû pave vor te hadoog or mû pûndroghû yev te oreroo mech khûdrootyoon chûtûnoghû yergookûn al Derû badvel gû khorhin. Nooynbesh al, te amen inch oodoghû Derû gû badve yev te choodoghû, yerp yergookûn al Asdoodzo kohootyoon gû haydnen.

Մեզմէ ռեւէ մէկը ինքն իր անձին համար չ'ապրիր, ո՛չ ալ ինքն իրեն համար կը մեռնի: Եթէ կ'ապրինք՝ Տիրոջ համար կ'ապրինք, եւ եթէ կը մեռնինք՝ Տիրոջ համար կը մեռնինք, որ կը նշանակէ թէ՛ ըլլա՛յ կեանքի եւ ըլլա՛յ մահուան մէջ՝ Տիրոջ կը պատկանինք: Ասոր համար ալ Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի Տէրը ըլլայ բոլորին, թէ՛ ապրողներուն եւ թէ՛ մեռածներուն հաւասարապէս: Ինչո՞ւ կը դատես ուրեմն եղբայրդ, կամ ինչո՞ւ զայն կ'արհամարհես: Բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է. -

«Ես ինձմով կ'երդնում,- կ'ըսէ Տէրը,- որ ամէն ծունկ պիտի խոնարհի առջեւս եւ ամէն լեզու պիտի խոստովանի թէ ես եմ Աստուածը»:

Քանի ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը իր անձին համար հաշիւ պիտի տայ Աստուծոյ, այսուհետեւ դադրի՛նք իրար քննադատելէ, եւ փոխարէնը ջանանք մեր եղբայրներուն գայթակղութեան եւ մեղանչումին պատճառ չդառնալ:

Յիսուս Քրիստոսով հետեւեալը ապահովապէս գիտեմ, թէ ինքնին պիղծ բան չկայ: Բան մը պիղծ կ'ըլլայ ա՛յն մարդուն համար, որ զայն պիղծ կը համարէ: Եթէ գիտես թէ քու ուտելովդ եղբորդ խղճմտանքը կը վիրաւորես, սիրով շարժած չես ըլլար՝ երբ ուտես: Քու կերակուրովդ պատճառ մի՛ դառնար որ կորսուի եղբայրդ, որուն համար Քրիստոս իր կեանքը տուաւ: Առիթ մի՛ տար որ բարի եւ ուղիղ սեպած բանդ հայեցողութեան պատճառ դառնայ: Որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը կերակուր կամ ըմպելիք չէ, այլ արդարութիւն, խաղաղութիւն եւ խնդութիւն, Սուրբ Հոգիէն տրուած: Եւ ով որ ասոնցմով կը ծառայէ Քրիստոսի, անիկա Աստուծոյ հաճելի եւ մարդոց գովելի կ'ըլլայ:

Արդ, այսուհետեւ խաղաղութիւն փնտռենք եւ աշխատինք իրարու հաւատքը ամրապնդել: Չըլլա՛յ որ կերակուրի պատճառով Աստուծոյ գործը քանդես: Ամէն բան ինքնին մաքուր է. բայց սխալ է բան մը ուտել, երբ ստիկա ուրիշ մը կը գայթակղեցնէ:

Mezme voyeve megû inkûn ir antsin hamar chabrir, voch al inkûn iren hamar gû merni. Yete gabrink Diroch hamar gabrink, yev yete gû mernink Diroch hamar gû mernink, vor gû nûshanage te ûlla gyanki yev ûlla mahvan mech Diroch gû badganink. Ador hamar al Krisdos merav yev veragentanatsav, vorbeszi Derû ûlla polorin, te abroghneroon yev te merelneroon

havasarabes. Inchoo gû tades ooremûn yeghpayrût gam inchoo zayn garhamarhes? Polorûs al Krisdosi adyanin timats bidi ganknink, vorovhedev markareyootyan mech kûrvadz e. “Yes intsmov gertnoom,- gûse Derû,- vor amen dzoong bidi khonarhi archevûs yev amen lezoo bidi khosdovani te yes yem Asdvadzû”.

Kani ooremûn yoorakanchoorû ir antsin hamar hashiv bidi da Asdoodzo, aysoohedev tatrink irar kûnnatadele, yev pokharenû chanank mer yeghpayrneroon kaytagghootyan yev meghanchoomin badjar chûtarnal.

Hisoos Krisdosov hedevyalû abahovabes kidem, te inknin bighdz pan chûga. Pan mû bighdz gûlla ayn martoon hamar, vor zayn bighdz gû hamare. Yete kides te koo oodelovût yeghporût khûghjmûdankû gû viravores, sirov sharzhadz ches ûllar yerp oodes. Koo geragoorovût badjar mi tarnar vor gorsûvi yeghpayrût, voroon hamar Krisdos ir gyankû dûvav. Arit mi dar vor pari yev ooghigh sebadz panût hayhoyootyan badjar tarna. Vorovhedev Asdoodzo arkayootyoonû geragoor gam ûmbelik che, ayl artarootyoon, khaghaghootyoon yev khûtootyoon, Soorp Hokiye dûrvadz. Yev ov vor asontsmov gû dzara-ye Krisdosi, aniga Asdoodzo hajeli yev martots kovelî gûlla.

Art, aysoohedev khaghaghootyoon pûn-dûrenk yev ashkhadink iraroo havadkû amrabûntel. Chûlla vor geragoori badjarov Asdoodzo kordzû kantes. Amen pan inknin makoor e, payts sûkhal e pan mû oodel, yerp adiga oorish mû gû kaytagghetsûne.

Աւելի ճիշդ է՝ ո՛չ միս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ ալ ուրիշ ուէլ բան ընել՝ որով եղբայրդ կը գլորի կամ կը գայթակղի կամ կը տկարանայ: Այս մասին քու համոզումդ՝ քու եւ Աստուծոյ միջեւ թող մնայ: Երանի՛ անոր որ ինքզինքը դատապարտութեան չ'ենթարկեր այնպիսի բաներով՝ որով իր ընկերոջ փորձութեան պատճառ կ'ըլլայ: Միւս կողմէ, եթէ մէկը կասկած ունի իր կերածին անմաքրութեան մասին, Աստուծոյ դատապարտութեան ենթակայ է՝ եթէ ուտել, որովհետեւ իր արարքը հաւատքի արդիւնք չէ: Եւ ինչ որ հաւատքէն չի գար՝ մեղք է:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մաթէոսի (6:1-21)***

Զգո՛յ՛, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւոր-
ութիւնները մարդոց ներկայութեան մի՛
կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պա-
րագային վարձատրութիւն պիտի չստանաք
ձեր երկնաւոր Հօրմէն:

Երբ ողորմութիւն կ'ուզես տալ, փող ու
թմբուկով մի՛ ըներ՝ մարդոց ուշադրութիւնը
գրաւելու համար, ինչպէս կ'եղծաւորները
կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակ-
ներու վրայ՝ մարդոցմէ փառաւորուելու
ակնկա ակնկալութեամբ: Վստա՛հ եղէք, միայն
ատիկա է անոնց վարձատրութիւնը:
Ընդհակառակը, երբ դուն ողորմութիւն կու
տաս, ձախ ձեռքդ թող չգլխոնա՛յ թէ ինչ կ'ընէ աջ
ձեռքդ: Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի
ըրած կ'ըլլաս, եւ քու երկնաւոր Հայրդ, որ
անտեսանելի է եւ կը տեսնէ կատարածդ, քեզ
պիտի վարձատրէ յայտնապէս:

Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կ'եղծաւորներուն
մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարան-
ներու մէջ եւ հրապարակներու անկիւնները
կ'եցած աղօթել, որպէսզի մարդիկ իրենց
աղօթելը տեսնեն: Վստահ եղէք, միայն ատիկա
է անոնց վարձատրութիւնը: Դուն երբ
կ'աղօթես՝ մտի՛ր սէնեակդ, գոցէ՛ դուռը եւ
ծածուկ կերպով աղօթէ քու երկնաւոր Հօրդ: Եւ
Հայրդ որ անտեսանելի է ու կը տեսնէ կատարածդ,
քեզի պիտի հատուցանէ յայտնապէս:

Aveli jisht e voch mis oodel, voch kini
khûmel, voch oorish voyeve pan ûnel vorov
yeghpayrût gû klori gam gû kaytagghi gam
gû dûgarana. Ays masin koo hamozoomût
koo yev Asdoodzo michev togh mûna.
Yerani anor vor inkzinkû tadabardootyan
chentarger aynbisi panerov vorov ir ûngeroch
portsootyan badjar gûlla. Mouys goghme,
yete megû gasgadz ooni ir geradzin
anmakrootyan masin, Asdoodzo tadabard-
ootyan yentaga e yete oode, vorovhedeve ir
ararkû havadki artyoonk che. Yev inch vor
havadken chi kar meghek e.

***Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Madteyosi (6:1-21)***

Ūkoosh, Asdoodzo hanteb tser bardavor-
ootyoonnerû martots nergayootyan mi
gadarek tsooytsi hamar, vorovhedeve ayt
barakayin vartsadrootyoon bidi chûsdanak
tser yergnavor Hormen.

Yerp voghormootyoon goozes dal, pogh oo
tûmpoogov mi ûner martots ooshatrootyoonû
kûraveloo hamar, inchbes geghdzavornerû
gûnen zhoghovaranneroo mech yev
hûrabaragneroo vûra martotsme paravor-
veloo agûngalootyamp. Vûsdah yeghek,
miyayn adiga e anonts vartsadrootyoonû.
Ūnthagaragû, yerp toon voghormootyoon
goodas, tsakh tserkût togh chûkidna te inch
gûne ach tserkût. Aysbisov voghorm-
ootyoonût kaghdni ûradz gûllas, yev koo
yergnavor Hayrût, vor andesaneli e yev gû
desne gadaradzût, kez bidi vartsadre haydna-
bes. Nûmanabes, yerp gaghotes geghdzavor-
neroon mi nûmanir, voronk gû siren zhogho-
varanneroo mech yev hûrabaragneroo an-
gyoonnerû getsadz aghotel, vorbeszi martig
irents aghotelû desnen. Vûsdah yeghek,
miyayn adiga e anonts vartsadrootyoonû.
Toon yerp gaghotes mûdir seyagût, kotse
toorû yev dzadzoog gerbov aghote koo
yergnavor Horût. Yev Hayrût vor andesaneli
e oo gû desne gadaradzût, kezi bidi →

Տակաւին, երբ կ'աղօթէք, մի՛ շատախօսէք հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն որ եթէ շատ խնդրեն՝ լսելի պիտի դառնան: Արդ, մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը զիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք:

Ուրեմն այսպէս աղօթեցէք.-

Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ. թող զայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք գործած են: Եւ թող մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք. այլ մեզ չարէն ազատէ՛: Որովհետեւ քուկդ են միշտ արքայ-ութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն:

Որովհետեւ եթէ մարդոց ներքէ իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները:

Երբ ծով կը պահէք, տրտումերես մի՛ ըլլաք կեղծաւորներուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծով կը պահեն: Վստահ եղէք, միայն ասիկա է անոնց վարձատրութիւնը:

Ընդհակառակը, երբ դուն ծով կը պահես, օծէ՛ զլուխդ եւ լուա՛ երեսդ, որպէսզի մարդիկ չտեսնեն թէ ծով կը պահես, այլ միայն Հայրը, որ անտեսանելի է. եւ Հայրդ, որ կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

Ձեր հարստութիւնը մի՛ դիզէք երկրի վրայ, ուր ցեցն ու ժանգը կը փճացնեն եւ կամ գողերը պատդ քանդելով ներս կը մտնեն ու կը գողնան զայն: Այլ ձեր հարստութիւնը դիզեցէք երկինքի մէջ, ուր ցեցն ու ժանգը չեն կրնար փճացնել զայն, եւ ոչ ալ գողերը կրնան պատդ քանդելով ներս մտնել եւ գողնալ: Որովհետեւ ձեր հարստութիւնը ո՛ր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը:

hadooatsane haydnabes.

Dagavin, yerp gaghotek, mi shadakhosek hetanosneroo nûman, voronk gû gardzen vor yete shad khûntren lûseli bidi tarnan. Art, mi nûmanik anonts, vorovhedev tser Hayrû kide inch vor bedk e tsezi, nooynisg yerp dagavin irme khûntradz chek.

Ooremûn aysbes aghotetsek,-

Hayr mer yergnavor, sûrpapanvi anoonût, togh ka arkayootyoonût, togh gadarvi koo gamkût, inchbes vor yerginki mech aynbes al yergri vûra. Amenorya mer hatsû aysor yevs mezi door. Nere mer hantsanknerû, inchbes vor menk gû nerenk anonts voronk mezi tem nooynbes hantsank kodzadz yen. Yev tooyl mi dar vor portsootyan mech iynank, ayl mez charen azade. Vorovhedev koogût yen mishd arkayootyoonû, zoroootyoonû yev parkû, Amen.

Vorovhedev yete martots nerek irents hantsanknerû, tser yergnavor Hayrûn al bidi nere tsezi. Isg yete martots chûnerek irents hantsanknerû, tser Hayrûn al bidi chûnere tser hantsanknerû.

-Yerp dzom gû bahek, dûrdoomyeres mi ûllak geghdzavorneroon nûman, voronk irents yeresû gû gakhen, vorbeszi martots tsooyts dan te dzom gû bahen. Vûsdah yeghek, miyayn adiga e anonts vartsadrootyoonû. Ūnthagaragû, yerp toon dzom gû bahes, odze kûlookhût yev lûva yeresût, vorbeszi martig chûdesnen te dzom gû bahes, ayl miyayn Hayrû, vor andesaneli e, yev Hayrû, vor gû desne gadaradzût, kez bidi vartsadre haydnabes.

-Tser harûsdootyoonû mi tizek yergri vûra, oor tsetsûn oo zhankû gû pûjatsûnen yev gam kogherû badût kanelov ners gû mûdnen oo gû koghnan zayn. Ayl tser harûsdootyoonû tizetsek yerginki mech, oor tsetsûn oo zhankû chen gûrnar pûjatsûnel zayn, yev voch al kogherû gûrnar badût kanelov ners mûdnel yev koghnal. Vorovhedev tser harûsdootyoonû oor vor e, hon gûlla nayeve tser sirdû.

*Մեծ Պահքի Երկրորդ Կիրակի (Արտաքսման)
Պօղոս Առաքելի Կողմէ
Հռոմայեցիներուն Գրուած Նամակէն (12:1-
13:10)*

Ուստի, եղբայրնե՛ր, քանի Աստուած ա՛յնքան ողորմած եղաւ մեզի հանդէպ, կ'աղաչեմ որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս կենդանի զոհ մը՝ իրեն վերապահուած, որովհետեւ աստիկա՛ է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը: Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ:

Ինծի տրուած Աստուծոյ շնորհքով հետեւեալ պատուերը կու տամ իւրաքանչիւրիդ.- Մեծամիտ մի՛ ըլլաք. ընդհակառակը, միշտ համեստ եղէք եւ միայն Աստուծոմէ ձեզի տրուած հաւատքին չափով գնահատեցէք դուք ձեզ: Ինչպէս մեր մարմինը բազմաթիւ անդամներ ունի, որոնց պաշտօնը նոյնը չէ սակայն, այնպէս ալ Քրիստոսի միացած ըլլալով՝ մենք բոլորս մէկ մարմին ենք: Թէպէտ որպէս անդամներ իրարու կապուած ենք, բայց Աստուծոյ շնորհքը իւրաքանչիւրիստարբեր պարզեւ մը տուած է, որ պէտք է գործածենք: Եթէ մարգարէութեան պարզելունինք՝ պէտք է պատգամենք մեր հաւատքին համեմատ: Եթէ ծառայելու շնորհքը տրուած է՝ պէտք է ծառայենք: Եթէ ուսուցանելու ձիրքը ունինք՝ պէտք է ուսուցանենք: Եթէ յորդորելու կարողութիւնը ունինք՝ պէտք է յորդորենք: Իր ունեցածը ուրիշներուն բաժնողը առատօրէն թող բաշխէ: Վերակացու եղողը եռանդագին թող աշխատի: Ողորմութիւն ընողը խնդութեամբ թող ընէ:

Ձեր սէրը թող անկեղծ ըլլայ: Ատեցէ՛ք ինչ որ չար է եւ բարիին կառչած մնացէք: Եղբորպէս իրար սիրեցէք գորովանքով: Յարգելու մէջ իրար գերազանցեցէք:

*Medz Bahki Yergrort Giragi (Ardaksman)
Boghos Arakyali Goghme
Hromeyatsineroon Kûrvadz Namagen
(12:1-13:10)*

Oosdi, yeghpaymer, kani Asdvadz aynkan voghormadz yeghav mezi hanteb, gaghachem vor took tsez Asdoodzo ûndzayek vorbes gentani zoh mû iren verabahvadz, vorovhedev adiga e Asdoodzo oozadz hokevor bashdamoonkû. Ays ashkharhi martots varmoonkû mi ûntorinagek, ayl norokvadz midkov nor mart yeghek, vorbeszi tser portsarootyamp ûndûrek lavû, kidnalov Asdoodzo gamkû, aysinkûn inch vor pari e, ûntooneli e iren yev gadaryal.

Indzi dûrvadz Asdoodzo shûnorhkov hedevyal badverû goodam yoorakanchourit, -Medzamid mi ûllak, ûnthagaragû, mishd hamesd yeghek yev miyayn Asdoodzme tsezi dûrvadz havadkin chapov kûnahadetsek took tsez. Inchbes mer marminû pazmativ antamner ooni, anonts bashdonû nooynû che sagayn, aynbes al Krisdosi miyatsadz ûllalov, menk polorûs meg marmin yenk. Tebed vorbes antamner iraroo gabvadz yenk, payts Asdoodzo shûnorkû yoorakanchouris darper barkev dûvadz e, vor bedk e kordzadzenk. Yete markareyootyan barkevû oonink, bedk e badkamenk mer havadkin hamemad. Yete dzarayeloo shûnorhkû dûrvadz e, bedk e dzarayenk. Yete oosootsaneloo tsirkû oonink, bedk e oosootsanenk. Yete hortoreloo garoghootyoonû oonink, bedk e hotorenk. Ir oonetsadzû oorishneroon pazhnoghû aradoren togh pashkhe. Veragatsoo yeghoghû yerantakin togh ashkhadi. Voghormootyoon ûnoghû khûntootyamp togh ûne.

Tser serû togh angeghdz ûlla. Adetsek inch vor char e yev pariyin garchadz mûnatsek. Yeghpor bes irar siretsek korovankov. Harkeloo mech irar kerazantsetsek.

Եռանդագին աշխատեցէք առանց ծուլանալու:
Ջերմեռանդ հոգիով Տիրոջ ծառայեցէք:

Յոյսով ուրախացէք, նեղութեանց մէջ
համբերող եղէք, յարատեւ աղօթեցէ՛ք: Կարիքի
մէջ եղող եղբայրներուն օգնեցէք եւ միշտ
հիւրասէր եղէք: Օրհնեցէ՛ք ձեզ հալածողները.
մի՛ անիծէք, այլ օրհնեցէք: Ուրախացողներուն
հետ ուրախացէք եւ լացողներուն հետ լացէք:
Բոլորին հանդէպ նոյն վերաբերումը ունեցէք.
մեծամիտ մի՛ ըլլաք, խոնարհ մարդոց ալ
ընկերութիւն ընելու զիջեցէք, եւ դուք ձեզ
խմաստուն մի՛ համարէք:

Ուել մէկուն չարիքին՝ չարիքով մի՛
հատուցանէք: Ջանացէք ընել այն՝ ինչ որ բոլոր
մարդոց աչքին բարի է: Որքան կրնաք՝
ամենուն հետ խաղաղ ապրեցէք: Սիրելիներ, բերքէք
դուք անձամբ վրէժ լուծելու մասին մի՛
մտածէք, այլ ձգեցէք որ Աստուծոյ
բարկութիւնը ընէ ատիկա. որովհետեւ Տէրը
Սուրբ գիրքին մէջ կ'ըսէ. «Ի՛մա է դատելու եւ
պատժելու իրաւունքը. ե՛ս պիտի
հատուցանեմ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. -

*«Եթէ թշնամիդ քաղցած է՝ հաց տուր իրեն. եթէ
ծարաւ է՝ ջուր տուր: Այսպէս վարուելովդ
արդէն ամօթը զինք կ'այրէ»:*

Մի՛ պարտուիր չարէն, այլ՝ բարիով յաղթե
չարին:

Ամէն մարդ պէտք է հնազանդի պետական
իշխանութեանց, որովհետեւ առանց Աստուծոյ
թոյլտուութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ,
եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները
Աստուծմէ կարգուած են: Ուստի, ով որ
իշխանութեանց կը հակառակի՝ Աստուծոյ
հրամանին է որ հակառակած կ'ըլլայ, եւ
հակառակողները իրենք զիրենք դատա-
պարտութեան տակ կը դնեն: Իշխողները վախ
չեն պատճառեր բարիք գործողներուն, այլ
միայն չարագործներուն: Դուն կ'ուզե՛ս
իշխանութենէն չվախնալ: Բարի՛ք գործէ, եւ
անկէ գովասանք կը լսես. որովհետեւ
Աստուծոյ պաշտօնեան է անիկա, քու բարիքիդ
համար կարգուած:

Yerantakin ashkhatetsek arants dzoolanaloo.
Chermyerant hokiyov Diroch dzarayetsek.
Hooysov oorakhatsek, neghootyants mech
hamperogh yeghek, haradev aghotetsek.
Gariki mech yeghogh yeghpayrneroon
oknetsek yev mishd houraser yeghek.
Orhnetsek tsez haladzoghnerû, mi anidzek,
ayl orhnetsek. Oorakhatsoghneroon hed
oorakhatsek yev latsoghneroon hed latsek.
Polorin hanteb nooyv veraperoomû oonetsek,
medzamid mi ûllak, khonarh martots al
ûngerootyoon ûneloo zichetsek, yev took tsez
imasdoon mi hamarek.

Voyeve megoon charikin charikov mi
hadooatsanek. Chanatsek ûnel ayn inch vor
polor martots achkin pari e. Vorkan gûrnak
amenoon hed khaghagh abretsek. Sireliner,
yerpek took antsamp vûrezh loodzeloo masin
mi mûdadzek, ayl tsûketsek vor Asdoodzo
pargoootyoonû ûne adiga, vorovhedeve Derû
Soorp kirkin mech gûse, “Imûs e tadeloo yev
badzheloo iravoonkû, yes bidi hadootsa-
nem”, isg oorish degh mû gûse,- “Yete
tûshnamit kaghtsadz e, hats door iren, yete
dzarav e, choor door. Aysbes varvelovût
arten amotû zink gayer”.

Mi bardûvir charen, ayl pariyov haghte
charin.

Amen mart bedk e hûnazanti bedagan
ishkhanootyants, vorovhedeve arants
Asdoodzo tooyldûvootyan ishkhanootyoon
chi gûrnar ûllal, yev koyootyoon oonetsogh
ishkhanootyoonnerû Asdoodzme garkûvadz
yen. Oosdi, ov vor ishkhanootyants gû
hagaragi, Asdoodzo hûramanin e vor
hagaragadz gûlla, yev hagaragoghnerû irenk
zirenk tadabardootyan dag gû tûnen.
Ishkhoghnerû vakh chen badjarer parik
kordzoghneroon, ayl miyayn charakord-
zneroon. Toon goozes ishkhanootyoonen
chûvakhnal? Parik kodze, yev ange kovasank
gû lûses, vorovhedeve Asdoodzo bashdonyan
e aniga, koo parikit hamar garkûvadz.

Իսկ եթե չար գործես՝ վախցի՛ր անկե, որովհետեւ զուր տեղը չէ որ սուր կը կրէ. որպէս Աստուծոյ պաշտօնեայ՝ քարկութեամբ կը դատէ եւ կը պատժէ չարագործները: Ահա թէ ինչու՝ պէտք է իշխանութեանց հնազանդիլ. ո՛չ միայն պատիժէն զերծ մնալու, այլ մանաւանդ խիղճով հանգիստ ըլլալու համար: Ատոր համար է նաեւ, որ իշխանութեանց տուրք կը վճարէք, որպէսզի իբրեւ Աստուծոյ պաշտօնեաներ՝ շարունակեն իրենց այդ դերը կատարել: Հետեւաբար անոնցմէ իւրաքանչիւրին հանդէպ ձեր պարտաւորութիւնը կատարեցէք, տուրքը տալով անոր՝ որուն տուրք պէտք է տաք, մաքսը տալով անոր՝ որուն մաքս պէտք է տաք, հնազանդելով անոր՝ որուն հնազանդութիւն կը պարտիք եւ յարգելով ան՝ որուն յարգանք կը պարտիք:

Ոեւէ մէկուն ոեւէ բանով պարտական մի՛ մնաք. միմիայն իրար սիրելու պարտաւորութիւնը ունեցէք, քանի որ իր ընկերը սիրողը կատարած կ'ըլլայ Աստուծոյ Օրէնքը: Որովհետեւ Աստուծոյ պատուիրանները, «Մի՛ շնար, մի՛ սպաններ, մի՛ գողնար, սուտ վկայութիւն մի՛ ըներ, մի՛ ցանկար» եւ միւս բոլորը, խտացած են սա միակ պատուիրանին մէջ. «Միրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մաթէոսի (5:17-48)***

- Մի՛ կարծէք թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան՝ առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ այդպէս սորվեցնէ, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի:

Isg yete char kordzes, vakhsir ange, vorovhedeu zoor degh che vor soor gû gûre, vorbes Asdoodzo bashdonya, pargootyamp gû tade yev gû badzhe charakordznerû. Aha te inchoo bedk e ishkhanootyants hûnazantil, voch miyayn badizhe zerdz mûnaloo, ayl manavant khighjov hankisd ûllaloo hamar. Ador hamar e nayeve, vor ishkhanootyants doork gû vûjarek, vorbeszi iprev Asdoodzo bashdonyaner sharoonagen irents ayt terû gadarel. Hedevapar anontsme yoorakan-chyoo in hanteb tser bardavorootyoonû gadaretsek, doorkû dalov anor, voroon doork bedk e dak, maksû dalov, anor voroon maks bedk e dak, hûnazantelov anor, voroon hûnazantootyoon gû bardik yev harkelov an voroon harkank gû bardik.

Voyeve megoon voyeve panov bardagan mi mûnak, mi miyayn iraroo sireloo bardavorootyoonû oonetsek, kani vor ir ûngerû siroghû gadaradz gûlla Asdoodzo orenkû. Vorovhedeu Asdoodzo badvirannerû “Mi shûnar, mi ûsbanner, mi koghnar, sood vûgayootyoon mi ûner, mi tsangar” yev myoos polorû, khûdatsadz yen sa miyag badviranin mech “Sire ûngerût koo antsit bes”. Ov vor ir ûngerû gû sire, charik chûner anor. Ooremûn sirel gû nûshanage Asdoodzo orenkû lûman kordzatrel.

***Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Madteyosi (5:17-48)***

Mi gardzek te yega Movsesi Orenkû gam markareneroo oosootsoomnerû chûncheloo, chega chûncheloo, ayl ampoghchatsûneloo. Hasdad kidtsek, vor polor orenkûn oo markareyootyoonerû ged ar ged bidi iragananan arants par mû isg toors tsûkeloo, minchev ka ayn orû, yerp ays yerginkûn oo yergirû bidi antsnin. Ov vor amenapokûr badviranûn isg zants ûne yev oorishneroon al aytbes sorvetsûne, yerginki arkayootyan mech hedinû bidi nûgadvi.

Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, եթէ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ ձեր հաւատարմութիւնը Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութենէն աւելի չըլլայ՝ պիտի չմտնէք երկինքի արքայութիւնը:

Լսէր էք որ անցեալին ըսուած է. «*Մի՛ սպաններ, որովհետեւ ան որ կը սպաննէ՝ պիտի դատապարտուի*»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.- Ով որ առանց պատճառի իր եղբոր դէմ բարկանայ, դատարան պիտի յանձնուի: Ով որ իր եղբայրը յիմար կոչէ, Ատեան պիտի բերուի. եւ ով որ իր եղբայրը անմիտ կոչէ, դժոխքի կրակին պիտի դատապարտուի: Եթէ զոհարանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ զոհարանին առջեւ, գնա նախ հաշտուէ՛ եղբորդ հետ եւ ա՛յա եկուր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ:

Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ՝ դատարան չինկած, այլապէս քեզ՝ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին, եւ բանտ կը նետուիս: Վստահ եղիր թէ բանտէն պիտի չելլես, մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

Լսէր էք որ ըսուած է. «*Մի՛ շնար*»:

Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ո՛վ որ ցանկութեամբ նայի ոեւէ կնոջ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ: Եթէ աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ եւ նետէ՛ զայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներդ մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմինով դժոխք նետուիս: Եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ եւ նետէ՛ զայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներդ մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմինով դժոխք նետուիս:

- Ըսուած է նաեւ. «*Ով որ իր կինը կ'արձակէ, անոր արձակման թուղթ թող տայ*»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.-

Isg ov vor kordzatre badvirannerû yev oosootsane, medz bidi ûlla yerginki arkayootyan mech. Gûsem tsezi, yete Asdoodzo badviranneroon nûgadmamp tser havadarmootyoonû Pari-setsineroon yev Orenki oosootsichneroon oonetsadz havadarmootenen aveli chûlla, bidi chûmûdnek yerginki arkayootyoonû.

-Lûser ek vor antsyalin ûsvadz e, “Mi ûsbanner, vorovhedev an vor gûsbanne bidi tadabardûvi”. Isg yes gûsem tsezi,- Ov vor arants badjari ir yeghpor tem pargana, tadaran bidi hantsnûvi. Ov vor ir yeghpayrû himar goche, Adyan bidi pervi, yev ov vor ir yeghpayrû anmid goche, tzhokhki gûragin bidi tadabardûvi. Yete zoharanin vûra ûndzat Asdoodzo madootsaneloo aden hishes vor yeghpayrût vûshdatsadz e kezme, tsûke ûndzat zoharanin archev, kûna nakh hashdûve yeghporût hed yev aba yegoor yev ûndzat Asdoodzo madootsane.

Yerp megû khûntir ooni kezi hed yev tadi gû ganche kez, ûsgizpen hamatsaynootyan yegoor anor hed tadaran chingadz, aylabes kez tadavorin gû hantsne, tadavorûn al vosdiganin, yev pand gû nedvis. Vûsdah yeghir te panden bidi chelles, minchev vor dookankit verchin taheganû chûvûjares.

-Lûser ek vor ûsvadz e, “Mi shûnar”. Isg yes gûsem tsezi, te ov vor tsangootyamp nayi voyeve gûnoch arten isg ir sûrdin mech shûnootyoon ûradz gûlla anor hed. Yete ach achkût kez gû kaytagghetsûne, hane yev nede zayn, vorovhedev nakhûndûreli e vor antamneret megû gorsûntsûnes, kan te ampoghch marminov tûzhoghk nedvis. Yete ach tserkût kez gû kaytagghetsûne, gûdre yev nede zayn, vorovhedev nakhûndûreli e vor antamneret megû gorsûntsûnes, kan te ampoghch marminov tzhoghk nedvis.

-Ûsvadz e naye, “Ov vor ir ginû gartsage, anor artsagman tooght togh da”. Isg yes gûsem tsezi,-

Ան որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը կ'արձակէ, ինք պատճառ կը դառնայ անոր շնութիւն ընելուն: Նոյնպէս, շնութիւն ըրած կ'ըլլայ ան որ կ'ամուսնանայ արձակուած կնոջ հետ:

- Լսեր էք նաեւ որ անցեալին ըսուած է. «*Երդմնագանց մի՛ ըլլար, այլ կատարէ ինչ որ երդուած էիր Տիրոջ*»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.- Բնաւ երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ՝ որովհետեւ Աստուծոյ գահն է, ո՛չ երկրի վրայ՝ որովհետեւ անոր ոտքին պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ՝ որովհետեւ Մեծ Թագաւորին՝ Աստուծոյ քաղաքն է, եւ ո՛չ ալ քու գլխուդ վրայ երդում ըրէ, որովհետեւ չես կրնար մազ մը իսկ ճերմկցնել կամ սեւցնել: Պարզապէս ձեր Այոն Այո թող ըլլայ եւ Ոչը՝ Ոչ: Անկէ աւելին չարէն կու գայ:

- Լսեր էք որ ըսուած է. «*Աչքի դէմ աչք պիտի հասնուցանես եւ ակոյսի դէմ՝ ակոյս*»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.- Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին: Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ զարնէ՝ միւս երեսդ ալ դարձուր անոր: Եւ եթէ մէկը ուզէ քեզ դատի կանչել՝ շապիկդ առնելու համար, բաճկոնդ ալ տուր անոր: Եթէ մէկը քեզ բռնադատէ մէկ մղոն միասին երթալ՝ իր բեռը շալկելու համար, անոր հետ երկու մղոն ալ գնա: Եթէ մէկը քեզմէ բան մը խնդրէ՝ տուր, եւ եթէ մէկը քեզմէ բան մը փոխ առնել ուզէ՝ երես մի՛ դարձնէր:

- Լսեր էք արդարեւ որ ըսուած է. «*Մի՛րէ՛ ընկերդ եւ ատէ՛ թշնամիդ*»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.- Մի՛րեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէք ձեզ ատողներուն եւ աղօթեցէք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն: Այսպիսով դուք ձեր երկնաւոր Հօր զաւակները պիտի դառնաք, որովհետեւ ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ: Եթէ միայն ձեզ սիրողները սիրէք, Աստուծմէ ի՞նչ վարձատրութիւն կրնաք սպասել: Մաքսաւորներն ալ նոյնը չեն ըներ:

An vor arants bornûgootyan badjari ir ginû gartsage, ink badjar gû tarna anor shûnootyoon ûneloon. Nooynbesh, shûnootyoon ûradz gûlla an vor gamoosnana artsagvadz gûnoch hed.

-Lûser ek nayeve antsyalin ûsvadz e, “Yertûmnazants mi ûllar, ayl gadare inch vor yertvadz eyir Diroch”. Isg yes gûsem tsezi,- Pûnav yertoom mi ûnek, voch yerginki vûra vorovhedev Asdoodzo kahûn e, voch yergri vûra, vorovhedev anor vodkin badvantân e, voch Yeroosaghemî vûra, vorovhedev Medz Takavorin Asdoodzo kaghakûn e, yev voch al koo kûlkhoot vûra yertoom ûre, vorovhedev ches gûrnar maz mû isg jermûgtsûnel gam sevtsûnel. Barzabesh tser Ayon Ayo togh ûlla yev Vochû Voch. Ange avelin charen gooka.

-Lûser ek vor ûsvadz e, “Achki tem achk bidi hadootsanes yev agrayi tem agra”. Isg yes gûsem tsezi,- Mi hagaragir kezi charik ûnoghin. Yete megû ach yeresit abdag zarne, myoos yeresût al tartsoor anor. Yev yete megû ooze kez tadi ganchel, shabigût arneloo hamar, pajgonût al door anor. Yete megû kez pûrnatade meg mûghon miyasin yertal, ir perû shalgeloo hamar, anor hed yergoo mûghon al kûna. Yete megû kezme pan mû khûntre door, yev yete megû kezme pan mû pokh arnel ooze, yeres mi tartsûner.

-Lûser ek artarev vor ûsvadz e, “Sire ûngerût yev ade tûshnamit”. Isg yes gûsem tsezi,- Siretsek tser tûshnaminerû, orhnetsek tsez anidzoghnerû, parik ûrek tsez adoghneroon yev aghotetsek anonts hamar, voronk tsez gû charcharen oo gû haladzen. Aysbisov took tser yergnavor Hor zavagnerû bidi tarnak, vorovhedev an ir arevû gû dzaketsûne te chareroon yev te parineroon vûra yev antsrev gû deghatsûne te artarneroon yev te meghavorneroon vûra. Yete miyayn tsez siroghnerû sirek, Asdoodzme inch vartsadrootyoon gûrnak ûsbasel? Maksavornerûn al nooynû chen ûner?

Նմանապէս, եթէ միայն ձեր ազգակիցներուն հետ բարեկամութիւն ընէք, հեթանոսներէն աւելի ի՞նչ ըրած կ'ըլլաք: Անոնք ալ նոյնը չէ՞ն ընէր: Արդ, դուք կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է:

Մեծ Պաշտի Երրորդ Կիրակի (Անառակին)

Պօղոս Առաքեալի Կողմէ

**Կորնթացիներուն Գրուած Երկրորդ Նամակէն
(6:1-7:1)**

Արդ, որովհետեւ Աստուծոյ գործակիցներն ենք, կ'աղաչենք ձեզի, մի՛ վատնէք Աստուծմէ ձեր ստացած շնորհքը: Որովհետեւ Աստուծոյ կ'ըսէ.-

«Երբ յարմար ժամանակը եկաւ՝ լսեցի քեզ, երբ փրկութեան օրը հասաւ՝ օգնեցի քեզի»:

Ահա հիմա՛ է այդ յարմար ժամանակը. հիմա՛ է փրկութեան օրը:

Ուեւէ բանով պատճառ մի՛ ըլլաք որ Աստուծոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի. այլ բոլոր պարագաներուն ալ դուք ձեզ ցոյց տուէք որպէս Աստուծոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը, չարչարանքը, ծեծը, բանտը, խռովարարներու վայրագութիւնները, յոգնութիւնը, անքնութիւնը, անօթութիւնը: Այս բոլորը տարէք մաքուր սրտով, գիտակցօրէն, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութիւնը քարոզելով, Աստուծոյ գօրութեամբ եւ արդարութեամբ զինուած՝ չարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար: Մի՛ այլայլիք ո՛չ փառքէն եւ ո՛չ անարգանքէն, ո՛չ գովասանքէն եւ ո՛չ մեղադրանքէն: Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի. մենք զիտենք թէ ճշմարտութենէն չենք շեղած: Թող չուզեն մեզ ճանչնալ. մենք զիտենք թէ մեզ լաւ կը ճանչնան: Թող մեռած սեպեն մեզ. մենք ահա կենդանի ենք: Թող մեզ պատժապարտ համարեն. մենք զիտենք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք: Թող մեր կեանքը տխուր կարծեն. մենք միշտ ուրախ ենք:

Nûmanabes, yete miyayn tser azkagitsneroon hed paregamootyoon ûnek, hetanosneren aveli inch ûradz gûllak? Anonk al nooynû chen ûner? Art, took gadaryal yeghek, inchbes vor tser yergnavor Hayrû gadaryal e.

Medz Bahki Yerrort Giragi (Anaragin)

Boghos Arakyali Goghme

**Gorûntatsineroon Kûrvadz Yergrort
Namagen (6:1-7:1)**

Art, vorovhedeved Asdoodzo kordzagitsnerûn yenk, gaghachenk tsezi, mi vadnek Asdoodzme tser ûsdatsadz shûnorkû. Vorovhedeved Asdvadz gûse,-

“Yerp harmar zhamanagû yegav lûsetsi kez, yerp pûrgootyan orû hasav, oknetsi kezi”.

Aha hima e ayt harmar zhamanagû, hima e pûrgootyan orû.

Voyeve panov badjar mi ûllak vor Asdoodzo kordzû khapanvi gam vargapegvi, ayl polor barakaneroon al took tsez tsooyts dûvek vobes Asdoodzo bashdonyaner, medz hamperootyamp hantsûn arnelov negh-oootyoonû, vishdû, charcharankû, dzedzû, pandû, khûrovararneroo vayrakootyoonnerû, hoknootyoonû, ankûnootyoonû, anotootyoonû. Ays polorû darek makoor sûrdov, kidagtsoren, hamperootyamp, kaghtsr-oootyamp, Soorp Hokiyov, angeghdz sirov, jûshmardootyoonû karozelev, Asdoodzo zorootyamp yev artarootyamp zinvadz charin tem hartsageloo yev inkzink bashdbaneloo hamar. Mi aylaylik, voch parken yev voch anarkanken, voch kovasanken yev voch meghatranken. Martig moloradz togh ûsen mezi, menk kidenk jûshmardootenen chen sheghadz. Togh choozen mez janchnal, menk kidenk te mez lav gû janchnan. Togh meradz seben mez, menk aha gentani yenk. Togh mez badjabard hamaren, menk kidenk te mahvan tadabardootenen azadadz yenk. Togh mer gyankû dûkhood gardzen, menk mishd oorakh yenk.

Աղքատ թող սեպեն. մենք շատերու կեանքերը կը ճոխացնենք: Այո՛, կը թուի թէ ոչինչ ունինք, մինչդէռ ամէն ինչ ունինք:

Ահա, սիրելի՛ Կորնթացիներ, ամէն ինչ բաց եւ անկեղծ սրտով ըսի ձեզի: Դուք ինչո՞ւ կը դժուարանաք արտայայտուելու: Ո՛չ, իմ պատճառովս հարկաւ, այլ պարզապէս՝ ձեր սերը արտայայտելու կը քաշուիք: Բայց կ'ուզեմ որ ինծի պէս բանաք ձեր սիրտերը եւ ազատօրէն խօսիք դուք ալ. չե՞ որ իմ զաւակներս էք դուք:

Բնաւ անհաւատներուն լծակից մի՛ ըլլաք: Ի՞նչ կապ կրնայ ունենալ արդարը անօրէնին հետ, կամ ի՞նչ նոյնութեան եզր կրնայ ըլլալոյսին ու խաւարին միջեւ: Ի՞նչ համաձայնութիւն կրնայ ըլլալ Քրիստոսի եւ Սատանային միջեւ, կամ ի՞նչ գործ ունի հաւատացեալը անհաւատին հետ: Ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին եւ մեհեաններուն միջեւ:

Արդարեւ, մենք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.-

«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք՝ իմ ժողովուրդս»: Ահա թէ ինչո՞ւ Աստուած կը հրահանգէ մեզի.-

«Անջատ եւ հեռո՛ւ կեցէք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ: Ես ձեզի Հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս ու աղջիկներս պիտի ըլլաք,-կ'ըսէ ամենակալ Տէրը»:

Սիրելիներ՛ք, այս խոստումները մեզի եղած են: Ուստի հեռո՛ւ մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ Հովկասի (15:1-32)

Շատ մը մաքսաւորներ եւ մեղաւորներ Յիսուսի կու գային՝ զինք լսելու համար: Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները սկսան տրտնջալ, ըսելով.

Aghkad togh seben, menk shaderoo gyankerû gû jokhatsûnenk. Ayo, gû tûvi vochinch oonink, minchter amen inch oonink.

Aha, sireli Gorûntatsiner, amen inch pats yev angeghdz sûrdov ûsi tsezi. Took inchoo gû tûzhvaranak ardahaydûveloo? Voch im badjarovûs hargav, ayl barzabes tser serû ardahaydeloo gû kashvik. Payts goozem vor indzi bes panak tser sirderû yev azadoren khosik took al, che vor im zavagnerûs ek took?

Pûnav anhavadneroon lûdzagits mi ûllak. Inch gab gûrna oonenal artarû anorenin hed? gam inch nooynootyan yezûr gûrna ûllal looyisin oo khavarin michev? Inch hamatsaynootyoon gûrna ûllal Krisdosi yev Sadanayin michev, gam inch kordz ooni havadatsyalû anhavadin hed? Inch nûmanootyoon ga Asdoodzo dajarin yev mehyanneroon michev?

Artarev, menk yenk gentani Asdoodzo dajarû, inchbes Asdvadz ink ûsav.-

“Anonts mech bidi pûnagim yev anonts hed bidi abrim. Yes irents Asdvadzû bidi ûllam yev anonk im zhoghovoorûts”. Aha te inchoo Asdvadz gû hrahamke mezi,-

“Anchad yev hero getsek hetanosneren, bighdz paneroo mi tûbchik, yev yes tsez bidi ûntoonim. Yes tsezi Hayr bidi ûllam yev took im dûghakûs oo aghchignerûs bidi ûllak, - gûse amenagal Derû”.

Sireliner, ays khosdoomnerû mezi yeghadz yen. Oosdi heroo mûnank marmnagan yev hokegan amen bûghdzootene, menk mez gadarelaves makrenk, Asdoodzo yerghoughovû abrelov.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Ghoogasi (15:1-32)

Shad mû maksavorner yev meghavorner Hisoosi gookayin zink lûseloo hamar. Parisetsinerûn oo Orenki oosootsichnerû ûsgûsan dûrdûnchal ûselov,

- Ինչպէ՞ս կ'ըլլայ որ այս մարդը մեղաւորները կ'ընդունի եւ անոնց հետ կը ճաշէ:

Յիսուս հետեւեալ առակը պատմեց անոնց.

- Ենթադրենք որ ձեզմէ մէկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը արօտավայրին մէջ եւ չ'երթար կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն: ⁵Եւ երբ գտնէ՝ ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ եւ տուն կը դառնայ, կը կանչէ իր բարեկամներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ»: Կ'ըսեմ ձեզի, երկինքի մէջ նոյնպէս ուրախութիւն պիտի ըլլայ մէկ ապաշխարող մեղաւորի համար, քան իննսունինը արդարներու համար, որոնք ապաշխարութեան պէտք չունին:

- Կամ ենթադրենք թէ կին մը տասը արծաթ դահեկան ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, ճրագը չի՞ վառեր եւ տունը ուշադրութեամբ չ'աւեր, մինչեւ որ դահեկանը գտնէ: Եւ երբ գտնէ, կը կանչէ իր բարեկամուհիներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսնցուցած դահեկանս գտայ»: Կ'ըսեմ ձեզի, Աստուծոյ հրեշտակները նոյն ձեւով պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ:

Ապա շարունակեց.

- Մարդ մը երկու զաւակ ունէր: Կրտսերը հորը ըսաւ. «Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկած բաժինը հիմա՛ տուր ինծի»: Եւ հայրը իր զաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք, կրտսեր զաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով՝ մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ազարակը դրկեց զինք՝ խոզ արածելու համար:

-Inchbes gûlla vor ays martû meghavornerû gûntooni yev anonts hed gû jashe.

Hisoos hedevyal aragû badmets anonts.

-“Yentatrenk vor tsezme megû haryoor vochkhar ooni. Yerp anontsme megû gosûntsûne, chi tsûker innsooninû arodavayrin mech yev chertar gorsûvadzin yedeven, minchev vor kûdne zayn? Yev yerp kûdne oorakhootyamp ir ooseroon vûra gû tûne yev doon gû tarna, gû ganche ir paregamnerûn oo tûratsinerû yev gûse anonts, “Oorakhatsek indzi hed, vorovhedeve gorsûvadz vochkharûs kûda”. Gûsem tsezi, yerginki mech nooyndes oorakh-oootyoon bidi ûlla meg abashkharogh meghavori hamar, kan innsooninû artarneroo hamar, voronk abashkharootyan bedk choonin.

-**Gam** yentatrenk te gin mû dasû ardzat tahegan ooni. Yerp anontsme megû gosûntsûne, jûrakû chi varer yev doonû ooshatrootyamp chavler, minchev vor taheganû kûdne? Yev yerp kûdne, gû ganche ir paregamoohinerûn oo tratsinerû yev gûse anonts, “Oorakhatsek indzi hed, vorovhedeve gorsûntsootsadz taheganûs kûda”. Gûsem tsezi, Asdoodzo hreshdagnerû nooyndesov bidi oorakhanan meghavori mû hamar, vor gabashkhare”.

Yev aba sharoonagets,

“-Mart mû yergoo zavag ooner. Gûrtserû horû ûsav, “Hayr, koo ûsdadzvadzet indzi ingadz pazhinû hima door indzi”.

Yev hayrû ir zavagneroon michev pazhnets ir oonetsadzû. Kani me or yedk, gûrtser zavagû arav ir ampoghch harûsdootyoonû yev heroo yergir mû kûnats. Hon anarag gyank mû abrelov mûskhets harûsdootyoonû yev ûsbarets ir ampoghch oonetsadzû.

Badahetsav vor ayt yergrin mech medz sov mû direts, yerp arten ink ûsgûsadz er aghkadanal. Oosdi kûnats ayt yergri kaghakatsineren megoon kov dzara yeghav, yev aniga ir akaragû ghûrgets zink khoz aradzeloo hamar.

Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիրներէն իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. «Հօրս տան մէջ քանի՜ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն. - Հայ՛ր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. զիս քու գործաւորներէդ մէկը նկատէ»: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց:

Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գթաց. վազելով դիմաւորեց զայն, վիզին փաթառեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. «Հայ՛ր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու»: Հայրը իր ծառաներուն հրամայեց. «Անմիջապէս բերէք լաւագոյն պատմուճանը եւ հագցուցէք իրեն. մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս զաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախճանքի:

Մինչ այդ, երեց զաւակը ազարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ, երզի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ի՞նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. «Եղբայրդ եկաւ, եւ որովհետեւ ողջ-առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց»: Երեց եղբայրը զայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ: Իսկ անիկա պատասխանեց. «Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ. ռեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ եկաւ այդ որդիդ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիր անոր համար»: Հայրը ըսաւ.

Nooynisg badrasd er khozeroon geradz yeghchourneren ir porû letsûneloo, sagayn voch vok goodar iren. Yerp antratartsav ir vijagin, inkûniren ûsav, “Horûs dan mech kani kordzavorner gan, voronk irents bedk yeghadz geragooren avelin oonin, minch yes hos anotootene gû mernim. Yellem yertam horûs kov yev ûsem iren, “Hayr meghanchetsi Asdoodzo yev kezi tem, aylevûs arzhani chem koo vortit gochveloo, zis koo kordzavorneret megû nûgade”. Aba yelav yev horû kov kûnats.

Dagavin doonen pavagan hero er, yerp hayrû desav zink oo kûtats, vazelov timavorets zayn, vizin pattûvetsav yev hampoorets. Vortin horû ûsav, “Hayr meghanchetsi Asdoodzo yev kezi tem, aylevûs arzhani chem. koo vortit gochveloo”. Hayrû ir dzaraneroon hûramayets, “Anmichabes perek lavakooyin badmoojanû yev haktsootsek iren, madani antsootsek ir madin yev goshig dûvek iren. Perek barard hortû, mortetsek, oodenk yev oorakhanank. Vorovhedev im ays zavagûs meradz er, voghchûntsav, gorsûvads er kûdnûvetsav”. Yev ûsgûsan khûrahjanki.

Minch ayt, yerets zavagû akarag gû kûdnûver. Veratartsin, yerp dan modetsav, yerki oo bari tsayner lûsets. Ganchets dzaraneren megû yev hartsoots te inch ga. Dzaran ûsav iren, “Yeghpayrût yegav, yev vorovhedev voghch – aroghch veratartsav, hayrût barard hortû mortets”. Yerets yeghpayrû zayratsav yev choozets ners mûdnel. Ays masin imanalov, hayrû toors yelav yev aghachets vor ners mûdne. Isg aniga badaskhanets, “Darinere i ver kezi gû dzarayem, voyeve meg hrahankût chandesetsi, yev sagayn nooynisg ool mû chûdûvir indzi, vor oorakhanayi paregamneroos hed. Minchter, yerp yegav ayn vortit, vor koo ûsdadzvadzkût bornigneroon hed mûskhets, barard hortû mortetsir anor hamar”. Hayrû ûsav,

«Տղա՛ս, դուն միշտ ինձի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»:

*Մեծ Պաիքի Չորրորդ Կիրակի (Տնտեսի)
Պօղոս Առաքեալի Կողմէ
Եփեսացիներուն Գրուած Նամակէն
(4:17-5:14)*

Արդ, Տիրոջ կողմէ կ'ազդարարեմ ձեզի.- Չըլլայ որ կրկին դառնաք այն կենցաղին, որով հեթանոսները կ'ապրին անմտօրէն: Անոնց միտքը խաւարած է. իրենց տգիտութեան եւ յամառ անտարբերութեան պատճառով՝ օտարացած են Աստուծոյ կեանքին, եւ քանի այդ կեանքին յոյսը չունին, իրենք զիրենք անառակութեան տուած՝ ամէն պղծութիւն կը գործեն անյազօրէն: Բայց ես ձեզի սորվեցուցի, թէ այդ չէ՛ Քրիստոսի ճամբան: Դուք լսեցիք իր պատգամները եւ իրեն միանալով սորվեցաք՝ թէ Յիսուսի մէջ է ճշմարտութիւնը: Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն՝ ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եղէք նոր մարդ մը՝ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած, եւ ապրեցէք ճշմարիտ կեանքը՝ արդարութեամբ ու սրբութեամբ:

Հետեւաբար ստախօսութենէն հրաժարեցէ՛ք: «Ամէն մարդ ճշմարտութիւնը թող ըսէ իր ընկերոջ», ինչպէս կ'ըսէ մարգարէն, որովհետեւ Քրիստոսի միացած ըլլալով՝ իրարու անդամներ ենք: Եւ ինչպէս սաղմոսերգուն կ'ըսէ՝ «Նոյնիսկ երբ բարկանաք՝ չըլլայ որ մեղանչէք». եւ բարկացած չմնաք մինչեւ իրիկուն: Բնաւ առիթ մի՛ տաք Սատանային: Ով որ գողութեամբ կ'ապրէր՝ թող այլեւս չգողնայ, այլ՝ վարժուի արդար վաստակով ոչ միայն իր հացը շահելու, այլ նաեւ բարիք գործելու, օգնելով անոնց՝ որոնք կարօտ են:

“Dûghas, toon mishd indzi hed yes yev ampoghch oonetsadzûs koogût e. Sagayn hima bedk e oorakhanak yev tsûndzank, vorovhedev ays yeghpayrût meradz er, voghchûntsav, gorsûvadz er, kûdnûvetsav”

*Medz Bahki Chorrort Giragi (Dûndesi)
Boghos Arakyali Goghme
Yepesatsineroon Kûrvadz Namagen
(4:17-5:14)*

Art, Diroch goghme gaztararem tsezi,
- Chûlla vor gûrgin tarnak ayn gentsaghin, vorov hetanosnerû gabrin anmûdoren. Anonts midkû khavaradz e, irents dûkidootyan yev hamar andarperootyan badjarov odoratsadz yen Asdoodzo gyankin, yev kani ayt gyankin hooysû choonin, irenk zirenk anaragootyan dûvadz, amen bûghdzootyoon gû kordzen anhakoren. Payts yes tsezi sorvetsootsi, te ayt che Krisdosi jampan. Took lûsetsik ir badkamnerû yev iren miyanalov sorvetsak te Hisoosi mech e jûshmardootyoonû. Oosdi mortsek tser hin inknootyoonû, aysinkûn, tser nakhgin abrelagerbû, vor khapoosig tsangootyoon-nerov abaganadz er, veranorokvetsek hokiyov tser mûdadzelagerbû pokhelov, yeghek nor mart mû Asdoodzo badgerin hamatsayn ûsdegdhdzûvadz, yev abretsek jûshmarid gyankû artarootyamp yev sûrpootyamp.

Hedevapar sûdakhosootenen hûrazharetsek. “Amen mart jshmardoot-yoonû togh ûse ir ûngeroch”. Inchbes gûse markaren, vorovhedev Krisdosi miyatsadz ûllalov iraroo antamner yenk. Yev inchbes saghmoserkoon gûse, “Nooynisg yerp parganak chûlla vor meghanchek”, yev pargatsadz chûmûnak minchev irigoon. Pûnav arit mi dak Sadanayin. Ov vor koghootyamp gabrer togh aylevûs chûkoghna, ayl varzhûvi artar vasdagov voch miyayn ir hatsû shaheloo, ayl nayev parik kordzeloo, oknelov anonts voronk garod yen.

Ոեւէ տգեղ խօսք չելլէ՝ ձեր բերանէն: Խօսեցէք միայն ինչ որ պէտք է, ինչ որ բարի է՝ ուրիշներուն հաւատքը ամրապնդելու համար, որպէսզի լսողները Աստուծոյ շնորհքովը լեցուին:

Մի՛ տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով կնքուեցաք՝ փրկութեան օրուան հասնելու համար: Ձեզմէ արմատախի՛լ ըրէք ամէն դառնութիւն, բարկութիւն ու զայրոյթ, պոռչտութիւն եւ հայհոյութիւն, եւ առաջքը առած կ'ըլլաք անոնց չար հետեւանքներուն: Իրարու հանդէպ քաղցր ու գրած եղէք եւ ներեցէ՛ք իրարու, ինչպէս Աստուած ալ Քրիստոսի միջոցաւ ներեց մեզի:

Աստուծոյ նմանեցէք, որպէս իր սիրելի որդիները, եւ սիրով շարժեցէք, այնպէս՝ ինչպէս Քրիստոս մեզ սիրեց եւ մեզ փրկելու համար ինքզինքը Աստուծոյ ընծայեց որպէս անուշահոտ ընծայ եւ զոհ: Պոռնկութեան, ոեւէ պղծութեան կամ ազահութեան խօսքն իսկ թող չըլլայ ձեր մէջ, որովհետեւ այդպէ՛ս կը վայելէ Աստուծոյ ժողովուրդին: Վայել չէ որ լկտի եւ ամբարիշտ խօսակցութիւններով՝ կամ խեղկատակութեամբ՝ զբաղիք. այլ՝ ձեր խօսակցութիւնը միշտ գոհաբանութիւն պէտք է ըլլայ: Մէկ բան վստահ գիտցէք, թէ ոեւէ մէկը որ պոռնկութիւն կ'ընէ, պղծասէր է կամ ազահ - ինչ որ կռապաշտութիւն է - ժառանգութիւն պիտի չունենայ Քրիստոսի եւ Աստուծոյ արքայութեան մէջ: Հետեւաբար, չըլլայ որ ոեւէ մէկը պարապ խօսքերով ձեզ խաբէ. որովհետեւ այս բաներուն համար Աստուած իր բարկութիւնը պիտի թափէ անհնազանդ մարդոց վրայ: Ասկէ ետք ոեւէ յարաբերութիւն մի՛ ունենաք այնպիսիներուն հետ, որովհետեւ թէպէտ ժամանակ մը խաւար էիք, սակայն հիմա որ Տիրոջ միացաք՝ լոյս էք: Հետեւաբար լոյսի որդիներուն վայել ձեւով ապրեցէք. որովհետեւ լոյսին պտուղներն են՝ բարութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը: Ջանացէք հասկնալ՝ թէ Աստուած ի՛նչ կ'ուզէ ձեզմէ, եւ բնաւ մասնակից մի՛ ըլլաք խաւարին գործերուն,

Voyeve dûkegh khosk chelle tser peranen. Khosetsek miyayn inch vor bedk e, inch vor pari e oorishneroon havadkû amrabûnteloo hamar, vorbeszi lûsoghnerû Asdoodzo shûnorkovû letsvin. Mi dûrdmetsûnek Asdoodzo Soorp Hokin, vorov gûnkûvetsak pûrgootyan orvan hasneloo hamar. Tsezme armadakhil ûrek amen tarnootyoon, pargootyoon oo zayrooyt, borchûdook yev hayhoyootyoon, yev arachkû aradz gûllak anonts char hedevankneroon. Iraroo hanteb kaghtsûr yeghek yev neretsek iraroo, inchbes Asdvadz al Krisdosi michotsav nerets mezi. Asdoodzo nûmanetsek, vorbes ir sireli vortinerû, yev sirov sharzhetsak, aynbes inchbes Krisdos mez sirets yev mez pûrgeloo hamar inkzinkû Asdoodzo ûndzayets vorbes anooshahod ûndza yev zoh. Borngootyan, voyeve bûghdzootyan gam akahootyan khoskûn isg togh chûlla tser mech, vorovhedev aytbes gû vayelev Asdoodzo zhoghovoortin. Vayel che vor lûgdi yev amparishd khosagtsootyoonnerov gam kheghgadagootyamp ûzpaghik, ayl tser khosagtsootyoonû mishd kohapanootyoon bedk e ûlla. Meg pan vûsdah kidtsek, te voyeve megû vor bornûgootyoon gûne, bûghdzaser e gam akah - inch vor grabashdootyoon e - zharankootyoon bidi choonena Krisdosi yev Asdoodzo arkayootyan mech. Hedevapar, chûlla vor voyeve megû barab khoskerov tsez khape, vorovhedev ays paneroon hamar Asdvadz ir pargootyoonû bidi tape anhûnazant martots vûra. Asge yedk voyeve haraperootyoon mi oonenak aynbisineroon hed, vorovhedev tebed zhamanag mû khavar eyik, sagayn hima vor Diroch miyatsak looys ek. Hedevapar looysi vortineroon vayel tsevov abretsek, vorovhedev looysin bûdooghnerûn yen, parootyoonû, artarootyoonû yev jshmardootyoonû. Chanatsek hasgûnal te Asdvadz inch gooze tsezme, yev pûnav masnagits mi ûllak khavarin kordzeroon,

որոնք Աստուծոյ կամեցած պտուղները չեն տար: Ընդհակառակը, ձաղկեցէ՛ք զանոնք, որովհետեւ մութին մէջ կը գործուին անոնց արարքները, որոնց մասին խօսիլն իսկ ամօթ է: Բայց բոլոր այդ ծածուկ արարքները Քրիստոսի լոյսով կը յայտնուին եւ կը յանդիմանուին, որովհետեւ լոյսը կը յայտնէ ամէն բան: Ահա թէ ինչո՞ւ երգը կ'ըսէ.-

«Արթնցի՛ր, ո՛վ քնացած. դո՛ւրս եկուր մեռելութենէդ, եւ Քրիստոս պիտի լուսաւորէ քեզ»:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ Ղուկասի (16:1-31)

Իր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց.

- Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վրայ տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին՝ ըսելով թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. «Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնուած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»:

Տնտեսը ինքնիքեն խորհեցաւ. «Ի՞նչ կրնամ ընել. ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը զրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն զիտեմ թէ ինչ պէտք է ընեմ, որ երբ տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ ընդունին զիս իրենց տուներէն ներս»: Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտապանները եւ առաջինին հարցուց. «Ո՞րքան պարտք ունիս տիրոջս»: Անիկա պատասխանեց. «Երկու հարիւր թիթեղ ձէթ»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամորհակդ. նստէ եւ անմիջապէս գրէ՝ հարիւր»: Յետոյ հարցուց միւսին. «Դո՞ւն որքան պարտք ունիս»: Անիկա պատասխանեց. «Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամորհակդ. նստէ եւ գրէ՝ երեք հարիւր յիսուն»: Տէրը ասիկա լսելով՝ գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար:

voronk Asdoodzo gametsadz bûdooghnerû chen dar. Ûnthagaragû, tsaghgetsek zanonk, vorovhede v mootin mech gû kordzûvin anonts ararknerû, voronts masin khosilûn isg amot e. Payts polor ayt dzadzoog ararknerû Krisdosi looysov gû haydnûvin yev gû hantimanvin, vorovhede v looysû gû haydne amen pan. Aha te inchoo yerku gûse, -“Artûntsir, ov kûnatsadz, toors yegoor merelootenet, yev Krisdos bidi loosavore kez”.

Hisoos Krisdosi Avedaranen Ûsd Ghoogasi (16:1-31)

Ir ashaderdneroon ays aragû badmets.

Medzaharoosd mart mû gar, vor ir ûsdatsvadzkneroon vûra dûndes mû ooner. Yerp dûndesin masin martig ampas-danoootyoon ûrin, ûselov te ir diroch harûsdootyoonû gû vadne, medzaharoosdû ganchets zink yev ûsav, “Inch yen koo masit ays ûsvadznerû? Kezi hantsnûvadz polor ûsdatsvadzkneroos hashivû door. Aylevûs im dûndesûs ches gûrnar ûllal”.

Dûndesû inkniren khorhetsav, “Inch gûrnam ûnel? aha derûs zis dûndesootyan bashdonen gû zûrge. Panvorootyoon chem gûrnar ûnel, mooraloo gamûchnam. Sagayn kidem te inch bedk e ûnem, vor yerp derûs zis dûndesootyan bashdonen heratsûne, martig ûntoonin zis irents dooneren ners”. Aba meg ar meg ganchets ir diroch bardabannerû yev arachinin hartsoots, “Vorkan bardk oonis dirochûs?” Aniga badaskhanets, “Yergoo haryoor titegh tset”. Dûndesû ûsav, “Ahavasig bardamoorhagût, nûsde yev anmichabes kûre haryoor”. Hedo hartsoots myoosin, “Toon vorkan bardk oonis?”. Aniga badaskhanets, “Chors haryoor barg tsoren”. Dûndesû ûsav, “Ahavasig bardamoorhagût, nûsde yev kûre yerek haryoor hisoon”. Derû asi lûselov kovets anirav dûndesû ir hûnaramûdootyan hamar.

Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրարու հանդէպ իրենց վարմունքին մէջ աւելի ճարպիկ են քան լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի.- Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտենական յարկերու մէջ ընդունին:

Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է՝ մեծին մէջ ալ հաւատարիմ է, իսկ ով որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է՝ մեծին մէջ ալ անհաւատարիմ է: Հետեւաբար, եթէ աշխարհիկ հարստութիւնը գործածելուն մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի վստահի ձեզի: Այսինքն, եթէ հաւատարիմ չեղաք աշխարհիկ հարստութեան, որ ձերը չէ, ինչպէ՞ս կ'ուզէք որ Աստուած ձեզի տայ ձեզի սպասող ճշմարիտ հարստութիւնը: Ոչ մէկ ծառայ կրնայ երկու տերերու ծառայել, որովհետեւ՝ կա՛մ մէկը պիտի աստ է միւսը սիրէ, կամ՝ մէկը պիտի մեծարէ եւ միւսը արհամարհէ: Չէք կրնար թէ՛ Աստուծոյ ծառայել եւ թէ՛ դրամին:

Փարիսեցիները, որոնք դրամասէր էին, երբ այս բոլորը լսեցին, սկսան հեզնել զինք: Յիսուս ըսաւ անոնց.

- Դուք ձեզ ուրիշներուն արդար ցոյց կու տաք, սակայն Աստուած գիտէ ձեր սիրտերը: Որովհետեւ մարդոց աչքին փառաւորը Աստուծոյ աչքին անարգ է: Մովսէսի Օրէնքը եւ մարգարէներու ուսուցումները մինչեւ Յովհաննէս ի գօրու էին. անկէ ասդին Աստուծոյ արքայութիւնը կ'աւետարանուի եւ ամէն մարդ կը փութայ բոնութեամբ ներս մտնել: Աւելի դիւրին է որ երկինքն ու երկիրը կորսուին, քան Օրէնքին ամենափոքր տառը:

Ով որ իր կինը արձակէ եւ ուրիշ մը առնէ՝ կը շնայ. նոյնպէս կը շնայ ան՝ որ արձակուած կնոջ հետ կ'ամուսնանայ:

-Մեծահարուստ մարդ մը կար, որ բեհեզ եւ ծիրանի հագուստներ կը հագնէր եւ ամէն օր փառաւոր խնճոյք կ'ընէր

Vorovhedeu ays ashkharhi martigû iraroo hanteb irents varmoonkin mech aveli jarbig yen kan looyi vortinerû. Yev yes gûsem tsezi,- Ashkharhig harûsdootyoonû kordzadzetssek aynbes, vor Asdoodzo paregamootyoonû shahik, vorbeszi yerp ays ashkharhen yellek, tsez havidenagan hageroo mech ûntoonin.

Ov vor pokûr dzarayootyan mech havadarim e medzin mech al havadarim e, isg ov vor pokûr dzarayootyan mech anhavadarim e, medzin mech al anhavadarim e. Hedeuapar, yete ashkharhig harûsdootyoonû kordzadzeloan mech havadarim cheghak, jûshmarid harûsdootounû ov bidi vûsdahi tsezi? Aysinkûn, yete havadarim cheghak ashkharhig harûsdootyan, vor tserû che, inchbes goozek vor Asdvadz tsezi da tsezi ûsbasogh jûshmarid harûsdootyoonû. Voch meg dzara gûrna yergoo dereroo dzarayel, vorovhedeu gam megû bidi ade yev myoosû sire, gam megû bidi medzare yev myoosû arhamarhe. Chek gûrnar te Asdoodzo dzarayel yev te tûramin.

Parisetsinerû, voronk tramaser eyin, yerp ays polorû lûsetsin, ûsgûsan heknel zink. Hisoos ûsav anonts.

-Took tsez oorishneroon artar tsooyts goodak, sagayn Asdvadz kide tser sûrderû. Vorovhedeu martots achkin paravorû Asdoodzo achkin anark e. Movsesi Orenkû yev markareneroo oosootsoomnerû minchev Hovhannes i zoroo eyin, ange astin Asdoodzo arkayootyoonû gavedaranvi yev amen mart gû poota pûrnootyamp ners mûdnel. Aveli tourin e vor yerginkûn oo yergirû gorsûvin kan Orenkin amenapokûr darû.

Ov vor ir ginû artsage yev oorish mû arne gû shûna, nooynbesh gû shûna an vor artsagvadz gûnoch hed gamoosnana.

-Medzaharoosd mart mû gar, vor pehez yev dzirani hakoosdner gû hanker yev amen or paravor khûnjooyk gûner.

Ղազարոս անունով աղքատ մըն ալ կար, որ անոր դրան առջեւ կը նստէր եւ կը յուսար իր փորը լեցնել մեծահարուստին սեղանի աւելցութեամբով: Ղազարոս վերքերով ծածկուած էր, եւ շուներ կու գային իր վերքերը կը լզէին: Աղքատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Աբրահամի մօտ: Մեծահարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ: Դժոխքին մէջ, մինչ մեծահարուստը կը տանջուէր, աչքերը բարձրացուց եւ հեռուն Աբրահամը տեսաւ, ինչպէս նաեւ Ղազարոսը՝ անոր քով: Մեծահարուստը աղաղակեց. «Հայր Աբրահամ, ողորմէ՛ ինծի եւ դրկէ Ղազարոսը, որ մատին ծայրը ջուրին թաթխէ եւ զովացնէ լեզուս, որովհետեւ այս կրակին մէջ ծարաւէն կը տառապիմ»: Աբրահամ ըսաւ անոր. «Որդեա՛կ, յիշէ՛ թէ ի՛նչպէս դուն քու կեանքիդ ընթացքին ամէն բարիք վայելեցիր, մինչ Ղազարոս չարչարուեցաւ: Հիմա անիկա հոս կը հանգստանայ, մինչ դուն հոդ կը տառապիս: Գիտցի՛ր նաեւ, որ մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ: Եթէ ուզեն այստեղէն ձեր մօտ անցնիլ՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ»: Մեծահարուստը ըսաւ. «Կ'աղաչեմ, հայր, Ղազարոսը դրկէ իմ հօրս տունը, ուր հինգ եղբայրներ ունիմ. թող զանոնք նախագգուշացնէ՝ որպէսզի անոնք ալ տանջանքի այս վայրը չգան»: Աբրահամ ըսաւ անոր. «Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն»: Մեծահարուստը ըսաւ. «Ատիկա բաւական չէ, հայր Աբրահամ. բայց եթէ մեռելներէն մէկը յարութիւն առնէ եւ երթայ իրենց՝ պիտի ապաշխարեն»: Աբրահամ պատասխանեց. «Եթէ Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներուն մօտիկ չեն ըներ, մեռելներէն յարութիւն առնող մըն ալ պիտի չկարենայ համոզել զիրենք»:

Ghazaros anoonov al gar, vor anor tûran archev gû nûsder yev gû hoosar ir porû letsûnel medzaharoosdin seghani aveltsooknerov. Ghazaros verkerov dzadzgûvadz er, yev shooner gookayin ir verkerû gû lûzeyin. Aghkadû merav yev hûreshdagnerû zink darin Aprahami mod. Medzaharoosdûn al merav yev taghvetsav. Tûzhokhkin mech, minch medzaharoosdû gû danchûver, achkerû partsratsoots yev heroon Aprahamû desav, inchbes nayev Ghazarosû anor kov. Medzaharoosdû aghaghagets, “Hayr Apraham, voghorme indzi yev ghûrge Ghazarosû, vor madin dzayrû choorin tatkhe yev zovatsûne lezoos, vorovhedeve ays gragin mech dzaraven gû darabim”. Apraham ûsav anor, “Vortyag, hishe te inchbes toon koo gyankit ûntatskin amen parik vayletsir, minch Ghazaros charcharvetsav. Hima aniga hos gû hankûsdana, minch toon hot gû darabis. Kidtsir nayev, vor medz antoont mû ga mer yev tser michev. Yete oozen aysdeghehen tser mod antsnil chen gûrnar, yev voch al megû honge mer mod gûrna kal”.

Medzaharoosdû ûsav, “Gaghachem, hayr, Ghazarosû ghûrge im horûs doonû, oor hink yeghpayrner oonim, togh zanonk nakhazkooshatsûne vorbeszi anonk al danchanki ays vayrû chûkan”. Apraham ûsav anor, “Anonk Movsesi Orenkûn oo markarenerû oonin, togh anonts badvirannerû lûsen yev kordzatren”. Medzaharoosdû ûsav, “Adiga pavagan che, Hayr Apraham, payts yete merelneren megû harootyoon arne yev yerta irents bidi abashkharhen”. Apraham badaskhanets, “Yete Movsesi Orenkin yev markareneroon mûdig chen ûner, merelneren harootyoon arnogh mûn al bidi chûgarena hamozel zirenk”.

*Մեծ Պահքի Հինգերորդ Կիրակի (Դատաւորի)
Պօղոս Առաքեալի Կողմէ
Փիլիպպեցիներուն Գրուած Նամակէն (3:1-4:9)*

Հետեւաբար, եղբայրնէ՛րս, Տիրոջմով ուրախա-
ցեք: Նոյն բաները գրելը ինծի համար ձանձրոյթ
չէ, բայց ձեզ ճշմարտութեան մէջ կը հաստատեմ:
Զգուշացեք այն մարդոցմէ, այն շուներէն,
որոնք չարիք կը սերմանեն՝ ստիպելով որ
թլփատուիք: Իսկական թլփատուածները մե՛նք
ենք, որովհետեւ Աստուծոյ Հոգիով լեցուած
պաշտամունք կը կատարենք եւ միայն
Քրիստոս Յիսուսի միացած ըլլալով կը
պարծենանք, եւ ո՛չ թէ Օրէնքին
գործադրութեամբ կամ Աբրահամի մարմնա-
ւոր զաւակը ըլլալով: Եթէ ատոնք բաւարար
ըլլային փրկուելու համար, ինծի ոչինչ պիտի
պակսէր. եւ եթէ ոեւէ մէկը կը կարծէ թէ
մարմնական այդ կապին կրնայ վստահիլ, ես
աւելիով կրնամ, քանի ութօրեայ թլփատուած
Իսրայէլացի մըն եմ, Բենիամինի ցեղէն,
գտարին Եբրայեցի եւ օրինապահ Փարիսեցի:
Ա՛յնքան նախանձախնդիր էի, որ Քրիստոսի
եկեղեցին կը հալածէի. եւ արդար էի այնքան՝
որքան Օրէնքին անթերի գործադրութիւնը
կրնար տալ: Սակայն այս բոլորը, որ
Ժամանակ մը առաւելութիւն կը սեպէի, հիմա
վնաս կը համարեմ՝ Քրիստոսի սիրոյն համար:
Եւ իրաւ, ամէն ինչ վնաս կը համարեմ՝
համեմատած այն գերազանց շահին հետ, որ
մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը ճանչնալն է: Այդ
գիտութիւնը ունենալու համար՝ ամէն ինչ
թողոցի, ոչնչութիւն սեպելով, որպէսզի
Քրիստոսը շահիմ, եւ կատարելապէս անոր
միանամ: Այնպէս որ, իմ արդարութիւնս այլեւս
Օրէնքի գործադրութենէն չի՛ գար, այլ՝
Քրիստոսի հանդէպ ունեցած հաւատքէս, եւ
այդ արդարութիւնը Աստուծմէ եկած
արդարութիւնն է, հիմնուած՝ հաւատքի վրայ:
Հիմա միակ փափաքս է՝ ճանչնալ Քրիստոսը,
անոր յարութեան գօրութիւնը, եւ անոր
չարչարանքներուն մասնակից դառնալ՝ անոր
մահուան օրինակը իմ վրաս առնելով,
որպէսզի ես ալ արժանի ըլլամ մեռելներէն
յարութիւն առնելու:

*Medz Bahki Hinkerort Giragi (Tadavori)
Boghos Arakyali Goghme
Pilibetsineroon Kûrvadz Namagen
(3:1-4:9)*

Hedevapar, yeghpayrner, Dirochmov
oorakhatsek. Nooyñ panerû kûrelû indzi
hamar tsantsrooyt che, payts tsez
jûshmardootyan mech gû hasdade.
Ûzkooshatsek ayn martotsme, ayn
shooneren, voronk charik gû sermanen
ûsdibelov vor tûlpadvik. Isgagan
tûlpadvadznerû menk yenk, vorovhedev
Asdoodzo hokiyov letsvadz bashdamoonk gû
gadarenk yev miyayn Krisdos Hisoosi
miyatsadz ûllalov gû bardzenank, yev voch te
Orenkin kordzatrootyamp gam Aprahami
marmnavor zavagû ûllalov. Yete adonk
pavarar ûllayin pûrgûveloo hamar, indzi
vochinch bidi bagser, yev yete voyeve megû
gû gardze te marmnagan ayt gabin gûrna
vûsdahil, yes aveliyov gûrnam, kani ootorya
tûlpadvadz Israyelatsi mûn yem, Penyamini
tsegheñ, zûdaryoon Yeprayetsi yev orinabah
Parisetsi. Aynkan nakhantsakhûntir eyi, vor
Krisdosi yegeghetsin gû haladzeyi, yev artar
eyi aynkan vorkan Orenkin anteri
kordzatrootyoonû gûrnar dal. Sagayn ays
polorû, vor zhamanag mû aravelootyoon gû
sebeyi, hima vûnas gû hamarem, Krisdosi
sirooyñ hamar. Yev irav, amen inch vûnas gû
hamarem hamemadadz ayn kerazants shahin
hed, vor mer Derû Hisoos Krisdosû
janchnalûn e. Ayt kidootyoonû oonenaloon
hamar amen inch toghootsi,
vochûnchootyoon sebelov, vorbeszi
Krisdosû shahim, yev gadarelaves anor
miyanam. Aynbes vor, im artarootyoonûs
aylevûs Orenki kordzatrootyoonûn e,
himnûvadz havadki vûra. Hima miyag
papakûs e janchnal Krisdosû, anor harootyan
zorootyoonû, yev anor charcharankneroon
masnagits tarnal, anor mahvan orinagû im
vûras arnelov, vorbeszi yes al arzhani ûllam
merelneren harootyoon arneloo.

Չեմ ըսեր թէ արդէն յաջողած եւ կատարելութեան հասած եմ, բայց հասնելու կը ձգտիմ, որովհետեւ ճիշդ ասոր համար Քրիստոս Յիսուս զիս պահեց: Եղբայրներ, ինքզինքս դեռ կատարելութեան հասած չեմ համարեր. բայց կ'աշխատիմ անցեալը մոռնալ եւ գալիքին նայիլ, եւ ուշադիր կերպով կը վազեմ դէպի նպատակակէտը, իբրեւ մրցանակ ստանալու համար յաւիտենական կեանքը, որուն կը հրաւիրէ մեզ Աստուած, Քրիստոս Յիսուսով:

Արդ, մենք որ կատարեալ ենք՝ նոյն ձեռով խորհինք: Իսկ եթէ դուք որոշ կէտերու շուրջ տարբեր կը խորհիք, Աստուած ինք ձեզ պիտի լուսաբանէ: Ամէն պարագայի, միասնաբար քալենք այն կանոններով, որոնցմով ընթացանք մինչեւ հիմա:

Եղբայրներ, ինծի՝ նմանեցէք, եւ հետեւեցէք անոնց՝ որոնք ձեզի տուած մեր օրինակով կ'ընթանան: Որովհետեւ, ինչպէս յաճախ կ'ըսէի եւ հիմա եւս լալով կ'ըսեմ, մեր մէջ կան շատեր՝ որոնց կեանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: Անոնց վերջը կորուստ է, որովհետեւ իրենց Աստուածը իրենց փորն է: Ամօթալի բաներով կը հպարտանան եւ միայն երկրաւոր բաներու մասին կը խորհին: Մենք, սակայն, երկինքի քաղաքացիներ ենք եւ հոնկէ՝ կը սպասենք որ գայ մեր Փրկիչը՝ Տէր Յիսուս Քրիստոս, որ մեր մահկանացու մարմինները պիտի կերպարանափոխէ եւ իր մարմինին պէս փառաւոր դարձնէ իր գորութեամբը, որով կրնայ ամէն ինչ իր իշխանութեան ենթարկել:

Ուստի, սիրելի եւ կարօտալի եղբայրներ, դուք՝ որ իմ ուրախութիւնս էք եւ պսակս, այսպէս ամբօրէն Տիրոջ միացած մնացէք, սիրելիներ: Եռոդիային ու Սինտիքին կ'աղաչեմ, եւ կը թելադրեմ՝ որ իրարու հետ հաշտուին, քանի Տիրոջ միացած են: Դո՛ւն ալ, ո՛վ հաւատարիմ լծակիցս, կը խնդրեմ որ օգնես այս երկու կիներուն, որովհետեւ ինծի հետ պայքարեցան Աւետարանին տարածման համար, Կղեմէսի եւ միւս գործակիցներու հետ միասին, որոնց

Chem ûser te arten hachoghadz yev gadarelootyan hasadz yem, payts hasneloo gû tsûkdim, vorovhedev jisht ador hamar Krisdos Hisoos zis bahets. Yeghpayrner, inkzinkûs ter gadarelootyan hasadz chem hamarer, payts gashkhadim antsyâlû mornal yev kalikin nayil, yev ooshatir gerbov gû vazem tebi nûbadagagedû, iprev mûrtsanag ûsdanaloo hamar havidenagan gyankû, voroon gû hûravire mez Asdvadz, Krisdos Hisoosov.

Art, menk vor gadaryal yenk, nooyñ tsevov khorhink. Isg yete took vorosh gederoo shoorch darper gû khorhik, Asdvadz ink tsez bidi loosapane. Amen barakayi, miyasnapar kalenk ayn ganonnerov, vorontsmov ûntatsank minchev hima.

Yeghpayrner indzi nûmanetsek, yev hedevetsek anonts voronk tsezi dûvadz mer orinagov gûntanan. Vorovhedev, inchbes hajakh gûseyi yev hima yevs lalov gûsem, mer mech gan shader voronts gyankû tûshnamank e Krisdosi khachin. Anonts verchû gorosd e, vorovhedev irents Asdvadzû irents porûn e. Amotali panerov gû hûbardanan yev miyayn yergravor panerov masin gû khorhin. Menk, sagayn, yergûnki kaghakatsiner yenk yev honge gûsbasenk vor ka mer Pûrgichû, Der Hisoos Krisdos, vor mer mahganatsoo marminnerû bidi gerbaranapokhe yev ir marmnin bes paravor tartsûne ir zorootyampû, vorov gûrna amen inch ir ishkhanootyanyentargel.

Oosdi, sireli yev garodali yeghpayrner, took vor im oorakhootyoonûs ek yev bûsagûs, aysbes amroren Diroch miyatsadz mûnatsek, sireliner.

Yevotyayin oo Sindikin gaghachem, yev gû telatrem vor iraroo hed hashdûvin, kani Diroch miyatsadz yen. Toon al, ov havadarim lûdzagitsûs, gû khûntrem vor oknes ays yergoo gineroon, vorovhedev indzi hed baykaretsan Avedaranin daradzman hamar, Gûghemesi yev myoos kordzagitsneroos hed

անունները կեանքի գիրքին մէջ արձանագրուած են:

Միշտ ուրախ եղէք Տիրոջմով. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէք:

Քոյրքին հանդէպ ազնիւ եղէք: Շուտով Տէրը կու գայ: Ոեւէ բան թող չմտահոգէ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ գոհաբանութեամբ Աստուծմէ խնդրեցէք ինչ բանի որ կարիքը կը զգաք, եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ միտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սիրտերն ու միտքերը, որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

Ի վերջոյ, եղբայրներ, խորհեցէք այն բաները՝ որոնք ճշմարիտ են, պարկեշտ, արդար, մաքուր, սիրելի, բարեհամբաւ, առաքինի եւ գովելի: Եւ գործքով կատարեցէք այն՝ ինչ որ ինձմէ սորվեցաք եւ ընդունեցիք, ինձմէ լսեցիք եւ իմ վրաս տեսաք. եւ Աստուած, որ խաղաղութիւն կու տայ, ձեզի հետ պիտի ըլլայ:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (17:20-18:14)***

Փարիսեցիներ Յիսուսի հարցունքին, թէ ե՛րբ պիտի գայ Աստուծոյ թագաւորութիւնը: Անիկա պատասխանեց.

- Աստուծոյ թագաւորութիւնը արտաքնապէս տեսանելի նշաներով պիտի չգայ. կամ պիտի չըսեն թէ «Ահա հոս է կամ հոն», որովհետեւ ահա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր մէջ կը գտնուի:

Ապա իր աշակերտներուն ըսաւ.

- Ժամանակ պիտի գայ, երբ դուք պիտի ցանկաք Մարդու Որդիին այս օրերէն մէկը տեսնել, բայց պիտի չտեսնէք: Եւ եթէ ձեզի ըսեն՝ «Ահա հոս է կամ հոն», մտիկ մի՛ ընէք, մի՛ հետեւիք անոնց: Որովհետեւ՝ ինչպէս կայծակը փայլատակելով կը լուսաւորէ երկնակամարին մէկ կողմէն մինչեւ միւսը, նոյնպէս պիտի ըլլայ Մարդու Որդին իր գալստեան օրը: Սակայն նախ պէտք է որ անիկա շատ չարչարանքներ կրէ եւ մերժուի այս սերունդէն:

miyasın, voronts anoonnerû gyanki kirkin meç artsanakrvadz yen.

Mishd oorakh yeghek Dirochmov, tartsyal gûsem oorakh yeghek.

Polorin hanteb azniv yeghek. Shoodov Derû gooka. Voyeve pan togh chûmûdahoke tsez, ayl mishd tser aghotkneroon yev aghachankneroon meç kohoonag sirdov Asdoodzme khûntretsek inch pani vor garikû gûzkak, yev ayn aden Asdoodzo khaghaghootyoonû, vor midkov gareli che hasgûnal, khaghagh bidi bahe tser sirdern oo midkerû, voronk Krisdos Hisoosi miyatsadz yen.

I vercho, yeghpayrner khorhetsek ayn panerû voronk jûshmarid yen, bargeshd, artar, makoor, sireli, parehampav, arakini yev koveli. Yev kordzkov gadaretsek ayn inch vor indzme sorvetsak yev ûntoonetsik, indzme lûsetsik yev im vûras desak, yev Asdvadz, vor khaghaghootyoon gooda, tsezi hed bidi ûlla.

***Hisoos Krisdosi Avedaranen Êsd
Ghoogasi (17:20-18:14)***

Parisetsinerû Hisoosi hartsootsin, te yerp bidi ka Asdoodzo takavorootyoonû. Aniga badaskhanets.

Asdoodzo takavorootyoonû ardaknabes desaneli nûshannerov bidi chûka, gam bidi chûsen te “Aha hos e gam hon”, vorovhedev aha Asdoodzo takavorootyoonû tser meç gû kûdnûvi. Aba ir ashagerdneroon ûsav,

-Zhamanag bidi ka, yerp took bidi tsangak Martoo Vortiyin ays oreren megû desnel, payts bidi chûdesnek. Yev yete tsezi ûsen “Aha hos e gam hon”, mûdig mi ûnek, mi hedevik anonts. Vorovhedev, inchbes gaydzagû payladagelov gû loosavore yergnagamargin meg goghmen minchev myoosû, nooyinbes bidi ûlla Martoo Vortin ir kalûsdyan orû. Sagayn nakh bedk e vor aniga shad charcharankner gûre yev merzhûvi ays seroonten.

Եւ ինչպէս որ Նոյի ժամանակ Աստուծոյ պատիժը յանկարծակի վրայ հասաւ, նոյնպէս պիտի պատահի Մարդու Որդիին օրերուն ալ: Անոնք ալ կ'ուտէին, կը խմէին, այր կամ կին կ'առնէին, մինչեւ այն օրը, երբ Նոյ տապան մտաւ, եւ ջրհեղեղը եկաւ բնաջնջեց զանոնք: Կամ ինչպէս Ղովտի օրերուն պատահեցաւ. կ'ուտէին, կը խմէին, կը գնէին, կը ծախէին, կը տնկէին ու կը շինէին. բայց այն օրը որ Ղովտ Սողոմը ձգեց, երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց եւ բնաջնջեց բոլորը: Նոյնը պիտի պատահի այն օրը, երբ Մարդու Որդին յայտնուի:

Այդ օրը, ան որ տանիք ելած է՝ թող վար իջնելով տուն չմտնէ՝ հոն գտնուող իր գոյքերը առնելու համար: Նոյնպէս, ան որ դաշտին մէջ է՝ թող տուն չվերադառնայ ունեցածները առնելու համար: Յիշեցէ՛ք Ղովտի կնոջ պարագան: Ով որ կը ջանայ իր կեանքը փրկել պիտի կորսընցնէ զայն, եւ ով որ կորսնցնէ իր կեանքը՝ պիտի փրկէ զայն: Կ'ըսեմ ձեզի, այդ գիշեր եթէ մէկ անկողինի մէջ երկու հոգի ըլլան՝ անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի, կամ եթէ երկու կին միասին ցորեն կ'աղան՝ անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի, կամ եթէ արտին մէջ երկու հոգի ըլլան, անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի:

Աշակերտները հարցունցին Յիսուսի.
- Տէ՛ր, ո՞ր պիտի պատահի ատիկա:

Անիկա պատասխանեց.

- Անգղները կը հաւաքուին հոն՝ ուր դիակ կայ: Յիսուս առակ մը պատմեց իր աշակերտներուն, ցոյց տալու համար թէ պետք է միշտ աղօթել՝ առանց վհատելու:

Եւ ըսաւ.

- Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ անոր կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիքեն.

Yev inchbes Noyi zhamanag Asdoodzo badizhû hangardzagi vûra hasav, nooynbes bidi badahi Martoo Vortiyin oreroon al. Anonk al goodeyin, gû khûmeyin, ayr gam gin garneyin, minchev ayn orû, yerp Noy daban mûdav, yev chûrhegheghû yegav yev pûnachûnchets zanonk. Gam inchbes Ghovdi oreroon badahetsav, goodeyin, gû khûmeyin, gû kûneyin, gû dzakheyin, gû dûngeyin oo gû shineyin, payts ayn orû vor Ghovd Sotomû tsûkets, yerginken grag oo dzûdzoomp deg hats yev pûnachûnchets polorû. Nooynû bidi badahi ayn orû, yerp Martoo Vortin haydnûvi.

Ayt orû, an vor danik yeladz e, togh var ichnelov doon chûmûdne, hon kûdnûvogh ir kooykerû arneloo hamar. Nooynbes, an vor tashdin mech e, togh doon chûveratarna oonetsadzû arneloo hamar. Hishetsek Ghovdi gûnoch barakan. Ov vor gû chana ir gyankû pûrgel, bidi gorsûntsûne zayn, yev ov vor gorsûntsûne ir gyankû bidi pûrge zayn. Gûsem tsezi, ayt kisher yete meg angoghini mech yergoo hoki ûllan, anontsme megû bidi arnûvi yev myoosû tsûkvi, gam yete yergoo gin miyasin tsoren gaghan, anontsme megû bidi arnûvi yev myoosû tsûkvi, gam yete ardin mech yergoo hoki ûllan, anontsme megû bidi arnûvi yev myoosû tsûkvi.

Ashagerdnerû hartsootsin Hisoosi,

-Der oor bidi badahi adiga?.

Aniga badaskhanets,

-Ankûghnerû gû havakvin hon oor tiyag ga.

Hisoos arag mû badmets ir ashagerdneroon, tsooyts daloo hamar te bedk e mishd aghotel arants vûhadeloo. Yev ûsav,

Kaghaki mû mech tadavor mû gar, vor voch Asdoodzme gû vakhnar yev voch al martotsme gamûchnar. Nooyn kaghakin mech ayri gin mûn al gar, vor anor gû timer yev gû khûnter, “Iravoonkûs bashdbane hagaragortneres”. Tadavorû yergar zhamanag merzhets tadû desnel, sagayn i vercho ûsav inkniren,

«Թէեւ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, քայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինծի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ»:

Ապա Տէրը շարունակեց.

- Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան. պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որոնք զիշեր ու ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեմ ձեզի՝ որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց Մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ:

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք իրենք իրենց համար այն համարումը ունէին թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին:

- Երկու հոգի տաճար գացին աղօթելու. մէկը՝ Փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, ինքնիրեն կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ՝ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ ամբողջ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը հեռուն կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու՝ կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»:

- Կ'ըսեմ ձեզի,- եզրակացուց Յիսուս,- մաքսաւորն է որ արդարացած տուն գնաց, եւ ո՛չ թէ Փարիսեցին. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

Տօն Ս. Գրիգոր Լուսաւորչի Խոր Վիրապ Մուտքին

**Պօղոս Առաքեալի Կողմէ
Փիլիպպեցիներուն Գրուած Նամակէն
(1:12-21)**

Կ'ուզեմ որ զիտնաք, եղբայրնե՛ր, թէ զիսուս եկած բոլոր պատահարները աւելի եւ աւելի նպաստեցին Աւետարանի տարածման:

“Teyev Asdoodzme chem vakhnar yev martotsme chem amûchnar, payts kani vor ays ayirin neghootyoon gooda indzi, ir tadû desnem, vorbeszi minchev verch kalov zis chanhankûsdatsûne”. Aba Derû sharoonagets,

-Lûsetsek te inch gûse anirav tadavorû. Isg Asdvadz vorkan bidi hampere ir ûndûryalneroon gûradz aniravootyan? bidi chûbashdbane zanonk, voronk kisher tsereg iren gû timen? Ayo, gûsem tsezi, vor anonts iravoonkû anmichabes bidi bashdbane. Payts Martoo Vortin yerp ka, artyok havadk bidi kûdne yergri vûra?

Ays aragûn al badmets anonts, voronk irents hamar ays hamaroomû ooneyin te artar yen yev oorishnerû garhamarheyin.

-Yergoo hoki dajar katsin aghoteloo, megû parisetsi myoosû maksavor. Parisetsin meg goghm getsadz, inkniren gaghoter, “Asdvadz im, shnorhagal yem kezme vor oorish martots nûman hapûshdagogh, anirav, shûnatsogh chem, gam ays maksavorin bes al chem. Ayl shapatû yergoo ankam dzom gû bahem yev ampoghch yegamoodis dasanortû dajarin goodam. Isg maksavorû heroon getsadz, achkerû arants ver partsratsûneloo goordzkû gû dzedzer yev gûser, “Asdvadz, nere megfavoris megghkerû”.

-Gûsem tsezi, -yezragatsoots Hisoos,- maksavorûn e vor artaratsadz doon kûnats, yev voch te parisetsin, vorovhedev ov vor ir antsû gû Partsratsûne bidi khonarhi, yev ov vor ir antsû khonarhetsûne bidi partsrana.

Don Soorp Krikor Loosavorchi Khor Virab Moodkin

**Boghos Arakyali Goghme
Pilibbetsineroon Kûrvadz Namagen
(1:12-21)**

Goozem vor kidnak, yeghpayrner, te kûlkhoos yegadz polor badaharnerû aveli yev aveli nûbasdetsin Avedarani daradzman.

Թե՛ կայսերական պալատին եւ թե՛ այլ շրջանակներու մէջ բոլորը իմացան, թէ Քրիստոսի համար բանտարկուած եմ: Նաեւ, բան-տարկութիւնս Տիրոջ միացած բազմաթիւ եղբայրներու քաջութիւն ներշնչեց եւ համարձակութիւն տուաւ՝ աւելի՛ անվախօրէն Աստուծոյ խօսքը քարոզելու:

Կան այնպիսիներ, որոնք նախանձի եւ հակառակութեան համար Քրիստոսը կը քարոզեն, բայց ուրիշներ սիրալոյսով կերպով կ'ընեն: Անոնք որ սերէն մղուած կը քարոզեն, այդպէս կ'ընեն՝ որովհետեւ գիտեն թէ Աւետարանի պաշտպանութեան համար բանտարկուած կը մնամ: Իսկ անոնք որ հակառակասիրութենէ մղուած Քրիստոսը կը քարոզեն՝ անշուշտ բարի նպատակով չէ որ կ'ընեն, այլ կը կարծեն թէ այդ ձեւով բանտարկութեանս մէջ առաւել վիշտ կը պատճառեն ինծի: Սակայն ի՞նչ նշանակութիւն ունին ասոնք. շարժառիթը ի՞նչ ալ ըլլայ, պատրուակ թէ անկեղծ ցանկութիւն, կը բաւէ որ Քրիստոս կը քարոզուի, եւ ես ուրախ եմ ասոր համար, ուրախ ալ պիտի մնամ. որովհետեւ գիտեմ թէ վերջ ի վերջոյ ատիկա իմ փրկութեանս պիտի ծառայէ, շնորհիւ ձեր աղօթքներուն, եթէ Յիսուս Քրիստոսի Հոգին շնորհէ: Այնպէս կ'ակնկալեմ եւ կը յուսամ, որ ամօթով պիտի չմնամ, այլ՝ ինչպէս միշտ՝ այս անգամ եւս համարձակութեամբ պիտի պաշտպանեմ հաւատքս, այնպէս որ Քրիստոս փառաւորուի ինձմով, ըլլա՛յ ատիկա ապրելովս, ըլլա՛յ մեռնելովս: Որովհետեւ ինծի համար կեանքը Քրիստոս է, եւ ուստի մեռնիլ՝ այդ կեանքը շահիլ կը նշանակէ:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Մաթէոսի (16:24-28)***

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.

- Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ: Որովհետեւ ո՛վ որ ուզէ իր կեանքը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ո՛վ որ ինծի համար կորսնցնէ իր կեանքը՝ պիտի գտնէ զայն:

Te gayseragan baladin yev te ayl shûrchanneroo mech polorû imatsan, te Krisdosi hamar pandargûvadz yem. Nayev, pandargootyoonûs Diroch miyatsadz pazmativ yeghpayrneroo kachootyoon nershûnchets yev hamartsagootyoon dûvav aveli anvakhoren Asdoodzo khoskû karozeleloo.

Gan aynbisiner, voronk nakhantsi yev hagaragootyan hamar Krisdosû gû karozen, payts oorishner sirahojar gerbov gûnen. Anonk vor seren mûghvadz gû karozen, aytbes gûnen vorovhedevev kiden te Avedarani bashdbanootyan hamar pandargûvadz gû mûnam. Isg anonk vor hagaragasirootene mûghvadz Krisdosû gû karozen anshooshd pari nûbadagov che vor gûnen, ayl gû gardzen te ayt tsevov pandargootyanûs mech aravel vishd gû badjaren indzi. Sagayn inch nûshanagootyoon ooni adonk? sharzharitû inch al ûlla, badûrvag te angeghdz tsangootyoon, gû pave vor Krisdos gû karozevi, yev yes oorakh yem ador hamar, oorakh al bidi mûnam, vorovhedevev kidem te verch i vercho adiga im pûrgootyanûs bidi dzaraye, shûnorhiv tser aghotkneroon, yete Hisoos Krisdosi Hokin shûnorhe. Aynbes gagûngalem yev gû hoosam, vor amotov bidi chûmûnam, ayl inchbes mishd, ays ankam yevs hamartsagootyamp bidi bashdbanem havadkûs, aynbes vor Krisdos paravorvi intsmov, ûlla adiga abrelovûs, ûlla mernelovûs. Vorovhedevev indzi hamar gyankû Krisdos e, yev oosdi mernil, ayt gyankû shahil gû nûshanage.

***Hisoos Krisdosi Avedaranen Êsd
Madteyosi (16:24-28)***

Aba Hisoos ir ashagerdneroon ûsav,

-Yete megû ooze indzi hedevev togh oorana ir antsû, arne ir khachû yev yedeves ka. Vorovhedevev ov vor ooze ir gyankû pûrgel bidi gorsûntsûne zayn, yev ov vor indzi hamar gorsûntsûne ir gyankû bidi kûdne zayn.

Ի՞նչ օգուտ, եթէ մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ, որովհետեւ ի՞նչ փրկագին պիտի տայ իր կեանքը ետ առնելու համար: Արդարեւ, Մարդու Որդին պիտի գայ իր Հօր փառքով՝ իր հրեշտակներուն հետ, եւ այն ատեն իւրաքանչիւրին իր գործերուն համաձայն հատուցում պիտի կատարէ: Վստահ եղէք, որ հոս գտնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն Մարդու Որդին որ կու գայ իր թագաւորութեամբ:

Մեծ Պահքի Հինգերորդ Կիրակի (Գլխտեան)
Պողոս Առաքեալի Կողմէ
Կողոսացիներուն Գրուած Նամակէն (3:1-4:9)

Կարելորութիւն մի՛ տաք անոնց՝ որոնք ձեզ կը քննադատեն, թէ ինչո՞ւ չէք պահեր ուտելու եւ խմելու, տօնակատարութեանց, ամսամուտերու եւ Շաբաթ օրերու վերաբերող կանոնները. որովհետեւ այդ բոլորը գալիք իրականութեանց շուքն են, իսկ իրականութիւնը Քրիստոսի մէջ է:

Չըլլա՛յ որ ռեւէ մէկը իր կեղծ խոնարհութեամբ, հրեշտակներուն ընծայուած պաշտամունքով եւ զանազան տեսիլքներով ձեզ մոլորեցնէ եւ մրցանակէն զրկէ. որովհետեւ այդպիսիները մարդկային հպարտութենէ տարուած են եւ կ'ուզեն իրենք զիրենք պարտադրել ձեզի: Անոնք կապ չունին Գլուխին՝ Քրիստոսի հետ. մինչդէռ մարմինը՝ Քրիստոսի եկեղեցին, իր բոլոր յօդերով ու կապերով Գլուխին կապուած ու միացած, անկէ՛ կ'առնէ իր աճումը, Աստուծոյ կամքին համաձայն:

Քանի Քրիստոսի հետ մեռաք եւ բնութեան ոյժերու տիրապետութենէն դուրս եկաք, ինչո՞ւ կը շարունակէք ապրիլ այնպէս՝ որպէս թէ ձեր կեանքը աշխարհէն կախում ունենար, եւ կը հնազանդիք մարդոց կողմէ տրուած պատուիրաններու, ինչպէս՝ «Մի՛ մօտենար, մի՛ ուտեր, մի՛ դաչիր»:

Inch okood, yete mart ampoghch ashkharhû shahi, payts ir gyankû gorsûntsûne? vorovhedev inch pûrgakin bidi da ir gyankû yed arneloo hamar? Artarev, Martoo Vortin bidi ka ir Hor parkov ir hreshdagneroon hed, yev ayn aden yoorakanchourin ir kordzeroon hamatsayn hadootsoom bidi gadare. Vûsdah yeghek, vor hos kûdnûvoghneren vomank bidi chûmernin minchev desnen Martoo Vortin vor gooka ir takavorootyamp.

Medz Bahki Vetserort Giragi (Kalûsdyan)
Boghos Arakyali Goghme
Goghosatsineroon Kûrvadz Namagen
(2:16-3:17)

Garevorootyoon mi dak anonts voronk tsez gû kûnnataden, te inchoo chek baher oodeloo yev khûmeloo, donagadarootyants, amsamoodneroo yev Shapat oreroo veraperogh ganonnerû, vorovhedev ayt polorû kalik iraganootyants shookûn yen, isg iraganootryoonû Krisdosi mech e.

Chûlla vor voyeve megû, ir geghdz khonarhootyamp, hreshdagneroo ûndzayvadz bashdamoonkov yev zanzan desilknerov tsez moloretsûne yev mûrtsanagen zûrge, voronhedev aytbisinerû martgayin hûbardootene darvadz yen yev goozen irenk zirenk bardatrel tsezi. Anonk gab choonin Klookhin, Krisdosi hed, minchter marminû, Krisdosi yegeghetsin, ir polor hoterov oo gaberov Klookhin gabvadz oo miyatsadz, ange garne ir ajoomû, Asdoodzo gamkin hamatsayn.

Kani Krisdosi hed merak yev pûnootyan oozheroo dirabedootenen toors yegak, inchoo gû sharonagek abril aynbes vorbes te tser gyankû ashkharhen gakhoom oonenar, yev gû hûnazantik martots goghme dûrvadz badviranneroo, inchbes, “Mi modenar, mi ooder, mi tûbchir”.

Ասոնք բոլորն ալ բաներ են՝ որոնք գործածութեամբ կը փճանան: Այդպէս պատուիրողները իմաստուն կրնան թուիլ՝ իրենց բարեպաշտական ինքնակամ արտայայտութիւններով, կեղծ խոնարհութեամբ եւ անխնայ կերպով մարմինը ճնշելով, բայց այս բաները ոեւէ արժէք չունին եւ միայն մարմինը բաւարարելու կը ծառայեն:

Քանի որ յարութիւն առիք Քրիստոսի հետ, այսուհետեւ ձեր ուշադրութիւնը երկինք դարձուցէք, որովհետեւ հո՛ն է Քրիստոս, Հօր Աստուծոյ կողմը նստած: Երկնաւոր բաներու մասին խորհեցէք եւ ո՛չ թէ երկրաւոր բաներու. որովհետեւ դուք այս աշխարհին համար մեռաք, որպէսզի Քրիստոսի հետ միասին ապրիք այն կեանքով՝ որ Աստուած վերապահած է ձեզի: Իսկ երբ Քրիստոս՝ ձեր կեանքը՝ յայտնուի, այն ատեն դուք ալ փառքով պիտի յայտնուիք անոր հետ:

Հետեւաբար մեռցուցէ՛ք ձեր մէջ երկրաւոր ցանկութիւնները, այսինքն՝ ձեզմէ դուրս վանեցէք պոռնկութիւնը, պղծութիւնը, կիրքը, չար ցանկութիւնը եւ ազահութիւնը, ինչ որ կոռապաշտութիւն է. որովհետեւ այդ բոլորը Աստուծոյ անհնազանդ մարդոց գործերն են, եւ Աստուած պիտի պատժէ զանոնք: Նախապէս դո՛ւք ալ այդ բոլորը կ'ընէիք, երբ տակաւին այդ ցանկութիւններով կ'ապրէիք: Բայց հիմա ձեզմէ դուրս նետեցէք այդ բոլորը. բարկութիւնը, զայրոյթը եւ չարութիւնը: Ձեր բերանէն ոեւէ հայհոյութիւն կամ լկտի խօսք չլսուի: Սուտ մի՛ խօսիք իրարու: Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենաք զինք ճանչնալ: Անգամ մը որ նորոգուեցաք՝ ա՛լ չկայ Հրեայ կամ հեթանոս, թլփատուած կամ անթլփատ, բարբարոս, վայրենի, ծառայ կամ ազատ. կայ միայն Քրիստոս, որ ամէն ինչ է եւ բոլորին մէջ:

Հետեւաբար, իբրեւ Աստուծոյ կողմէ ընտրուած ու սրբուած եւ իր սէրը վայելող մարդիկ՝ զթասիրտ եղէք. եղէք ողորմած, քաղցր, խոնարհ, հեզ եւ համբերատար:

Asonk polorn al paner yen voronk kordzadzootyamp gû pûjanan. Aytbes badviroghnerû imasdoon gûrnan tûvil irents parebashdagan inknagam ardahay-dootyoonnerov, geghdz khonarhootyamp yev ankhûna gerbov marminû jûnshelov, payts ays panerû voyeve arzhek choonin yev miyayn marminû pavarareloo gû dzarayen.

Kani vor harootyoon arik Krisdosi hed, aysoohedev tser ooshatrootyoonû yergink tartsootsek, vorovhedev hon e Krisdos, Hor Asdoodzo goghmû nûsdadz. Yergnavor paneroo masin khorhetsek yev voch te yergravor paneroo, vorovhedev took ays ashkharhin hamar merak, vorbeszi Krisdosi hed miyasin abrik ayn gyankov vor Asdvadz verabahadz e tsezi. Isg yerp Krisdos, tser gyankû, haydnûvi, ayn aden took al parkov bidi haydnûvik anor hed.

Hedevapar mertsootsek tser mech yergravor tsangootyoonnerû, aysinkûn tsezme toors vanetsek bornûgootyoonû, bûghdzootyoonû, girkû, char tsangootyoonû yev akah-oootyoonû, inch vor grabashdootyoon e, vorovhedev ayt polorû Asdoodzo anhûnazant martots kordzern yen, yev Asdvadz bidi badje zanonk.

Nakhaves took al ayt polorû gûneyik, yerp dagavin ayt tsangootyoonnerov gabreyik, Payts hima tsezme toors nedetsek ayt polorû, -pargootyoonû, zayrooytû yev charootyoonû. Tser peranen voyeve hayhoyootyoon gam lûgdi khosk chûlûsvi. Sood mi khosik iraroo. Mortsek tser hin gyankn oo nakhgin kordzerû, yev nor mart yeghek tser Ararichin badgerin hamatsayn norokvelov, vorbeszi garenak zink janchnal. Ankam mû vor norokvetsak al chûga Hûrya gam hetanos, tûlpadvadz gam antûpad, parparos, vayreni, dzara gam azad, ga miyayn Krisdos, vor amen inch e yev polorin mech.

Hedevapar, iprev Asdoodzo goghme ûndûrvadz oo sûrpûvadz yev ir serû vayelogh martig kûtasird yeghek, yeghek voghormadz,

Իրարու հանդէպ հանդուրժող եղէք, եւ ներեցէք իրարու՝ երբ մէկդ միւսին դէմ տրտունջ մը ունենաք: Ինչպէս Աստուած Քրիստոսի միջոցաւ ներեց ձեզի, այնպէս ալ դուք իրարու ներեցէք: Եւ այս բոլորին վրայ՝ աւելի սեր ունեցէք, որովհետեւ սերը ամէն ինչի ամբողջացուցիչ շաղխին է: Ձեր սիրտերուն մէջ Քրիստոսի խաղաղութիւնը թող թագաւորէ, որովհետեւ Աստուած այդ խաղաղութեան կանչեց ձեզ՝ մէկ մարմինի մէջ, որ Քրիստոսի եկեղեցին է: Ուստի շնորհակալ եղէք Աստուծոյ:

Թող Քրիստոսի խօսքը ձեր մէջ բնակի իր ամբողջ հարստութեամբ, որպէսզի կատարեալ իմաստութեամբ սորվեցնէք իրարու եւ իրար խրատէք, եւ սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգեւոր երգերով ձեր սիրտերուն մէջ շնորհակալութեամբ զԱստուած օրհնեցէք: Եւ ինչ որ ալ ընէք, խօսքով թէ գործով, միշտ Տէր Յիսուսի անունով ըրէք, անոր միջոցաւ գոհութիւն յայտնելով Հօր Աստուծոյ:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մաթէոսի (22:34-23:39)***

Երբ Փարիսեցիները լսեցին թէ Յիսուս Սաղուկեցիները պապանձեցուց, իրարու քով եկան: Անոնցմէ մէկը, Մովսիսական Օրէնքի մասնագէտ մը, Յիսուսը փորձելու համար հարցուց.

- Վարդապէ՛տ, Օրէնքին մէջ ո՞րն է մեծագոյն պատուիրանը:
Յիսուս ըսաւ անոր.

- «Մի՛րէ՛քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ մտքովդ»: Ասիկա է մեծագոյն եւ կարեւորագոյն պատուիրանը: Երկրորդը ատոր նման է. «Մի՛րէ՛ ընկերդ քու անձիդ պէս»: Այս երկու պատուիրաններէն կախեալ են ամբողջ Օրէնքը եւ մարգարէներու ուսուցումները:

kaghtsûr, khonarh, hez yev hamperadar.

Iraroo hanteb hantoorjogh yeghek, yev neretsek iraroo yerp megût myoosin tem dûrdoonch mû oonenak. Inchbes Asdvadz Krisdosi michotsav nerets mezi, aynbes al took iraroo neretsek. Yev ays polorin vûra aveli ser oonetsek, vorovhede v serû amen inchi ampoghchatsootsich shaghakhûn e. Tser sûderoon mech Krisdosi khaghaghootyoonû togh takavore, vorovhede v Asdvadz ayt khaghaghoutyan ganchets tsez, meg marmini mech, vor Krisdosi yegeghetsin e. Ooremûn shûnorhagal yeghek Asdoodzo.

Togh Krisdosi khoskû tser mech pûnagi ir ampoghch harûsdootyamp, vorbeszi gadaryal imasdootyamp sorvetsûnek iraroo yev irar khûradetsek, yev saghmosnerov, orhnootyoonerov oo hokevor yerkerov tser sûderoon mech shûnorhagalootyamp zAsdvadz orhnerkek. Yev inch vor al ûnek, khoskov te kordzov, mishd Der Hisoosi anoonov ûrek, anor michotsav kohootyoon haydnelov Hor Asdoodzo.

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Madteyosi (22:34-23:39)**

Yerp Parisetsinerû lûsetsin te Hisoos Satogetsinerû babantsetsoots, iraroo kov yegan. Anontsme megû, Movsisagan Orenki masnaked mû, Hisoosû portseloo hamar hartsoots,

-Vartabed, Orenkin mech vorûn e medzakooyn badviranû?

Hisoos ûsav anor,

-“Sire koo Der Asdvadzût ampoghch sûrdovt, ampoghch hokiyovt yev ampoghch mûdkovt”. Asiga e medzakooyn yev garevorakooyn badviranû. Yergrortû ador nûman e, “Sire ûngerût koo antsit bes”. Ays yergoo badviranneren gakhyal yen ampoghch Orenkû yev markareneroon oosootsoomnerû.

Երբ Փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց.

- Ի՞նչ կը խորհիք Քրիստոսին մասին: Որո՞ւն Որդին է ան:

Անոնք պատասխանեցին.

- Դաւիթի:

Յիսուս ըսաւ անոնց.

- Ուրեմն ինչպէ՞ս Դաւիթ Սուրբ Հոգիէն ներշնչուած՝ զայն Տէր կը կոչէ ու կ'ըսէ.-

«Տէրը իմ Տիրոջս ըսաւ.-

Աջ կողմս նստէ, մինչեւ որ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

Արդ, եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս անոր որդին կ'ըլլայ:

Ոչ որ կրցաւ պատասխան տալ Յիսուսի, եւ այդ օրուրնէ սկսեալ ռեւէ մէկը չէր համարձակեր իրեն հարցում ուղղել:

Ապա Յիսուս ժողովուրդին եւ իր աշակերտներուն ըսաւ.

- Մովսէսի աթոռը նստան Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները:

Իրենց ըսածներուն հնազանդեցէք եւ կատարեցէք զանոնք. սակայն մի՛ ընէք ինչ որ իրենք կ'ընեն. որովհետեւ անոնք կը սորվեցնեն, բայց չեն կատարեր: Անոնք ծանր եւ դժուարակիր բեռներ կը դնեն մարդոց ուսերուն, մինչ իրենք նոյն բեռները կրելու նուազագոյն ճիգն իսկ չեն ընէր: Ինչ որ կ'ընեն, մարդոց երեւելու համար կ'ընեն: Իրենց գրապանակները կը լայնցնեն եւ իրենց հազուստներուն ծոպերը կ'երկնցնեն: Ընթրիքներու ընթացքին պատուոյ տեղերը՝ գրաւել կը սիրեն եւ ժողովարաններու մէջ առաջին աթոռները: Կը սիրեն հրապարակներու վրայ մարդոցմէ բարեւներ ընդունիլ եւ «վարդապետ», այսինքն « ուսուցիչ» կոչուիլ: Բայց դուք ռեւէ մէկը «վարդապետ» մի՛ կոչէք, որովհետեւ դուք բոլորդ եղբայրներ էք եւ մէկ ուսուցիչ ունիք: Երկրի վրայ ռեւէ մէկը «հայր» մի՛ կոչէք, որովհետեւ դուք մէկ Հայր ունիք, որ երկինքի մէջ է: «Առաջնորդ» մի՛ կոչուիք, որովհետեւ ձեր միակ առաջնորդը Քրիստոսն է: **Yerp** Parisetsinerû havakvetsan, Hisoos hartsoots anonts,

-Inch gû khorhik Krisdosin masin. Voroon Vortin e an?

Anonk badaskhanetsin, **-Taviti.**

Hisoos ûsav anonts,

-Ooremn inchbes Tavit Soorp Hokiye nershûnchûvadz zayn Der gû goche oo gûse?-

“Derû im Dirochs ûsav,-

Ach goghmûs nûsde, minchev vor tûshnamineûrt vodkeroot dag tûnem vorbes badvantan”.

Art, yete Tavit zayn Der gû goche, inchbes anor vortin gûlla?. Voch vok gûrtsav badaskhan dal Hisoosi, yev ayt orvûne ûsgûsyal voyeve megû cher hamartsager iren hartsoom ooghel. **Aba** Hisoos zhoghovoortin yev ir ashagerdneroon ûsav,

-Movsesi atorû nûsdan Orenki oosoosich-nern oo Parisetsinerû. Irents ûsadzneroon hnazantetsek yev gadaretsek zanonk, sagayn mi ûnek inch vor irenk gûnen, vorovhedev anonk gû sorvetsûnen, payts chen gadarer. Anonk dzanûr yev tûzhvaragir perner gû tûnen martots ooseroon, minch irenk nooyn pernerû gûreloo nûvazakooyn jikûn isg chen ûner. Inch vor gûnen, martots yereveloo hamar gûnen. Irents tûramabanagnerû gû layntsûnen yev irents hakoosdneroon dzoberû gergûntsûnen. **Ûntrikneroo** ûntatskin badvo degherû kûravel gû siren yev zhoghovaranneroo mech arachin atornerû. Gû siren hûrabaragneroo vûra martotsme parevner ûntoonil yev **“Vartabed”**, aysinkn **“oosotsich”** gochvil.

Payts took voyeve megû **“Vartabed”** mi gochek, vorovhedev took polorût yeghpayrner ek yev meg oosoosich oonik. **Yergri** vûra voyeve megû **“Hayr”** mi gochek, vorovhedev took meg Hayr oonik, vor yerginki mech e. **“Arachnort”** mi gochvik, vorovhedev tser miyag arachnortû Krisdosn e.

Ձեր մեջէն մեծը թող ձեր սպասաւորը ըլլայ: Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

Վա՛յ ձեզի, կեղծաւորնե՛ր, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ երկինքի արքայութիւնը կը փակէք մարդոց առջեւ. դուք չէք մտներ եւ թոյլ չէք տար նաեւ անոնց՝ որ կ'ուզեն մտնել:

Վա՛յ ձեզի, կեղծաւորնե՛ր, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ մէկ կեղծաւորութեամբ ձեր աղօթքը կ'երկարէք. ասոր համար աւելի խիստ դատապարտութիւն պիտի ընդունիք:

Վա՛յ ձեզի, կեղծաւորնե՛ր, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ մէկ կողմէ ծով ու ցամաք կը շրջիք մէկը նորահաւատ ընելու համար, իսկ երբ յաջողիք՝ զայն ձեզմէ կրկնապատիկ աւելի դժոխքի արժանի կ'ընէք:

Վա՛յ ձեզի, կո՛յր առաջնորդներ: Կ'ըսէք. «Ան որ տաճարին վրայ կ'երդնու՝ երդումը կատարելու պարտաւորութեան տակ չէ, բայց ան որ տաճարին ոսկին վրայ կ'երդնու՝ պարտաւոր է կատարելու»: Յիմարնե՛ր, կոյրե՛ր, ո՞ր մէկը կարելոր է, ոսկի՞ն թէ տաճարը, որ կը սրբագործէ ոսկին: Կամ կ'ըսէք. «Ան որ զոհարանին վրայ երդում կ'ընէ՝ երդումը կատարելու պարտաւորութեան տակ չէ, բայց ան որ կ'երդնու զոհարանին դրուած զոհին վրայ՝ պարտաւոր է կատարելու»: Յիմարնե՛ր, կոյրե՛ր, ո՞ր մէկը աւելի կարելոր է. զո՞հը թէ զոհարանը, որ կը սրբագործէ զոհը: Հետեւաբար, ով որ կ'երդնու զոհարանին վրայ, կ'երդնու թէ՛ զոհարանին եւ թէ՛ հոն եղածներուն վրայ: Ով որ կ'երդնու տաճարին վրայ, կ'երդնու թէ՛ տաճարին եւ թէ՛ Աստուծոյ վրայ, որ հոն կը բնակի: Նոյնպէս, ով որ կ'երդնու երկինքին վրայ, կ'երդնու թէ՛ Աստուծոյ զահին եւ թէ՛ Աստուծոյ վրայ, որ հոն կը նստի:

Վա՛յ ձեզի, կեղծաւորնե՛ր, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ անանուխին, սամիթին ու չամանին տասանորդը կու տաք եւ կ'անտեսէք

Tser mechen medzû togh tser ûsbasavorû ûlla. Ov vor ir antsû gû partsratsûne bidi khonarhi, yev ov vor ir antsû gû khonarhetsûne bidi partsrana.

-Vay tsezi, geghdzavorner, Orenki oosootsichner yev Parisetsiner, vor yerginki arkayootyoonû gû pagek martots archev, took chek mûdner yev tooyl chek dar nayev anonts vor goozen mûdnel.

Vay tsezi, geghdzavorner, Orenki oosootsichner yev Parisetsiner, vor meg goghme ayrineroon doonerû irents tserken gû hapûshdagek, myoos goghme geghdzavorootyamp tser aghotkû gergarek, asor hamar aveli khisd tadabardootyoon bidi ûntoonik.

Vay tsezi, geghdzavorner, Orenki oosootsichner yev Parisetsiner, vor meg goghme dzov oo tsamak gû shûrchik megû norahavad ûneloo hamar, isg yerp hachoghik zayn tsezme gûrgnabadig aveli tûzhokhki arzhani gûnek.

Vay tsezi, gooyr arachnortner. Gûsek, “An vor dajarin vûra gertnoo, yertoombû gadareloo bardavorootyan dag che, payts an vor dajarin vosgiyin vûra gertnoo bardavor e gadareloo”. Himarner, Gooyrer, Vor megû garevor e, vosgin te dajarû vor gû sûrpakodze vosgin? Gam gûsek, “An vor zoharanin vûra yertoombû gûne yertoombû gadareloo bardavorootyan dag che, payts an vor gertnoo zoharanin tûrvadz zohin vûra bardavor e gadareloo”. Himarner, gooyrer, vor megû aveli garevor e? zohû te zoharanû? vor gû sûrpakodze zohû. Hedevapar, ov vor gertnoo zohzranin vûra, gertnoo te zoharanin yev te hon yeghadzneroon vûra. Ov vor gertnoo dajarin vûra, gertnoo te dajarin yev te Asdoodzo vûra, vor hon gû pûnagi. Nooynbess, ov vor gertnoo yerginkin vûra, gertnoo te Asdoodzo kahin yev te Asdoodzo vûra, vor hon gû nûsdi.

Vay tsezi, geghdzavorner, Orenki oosootsichner yev Parisetsiner, vor ananookhin, samitin oo chamanin dasanortû goodak yev gandesek

Օրենքին կարելոր պարտաւորութիւնները, այսինքն՝ արդարութիւնը, ողորմութիւնը եւ հաւատարմութիւնը: Ասոնք պէտք էր գործադրել, առանց միւսները անտեսելու: Կոյր առաջնորդներ, մէկ կողմէ մօղուկը կը քամէ, միւս կողմէ սակայն ուղտը կը կլլէ:

Վա՛յ ձեզի, կեղծաւորնե՛ր, Օրենքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ պնակին եւ գաւաթին արտաքինը կը մաքրէք, մինչ զիսէք թէ ներսիդին եղող ուտելիքն ու խմելիքը ինչ յափշտակութեամբ եւ աղտեղութեամբ ձեռք բերած էք: Կոյր Փարիսեցի, նախ գաւաթին եւ պնակին ներսը մաքրէ. այսպիսով դուրսն ալ մաքուր կ'ըլլայ:

Վա՛յ ձեզի, կեղծաւորնե՛ր, Օրենքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ կը նմանիք կիրով ճերմկցուած գերեզմաններու, որոնք արտաքինապէս գեղեցիկ կ'երեւին, բայց ներքինապէս լեցուն են մեռելներու ոսկորներով եւ ամէն տեսակի պղծութեամբ: Նոյնպէս էք դուք. արտաքինապէս մարդոց արդար կ'երեւիք, բայց ներքինապէս լեցուն էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ:

Վա՛յ ձեզի, կեղծաւորնե՛ր, Օրենքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ մարգարէներու շիրիմները կը շինէք եւ արդարներուն գերեզմանները կը զարդարէք ու կ'ըսէք. «Եթէ մենք մեր հայրերուն ժամանակը ապրած ըլլայինք, մարգարէներու սպանութեան մասնակից պիտի չըլլայինք»: Ահաւասիկ դուք արդէն իսկ կը վկայէք թէ որդիներն էք անոնց, որոնք մարգարէները կոտորեցին: Գացէք ամբողջացուցէ՛ք ձեր հայրերուն կիսատ ձգած գործը: Օձե՛ր, իժերո՛ւ ծնունդներ, ինչպէ՞ս պիտի կարենաք փախուստ տալ դժոխքի դատապարտութենէն: Ահա եւ ձեզի մարգարէներ, իմաստուններ եւ Օրենքի ուսուցիչներ պիտի դրկեմ, դուք անոնցմէ ոմանք պիտի սպաննէք, ոմանք խաչէք, ուրիշներ ժողովարաններու մէջ պիտի զանակոծէք եւ հալածէք քաղաքէ քաղաք:

Orenkin garevor bardavorootyoonnerû, aysinkûn artarootyoonû, voghormootyoonû yev havadarmootyoonû. Asonk bedk er kordzatrel, arants myoosnerû andeseloo. Gooyr arachnortner, meg goghme mûzhghoogû gû kamek, myoos goghme sagayn ooghdû gû gûllek.

Vay tsezi, geghdzavorner, Orenki oosootsichner yev Parisetsiner, vor bûnagin yev kavatin ardakinû gû makrek, minch kidek te nersitin yeghogh oodelikûn oo khûmelikû inch hapûshdagootyamp yev aghdeghootyamp tserk peradz ek. Gooyr Parisetsi, nakh kavatin yev bûnagin nersû makre, aysbisov toorsûn al makoor gûlla.

Vay tsezi, geghdzavorner, Orenki oosootsichner yev Parisetsiner, vor gû nûmanik girov jermûgtsûvadz kerezman-neroo, voronk ardaknabes keghetsik gerevin, payts nerknabes letsoon yen merelneroo vosgornerov yev amen desagi bûghdzootyamp. Nooynbek ek took, ardaknabes martots artar gerevik, payts nerknabes letsoon ek geghdzavorootyamp yev anorenootyamp.

Vay tsezi, geghdzavorner, Orenki oosootsichner yev Parisetsiner, vor markareneroo shirimnerû gû shinek yev artarneroon kerezmannerû gû zartarek oo gûsek, “Yete menk mer hayreroon zhamanagû abradz ûllayink, markareneroo ûsbannootyan masnagits bidi chûllayink”. Ahavasig took arten isg gû vûgayek te vortinerûn ek anonts, voronk markarenerû godoretsin. Katsek ampoghchatsootsek tser hayreroon gisad tsûkadz kordzû. Otser, izheroo dzûnoontner, inchbes bidi garenak pakhoosd dal tûzhokhki tadabardootenen? Aha tsezi markarener, imasdoonner yev Orenki oosootsichner bidi ghûrgem, took anontsme vomank bidi ûsbannek, vomank khachek, oorishner zhoghovaranneroo mech bidi kargodzek yev haladzek kaghake kaghak.

Այսպիսով՝ բոլոր արդարներուն սպանութեան մասնակից եղած պիտի ըլլաք, սկսեալ անմեղ Աբելի արիւնէն մինչեւ արիւնը Բարաքիայի որդիին՝ Զաքարիայի, որ սպաննեցիք տաճարին եւ գոհաբանին մէջտեղ: Հաստատ գիտցէք, թէ այս բոլոր ոճիրներուն պատիժը պիտի կրէք:

- Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կը կոտորէիր մարգարէները եւ կը քարկոծէիր Աստուծոյ քեզի որկած մարդիկը. քանի՜ անգամ ուզեցի որդիներդ հաւաքել, ինչպէս հաւր իր ձագերը կը հաւաքէ թեւերուն տակ, բայց դուք, Երուսաղէմի բնակիչներ, չուզեցիք: Ահա «աւերակ պիտի ըլլայ ձեր տունը»: Բայց կ'ըսեմ նաեւ, ա՛յ պիտի չտեսնէք զիս, մինչեւ որ ըսէք. «Օրհնեալ ըլլայ ան՝ որ կու գայ Տիրոջ անունով»:

Ծաղկազարդ

**Պօղոս Առաքեալի Կողմէ
Փրկիպպեցիներուն Գրուած Նամակէն
(4:4-7)**

Միշտ ուրախ եղէք Տիրոջմով. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէք: Բոլորին հանդէպ ազնիւ եղէք: Շուտով Տէրը կու գայ: Ոեւէ բան թող չմտահոգէ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ գոհաբանութեամբ Աստուծմէ խնդրեցէք ինչ բանի որ կարիքը կը զգաք, եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ միտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սիրտերն ու միտքերը, որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Մաթէոսի (22:34-23:39)**

Երբ Յիսուս եւ իր աշակերտները Երիքովէն դուրս կ'ելլէին, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրեն: Ճամբու եզերքին նստած երկու կոյրեր, երբ լսեցին որ Յիսուս կ'անցնի, սկսան աղաղակել.

- Ողորմէ՛ մեզի, Յիսուս, Դաւիթի՛ Որդի:

Ժողովուրդը սաստեց զանոնք որ լռեն, բայց անոնք աւելի բարձր ձայնով շարունակեցին աղաղակել.

- Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի՛ Որդի:

Aysbisov polor artarneroon ûsbannotyan masnagits yeghadz bidi ûllak, ûsgûsyal anmegh Apeli aryoonen minchev aryoonû Parakiyayi vortiyin Zakariyayi, vor ûsbannetsik dajarin yev zoharanin mechdegh. Hasdad kidtsek, te ays polor vojirneroon badizhû bidi gûrek.

-Yeroosaghem, Yeroosaghem, vor gû godoreyir markarenerû yev gû kargodzeyir Asdoodzo kezi ghergad martigû, kani ankam oozetsi vortinerût havakel, inchbes havû ir tsakerû gû havake teveroon dag, payts took, Yeroosaghemi pûnagichner, chooze-tsik. Aha “Averag bidi ûlla tser doonû”. Payts gûsem nayeve, al bidi chûdesnek zis, minchev vor ûsek, “Orhnyal ûlla an vor gooka Diroch anoonov”.

Dzaghgazart

**Boghos Arakyali Goghme
Pilibbetsineroon Kûrvadz Namagen
(4:4-7)**

Mishd oorakh yeghek Dirochmov, tartsyal gûsem oorakh yeghek. Polorin hanteb azniv yeghek. Shoodov Derû gooka. Voyeve pan togh chûmûdahoke tsez, ayl mishd tser aghotkneroon yev aghachankneroon mech kohoonag sirdov Asdoodzme khûntûretsek inch pani vor garikû gûzkak, yev ayn aden Asdoodzo khaghaghootyoonû, vor midkov gareli che hasgûnal, khaghagh bidi bahe tser sirderûn oo midkerû, voronk Krisdos Hisoosi miyatsadz yen.

**Hisoos Krisdosi Avedaranen Êsd
Madteyosi (20:29-21:17)**

Yerp Hisoos yev ir ashagerdnerû Yerikoven toors gelleyin, medz pazmootyoon mû hedevetsav iren. Jampoo yezerkin nûsdadz yergoo gooyrer, yerp lûsetsin vor Hisoos gantsni, ûsgûsan aghaghagel.

-Voghorme mezi, Hisoos, Taviti vorti.

Յիսուս կանգ առաւ, իր մօտ կանչեց կոյրերը եւ հարցուց.

- Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ձեզի:

Անոնք պատասխանեցին.

- Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին:

Յիսուս գթաց եւ անոնց աչքերուն դպաւ: Կոյրերը անմիջապէս սկսան տեսնել եւ հետեւեցան Յիսուսի:

Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփագէ, Ձիթենեաց լերան կողին, Յիսուս իր աշակերտներէն երկուքը որկեց՝ անոնց պատուիրելով.

- Գացէք սա դիմացի գիւղը եւ անմիջապէս հոն կապուած էջ մը պիտի գտնէք իր աւանակին հետ. քակեցէք եւ ինծի բերէք: Եւ եթէ մէկը առարկէ, ըսէք. «Տէրը պէտք ունի», եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի:

Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականանայ ինչ որ Տէրը ըսած էր մարգարէին բերնով.-

«Երուսաղէմի ըսէք.-

Ահա թագաւորդ քեզի կու գայ.

անիկա հեզ է, նստած՝ իշու մը աւանակին վրայ»:

Աշակերտները գացին եւ կատարեցին ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց: Բերին էջն ու աւանակը եւ իրենց վերարկուները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց վերարկուները կը փռէին ճամբուն վրայ, ուրիշներ ծառերէն ոստեր կը կտրէին եւ կը տարածէին ճամբուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր.-

«Օրհնութի՛ւն Դաւիթի Որդիին,

օրհնեալ է ան՝ որ կու գայ Տիրոջ անունով:

Օրհնութի՛ւն Բարձրեալին»:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դողդեցաւ:

- Ո՞վ է ասիկա,- կը հարցնէին քաղաքի բնակիչները:

Եւ ամբողջը կը պատասխանէր.

-Zhoghovoortû sasdets zanonk vor lûren, payts anonk aveli

partsûr tsaynov sharonagetsin aghaghagel, - Voghorme mezi, Der, Taviti Vorti.

Hisoos gank arav, ir mod ganchets gooyrerû yev hartsoots, -Inch goozek vor ûnem tsezi?

Anonk badaskhanetsin,

-Der, togh mer achkerû patsvin.

Hisoos kûtats yev anonts achkeroon tûbav. Gooyrerû anmichabes ûsgûsan desnel yev hedejetsan Hisoosi.

Yerp Yeroosaghemî modetsan yev hasan Petpake, Tsitenyats leran goghin, Hisoos ir ashagerdneren yergookû ghûrgets anonts badvirelov,

-Katsek sa timatsi kyooghû yev anmichabes hon gabvadz esh mû bidi kûdnek ir avanagin hed, kagetsek yev indzi perek. Yev yete megû ararge, ûsek, “Derû bedk ooni”, yev anmichabes tooyl bidi da tsezi.

Asiga badahetsav, vorbeszi iraganana inch vor Derû ûsadz er markareyin pernov,

“Yeroosaghemî ûsek.-

Aha takavorût gooka, aniga hez e, nûsdadz ishoo mû avanagin vûra”.

Ashagerdnerû katsin yev gadaretsin inch vor Hisoos badvirets irents. Perin eshûn oo avanagû yev irents verargoonerû anonts vûra tûrin. Aba Hisoos nûsdav avanagin vûra. Zhoghovoorten shader irents verargoonerû gû pûreyin jampoon vûra, oorishner dzareren vosder gû gûdreyin yev gû daradzeyin jampoon vûra. Yev ampoghch pazmootyoonû, vor taporin mech Hisoosi archeven gertar gam gû hedever iren, gaghaghager,

“Orhnootyoon Taviti Vortiyin, orhnyal e an vor gooka Diroch anoonov. Orhnootyoon Partsûryalin”.

Yerp Hisoos Yeroosaghem mûdav, ampoghch kaghakû tûghûrtetsav.

-Ov e asiga? gû hartsûneyin kaghaki pûnagichnerû.

Yev ampokhû gû badaskhaner,

- Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլէայի Նազարէթ քաղաքէն:

Ապա Յիսուս տաճար մտաւ եւ դուրս վնտեց բոլոր անոնք, որոնք տաճարի շրջափակին մէջ առուծախ կ'ընէին. լուսնայափոխներուն սեղանները եւ աղանձեղաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց.

- Սուրբ գիրքերուն մէջ գրուած է. «*Բմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի*», մինչ դուք զայն աւագակներու որջի վերածած էք:

Տաճարին մէջ Յիսուսի մօտեցան կոյրեր ու կաղեր, եւ անիկա բժշկեց զանոնք: Երբ աւագ քահանաները եւ Օրէնքի ուսուցիչները տեսան Յիսուսի կատարած հրաշքները եւ լսեցին աղաղակը մանուկներուն, որոնք տաճարին մէջ կը գոչէին. «*Օրհնութիւն ՚ն Դաւիթի Որդիին*», բարկացան եւ Յիսուսի ըսին.

- Կը լսե՞ս ինչ կ'ըսեն ատոնք:

Յիսուս պատասխանեց.

- Այո՛, չէ՞ք կարդացած Սուրբ գիրքին սա խօսքը, թէ

«*Մանուկներու եւ կաթնկեր երեխաներու բերնով զովեստ հիւսեցիր*»:

Ապա Յիսուս զանոնք ձգելով քաղաքէն դուրս ելաւ՝ դէպի Բեթանիա, եւ հոն գիշերեց:

Աւագ Հինքշաբթի

Պողոս Առաքեալի Կողմէ

Կորնթացիներուն Գրուած Առաջին Նամակէն (11:23-32)

Ես Տիրոջմէ առի ինչ որ ձեզի աւանդեցի, թէ Տէր Յիսուս իր մատնութեան զիշերը հաց առաւ, Աստուծոյ գոհութիւն յայտնեց, կտրեց զայն եւ ըսաւ. «Ասիկա իմ մարմինս է, որ ձեզի համար կը բաշխուի: Ասիկա կատարեցէք զիս յիշելու համար»: Ընթրիքէն ետք նոյն ձեւով բաժակը առաւ եւ ըսաւ. «Այս բաժակը Աստուծոյ Նոր Ուխտն է, որ իմ արիւնովս կը կնքուի: Ասիկա կատարեցէք միշտ, եւ ամէն անգամ որ անկէ խմէք՝ զիս յիշեցէք»: Հետեւաբար, ամէն անգամ որ այս հացը կ'ուտէք եւ բաժակէն կը խմէք, Տիրոջ մահը կը պատմէք, մինչեւ իր երկրորդ զալուստը:

-Asiga Hisoos markaren e, Kalilyayi Nazaret kaghaken.

Aba Hisoos dajar mûdav yev toors vûrûndets polor anonk, voronk dajarin shûrchapagin mech aroodzakh gûneyin, loomayapokhneroon seghannerû yev aghavnevajarneroon atornerû shûrchets yev ûsav anonts,

-Soorp kirkeroon mech kûrvadz e, “Im doonûs aghotki doon bidi gochvi”, minch took zayn avazagneroo vorchi veradzadz ek.

Dajarin mech Hisoosi modetsan gooyrer oo gagher, yev aniga pûzhûshgets zanonk. Yerp avak kahananerû yev Orenki oosootsichnerû desan Hisoosi gadaradz hûrashknerû yev lûsetsin aghaghagû manoogneroon, voronk dajarin mech gû kochoyin, “Orhnootyoon Taviti Vortiyin”, pargatsan yev Hisoosi ûsin,

-Gû lûses inch gûsen adonk?

Hisoos badaskhanets,

-Ayo, chek gartatsadz Soorp kirkin sa khoskû? te “Manoogneroo yev gatûnger yerekhaneroo pernov kovesd hyoosetsir”.

Aba Hisoos zanonk tsûkelov kaghaken toors yelav tebi Petanya, yev hon kisherets.

Avak Hinkshapti

Boghos Arakyali Goghme

Gorûntatsineroon Kûrvadz Arachin

Namagen (11:23-32)

Yes Dirochme ari inch vor tsezi avantetsi, te Der Hisoos ir madnootyan kisherû hats arav, Asdoodzo kohootyoon haydnets, gûdrets zayn yev ûsav, “Asiga im marminûs e, vor tsezi hamar gû pashkhûvi. Asiga gadaretsek zis hisheloo hamar”. Ûntriken yedk nooyn tsevov pazhagû arav yev ûsav, “Ays pazhagû Asdoodzo Nor Ookhdûn e, vor im arounovûs gû gûnkûvi. Asiga gadaretsek mishd, yev amen ankam vor ange khûmek zis hishetsek”. Hedevapar, amen ankam vor ays hatsû goodek yev pazhagen gû khûmek, Diroch mahû gû badmek, minchev ir yergrort kaloosdû.

Այսուհետեւ՝ ո՛վ որ անարժանութեամբ ուտէ այս հացը կամ խմէ Տիրոջ բաժակէն, Տիրոջ մարմինին եւ արեան դէմ մեղանշած կ'ըլլայ: Ուստի ամէն մարդ նախ ինքզինքը թող քննէ եւ ապա միայն այս հացէն ուտէ եւ բաժակէն խմէ, որովհետեւ ով որ անարժանութեամբ կ'ուտէ եւ կը խմէ՝ այդ ուտելովն ու խմելովը ինքզինք դատապարտութեան կ'ենթարկէ, քանի որ զանազանութիւն չի դնէր սովորական հացին եւ Տիրոջ մարմինին միջեւ: Այս է ահա պատճառը, որ ձեր մէջ բազմաթիւ հիւանդներ ու ցուազարներ կան եւ բազմաթիւ են նաեւ անոնք՝ որ նոյն պատճառով մեռան: Եթէ երբեք մենք մեզ քննէինք, չէինք պատժուեր: Իսկ եթէ կը պատժուինք, Տէրը այդ ձեռով կը խրատէ մեզ, որպէսզի չըլլայ որ աշխարհի հետ միասին դատապարտուինք:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մաթէոսի (26:17-30)**

Բաղարջակերաց տօնին առաջին օրը աշակերտները մօտենալով Յիսուսի, ըսին.
- Ո՛ր կ'ուզես որ քեզի համար զատկական ընթրիքը պատրաստենք:

Անիկա պատասխանեց.

- Քաղաք գացէք, այսինչ մարդուն մօտ, եւ ըսէք անոր. «Վարդապետը կ'ըսէ՝ ժամանակս մօտեցած է. քու տունդ պիտի ուտեմ զատկական ընթրիքը, աշակերտներուս հետ»:

Աշակերտները կատարեցին Յիսուսի հրահանգը եւ պատրաստեցին զատկական ընթրիքը: Երեկոյեան, Յիսուս իր տասներկու աշակերտներուն հետ ընթրիքի նստաւ: ²¹Մինչ անոնք կ'ուտէին,

Յիսուս ըսաւ.

- Կ'ըսեմ ձեզի, որ ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս:

Աշակերտները խռովքի մատնուեցան եւ իրաքանչիւրը սկսաւ հարցնել իրեն.

- Տէ՛ր, միթէ ե՞ս եմ:

Յիսուս պատասխանեց.

Aysoohedev, ov vor anarzjanootyamp oode ays hatsû gam khûme Diroch pazhagen, Diroch marminin yev Aryan tem meghanchadz gûlla. Oosdi amen mart nakh inkzinkû togh kûnne yev aba ays hasten oode yev pazhagen khûme, vorovhedev ov vor anarzhanoootyamp goode yev gû khûme, ayt oodelovûn oo khûmelovû inkzink tadabardootyan gentarge, kani vor zanazanoootyoon chi tûner sovoragan hatsin yev Diroch marminin michev. Ays e aha badjarû, vor tser mech pazmativ hivantner oo tsavakarn gan yev pazmativ yen naye anonk vor nooy badjarov meran. Yete yerpek menk mez kûnneyink, cheyink badjûver. Isg yete gû badjûvink, Derû ayt tsevov gû khûrade mez, vorbeszi chûlla vor ashkharhi hed miyasin tadabardûvink.

**Hisoos Krisdosi Avedaranen Âsd
Madteyosi (26:17-30)**

Pagharchagerats donin arachin orû ashagerdnerû modenalov Hisoosi, ûsin,
-Oor gooses vor kezi hamar zadgagan ûntrikû badrasdenk?

Aniga badaskhanets

-Kaghak katsek, aysinch martoon mod, yev ûsek anor, “Vartabedû gûse, zhamanagûs modetsadz e, koo doonût bidi oodem zadgagan ûntrikû, ashagerdneroos hed”.

Ashagerdnerû gadaretsin Hisoosi hrahankû yev badrasdetsin zadgagan ûntrikû. Yeregoyan, Hisoos ir dasnûyergoo ashagerdneroon hed ûntriki nûsdav. Minch anonk goodeyin,

Hisoos ûsav,

-Gûsem tsezi, vor tsezme megû bidi madne zis.

Ashagerdnerû khrovki madnûvetsan yev yoorakanchoorû ûsgûsav hartsûnel iren, -
Der, mite yes yem?

Hisoos badaskhanets,

- Ան որ իր ձեռքը ինձի հետ պնակին երկնցուց՝
ան է մատնիչը: Մարդու Որդին պիտի մեռնի,
ինչպես որ գրուած է Սուրբ գիրքերուն մէջ, Բայց
վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով Մարդու
Որդին պիտի մատնուի: Երանի՛ անիկա ծնած
չլլար:

Յուդան, որ պիտի մատնէր զինք, հարցուց
Յիսուսի.

- Վարդապե՛տ, միթէ ե՞ս եմ:

Յիսուս պատասխանեց.

- Ահա դո՛ւն ըսիր:

Եւ մինչ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ,
օրհնեց, կտրեց եւ բաժնեց աշակերտներուն,
ըսելով.

- Առէք, կերէք, ասիկա իմ մարմինս է:

Ապա առաւ բաժակը, գոհութիւն յայտնեց
Աստուծոյ եւ տուաւ իր աշակերտներուն,
ըսելով.

- Բոլորդ խմեցէք ասկէ. ասիկա իմ արիւնս է,
որով Աստուծոյ հետ նոր ուխտ կը կնքուի եւ որ
շատերու համար կը թափուի՝ իրենց մեղքերու
թողութեան համար: Բայց նաեւ կ'ըսեմ ձեզի.-
Այլեւս այս գինիէն պիտի չխմեմ մինչեւ այն
օրը, երբ ձեզի հետ պիտի խմեմ նոր գինին՝ իմ
Հօրս արքայութեան մէջ:

Ապա գոհաբանական սաղմոսներ երգելէ ետք
ելան Ձիթենեաց լեռ:

Ճրագալոյց Ս. Յարութեան

Պօղոս Առաքեալի Կողմէ

*Կորնթացիներուն Գրուած Առաջին Նամակէն
(15:1-11)*

Եղբայրնե՛ր, կ'ուզեմ ձեզի յիշեցնել այն
Աւետարանը որ իմ քարոզութեամբս
ընդունեցիք եւ որուն հաւատարիմ կը մնաք:
Այդ Աւետարանով ալ կը փրկուիք, եթէ զայն
պահէք այնպէս՝ ինչպէս եւ ձեզի քարոզեցի.
այլապէս զուր տեղ հաւատացած կ'ըլլաք:

Ես ձեզի փոխանցեցի այն հաւատքը որ նախ
ե՛ս ընդունեցի. այն՝ որ Քրիստոս մեր
մեղքերուն համար մեռաւ, ինչպէս Սուրբ
գիրքերը կ'ըսէին,

-An vor tserkû indzi hed bûnagin
yergûntsoots an e madnichû. Martoo Vortin
bidi merni, inchbes vor kûrvadz e Soorp
kirkeroon mech, payts vay ayn martoon,
voroon tserkov Martoo Vortin bidi madnûvi.
Yerani aniga dzûnadz chûllar.

Hootan, vor bidi madner zink, hartsoots
Hisoosi,

-Vartabed, mite yes yem?

Hisoos badaskhanets,

-Aha toon ûsir.

Yev minch anonk goodeyin, Hisoos hats
arav, orhnets, gûdrets yev pazhnets
ashagerdneroon, ûselov, -Arek, gerek, asiga
im marminûs e.

Aba arav pazhagû, kohootyoon haydnets
Asdoodzo yev dûvav ir ashagerdneroon,
ûselov,

-Polorût khûmetsek asge, asiga im arounûs e,
vorov Asdoodzo hed nor ookhd gû gûnkûvi
yev vor shaderoo hamar gû tapvi irents
meghkeroo toghootyan hamar.

Payts nayev gûsem tsezi,- Aylevûs ays
kiniyen bidi chûkhûmem minchev ayn orû,
yerp tsezi hed bidi khûmem nor kinin im
Horûs arkayootyan mech.

Aba kohapanagan saghmosner yerkele yedk
yelan Tsitenyats ler.

Jûrakalooyts Soorp Harootyan

Boghos Arakyali Goghme

Gorûntatsineroon Kûrvadz Arachin

Namagen (15:1-11)

Yeghpayrner, goozem tsezi hishetsûnel ayn
Avedaranû vor im karozyotyampûs
ûntoonetsik yev voroon havadarim gû
mûnak. Ayt Avedaranov al gû pûrgûvik, yete
zayn bahek aynbes inchbes yes tsezi
karojetsi, aylabes zoor degh havadatsadz
gûllak.

Yes tsezi pokhantsetsi ayn havadkû vor nakh
yes ûntoonetsi, ayn՝ vor Krisdos mer
meghkeroon hamar merav, inchbes Soorp

թաղուեցաւ եւ երրորդ օրը յարութիւն առաւ, դարձեալ Սուրբ գիրքերուն համաձայն, ու երեւցաւ Պետրոսին եւ ապա տասնմէկ առաքեալներուն: Յետոյ երեւցաւ միատեղ խմբուած հինգ հարիւրէ աւելի հետեւորդներու. թէպէտեւ անոնցմէ ոմանք մեռած են, բայց շատերը ողջ են տակաւին: ՉԱյնուհետեւ երեւցաւ Յակոբոսին եւ ապա բոլոր առաքեալներուն:

Ի վերջոյ, բոլորէն յետոյ երեւցաւ նաեւ ինծի, վիժածիս: Արդարեւ, առաքեալներուն մէջ յետինն եմ եւ արժանի իսկ չեմ առաքեալ կոչուելու, քանի Աստուծոյ եկեղեցին հալածեցի: Բայց հիմա ինչ որ եմ՝ Աստուծոյ շնորհքին կը պարտիմ. եւ կրնամ ըսել՝ թէ Աստուծոյ ինծի տուած շնորհքը ապարդիւն չեղաւ, որովհետեւ բոլոր առաքեալներէն աւելի ե՛ս աշխատեցայ, թէպէտ ինչ որ ըրի՝ եւ չըրի, այլ իմ մէջս գործող Աստուծոյ շնորհքը:

Սակայն կարեւոր չէ՝ ե՛ս քարոզեցի թէ միւս առաքեալները. որովհետեւ բոլորիս ալ քարոզածը նոյն Աւետարանն է, որուն դուք հաւատացիք:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ Մաթէոսի (28:1-20)

Շաբաթ երեկոյէն ետք, երբ Կիրակին կը բացուէր, Մարիամ Մագդաղենացին եւ միւս Մարիամը գերեզմանը տեսնելու եկան:

²Յանկարծ զօրաւոր երկրաշարժ մը եղաւ, եւ Աստուծոյ հրեշտակը երկինքէն իջնելով՝ զլորեց գերեզմանի մուտքին դրուած քարը եւ նստաւ անոր վրայ: Անոր տեսքը փայլակի կը նմանէր, եւ հագուստները ձիւնի պէս ճերմակ էին: Պահապանները երբ ասիկա տեսան, սարսափեցան եւ մեռելի պէս եղան: Հրեշտակը կիներուն ըսաւ.

- Դուք մի՛ վախնաք. գիտեմ որ խաչուած Յիսուսը կը փնտռէք: Հոս չէ, որովհետեւ յարութիւն առաւ, ինչպէս ըսած էր: Եկէք եւ տեսէ՛ք այն տեղը ուր դրուած էր:

kirkerû gûseyin, taghvetsav yev yerrort orû harootyoon arav, tartsyal Soorp kirkeroon hamatsayn, oo yerevtsav Bedrosin yev dasnûmeg arakyalneroon. Hedo yerevtsav miyadegh khûmpûvadz hink harooure aveli hedevortneroo tebedev anontsme vomank meradz yen, payts shaderû voghch yen dagavin. Aynoohehev yerevtsav Hagoposin yev aba polor arakyalneroon.

I vercho, poloren hedo yerevtsav nayeve indzi, vizhadzis. Artarev arakyalneroon mech hedinûn yem yes yev arzhani isg chem arakyal gochveloo, kani Asdoodzo yegeghetsin haladzetsi payts hima inch vor yem Asdoodzo indzi divadz shûnorhkin gû bardim, yev gûrnam ûsel te Asdoodzo indzi dûvadz shûnorhkû abartooyin cheghav, vorovhedev polor arakyalneren aveli yes ashkhadetsa, tebed inch vor ûri yes chûri, ayl im mechûs kordzogh Asdoodzo shûnorhkû.

Sagayn garevor che yes karojetsi te mous arakyalnerû? vorovhedev poloris al karojazdû nooyin Avedaranûn e, voroon took havadatsik.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Madteyosi (28:1-20)

Shapat yeregoyen yedk, yerp Giragin gû patsver, Maryam Maktaghenatsin yev mous Maryamû kerezmanû desneloo yegan. Hangardz zoravor yergrasharzh mû yeghav, yev Asdoodzo hûresgdagû yerginken ichnelov klorets kerezmani moodkin tûrvadz karû yev nûsdav anor vûra. Anor deskû paylagi gû nûmaner, yev hakoosdnerû tsooyini bes jermag eyin. Bahabannerû yerp asiga desan, sarsapetsan yev mereli bes yeghan. Hûreshdagû gineroon ûsav,

-Took mi vakhnak, kidem vor khachvadz Hisoosû gû pûndûrek. Hos che, vorovhedev harootyoon arav, inchbes ûsadz er. Yegek yev desek ayn deghû oor tûrvadz er.

Անմիջապէս գացէք եւ ըսէ՛ք իր աշակերտներուն՝ թէ յարութիւն առաւ: Անիկա ձեզմէ առաջ Գալիլէա կը հասնի եւ հոն պիտի տեսնէք զինք. ահա ըսի ձեզի:

Կիները վախով, բայց միեւնոյն ատեն մեծ ուրախութեամբ դուրս ելան գերեզմանէն եւ վազեցին՝ պատմելու համար աշակերտներուն:

Յանկարծ Յիսուս հանդիպեցաւ անոնց եւ ըսաւ.

- Ողջո՛յն ձեզի:

Կիները մօտենալով՝ փարեցան անոր ոտքերուն եւ երկրպագեցին անոր:

Յիսուս ըսաւ. - Մի՛ վախնաք, գացէք եւ ըսէ՛ք իմ եղբայրներուս՝ որ Գալիլէա երթան. հո՛ն պիտի տեսնեն զիս:

Երբ կիները գացին, պահապաններէն ոմանք քաղաք եկան եւ ինչ որ պատահած էր պատմեցին աւագ քահանաներուն: Աւագ քահանաները եւ երեցները հաւաքուելով՝ խորհրդակցեցան եւ առատ դրամ տուին պահապաններուն եւ ըսին.

- Ըսէ՛ք՝ որ «իր աշակերտները գիշերով եկան եւ գողցան մարմինը, երբ մենք քնացած էինք»: Եւ եթէ կառավարիչին ականջը հասնի ասիկա, մենք զայն կը գոհացնենք. անհո՛գ եղէք դուք:

Պահապանները դրամը առին եւ ըրին ինչ որ պատուիրուած էր իրենց: Եւ այսպիսով այս լուրը տարածուեցաւ Հրեաներուն մէջ մինչեւ այսօր:

Իսկ տասնմէկ աշակերտները գացին Գալիլէա, այն լեռը ուր Յիսուս ժամադրուած էր իրենց հետ: Երբ տեսան զինք, երկրպագեցին իրեն. բայց ոմանք տարակուսեցան: Յիսուս մօտենալով խօսեցաւ անոնց հետ: Ապա ըսաւ.

- Ամէն իշխանութիւն տրուեցաւ ինծի երկինքի մէջ եւ երկրի վրայ: Ինչպէս որ Հայրը զիս դրկեց, այնպէս ալ ես ձեզ կը դրկեմ: Հետեւաբար, գացէք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցէք: Զանոնք մկրտեցէ՛ք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց ստրվեցուցէք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի. եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը:

Anmichabes katsek yev ûsek ir arakyalneroon te harootyoon arav.

Aniga tsezme arach Kalilya gû hasni yev hon bidi desnek zink, aha ûsi tsezi.

Ginerû vakhov, payts miyevnooyan aden medz oorakhootyamp toors yelan kerezmanen yev vazetsin՝ badmeloo hamar ashagerdneroon.

Hangardz Hisoos hantibetsav anonts yev ûsav, -**Voghchouyn** tsezi.

Ginerû modenalov paretsan anor vodkeroon yev yergûrbaketsin anor. Hisoos ûsav,

-**Mi** vakhnak, katsek ûsek im yeghpayrnerooos vor Kalilya yertan, hon bidi desnen zis.

Yerp ginerû katsin, bahabanneren vomank kaghak yegan yev inch vor badahadz er badmetsin avak kahananeroon. Avak kahananerû yev yeretsnerû havakvelov khorhûrtagtsetsan yev arad tûram dûvin bahabanneroon yev ûsin,

-**Ûsek** vor “Ir ashagerdnerû kisherov yegan yev koghtsan marminû, yerp menk kûnatsadz eyink”. Yev yete garavarichin aganchû hasni asiga, menk zayn gû kohatsûnenk, anhok yeghek took.

Bahabannerû tûramû arin yev ûrin inch vor badvirvadz er irents. Yev aysbisov ays loorû daradzvetsav Hryaneroon mech minchev aysor. Isg dasnûmeg ashagerdnerû katsin Kalilya, ayn lerû oor Hisoos zhamatrûvadz er irents hed.

Yerp desan zink, yergûrbaketsin, payts vomank daragoosetsan. Hisoos modenalov khosetsav anonts hed. Aba ûsav,

-**Amen** ishkhanootyoon dûrvetsav indzi yerginki mech yev yergri vûra. Inchbes vor Hayrû zis ghûrgets, aynbes al yes tsez gû ghûrgem. Hedevapar, katsek yev polor zhoghovoortnerû indzi ashagerd tartsootsek. Zanonk mûgûrdetsek՝ Hor, Vortiyin yev Soorp Hokiyyin anoonov. Anonts sorvetsootsek ayn polor badvirannerû vor yes tsezi dûvi, yev aha mishd tsezi hed bidi ûllam, minchev ashkharhis vakhjanû.

**Առաքելներու Գործերը Գրքէն
(1:15-26)**

Համբարձումէն քանի մը օրեր ետք, երբ շուրջ հարիւրքսան հաւատացեալներ մէկտեղուած էին, Պետրոս ոտքի ելլելով ըսաւ.

- Եղբայրներ, պէտք էր կատարուէր Սուրբ զիրքին մէջ գրուածը, այն՝ ինչ որ նախօրօք Սուրբ Հոգին ըսած էր Դաւիթի բերնով՝ Յովայի մասին, որ Յիսուսը ձերբակալողներուն առաջնորդը եղաւ: Յովա մեր խումբէն էր, մեզի պէս առաքելական ծառայութեան համար ընտրուած: Բայց իր անիրաւ մատնութենէն ետք, որուն վարձքով ազարակ մը գնեց, երեսն ի վայր ինկաւ այնտեղ եւ փորը ճեղքուելով՝ փորոտիքը դուրս թափեցաւ: Բոլոր Երուսաղէմացիները այս մասին իմացան, եւ այս պատճառով ալ այդ ազարակը իրենց բարբառով Ակեղոյամա, այսինքն՝ Արեան Ազարակ կը կոչեն: Արդ, Սաղմոսներու զիրքին մէջ գրուած է. *«Թող անոր տունը աւերակ մնայ, եւ հոն մարդ չբնակի»*. Իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. *«Իր պաշտօնը ուրիշ մէկը թող առնէ»*: Այստեղ կան մարդիկ, որոնք միշտ մեր հետը եղած են Տէր Յիսուսի երկրաւոր առաքելութեան ամբողջ տեւողութեան, Յովհաննէսի ձեռքով անոր մկրտութենէն մինչեւ երկինք համբարձման օրը: Ասոնցմէ մէկը պէտք է որ տասնըմէկիս միանայ՝ Քրիստոսի յարութեան վկայ ըլլալու համար: Այն աստէն հաւատացեալները երկու հոգի ներկայացուցին. Բարսաբա կոչուած Յովսէփը, որ Արդար մականունանուեցաւ, եւ Մատաթիան: Ապա հետեւեալ աղօթքը ըրին.

- Դուն, Տէ՛ր, որ կը ճանչնաս բոլոր մարդոց սիրտերը, ցոյց տուր մեզի՝ թէ այս երկուքէն ո՞ր մէկը կ'ընտրես առաքելական այս պաշտօնին համար, որմէ Յովա ինկաւ՝ իրեն սահմանուած տեղը երթալու համար:

Ապա երկու անուններուն վրայ վիճակ ձգեցին: Վիճակը Մատաթիային ելաւ, եւ անիկա տասնըմէկ առաքելներուն կարգին դասուեցաւ:

Arakyalneroo Kordzerû Kirken (1:15-26)

Hampartsoomen kani mû orer yedk, yerp shoorch haryoor kûsan havadatsyalner megdeghvadz eyin, Bedros vodki yellelov ûsav, -Yeghpayrner, bedk er gadarver Soorp kirkin mech kûrvadzû, ayn inch vor nakhorok Soorp Hokin ûsadz er Taviti pernov Hootayi masin, vor Hisoosû tserpagaloghneroon arachnortû yeghav. Hoota mer khoompen er, mezi bes arakelagan dzarayootyan hamar ûndûrvadz. Payts ir anirav madnootyan hamar, voroon vartskov akarag mû kûnets, yeresn i vayr ingav ayndegh yev porû jeghkûvelov porodikû toors tapetsav. Polor Yeroosaghematsinerû ays masin imatsan, yev ays badjarov al ayt akaragû irents parparov Ageghtama, aysinkn Aryan Akarag gû gochen. Art, Saghmosneroon kirkin mech kûrvadz e,

“Togh anor doonû averag mûna, yev hon mart chûpûnagi”, isg oorish degh mû gûse “Ir bashdonû oorish megû togh arne”. Aysdegh gan martig, voronk mishd mer hedû yeghadz yen Der Hisoosi yergravor arakelootyan ampoghch devoghootyan, Hovhannesi tserkov anor mûgûrdootenen minchev yergink hampartsman orû. Asontsme megû bedk e vor dasnûmegis miyana Krisdosi harootyan vûga ûllaloo hamar.

Ayn aden havadatsyalnerû yergoo hoki nergayatsootsin, Parsapa gochvadz Hovsepû, vor Artar maganvanetsav, yev Madatyan. Aba hedevyal aghotkû ûrin,

-Toon, Der, vor gû janchnas polor martots sûrderû, tsooyts door mezi te ays yergooken vor megû gûndûres arakelagan ays bashdonin hamar, vorme Hoota ingav` iren sahmanvadz deghû yertaloo hamar.

Aba yergoo anoonneroon vûra vijag tsûketsin. Vijagû Madatyayin yelav, yev aniga dasnûmeg arakyalneroon garkin tasvetsav.

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մարկոսի (16:1-8)**

Շաբաթ օրը երբ անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Յակոբոսի մայրը՝ Մարիամը, եւ Սողոմէն գացին խունկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օծեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան:

- Ո՞վ պիտի գլորէ գերեզմանի մուտքին դրուած քարը,- կը հարցնէին իրարու, Կորովհետեւ քարը շատ մեծ էր:

Սակայն երբ նայեցան, տեսան որ քարը արդէն իսկ գլորուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ճերմակ զգեստ հագած երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր, եւ սարսափեցան: Երիտասարդը ըսաւ անոնց.

- Մի՛ վախնաք, զիտեմ որ խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտռէք, բայց հոս չէ՛, յարութիւն առաւ: Տեսէ՞ք, զինք հոս դրած էին: Այժմ գացէք, ըսէք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա ինք ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլեա. հո՛ն պիտի տեսնէք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած ու ապշահար, եւ ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախնային:

**Մեղեղոց Սուրբ Յարութեան
Առաքեալներու Գործերը Գրքէն
(2:22-41)**

Ո՞վ Իսրայէլացիներ, մտի՛կ ըրէք ինչ որ կ'ըսեմ: Աստուած ինք ձեզի ցոյց տուաւ, թէ իր ընտրեալը Նազովրեցի Յիսուսն էր, որուն ձեռքով Աստուած ձեր մէջ կատարեց իր սքանչելի գործերը, հրաշքները եւ նշանները, ինչպէս դուք ալ գիտէք: Անիկա Աստուծոյ սահմանած ծրագրին եւ կանխագիտութեան համաձայն ձեր ձեռքը յանձնուեցաւ, եւ դուք անօրէններու ձեռքով զայն խաչի վրայ գամելով՝ սպաննեցիք: Սակայն Աստուած զայն յարուցանեց, մահուան կապանքները փշրելով, որով ցոյց տուաւ՝ թէ մահը չէր կրնար իշխել անոր վրայ:

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd Margosi
(16:1-8)**

Shapat orû yerp antsav, Maryam Maktaghenatsin, Hagoposi mayrû Maryam, yev Soghomen katsin khoonger kûnetsin yev badrasdetsin, vorbeszi yertan yev odzen Hisoosi marminû. Giragi aravod ganookh, arevadzakin, kerezman yegan.

-Ov bidi kûlore kerezmani moodkin tûrvadz karû? -gû hartsûneyin iraroo, vorovhede v karû shad medz er.

Sagayn yerp nayetsan, desan vor karû arten isg kûlorvadz er. Kerezmanen ners mûdan yev jermag ûzkesd hakadz yeridasart mû desan, vor ach goghmû nûsdadz er, yev sarsapetsan. Yeridasartû ûsav anonts,

-Mi vakhnak, kidem vor khachvadz Nazovretsi Hisoosû gû pûndûrek, payts hos che, harootyoon arav. Desek, zink hos tûradz eyin. Ayzhûm katsek, ûsek ir ashagerdneroon yev Bedrosi, vor aha ink tsezme arach gerta Kalilya, hon bidi desnek zink, inchbes vor ûsadz er tsezi.

Yerp asiga lûsetsin, toors pakhan kerezmanen, zarhooradz oo abshahar, yev voch megoon pan mû ûsin, vorovhede v gû vakhnayin.

**Merelots Soorp Harootyan
Arakyalneroo Kordzerû Kirken (2:22-41)**

Ov Israyelatsiner, mûdig ûrek inch vor gûsem. Asdvadz ink tsezi tsooyts dûvav, te ir ûndûryalû Nazovretsi Hisoosn er, voroon tserkov Asdvadz tser mech gadarets ir ûskancheli kordzerû, hûrashknerû yev nûshannerû, inchbes took al kidek. Aniga Asdoodzo sahmanadz dzûrakin yev gankhakidootyan hamatsayn tser tserkû hantsnûvetsav, yev took anorenneroo tserkov zayn khachi vûra kamelov ûsbannetsik. Sagayn Asdvadz zayn harootsanets, mahvan gabanknerû pûshrelov, vorov tsooyts dûvav te mahû cher gûrnar ishkhel anor vûra.

Արդ, Դաւիթ նոյնինքն Յիսուսի մասին է, որ կ'ըսէ.-

«Սկիզբէն իսկ միշտ կը տեսնէի Տէրը՝ դիմացս կանգնած, անիկա իմ կողքիս է, որպէսզի չսասանիմ»:

Ահա թէ ինչու՝ սիրտս ուրախ է, լեզուս ցնծութեամբ կ'արտայայտուի, եւ մարմինս կեանքի յոյսով պիտի հանգչի, որովհետեւ գիտեմ թէ իմ անձս մեռելներու աշխարհին մէջ պիտի չձգես, եւ պիտի չթողուս որ քու սուրբիդ մարմինը փտութիւն տեսնէ: Կեանքի ճամբան ցոյց տուիր ինծի եւ զիս քու քաղցր ներկայութեանդ ուրախութեամբը պիտի լեցնես»:

Եղբայրներ, Դաւիթ նահապետին համար վստահօրէն կրնանք ըսել՝ թէ մեռաւ եւ թաղուեցաւ, եւ իր գերեզմանը մինչեւ այսօր ալ հոս է տակաւին: Բայց մարգարէ ըլլալով՝ զիտէր, թէ Աստուած երդումով իրեն խոստացաւ՝ որ իր շառաւիղէն պիտի ծնի Քրիստոսը եւ Աստուած զայն թագաւոր պիտի ընէ իր աթոռին վրայ: Ուստի կանխագիտութեամբ խօսեցաւ Քրիստոսի յարութեան մասին, ըսելով՝ թէ «Անոր անձը մեռելներու աշխարհին մէջ չմնաց, եւ անոր մարմինը փտութիւն չտեսաւ»: Նոյն այս Յիսուսն էր որ Աստուած յարուցանեց, եւ մենք բոլորս ասոր վկայ ենք: Աստուած իր աջով զայն իր մօտ բարձրացուց, եւ Յիսուս իր Հօրմէն առնելով Սուրբ Հոգին, որ ան տալ խոստացեր էր, զայն մեր վրայ սփռեց, ինչ որ ահա դուք անձամբ կը տեսնէք ու կը լսէք: Որովհետեւ Դաւիթ երկինք չելաւ, բայց ինքն էր ըսողը.-

«Տէրը իմ Տիրոջս ըսաւ.-

Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

Հետեւաբար վստահ եղէք բոլորդ, ո՛վ Իսրայէլացիներ, Աստուած Տէր եւ Օծեալ կարգեց այն Յիսուսը, որ դուք խաչեցիք:

Այս խօսքերը լսելով, ներկաները խորապէս ցնցուեցան եւ հարցունցին Պետրոսի եւ միւս առաքեալներուն.

- Ի՞նչ պէտք է ընենք, ո՛վ եղբայրներ:

Պետրոս պատասխանեց.

Art, Tavit nooyinkûn Hisoosi masin e vor gûse,-

“Ûsgizpen isg mishd gû desneyi Derû timatsûs ganknadz, aniga im goghkis e, vorbeszi chûsasanim. Aha te inchoo sirdûs oorakh e, lezoos tsûndzootyamp gardahaydûvi, yev marminûs gyanki hooysov bidi hankchi, vorovhedev kidem te im antsûs merelneroo ashkharhin mech bidi chûtsûkes, yev bidi chûtoghoos vor koo soorpit marminû pûdootyoon desne. Gyanki jampan tsooyts dûvir indzi yev zis koo kaghtsûr nergay-ootyant oorakhootyampû bidi letsûnes”.

Yeghpayrner, Tavit nahabedin hamar vûsdahoren gûrnank ûsel te merav yev taghvetsav, yev ir kerezmanû minchev aysor al hos e dagavin. Payts markare ûllalov kider, te Asdvadz yertoomov iren khosdatsav vor ir sharavighen bidi dzûni Krisdosû yev Asdvadz zayn takavor bidi ûne ir atorin vûra. Oosdi gankhakidootyamp khosetsav Krisdosi harootyan masin, ûselov te “Anor antsû merelneroo ashkharhin mech chûmûnats, yev anor marminû pûdootyoon chûdesav”. Nooyn ays Hisoosûn er vor Asdvadz harootsanets, yev menk polorûs ador vûra yenk. Asdvadz ir achov zayn ir mod partsratsoots, yev Hisoos ir Hormen arnelov Soorp Hokin, vor an dal khosdatsadz er, zayn mer vûra sûprets, inch vor aha took antsamp gû desnek oo gû lûsek. Vorovhedev Tavit yergink chelav, payts inkûn er ûsoghû,

- “Derû im Dirochs ûsav,

-Ach goghmeûs nûsde, minchev tûshnami-nerût vodkeroot dag tûnem vobes badvantan.”

Hedevapar vûsdah yeghek polort, ov Israyelatsiner, Asdvadz Der yev Odzyal garkets ayn Hisoosû, vor took khachetsik.

Ays khoskerû lûselov, nerganerû khorabes tsûntsûvetsan yev hartsootsin Bedrosi yev myoos arakyalneroon,

-Inch bedk e ûnenk, ov yeghpayrner?.

Bedros badaskhanets,

- Ձեր ընթացքը փոխեցէք եւ իւրաքանչիւրդ մկրտուեցէք Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որպէսզի ձեր մեղքերը ներուին: Եւ երբ մկրտուիք, խոստացուած պարգեւը՝ Սուրբ Հոգին պիտի ընդունիք: Որովհետեւ Աստուած իր խոստումը ըրաւ թէ՛ ձեզի ու ձեր զաւակներուն եւ թէ՛ բոլոր անոնց՝ որոնք իրմէ հեռու են. մեր Տէր Աստուածը զանոնք իրեն պիտի կանչէ:

Եւ Պետրոս խօսքը շարունակելով՝ բազմաթիւ վկայութիւններ կը բերէր եւ զանոնք կը յորդորէր, ըսելով.

- Դուք ձեզ փրկեցէք ներկայ մոլորած սերունդին վրայ գալիք դատապարտութենէն: Ոմանք Պետրոսի ըսածներուն համոզուեցան եւ մկրտուեցան: Այդ օր հաւատացեալներուն թիւը շուրջ երեք հազար հոգիով աւելցաւ:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ Դուկասի (24:1-12)

Կիրակի առաւօտ շատ կանուխ, Մարիամ Մագդաղենացին, Յովհաննան եւ Յակոբոսի մայրը՝ Մարիամը, ուրիշ կիներու հետ գերեզման եկան՝ իրենց հետ բերելով իրենց պատրաստած խունկերը: Գերեզմանին մուտքը փակող քարը գլորուած գտնելով՝ ներս մտան, բայց Տէր Յիսուսի մարմինը հոն չգտան: Մինչ պատահածին վրայ զարմանքէն ապշած էին, ահա երկու լուսազգեստ մարդիկ իրենց քով կանգնեցան: Կիները սարսափեցան եւ վախէն իրենց դէմքը գետին դարձուցին: Մարդիկը ըսին իրենց.

- Ինչո՞ւ ողջը մեռելներուն մէջ կը փնտռէք: Հոս չէ՛ ան. յարութի՛ւն առաւ: Յիշեցէ՛ք ինչ որ ըսաւ՝ մինչ տակաւին ձեզի հետ Գալիլեա կը գտնուէր, թէ Մարդու Որդին պէտք էր յանձնուէր մեղաւոր մարդոց ձեռքը, պէտք էր խաչուէր եւ երրորդ օրը յարութիւն առնէր:

Եւ յիշեցին անոր խօսքերը: Ապա գերեզմանէն վերադարձան եւ ինչ որ տեսան՝ պատմեցին տասնըմէկ առաքեալներուն եւ բոլոր միւս աշակերտներուն:

-Tser ûntatskû pokhetsek yev yoorakan-chourût mûgûrdûvetsek Der Hisoos Krisdosi anoonov, vorbeszi tser meghkerû nervin. Yev yerp mûgûrdûvik, khosdatvadz barkevû՝ Soorp Hokin bidi ûntoonik. Vorovhedev Asdvadz ir khosdoomû ûrav te tsezi oo tser zavagneroon yev te polor anonts՝ voronk irme heroo yen, mer Der Asdvadzû zanonk iren bidi ganche.

Yev Bedros khoskû sharoona gelov pazmativ vûgayootyooner gû perer yev zanonk gû hortorer, ûselov,

-Took tsez pûrgetsek nerga moloradz seroontin vûra kalik tadabardootyoonneren.

Vomank Bedrosi ûsadzneroon hamozvetsan yev mûgûrdûvetsan. Ayt or havadatsyal-neroon tivû shoorch yerek hazar hokiyov aveltsav.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Ghoogasi (24:1-12)

Giragi aravod shad ganookh, Maryam Maktaghanatsin, Hovhannan yev Hagoposi mayrû Maryamû, oorish gineroo hed kerezman yegan irents hed perelov badrasdadz khoongerû. Kerezmanin moodkû pagogh karû kûlorvadz kûdnelov ners mûdan, payts Der Hisoosi marminû hon chûkûdan. Minch badahadzin vûra zarmanken abshadz eyin, aha yergoo loosazkesd martig irents kov ganknetsan. Ginerû sarsapetsan yev vakhen irents temkû kedin tartsootsin. Martigû ûsin irents,

-Inchoo voghchû merelneroon mech gû pûndûrek? Hos che an, harootyoon arav. Hishetsek inch vor ûsav minch dagavin tsezi hed Kalilya gû kûdnûver, te Martoo Vortin bedk er hantsnûver meghavor martots tserkû, bedk er khachver yev yerrort orû harootyoon arner.

Yev hishetsin anor khoskerû. Aba kerezmanen veratartsan yev inch vor desan badmetsin dasnûmeg arakyalneroon yev polor myoos ashagerdneroon.

Ասիկա առաքելներուն պատմողները իրենք էին՝ Մարիամ Մագդաղենացին, Յովհաննան, Յակոբոսի մայրը՝ Մարիամը, եւ իրենց ընկերացող միւս կիները: Առաքելները ցնդաբանութիւն համարեցին անոնց պատմածները եւ չհաւատացին: Բայց Պետրոս ելաւ գերեզման վազեց, ծռելով ներս նայեցաւ եւ գերեզմանին մէջ միայն պատանքը տեսաւ. ու զարմացած վերադարձաւ՝ մտածելով թէ ի՞նչ պատահեցաւ արդեօք:

*Աւետումն Ս. Աստուածածնի
Պօղոս Առաքելի Կողմէ
Կորնթացիներուն Գրուած Երկրորդ Նամակէն
(6:16-7:1)*

Ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին եւ մեհեաններուն միջեւ:
Արդարեւ, մե՛նք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.-
«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք՝ իմ ժողովուրդս»:
Ահա թէ ինչո՞ւ Աստուած կը հրահանգէ մեզի.-
«Անջատ եւ հեռո՞ւ կեցէք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ: Ես ձեզի Հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս ու աղջիկներս պիտի ըլլաք,- կ'ըսէ ամենակալ Տէրը»:
Սիրելիներ՝ ր, այս խոստումները մեզի եղած են: Ուստի հեռո՞ւ մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

*Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Ղուկասի (24:1-12)*

Եղիսաբեթի յղութեան վեցերորդ ամսուան, Աստուած Գաբրիէլ հրեշտակը դրկեց Գալիլեայի Նազարէթ քաղաքը, կոյսի մը մօտ, որ նշանուած էր Դաւիթի սերունդէն Յովսէփ անունով մէկու մը հետ: Կոյսին անունը Մարիամ էր:

Asiga arakyalneroon badmoghnerû irenk eyin, Maryam Maktaghenatsin, Hovannan, Hagoposi mayrû Maryamû, yev irents ûngeratsogh mous ginerû. Arakyalnerû tsûntapanootyoon hamaretsin anonts badmadznerû yev chûhavadatsin. Payts Bedros yelav kerezman vazets, dzûrelov ners nayetsav yev kerezmanin mech miyayn badankû desav, oo zarmatzadz veratartsav, mûdadzelov te inch badahetsav artiyok?

*Avedoomûn Soorp Asdvadzadzni
Boghos Arakyal Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Yergrort
Namagen (6:16-7:1)*

Inch nûmanootyoon ga Asdoodzo dajarin yev mehyanneroon michev?
Artarev, menk yenk gentani Asdoodzo dajarû, inchbes Asdvadz ink ûsav,
- “Anonts mech bidi pûnagim yev anonts hed bidi abrim. Yes irents Asdvadzû bidi ûllam yev anonk im zhoghovoorts”.
Aha te inchoo Asdvadz gû hûrahanke mezi,-
“Anchad yev heroo getsek hetanosneren,- yev bighdz paneroo mi tûbchik, yev yes tsez bidi ûntoonim. Yes tsezi Hayr bidi ûllam yev took im dûghakûs yev aghchignerûs bidi ûllak,- gûse amenagal Derû”.
Sireliner, ays khosdoomnerû mezi yeghadz yen. Oosdi heroo mûnank marmnagan yev hokegan amen bûghdzootene, menk mez gadarelaves makrenk Asdoodzo yergoughovû abrelov.

**Hisos Krisdosi Avedaranen Êsd
Ghoogasi (1:26-38)**

Yeghisapeti hûghootyan vetserort amsoon, Asdvadz Kapriyel hûreshdagû ghûrgets Kalilyayi Nazaret kaghakû, gooyisi mû mod, vor nûshanvadz er Taviti seroonten Hovsep anoonov megoo mû hed. Gooyisin anoonû Maryam er.

Հրեշտակը Մարիամի գալով ըսաւ.

- Ուրախացի՛ր, շնորհալի՛ կոյս, որովհետեւ Աստուած քեզի հետ է:

Մարիամ այս խօսքին վրայ խռովեցաւ. կը մտածէր թէ ի՛նչ կը նշանակէ այս ողջոյնը: Սակայն հրեշ-տակը ըսաւ իրեն.

- Մի՛ վախնար, Մարիա՛մ, որովհետեւ Աստուծոյ շնորհքին արժանացար: Ահա պիտի յղանաս եւ գաւակ մը ծնիս, որ Յիսուս պիտի կոչես: Անիկա մեծ պիտի ըլլայ եւ Բարձրեալին Որդին պիտի կոչուի: Տէր Աստուած անոր պիտի տայ իր հօրը՝ Դաւիթի գահը, եւ անիկա Յակոբի սերունդներուն վրայ յաւիտեանս պիտի թագաւորէ: Անոր թագաւորութիւնը անվախճան պիտի ըլլայ:

Մարիամ ըսաւ հրեշտակին.

- Ատիկա ի՛նչպէս կրնայ պատահիլ, երբ ամուսնացած չեմ:

Հրեշտակը պատասխանեց.

- Սուրբ Հոգին քեզի պիտի գայ եւ Բարձրեալին զօրութիւնը քու վրայ պիտի հանգչի. ուստի ծնելիք գաւակդ սուրբ է եւ Աստուծոյ Որդի պիտի կոչուի: Ահա ազգականդ Եղիսաբէթն ալ, հակառակ ծեր եւ ամուլ ըլլալուն՝ վեցերորդ ամիսն է որ յղի է: Գիտցի՛ր, որ Աստուծոյ համար անկարելի բան չկայ:

Մարիամ ըսաւ.

- Աստուծոյ աղախինն եմ, թող քու ըսածդ ըլլայ: Ապա հրեշտակը գնաց Մարիամի քովէն:

Նոր Կիրակի(Կրկնագատիկ)

**Յակոբոս Առաքեալի Ընդհանրական
Նամակէն (3:1-12)**

Եղբայրնե՛րս, ամենքդ ալ ուրիշները սրբա-
գրելու հետամուտ մի՛ ըլլաք, գիտնալով որ
մենք՝ ուսուցանողներս աւելի խստութեամբ
պիտի դատուինք, որովհետեւ բոլորս ալ
յանցանքներ ունինք:

Ան որ գիտէ իր խօսքերը կշռել՝ կատարեալ
մարդ է, ինքզինքին իշխելու կարող: Տե՛ս, թէ
ի՛նչպէս ձիերուն բերանը սանձ կը դնենք՝
որպէսզի մեզի ենթարկուին, եւ անով ձիուն
բոլոր շարժումները կը կառավարենք:

Hûresgdagû Maryami kalov ûsav,

-Oorakhatsir, shûnorhali gooyis, vorovhedev
Asdvadz kezi hed e.

Maryam ays khoskin vûra khûrovetsav, gû
mûdadzer te inch gû nûshanage ays
voghchyoônû. Sagayn hûreshdagû ûsav iren,

-Mi vakhnar, Maryam, vorovhedev
Asdoodzo shûnorhkin arzhanatsar. Aha bidi
hûghanas yev zavag mû dzûnis, vor Hisoos
bidi goches. Aniga medz bidi ûlla yev
Partsûryalin Vortin bidi gochvi. Der Advadz
anor bidi da ir horû` Taviti kahû, yev aniga
Hagopi seroontneroon vûra havidyanûs bidi
takavore. Anor takavorootyoonû anvakhjan
bidi ûlla.

Maryam ûsav hûreshdagin,

-Adiga inchbes gûrna badahil, yerp
amoosnatsadz chem?

Hûreshdagû badaskhanets,

-Soorp Hokin kezi bidi ka yev Partsryalin
zoroptyoonû koo vûrat bidi hankchi, oosdi
dzûnelik zavagût soorp e yev Asdoodzo Vorti
bidi gochvi. Aha azkaganût Yeghisapetûn al,
hagarag dzer yev amool ûllaloon vetserort
amisûn e vor hûghi e. Kidtsir, vor Asdoodzo
hamar angareli pan chûga.

Maryam ûsav, -Asdoodzo aghakhinûn yem,
togh koo ûsadzût ûlla.

Aba hûreshdagû kûnats Maryami koven.

Nor Giragi (Gûrgnazadig)

**Hagopos Arakyali Ūnthanragan Namagen
(3:1-12)**

Yeghpayrnerûs, amenkût al oorishnerû sûr-
pakreloo hedamood mi ûllak, kidnalov vor
menk, oosootsanoghnerûs aveli khsdoot-
yamp bidi tadvink, vorovhedev polors al
hantsankner oonink.

An vor kide ir khoskerû gûshrel gadaryal
mart e, inkzinkin ishkheloo garogh. Des, te
inchbes tsiyeroon peranû sants gû tûnenk
vorbeszi mezi yentargûvin, yev anov tsiyoon
polor sharzhoomnerû gû garavarenk.

Կամ դիտե՛ նաւերը. ո՛րքան ալ մեծ ըլլան եւ ինչպիսի՛ զօրաւոր հովերէ ալ քշուին, փոքրիկ դէկ մը զիրենք կ'ուղղէ դէպի հոն՝ ուր նաւավարը կը փափաքի տանիլ: Նոյնպէս ալ լեզուն. թէեւ փոքր անդամ մըն է, բայց մեծամեծ բաներով կը պարծենայ: Գիտէք, թէ պզտիկ կայծը հսկայ անտառ մը կրնայ հրդեհել: Լեզուն ալ կրակ է: Անիրաւութեան աշխարհ մըն է անիկա: Թէեւ պարզ մէկ անդամն է մարմինին, բայց ամբողջ մարդը կ'ապականէ, եւ գեհենի կրակով բռնկած՝ մեր ամբողջ կեանքը կրակով կը վառէ:

Բոլոր տեսակի գազանները, թռչունները, սողունները եւ ծովային կենդանիները նուաճուած են մարդուն կողմէ եւ կը հնազանդին անոր: Բայց ո՛չ որ կրնայ հնազանդեցնել մարդկային լեզուն, որ չար է, անգսպելի եւ մահացու թոյնով լեցուն: Անով կ'օրհնենք մեր Տէրը եւ Հայրն Աստուած, եւ դարձեալ անով կ'անիծենք մարդիկը, որոնք Աստուծոյ նմանութեամբը ստեղծուած են: Այսինքն՝ նոյն բերանէն կ'ելլեն թէ՛ օրհնութիւնը եւ թէ՛ անեծքը: Ասիկա ճիշդ չէ՝ սակայն, եղբայրներս: Միթէ աղբիւր մը միեւնոյն ակէն քաղցր եւ դառն ջուր կը բխէ: Կարելի՞ բան է, եղբայրներս, որ թզենին ձիթապտուղ տայ կամ որթատունկը՝ թուզ: Նմանապէս կարելի չէ որ աղուտ հողէն քաղցր ջուր բխի:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (1:1-17)***

Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Բանը: Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց. առանց անոր ո՛չ մէկ բան ստեղծեց: Կեանքը անով սկիզբ առաւ: Եւ կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ խաւարին մէջ կը փայլի. բայց խաւարը չկրցաւ հասկնալ զայն:

Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ յրկուած մարդ մըն էր, եկաւ Լոյսին համար վկայութիւն տալու, որպէսզի ամէն մարդ անոր միջոցաւ հաւատայ:

Gam tide naverû, vorkan al medz ûllan yev inchbisi zoravor hovere al kûshvin, pokrig gheg mû zirenk googhe tebi hon oor navavarû gû papaki danil. Nooynbesh al lezoon, teyev pokûr antam mûn e, payts medzamedz panerov gû bardzena. Kidek, te bûzdig gaydzû hûsga andar mû gûrna hûrtehel. Lezoon al gûrag e. Aniravootyan ashkharh mûn e aniga. Teyev barz meg antamûn e marmini, payts ampoghch martû gabagane, yev keheni gûragov pûrûngadz mer ampoghch gyankû gûragov gû vare.

Polor desagi kazannerû, tûrchoonnerû, soghoonnerû yev dzovayin gentaninerû nûvajvadz yen martoon goghme yev gû hûnazantin anor. Payts voch vok gûrna hûnazantetsûnel martgayin lezoon, vor char e, anzûsbeli yev mahatsoo tooynov letsoon. Anov gorhnenk martigû, voronk Asdoodzo nûmanootyampû ûsdeghdzûvadz yen. Aysinkûn nooyn peranen gellen te orhnootyoonû yev te anedzkû. Asiga jisht che sagayn, yeghpayrnerûs. Mite aghpyoor mû miyevnooyan agen kaghtsûr yev tarûn choor gû pûghkhe? Gareli pan e, yeghpayrnerûs, vor tûzenin tsidabûdoogh da gam vortadoongû tooz? Nûmanabes gareli che vor aghood hoghen kaghtsûr choor pûkhi.

***Hissoos Krisdosi Avedaranen Êsd
Hovhannesi (1:1-17)***

Ashkharhi ûsdeghdzakordzootenen arach koyootyoon ooner Panû. Panû Asdoodzo hed er yev panû Asdvadz er.

Aniga ûsgizpen Asdoodzo hed er. Anov er vor Asdvadz amen inch ûsdeghdzets, arants anor voch meg pan ûsdeghdzets. Gyankû anov ûsgizp arav. Yev gyankû martots hamar looys e՝ vor khavarin mech gû payli, payts khavarû chûgûrtsav hasgûnal zayn.

Hovhannes, vor Asdoodzo goghme ghûrgûvadz mart mûn er, yegav Looyin hamar vûgayootyoon daloo, vorbeszi amen mart anor michotsav havada.

Ինք Լոյսը չէր, այլ՝ Լոյսին համար վկայ մը: Բանն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով՝ կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը: Աշխարհի մէջ էր անիկա, աշխարհը իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զինք չճանչցաւ: Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց իր իսկ ստեղծած մարդիկը զինք չընդունեցին: Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ: Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմինի կամ մարդկային կամքով, այլ Աստուծմէ ծնելով:

Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն:

Յովհաննէս անոր մասին վկայեց, յայտարարելով.

- Ասիկա է ան որուն մասին կ'ըսէի. «Ան որ ինձմէ ետք պիտի գայ՝ ինձմէ մեծ է, որովհետեւ ինձմէ առաջ գոյութիւն ունէր»:

Անոր լիառատ շնորհքն է որ մենք բոլորս շնորհքի վրայ շնորհք ստացանք. որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Աշխարհամատրան Կիրակի (Կանաչ)

Պետրոս Առաքելի Ընդհանրական Առաջին Նամակէն (2:1-10)

Հետեւաբար մէկդի՝ ձգեցէք ամէն տեսակի չար մտածում ու նենգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ եւ ամէն տեսակի չարախօսութիւն: Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքին անխաբդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք: «*Անգամ մը որ Տիրոջ խօսքին համը առնէք, պիտի տեսնէք թէ քաղցր է ան*»: Մօտեցէ՛ք անոր, Քրիստոսի, որովհետեւ ի՛նքն է այն կենդանի վէմը, որ թէպէտ մարդոցմէ մերժուած, բայց Աստուծմէ ընտրուած պատուական վէմն է:

Ink Loosyû cher, ayl Loosyin hamar vûga mû. Panûn er jûshmarid loosyû, vor ashkharh kalov gû loosavore ampoghch martgootyoonû. Ashkharhi mech er aniga, ashkharhû irmov ûsdeghdzûvetsav, sagayn ashkharhû zink chûjanchtsav. Ir isg ûsdeghdzadz ashkharhû yegav, payts ir isg ûsdeghdzadz martigû zink chûntoonetsin. Isg zink ûntoonoghneroon yev iren hava-datsoghneroon ishkhanootyoon dûvav Asdoodzo vortiner ûllaloo, voch Aryan jampov yev voch marmni gam martgayin gamkov, ayl Asdoodzme dzûnelov.

Yev Panû mart yeghav yev mer michev pûnagetsav, yev menk desank anor parkû, parkû Miyadzinin, vor Hormen yegav՝ shûnorkov yev jûshmardootyamp letsoon. Hovhannes anor masin vûgayets, haydararelov,

-Asiga e an voroon masin gûseyi, “An vor indzme yedk bidi ka indzme medz e, vorovhedev indzme arach koyootyoon ooner”. Anor liyarad shûnorhken e vor menk polorûs shûnorhki vûra shûnorhk ûsdatsank, vorovhedev Orenkû Movsesi michotsav dûrvetsav, minch shûnorhkûn oo jshmardootyoonû Hisoos Krisdosi michotsav.

Ashkharhamadran Giragi (Ganach)

Bedros Arakyali Ūnthanragan Arachin Namagen (2:1-10)

Hedevapar megiti tsûketsek amen desagi char mûdadzoom oo nenkootyoon, geghdzavorootyoon oo nakhants oo amen desagi charakhosootyoon. Vorbes havadki noradzin manoogner Asdoodzo khoskin ankhartakh gatin papaketsek, vorbeszi anov ajik yev pûrgootyan hasnik. “Ankam mû vor Diroch khoskin hamû arnek, bidi desnek te kaghtsûr e an”. Modetsek anor, Krisdosi, vorovhedev inkûn e ayn gentani vemû, vor tebed martotsme merzhûvadz, payts Asdoodzme ûndûrvadz badvagan vemûn e.

Այսպիսով դո՛ւք ալ, որպէս կենդանի քարեր, Քրիստոսի վէմին վրայ կը կառուցուիք՝ իբրեւ հոգեւոր տաճար. իւրաքանչիւրդ կը դառնաք անարատ քահանաներ եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ հոգեւոր ընդունելի պատարագ կը մատուցանէք Աստուծոյ: Որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է.-

«Ահա եւ Միոնի մէջ կը դնեմ ընտրուած վէմ մը, պատուական անկիւնաքար մը. անոր հաւատացողը յուսախար պիտի չըլլայ»:

Քանի դուք հաւատացիք Քրիստոսի, անիկա ձեզի համար պատուական վէմը եղաւ. մինչդէռ չհաւատացողներուն համար՝ անիկա *«Այն քարն է, որ թէպէտ շինողները մերժեցին գործածել, բայց ինք անկիւնաքարը եղաւ»*, կամ՝ *«Այն քարն է, որ գլորումի եւ գայթակղութեան առիթ»* պիտի ըլլայ անոնց համար՝ որոնք Աստուծոյ խօսքը անհամոզիչ գտնելով կը գայթակղին, ինչպէս որ Աստուծոյ նախատեսած էր:

Գալով ձեզի, դուք ընտրուած ցեղ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սուրբ ազգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը. եւ ձեր պարտականութիւնն է քարոզել զօրութիւնը անոր՝ որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց: Որովհետեւ հիմա Աստուծոյ ժողովուրդն էք, մինչ նախապէս չէիք. հիմա իր ողորմութիւնը կը վայելէք, մինչ նախապէս զրկուած էիք անկէ:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ Յովհաննէսի (2:23-3:12)

Զատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ի՛նչ կայ մարդոց սիրտին մէջ:

Նիկողէմնոս անունով Փարիսեցի մարդ մը կար, Հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի քով եկաւ եւ ըսաւ անոր.

Aysbisov took al, vorbes gentani karer, Krisdosi vemin vûra gû garootsvik iprev hokevor dajar, ourakanchyoorût gû tarnak anarad kahananer yev Hisoos Krisdosi michotsav hokevor ûntooneli badarak gû madootsanek Asdoodzo. Vorovhedev markareyootyan mech kûrvadz e, -

“Aha yes Siyoni mech gû tûnem ûndûrvadz vem mû, badvagan angyoonakar mû, anor havadatsoghû hoosakhap bidi chûlla”. Kani took havadatsik Krisdosi, aniga tsezi hamar badvagan vemû yeghav, minchter chûhavadatsoghneroon hamar aniga

“Ayn karûn e, vor tebed shinoghnerû merzhetsin kordzadz, payts ink angyoonakarû yeghav”, gam “Ayn karûn e, vor kloroomi yev kaytagghootyan arit” bidi ûlla anonts hamar voronk Asdoodzo khoskû anhamozich kûdnelov gû kaytagghin, inchbes vor Asdvadz nakhadesadz er.

Kalov tsezi, took ûndûrvadz tsegh mûn ek, takavoreloo gochvadz kahananer, soorp azk mû, Asdoodzo sepagan zhoghovoortû, yev tser bardaganootyoonûn e karozele zorootyoonû anor vor tsez khavaren ir ûskancheli looyisin ganchets. Vorovhedev hima Asdoodzo zhoghovoortûn ek, minch nakhaves cheyik, hima ir voghormootyoonû gû vaylek, minch nakhaves zûrgûvadz eyik ange.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Hovhannesi (2:23-3:12)

Zadgi donin, minch Hisoos Yeroosaghem gû kûdnûver, shader havadatsin iren, yerp desan anor kordzadz hûrashknerû. Sagayn Hisoos inkzink cher vûsdaher anonts, vorovhedev polorn al gû janchnar yev bedk chooner voyeve megoon masin oorishin vûgayootyan, kani ink kider te inch ga martots sûrdin mech. Nigotemos anoonov Parisetsi mart mû gar, Hûrya ishkhan mû, vor kisherov Hisoosi kov yegav yev ûsav anor,

Վարդապետ, գիտենք որ դուն Աստուծոյ կողմէ դրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուծոյ անոր հետ չըլլայ:

Յիսուս պատասխանեց անոր.

- Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը:

Նիկողեմոս հարցուց անոր.

- Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ ծնիլ: Կարելի՞ քան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի:

Յիսուս պատասխանեց.

- Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ զարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է վերստին ծնիք: Հովը ո՛ր որ ուզէ՝ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին:

Նիկողեմոս հարցուց.

- Ինչպէ՞ս կրնայ պատահիլ ասիկա:

Յիսուս պատասխանեց.

- Դուն որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ասիկա չէ՞ս գիտեր: Լաւ գիտցիր, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չէք հաւատար, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի՝ եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ:

Յարութենէ Ետք Երրորդ Կիրակի (Կարմիր)

Պետրոս Առաքեալի Ընդհանրական Առաջին Նամակէն (5:1-14)

Երեցնե՛ր, որպէս երիցակից մը՝ որ ձեզի պէս վկայեմ Քրիստոսի չարչարանքներուն եւ ձեզի հետ ալ մասնակից պիտի ըլլամ գալիք փառքին որ պիտի յայտնուի, կ'աղաչեմ, ձեզի վստահուած Աստուծոյ հօտը արածեցէք ո՛չ թէ իբր պարտադրանք կատարելով վերակացութեան ձեր

-Vartabed, kidenk vor toon Asdoodzo goghme ghûrgûvadz oosoosich mûn yes, vorovhedev voch vok gûrna kordzel koo gadaradz hûrashknerût, yete Asdvadz anor hed chûlla.

Hisoos badaskhanets anor,

-Lav kidtsir, vor yete megû verûsdin chûdzûni chi gûrnar desnel Asdoodzo arkayootyoonû.

Nigotemos hartsoots anor,

-Dzer mart mû inchbes gûrna dzûnil? Gareli pan e vor an gûrgin mûdne ir morû vorovaynû yev dzûni?

Hisoos badaskhanets,

-Hasdad kidtsir, vor yete megû chooren yev Hokiye chûdzûni chi gûrnar Asdoodzo arkayootyoonû mûdnel, vorovhedev marminen dzûnadzû marmin e, isg hokiye dzûnadzû hoki. Toon mi zarmanar, vor kezi ûsi te bedk e verûsdin dzûnik. Hovû oor vor ooze gû pûche, toon anor tsaynû gû lûses, payts ches kiderr te oorge gooka yev oor gerta. Nooynbes yen polor anonk, voronk Hokiye gû dzûnin.

Nigotemos hartsoots,

-Inchbes gûrna badahil adiga?

Hisoos badaskhanets,

-Toon vor Israyeli zhoghovoortin vûra oosoosich garkûvadz yes, adiga ches kider? Lav kidtsir, te inch vor kidenk gû khosink yev inch vor desank anor masin gû vûgayenk, payts mer vûgayootyoonû chek ûntoonir. Yete yergravor paneroo masin khosetsa tsezi yev chek havadar, inchbes bidi havadak indzi yete yergnavor paneroo masin khosim?

Harootenen Yedk Yerrort Giragin (Garmir)

Bedros Arakyali Ūnthanragan Arachin Namagen (5:1-14)

Yeretsner, vorbes yeritsagits mû vor tsezi bes vûga yem Krisdosi charcharankneroon yev tsezi hed al masnagits bidi ûllam kalik parkin vor bidi haydnûvi, gaghachem, tsezi vûsdahvadz Asdoodzo hodû aradzetsek voch

պաշտօնը, այլ՝ կամաւորաբար, ինչպէս՝
Աստուած կ'ուզէ: Ո՛չ թէ դրամի սիրոյն, այլ՝
յօժարութեամբ: Ո՛չ թէ ձեզի վստահուած
մարդոց պարտադրելով ձեր անձերը, այլ՝
օրինակ ըլլալով ձեր հօտին, որպէսզի երբ Հով-
ուսապետը յայտնուի՝ անթառամ փառքի
պսակը ընդունիք:

Նոյնպէս ալ դուք, երիտասարդնե՛ր, հնազանդ
եղէք ծերերուն: Բոլորդ ալ խոնարհաբար
ծառայեցէք իրարու, որովհետեւ ինչպէս Սուրբ
գիրքը կ'ըսէ.-

*«Աստուած հակառակ է ամբարտաւաններուն,
մինչ խոնարհներուն շնորհք կու տայ»:*

Հետեւաբար Աստուծոյ հօգօր ձեռքին տակ
խոնարհեցէք, որպէսզի երբ յարմար
ժամանակը գայ՝ ձեզ բարձրացնէ: Ձեր հոգերը
Աստուծոյ ձգեցէք, որովհետեւ ինքը կը հոգայ
ձեր մասին:

Արթուն եւ պատրաստ եղէք, որովհետեւ ձեր
թշնամին՝ Սատանան առիծի պէս մոնչելով կը
շրջի եւ կլլելու համար մէկը կը փնտռէ:
Հաստատուն հաւատքով դէմ դրէք անոր,
գիտնալով որ աշխարհի մէջ բոլոր ձեր
եղբայրներն ալ նոյն չարչարանքներէն
կ'անցնին: Եւ բոլոր շնորհքներուն պարգեւիչը՝
Աստուած, որ Քրիստոս Յիսուսի միջոցաւ իր
յաւիտենական փառքին կանչեց ձեզ, նկատի
ունենալով որ չափով մը մասնակից եղաք
Յիսուսի չարչարանքներուն՝ պիտի կազդուրէ,
գորացնէ եւ ամուր հիմերու վրայ հաստատէ
ձեզ: Յաւիտեան ի՛րն են իշխանութիւնն ու
փառքը: Ամէն:

Այս հակիրճ նամակը ձեզի գրեցի Միդուանոսի
ձեռքով, որ ըստ իս՝ մեր հաւատարիմ
եղբայրներէն է, որպէսզի քաջալերեմ ձեզ եւ
վստահեցնեմ՝ թէ Քրիստոսի չարչարակից
ըլլալը Աստուծմէ տրուած իսկական շնորհք
մըն է, որ դուք կը վայելէք ապահովաբար:
Այստեղ, Բաբելոնի մէջ գտնուող եկեղեցին, որ
ձեր ընտրելակիցն է, կ'ողջունէ ձեզ: Նոյնպէս
բարեւներ Մարկոսէն, իմ որդիէս: Միւրոյ
համբոյրով ողջունեցէք իրար: Խաղաղութի՛ւն
ձեր բոլորին, որ Քրիստոս Յիսուսի միացած էք:
Ամէն:

te iprev bardatrank gadarelov veragatsootyan
tser bashdonû, ayl gamavorapar, inchbes
Asdvadz gooze. Voch te tûrami sirooyin, ayl
hozharootyamp. Voch te tsezi vûsdahvadz
martots bardatrelov tser antserû, ayl orinag
ûllalov tser hodin, vorbeszi yerp Hovvabedû
haydnûvi antaram parki bûsagû ûntoonik.

Nooyinbes al took, yeridasartner, hûnazant
yeghek dzereroon. Polorût al khonarhapar
dzarayetsek iraroo, vorovhedev inchbes
Soorp kirkû gûse,- “Asdvadz hagarag e
ampardavanneroon, minch khonarhneroon
shûnorhk gooda”.

Hedevapar Asdoodzo hûzor tserkin dag
khonarhetsek, vorbeszi yerp harmar
zhamanagû ka tsez partsratsûne. Tser hokerû
Asdoodzo tsûketsek, vorovhedev inkû gû
hoka tser masin.

Artoon yev badrasd yeghek, vorovhedev tser
tûshnamin՝ sadanan aryoodzi bes mûrûnche-
lov gû shûrchi yev gûlleeo hamar megû gû
pûndûre. Hasdadoon havadkov tem tûrek
anor, kidnalov vor ashkharhi mech polor tser
yeghpayrnerûn al nooyin charcharankneren
gantsnin. Yev polor shûnorhkneroon
barkevichû Asdvadz, vor Krisdos Hisoosi
michotsav ir havidenagan parkin ganchets
tsez, nûgadi oonenalov vor chapov mû mas-
nagits yeghak Hisoosi charcharankneroon՝
bidi gaztoore, zoratsûne yev amoor himeroo
vûra hasdade tsez. Havidyan irûn yen
ishkhanootyoonûn oo parkû. Amen.

Ays hagirj namagû tsezi kûretsi Sighvanosi
tserkov, vor ûsd is՝ mer havadarim
yeghpayrneren e, vorbeszi kachalerem tsez
yev vûsdahetsûnem te Krisdosi charcharagits
ûllalû Asdoodzme dûrvadz isgagan shûnork
mûn e, vor took gû vayeleg abahovapar.
Aysdegh, Papeloni mech kûdnûvogh yege-
ghetsin, vor tser ûndrelagitsûn e, goghchoune
tsez. Nooyinbes parevner Margosen, im
vortiyes. Siro hampooyrov voghchoonetsek
irar. Khaghaghootyoon tser polorin, vor
Krisdos Hisoosi miyatsadz ek. Amen.

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (5:19-30)**

Յիսուս ըսաւ անոնց.

- Հաստատ գիտցեք, թէ Մարդու Որդին ինք իրմէ ոչինչ կը կատարէ, այլ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ թէ Հայրը կը կատարէ: Որովհետեւ ինչ որ Հայրը կը գործէ, Որդին ալ նոյնը կը գործէ: Հայրը կը սիրէ Որդին եւ անոր ցոյց կու տայ ինչ որ ինք կը կատարէ: Տակաւին ձեր տեսածներէն աւելի սքանչելի գործեր ալ ցոյց պիտի տայ Որդիին, այնպէս որ դուք պիտի զարմանաք: Ինչպէս որ Հայրը մեռելները կը յարուցանէ եւ կեանք կու տայ անոնց, նոյնպէս ալ Որդին կեանք կու տայ իր ուղածներուն: Եւ Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է Որդիին, որպէսզի բոլորն ալ պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն: Ան որ չի պատուեր Որդին, չի պատուեր Հայրը որ զայն դրկած է:

Լաւ գիտցեք, ով որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր՝ որ զիս դրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է: Հաստա՛տ գիտցեք, ժամանակ կու գայ եւ արդէն իսկ եկած է, երբ մեռելները Աստուծոյ Որդիին ձայնը պիտի լսեն եւ լսողները պիտի ապրին: Որովհետեւ, ինչպէս որ Հայրը կեանք պարգեւելու զօրութիւնը ունի իր մէջ, այդ զօրութիւնը տուած է նաեւ Որդիին: Նոյնպէս ալ դատելու իշխանութիւնը տուաւ Որդիին, որովհետեւ անիկա Մարդու Որդին է: Ուրեմն մի՛ զարմանաք որ ըսի, թէ ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին: Ես ինձմէ չեմ կրնար դատել, այլ կը դատեմ այնպէս՝ ինչպէս Հօրմէս կը լսեմ. եւ ուրեմն իմ դատաստանս արդար է, որովհետեւ կը գործադրեմ ո՛չ թէ իմ կամքս, այլ կամքը անոր՝ որ զիս դրկեց:

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (5:19-30)**

Hioos ūsav anonts,

-Hasdad kidtsek, te Martoo Vortin inkirme vochinch gū gadare, ayl gū gadare miyayn ayn inch vor gū desne te Hayrū gū gadare. Vorovhedev inch vor Hayrū gū kordze, Vortin al nooynū gū kordze. Hayrū gū sire Vortin yev anor tsooyts gooda inch vor ink gū gadare. Dagavin tser desadzneren aveli ūskancheli kordzer al tsooyts bidi da Vortin, aynbes vor took bidi zarmanak. Inchbes vor Hayrū merelnerū gū harootsane yev gyank gooda anonts, nooynbess al Vortin gyank gooda ir oozadzneroon. Yev Hayrū voyeve megū chi tader, ayl tadeloo ishkhanootyoonū ampoghchootyamp hantsnadz e Vortiyin, vorbeszi polorūn al badven Vortin, inchbes vor Hayrū gū badven. An vor chi badver Vortin, chi badver Hayrū vor zayn ghūrgadz e.

Lav kidtsek, ov vor im khoskerūs gū lūse yev gū havada anor vor zis ghūrgets, havidenagan gyank ooni yev bidi chūtadabardūvi, vorovhedev arten isg mahen gyanki antsadz e. Hasdad kidtsek, zhamanag gooka yev arten isg yegadz e, yerp merelnerū Asdoodzo Vortiyin tsaynū bidi lūsen yev lūsoghnerū bidi abrin. Vorovhedev, inchbes vor Hayrū gyank barkeveloo zoroootyoonū ooni ir mech, ayt zoroootyoonū dūvadz e nayeve Vortiyin. Nooynbess al tadeloo ishkhanootyoonū dūvav Vortiyin, vorovhedev aniga Martoo Vortin e. Ooremn mi zarmanak vor ūsi, te aha gooka zhamanagū, yerp polor anonk voronk kerezmanneroo mech yen bidi lūsen Anor tsaynū yev toors kan, anonk vor parik kordzadz yen harootyoon bidi arnen yev abrin, isg anonk vor charik kordzadz yen harootyoon bidi arnen yev tadabardūvin. Yes indzme chem gūrnar tadel, ayl gū tadem aynbes inchbes Hormes gū lūsem, yev ooremūn im tadasdanūs artar e, vorovhedev gū kordzatrem vocht te im gamkū, ayl gamkū anor vor zis ghūrgets.

**Յովհաննէս Առաքեալի Ընդհանրական
Առաջին Նամակէն (1:1-10)**

Մենք լսեցինք, մերաչքերով տեսանք եւմեր
ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ
սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Անիկա
նոյնինքն կեանքն էր, որ յայտնուեցաւ: Մենք
տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր
մասին, այսինքն՝ յաւիտենական կեանքին
մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի
յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսեցինք՝ կը
պատմենք ձեզի, որպէսզի դո՛ւք ալ մասնակից
դառնաք այն հաղորդակցութեան որ մենք
ունինք Հօրը եւ անոր Որդիին՝ Յիսուս
Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը
կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչո՛ւ կը գրենք
ձեզի այս նամակը:

Պատգամը, որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը
փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է, բնաւ
խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ ըսենք՝
«Հաղորդակից ենք իրեն», եւ միւս կողմէ
շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք
ահա եւ ճշմարտութիւնը չենք գործադրեր: Իսկ
եթէ լոյսի մէջ քալենք, ինչպէս ինք լոյսի մէջ է,
այն ատեն ճշմարտապէս հաղորդակից
կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի
արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

Եթէ ըսենք՝ «Մեղք չունինք», մենք մեզ կը
խաբենք եւ մեր մէջ ճշմարտութիւն չկայ: Իսկ
եթէ խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէք
թէ Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր
մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրա-
ւութիւններէն: Եթէ «Մեղք չգործեցինք» ըսենք,
ստախօս կը հանենք զԱստուած, եւ մեր մէջ իր
խօսքը չկայ:

**Hovhannes Arakyali Ūnthanragan
Arachin Namagen (1:1-10)**

Menk lûsetsink, mer achkerov desank yev
mer tserkerov shoshapetsink Vortin, Panû,
vor ûsgizpen isg gyanki ûsdeghdzichûn er.
Aniga nooyninkûn gyankûn er, vor
haydnûvetsav. Menk desank yev gû
vûgayenk, tsezi badmelov anor masin,
aysinkn havidenagan gyanki masin, vor Horû
hed er yev ayzhûm mezi haydnûvetsav. Inch
vor desank oo lûsetsink gû badmenk tsezi,
vorbeszi took al masnagits tarnak ayn
haghortagtsootyan vor menk oonink Horû
yev anor Vortiyin Hisoos Krisdosi hed, yev
tser oorakhootyoonû gadaryal ûlla. Aha te
inchoo gû kûrenk tsezi ays namagû.
Badkamû, vorirme lûsetsink yev tsezi gû
pokhantsenk, sa e te Asdvadz looys e, pûnav
khavar chûga anor mech. Art, yete ûsenk,
“Haghortagits yenk iren”, yev myoos
goghme sharoonagenk khavari mech abril, gû
sûdenk aha yav jûshmardootyoonû chenk
kordzatrer. Isg yete looysi mech kalenk,
inchbes ink looysi mech e, ayn aden
jûshmardabes haghortagits gûllank iraroo,
yev ir Vortvooyin Hisoosi aryoonû gû sûrpe
mez amen meghke.

Yete ûsenk “Meghk choonink”, menk mez gû
khapenk yev mer mech jûshmardootyoon
chûga. Isg yete khosdovanink mer meghkerû,
vûsdah yeghek te Asdvadz, vor artar e, bidi
nere mer meghkerû yev mez bidi sûrpe mer
polor aniravootyoonneren. Yete “Meghk
chûkordzetsink” ûsenk, sûdakhos gû hanenk
zAsdvadz, yev mer mech ir khoskû chûga.

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (7:14-24)**

Տաղաւարահարաց տօնակատարութեան մօտաւորապէս կէսին, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ուսուցանել: Հրեաներ կը զարմանային եւ կ'ըսէին.

- Ի՞նչպէս այս մարդը Սուրբ գիրքերը գիտէ, երբ բնաւ չէ ուսած զանոնք:

Յիսուս պատասխանեց անոնց.

- Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնս չէ, այլ անորը՝ որ զիս դրկեց: Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ՝ թէ Աստուծմէ՞ եւ այս վարդապետութիւնը, թէ եւ իմ հեղինակութեամբս կը խօսիմ: Ան որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան որ զինք դրկողին փառքը կը փնտռէ, ճշմարիտ է եւ խաբէութիւն չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի Օրէնքը չտուա՞ւ. սակայն ձեզմէ ո՛չ ոք կը հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզեք զիս սպաննել:

Ժողովուրդը պատասխանեց.

- Դիւահա՞ր ես, ի՞նչ ես. ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել:

Յիսուս պատասխանեց.

- Հրաշք մը գործեցի եւ բոլորդ վրդովեր էք: Մովսէս հրահանգեց թլփատել ձեր զաւակները – թէեւ Մովսէս չէր սկսողը, այլ ձեր նախահայրերը – եւ դուք ձեր զաւակները կը թլփատէք Շաբաթ օրով: Եթէ մէկը կը թլփատէք Շաբաթ օրով, որպէսզի չբեկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ զայրացած էք ինձի դէմ, որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի Շաբաթ օրով: Երեւոյթներէն մի՛ դատեք, այլ արդար դատաստան կատարեցէք:

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (7:14-24)**

Daghavaraharats donagadarootyan moda-vorabes gesin, Hisoos dajar yelav yev ūsgŭsav oosootsanel.

Hŭryaner gŭ zarmanayin yev gŭseyin,

-Inchbes ays martŭ Soorp kirkerŭ kide, yerp pŭnav che oosadz zanonk?

Hisoos badaskhanets anonts,

-Inch vor tsezi goosootsanem im vartabedootyoonŭs che, ayl

Anorŭ vor zis ghŭrgets. Ov vor gooze Asdoodzo gamkŭ gadarel, bidi hasgŭna te Asdoodzme e ays vartabedootyoonŭ? te yes im heghinagootyampŭs gŭ khosim. An vor ir heghinagootyamp gŭ khosi ir antsin hamar park gŭ pŭndŭre, isg an vor zink ghŭrgoghin parkŭ gŭ pŭndŭre, jŭshmarid e yev khapeyootyoon chŭga anor mech. Movses tsezi Orenkŭ chŭdŭvav? sagayn tsezme voch vok gŭ hŭnazanti Orenkin. Inchoo goozek zis ūsbannel?

Zhoghovoortŭ badaskhanets,

-Tivahar yes? inch yes? ov gooze kez ūsbannel?

Hisoos badaskhanets,

-Hŭrashk mŭ kordzetsi yev polorŭt vŭrtover ek. Movses hŭrahankets tŭlpadel tser zavagnerŭ - teyev Movses cher ūsgŭsoghŭ, ayl tser nakhahayrerŭ- yev took tser zavagnerŭ gŭ tŭlpadek Shapat orov. Yete megŭ gŭ tŭlpadek Shapat orov, vorbeszi chŭpeganvi Movsesi Orenkŭ, inchoo zayratsadz ek indzi tem? vorovhedev megŭ aroghchootyamp pŭzhŭshgets i Shapat orov. Yerevooytneren mi tadek, ayl artar tadasdan gadaretsek.

Յարութենէն Ետք Հինգերորդ Կիրակի
Յովհաննէս Առաքեալի Ընդհանրական
Առաջին Նամակէն (3:1-6)

Տեսէք թէ ինչպիսի՛ սիրով Հայրը մեզ սիրեց, ուզելով որ Աստուծոյ որդիներ կոչուինք եւ արդարեւ Աստուծոյ որդիներն ենք: Աշխարհը մեզ չի ճանչնար, որովհետեւ չճանչցաւ զայն:

Սիրելիներ՛ք, այժմ Աստուծոյ որդիներ ենք: Թէ ի՛նչպէս պիտի ըլլանք յետոյ՝ տակաւին չենք գիտեր: Բայց գիտենք թէ՛ երբ Քրիստոս յայտնուի՝ իրեն նման պիտի ըլլանք, որովհետեւ զինք պիտի տեսնենք իր իսկութեան մէջ: Ով որ այս յոյսը ունի՝ ինքզինք կը մաքրէ, ինչպէս որ Քրիստոս ինք մաքուր է:

Ով որ կը մեղանչէ՝ Աստուծոյ Օրէնքը կը խախտէ, եւ մեղքը ինքնին Օրէնքին խախտումն է: Գիտէք թէ Քրիստոս աշխարհ եկաւ՝ մեր մեղքերը ջնջելու համար, եւ թէ իր մէջ մեղք չկայ: Ով որ Քրիստոսի միացած կը մնայ՝ չի մեղանչեր. իսկ ով որ կը մեղանչէ՝ զայն երբեք տեսած ու ճանչցած չէ:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Յովհաննէսի (9:30-10:10)

Յիսուս ըսաւ.

- Դատաստան ընելու եկայ այս աշխարհը, որպէսզի չտեսնողները տեսնեն եւ անոնք որ կը տեսնեն՝ կուրնան:

Փարիսեցիներէն ոմանք, որ շուրջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին.

- Արդեօք մե՞նք ալ կոյր ենք:

Յիսուս անոնց պատասխանեց.

- Եթէ կոյր ըլլայիք՝ մեղք պիտի չունենայիք. բայց քանի կ'ըսէք թէ կը տեսնէք, կը նշանակէ՝ թէ ձեր մեղաւոր ըլլալը կը հաստատէք:

- Հաստատ գիտցէք, ան որ ոչխարներուն փարախը դռնէն չի մտներ, այլ ուրիշ տեղէ կը մագցի, անիկա գող է եւ աւազակ. իսկ ան որ դռնէն կը մտնէ, անիկա ոչխարներուն հովին է:

Harootenen Yedk Hinkerort Giragin
Hovhannes Arakyali Ūnthanragan
Arachin Namagen (3:1-6)

Desek te inchbisi sirov Hayrû mez sirets, oozelov vor Asdoodzo vortiner gochvink yev artarev Asdoodzo vortinerûn yenk. Ashkharhû mez chi janchnar, vorovhedev chûjanchtsav zayn.

Sireliner, ayzhûm Asdoodzo vortiner yenk. Te inchbes bidi ûllank hedo dagavin chen kider. Payts kidenk te yerp Krisdos haydnûvi iren nûman bidi ûllank, vorovhedev zink bidi desnenk ir isgootyan mech. Ov vor ays hoosû ooni inkzink gû makre, inchbes vor Krisdos ink makoor e.

Ov vor gû meghanche Asdoodzo orenkû gû khakhde, yev meghkû inknin Orenkin khakhdoomûn e. Kidek te Krisdos ashkharh yegav mer meghkerû chûncheloo hamar, yev te ir mech meghk chûga. Ov vor Krisdosi miyatsadz gû mûna chi meghancher, isg ov vor gû meghanche, zayn yerpek desadz oo janchtsadz che.

Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (9:39-10:10)

Hisoos ūsav,

-Tadasdan ûneloo yega ays ashkharhû, vorbeszi chûdesnoghnerû desnen yev anonk vor gû desnen՝

goorman.

Parisetsineren vomank, vor shoorchn eyin, lûsetsin asiga yev hartsootsin,

-Artiyok menk al gooyr yenk?

Hisoos badaskhanets,

-Yete gooyr ūllayik meghk bidi choonenayik, payts kani gûsek te gû desnek, gû nûshanage te tser meghavor ūllalû gû hasdadek.

-Hasdad kidtsek, an vor vochkharneroon parakhû târnen chi mûdner, ayl oorish deghe gû makûltsi, aniga kogh e yev avazag, isg an vor târnen gû mûdne, aniga vochkharneroon hovivûn e.

Դոնապանը դուռը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք: Եւ երբ իր ոչխարները դուրս կը հանէ՝ ի՛նք կ'առաջնորդէ, եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ձայնը կը ճանչնան:

Օտարին չեն հետեւիր. Ընդ-հակառակը, կը փախչին անկէ, որովհետեւ օտարներուն ձայնը չեն ճանչնար:

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան թէ ի՛նչ ըսել կ'ուզէր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց.

- Հաստատ գիտցէք, թէ ե՛ս եմ ոչխարներուն դուռը: Բոլոր անոնք որոնք ինձմէ առաջ եկան, գող էին եւ աւազակ. բայց ոչխարները անոնց չհետեւեցան: Ե՛ս եմ դուռը: Ով որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի. պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ գտնէ: Գողը կու գայ միայն գողնալու, սպաննելու եւ փճացնելու համար: Ես եկայ՝ որպէսզի կեանք ունենան, եւ լեցուն կեանք ունենան:

Համբարձում

Առաքեալներու Գործերը Գիրքէն (1:1-14)

Առաջին գիրքիս մէջ, ո՛վ Թէոփիլոս, գրեցի այն բոլորին մասին, որ Յիսուս կատարեց եւ սորվեցուց սկիզբէն մինչեւ այն օրը, երբ Սուրբ Հոգիին զօրութեամբ իր պատուէրները տալէ ետք իր ընտրած առաքեալներուն, երկինք համբարձաւ: Իր չարչարանքներուն յաջորդող քառասուն օրերուն ընթացքին ան քանիցս երեւցաւ անոնց, բազմաթիւ կերպերով ցոյց տալով՝ թէ ինք այլեւս ողջ է, եւ խօսեցաւ Աստուծոյ արքայութեան մասին: Եւ առիթով մը, երբ անոնց հետ միասին հաց կ'ուտէր, անոնց պատուիրեց.

- Երուսաղէմէն մի՛ հեռանաք, սպասեցէք՝ մինչեւ ստանաք Հօրը խոստումը, որուն մասին խօսեցայ ձեզի: Յովհաննէս ջուրով մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք մօտ առեւնէն:

Tûrnabanû toorû gû pana anor yev vochkharnerû ir tsaynin gû hedevin. Irents anoonnerov gû ganche ir vochkharnerû yev toors gû dani zanonk. Yev yerp ir vochkharnerû toors gû hane` ink garachnorte, yev vochkharnerû gû hedevin iren, vorovhedev ir tsaynû gû janchnan.

Odarin chen hedevir, entthagaragû, gû pakhchin ange, vorovhedev odarneroon tsaynû chen janchnar.

Hisoos ays aragû khosetsav anonts, sagayn anonk chûhasgûtsan te inch ûsel goozar irents. Oosdi Hisoos gûrgin ûsav anonts,

-Hasdad kidtsek, te yes yem vochkharneroon toorû. Polor anonk voronk intsme arach yegan, kogh eyin yev avazag, payts vochkharnerû anonts chûhedevetsan. Yes yem toorû. Ov vor intsme antsnelov ners mûdne bidi pûrgûvi, bidi mûdne yev yelle yev jarag kûdne. Koghû gooka miyayn koghnaloo, ûsbanneloo yev pûjatsûneloo hamar. Yes yega vorbeszi gyank oonenan, yev letsoon gyank oonenan.

Hampartsoom

Arakyalneroo Kordzerû Kirken (1:1-14)

Arachin kirkis mech, ov Teyopilos, kûretsi ayn polorin masin, vor Hisoos gadarets yev sorvetsoots ûsgizpen minchev ayn orû, yerp Soorp Hokiya zorootyamp ir badvernerû dale yedk ir ûndûradz arakyalneroon, yergink hampartsav. Ir charcharankneroon hachortogh karasoon oreroon ûntatskin an kanitsûs yerevtsav anonts, pazmativ gerberov tsooyts dalov te ink aylevûs voghch e, yev khosetsav Asdoodzo arkayootyan masin. Yev aritov mû, yerp anonts hed miyasin hats gooder, anonts badvirets.

-Yeroosaghemien mi heranak, ûsbasetsek minchev ûsdanak Horû khosdooû, voroon masin khosetsa tsezi. Hovhannes choorov mûgûrdets, payts took Soorp Hokiyaov bidi mûgûrdûvik mod adenen.

Ուրիշ անգամ մը, երբ դարձեալ հաւաքուած էին, առաքեալները հարցունցին անոր.

- Տէ՛ր, արդեօք հիմա՞ է ժամանակը երբ պիտի վերականգնես Իսրայէլի թագաւորութիւնը:

Յիսուս պատասխանեց.

- Դուք չէք կրնար գիտնալ ժամերն ու ժամանակները, որ Հայրը իր իշխանութեամբ որոշած է: Բայց երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք եւ իմ վկաներս պիտի ըլլաք՝ Երուսաղէմի, ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ, եւ մինչեւ աշխարհի ծայրամասերը:

Այս խօսքերէն ետք, մինչ անոր կը նայէին, Յիսուս երկինք համբարձաւ, եւ ամպ մը ծածկեց զինք անոնց տեսողութենէն: Եւ երբ տակաւին առաքեալները իրենց աչքերը երկինք յառած՝ Յիսուսի մեկնիլը կը դիտէին, ահա երկու սպիտակագգեստ մարդիկ երեւցան անոնց եւ ըսին.

- Ո՛վ Գալիլեացիներ, ինչո՞ւ կեցեր երկինքը կը դիտէք: Այս Յիսուսը որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր երկինք երթալը տեսաք:

Ապա առաքեալները Ձիթենեաց լեռնէն վերադարձան Երուսաղէմ, որ լեռնէն հազիւ մէկ քիլոմէթր հեռաւորութիւն ունի: Եկան քաղաք եւ գացին այն վերնատունը ուր կը մնային: Ասոնք էին՝ Պետրոս եւ Յակոբոս, Յովհաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ Թովմաս, Բարթողոմէոս եւ Մատթէոս, Ալփէոսի որդին՝ Յակոբոս եւ Շմաւոն Նախանձայոյզ, եւ Յակոբոսի որդին՝ Յուդա: Բոլորը միասնաբար յարատեւ աղօթքով կ'անցընէին օրերը, շատ մը կիներու, Յիսուսի մօր՝ Մարիամի եւ Յիսուսի եղբայրներուն հետ միասին:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ Մատթէոսի (28:16-20)

Իսկ տասնըմէկ աշակերտները գացին Գալիլեա, այն լեռը ուր Յիսուս ժամադրուած էր իրենց հետ: Երբ տեսան զինք, երկրպագեցին իրեն. բայց ոմանք տարակուսեցան: Յիսուս մօտենալով խօսեցաւ անոնց հետ: Ապա ըսաւ.

Oorish ankam mû, yerp tartsyal havakvadz eyin, arakyalnerû hartsootsin anor,

-Der, artyok hima e zhamanagû yerp bidi veraganknes Israyeli takavorootyoonû?

Hisoos badaskhanets,

-Took chek gûrnar kidnal zhamerûn oo zhamanagnerû, vor Hayrû ir ishkhanootyamp voroshadz e. Payts yerp Soorp Hokin ichne tser vûra, zorootyamp bidi letsvik yev im vûganerûs bidi ûllak՝ Yeroosaghemî, ampoghch Hûreyasdani yev Samaryayi mech, minchev ashkharhi dzayramaserû.

Ays khoskeren yedk, minch anor gû nayeyin, Hisoos yergink hampartsav, yev amb mû dzadzgets zink anonts desoghootenen. Yev yerp dagavin arakyalnerû irents achkerû yergink haradz Hisoosi megnilû gû tideyin aha yergoo ûsbidagazkesd martig yerevtsan anonts yev ûsin,

-Ov Kalilyatsiner, inchoo getser yerginkû gû tidek? Ays Hisoosû vor yergink hampartsav, or mû tartsyal bidi ka aynbes inchbes anor yergink yertalû desak.

Aba arakyalnerû Tsitenyats lernen veratartsan Yeroosaghem, vor lernen haziv meg kilometûr heravorootyoon ooni. Yegan kaghak yev katsin ayn vernadoonû oor gû mûnayin. Asonk eyin Bedros yev Hagopos, Hovhannes yev Antreyas, Pilibbos yev Tovmas, Partogho-meyos yev Madteyos, Alpeyosi vortin Hagopos yev Shûmavon Nakhantsahooyz, yev Hagoposi vortin Hoota. Polorû miyasnapar haradev aghotkov gantsûneyin orerû, shad mû gineroo, Hisoosi mor Maryami yev Hisoosi yeghpayrneroon hed miyasin.

Hisoos Krisdosi Avedaranen Âsd Madteyosi (28:16-20)

Isg dasnûmeg ashagerdnerû katsin Kalilya, ayn lerû oor Hisoos zhamatrûvadz er irents hed. Yerp desan zink, yergûrbaketsin, payts vomank daragoosetsan. Hisoos modenaloov khosetsav anonts hed. Aba ûsav,

- Ամէն իշխանութիւն տրուեցաւ ինծի երկինքի մէջ եւ երկրի վրայ: Ինչպէս որ Հայրը զիս դրկեց, այնպէս ալ ես ձեզ կը դրկեմ: Հետեւաբար, գացէք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցէք: Զանոնք մկրտեցէք՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց սորվեցուցէք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի. եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը:

Յարութենէն Ետք Վեցերորդ Կիրակի
Յովհաննէս Առաքեալի Ընդհանրական
Առաջին Նամակէն (5:13-21)

Ասիկա գրեցի ձեզի, Աստուծոյ Որդիին հաւատացողներուդ, որպէսզի գիտակցիք՝ թէ յաւիտենական կեանք ունիք:

Ուստի համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ, այն վստահութեամբ՝ որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք՝ կը լսէ մեզ: Եւ երբ գիտենք թէ մեր խնդրանքները կը լսէ, գիտենք նաեւ՝ թէպիտի ստանանք ինչ որ կը խնդրենք իրմէ:

Երբ մէկը տեսնէ, թէ իր հաւատացեալ եղբայրներէն մէկը գործեց մեղք մը որ մահացու չէ, թող աղօթէ՝ Աստուծոյ՝ որ կեանք տայ անոր: Ասիկա կ'ըսեմ միայն անոնց համար՝ որոնց մեղքերը մահացու չեն, որովհետեւ մահացու մեղքեր ալ կան, որոնց համար չեմ ըսեր որ աղօթէ: Ամէն անիրաւութիւն մեղք է, բայց ամէն մեղք մահացու չէ:

Գիտենք, թէ ով որ Աստուծմէ ծնած է՝ չի մեղանչեր, այլ Աստուծոյ ծնունդը՝ Քրիստոս կը պահպանէ զայն եւ Զարը անոր չի մօտենար: Թէպէտ ամբողջ աշխարհը Զարին ենթակայ ըլլայ, մենք գիտենք թէ Աստուծմէ ենք: Եւ գիտենք՝ թէ Աստուծոյ Որդին եկաւ ու բացաւ մեր միտքերը, որպէսզի ճանչնանք ճշմարիտ Աստուածը: Մենք միացած ենք ճշմարիտ Աստուծոյ եւ անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի: Ան է ճշմարիտ Աստուածը եւ յաւիտենական կեանքը:

Որդեակներ, դուք ձեզ կուտքերէ հեռու պահեցէք:

-Amen ishkhanoootyoon dŭrvetsav indzi yergŭnki mech yev yergri vŭra. Inchbes vor Hayrŭ zis ghŭrgets, aynbes al yes tsez gŭ ghŭrgem. Hedevapar, katsek yev polor zhoghovoortnerŭ indzi ashagerd tartsootsek. Zanonk mŭgŭrdetsek Hor, Vortiyin yev Soorp Hokiyyin anoonov. Anonts sorve-tsootsek ayn polor badvirannerŭ vor yes tsezi dŭvi, yev aha mishd tsezi hed bidi ŭllam, minchev ashkharhis vakhjanŭ.

Harootenen Yedk Vetserort Giragin
Hovhannes Arakyali Ŭnthanragan
Arachin Namagen (5:13-21)

Asiga kŭretsi kezi, Asdoodzo Vortiyin havadatsoghneroot, vorbeszi kidagtsik te havidenagan gyank oonik.

Oosdi hamartsag gerbov gŭ timenk Asdoodzo, ayn vŭsdahootyamp vor yerp ir gamkin hamatsayn pan mŭ khŭntrenk gŭ lŭse mez. Yev yerp kidenk te mer khŭntranknerŭ gŭ lŭse, kidenk nayeve te bidi ŭsdanank inch vor gŭ khŭntrenk irme. Yerp megŭ desne, te ir havadatsyal yeghpayrneren megŭ kordzets meghk mŭ vor mahatsoo che, togh aghote Asdoodzo vor gyank da anor. Asiga gŭsem miyayn anonts hamar voronts meghkerŭ mahatsoo chen, vorovhedev mahatsoo meghker al gan, voronts hamar chem ŭser vor aghote. Amen aniravootyoon meghk e, payts amen meghk mahatsoo che.

Kidenk, te ov vor Asdoodzme dzŭnadz e chi meghancher, ayl Asdoodzo dznoontŭ՝ Krisdos gŭ bahbane zayn yev Charŭ anor chi modenar. Tebed ampoghch ashkharhŭ Charin yentaga ŭlla, menk kidenk te Asdoodzme yenk. Yev kidenk te Asdoodzo Vortin yegav oo patsav mer midkerŭ, vorbeszi janchnank jŭshmarid Asdvadzŭ. Menk miyatsadz yenk jŭshmarid Asdoodzo yev anor Vortiyin Hisoos Krisdosi. An e jŭshmarid Asdvadzŭ yev havidenagan gyankŭ.

Vortyagner, took tsez goorkere hero bahetsek.

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (12:12-23)**

Յաջորդ օր, ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ Ջատիկի տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, արմաւենիի ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով.

«Ովսաննա՛, օրհնեա՛լ ըլլայ ան՝ որ կու գայ Տիրոջ անունով, Իսրայէլի թագաւորը»:

Յիսուս էջ մը գտնելով՝ նստաւ անոր վրայ, ինչպէս որ Սուրբ գիրքերուն մէջ գրուած է.-

«Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Մի՞ռնի՛ աղջիկ. ահա թագաւորդ քեզի կու գայ իշու մը աւանակին վրայ նստած»:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան՝ ատենին, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ՝ այն ատեն յիշեցին, թէ այս կատարուածները Յիսուսի համար գրուած էին եւ իրենք այդ գրուածն էր որ կատարեցին: Բոլոր անոնք, որոնք Յիսուսի հետ էին՝ երբ անիկա Ղազարոսը կանչեց գերեզմանէն եւ զայն մեռելներէն յարուցանեց, այդ մասին վկայութիւն կու տային: Այդ իսկ պատճառով Երուսաղէմ գտնուողները բոլորն ալ զինք դիմաւորելու ելան, որովհետեւ լսած էին, թէ ինչպէս անիկա յարութեան հրաշքը գործած էր: Իսկ Փարիսեցիները իրարու կ'ըսէին.

- Կը տեսնէ՞ք որ բան մըն ալ չենք կրնար ընել. ահա ամբողջ աշխարհը իրեն կը հետեւի:

Տօնին առիթով կարգ մը Յոյներ ալ եկած էին Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագելու: Անոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլէայի Բեթսայիդա քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին.

- Տէ՛ր, կ'ուզենք Յիսուսը տեսնել:

Փիլիպպոս եկաւ Անդրէասին ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի ներկայացուցին անոնց խնդրանքը:

Յիսուս պատասխանեց անոնց.

- Ահա Մարդու Որդիին փառաւորուելու ժամը հասաւ:

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (12:12-23)**

Hachort orû, zhoghovoorti medz pazmootyoon mû, vor Zadgi donin Yeroosaghem yegadz er, yerp lûsets te Hisoos

Yeroosaghem gooka, armaveniyi jyoogher arav yev Hisoosû timavoreloo yelav, partsratsayn aghaghagelov,

-“Ovsanna, orhnyal ūlla an vor gooka Diroch anoonov, Israyeli takavorû”.

Hisoos esh mû kûdnelov nûsdav anor vûra, inchbes vor Soorp kirkeroon mech kûrvadz e,- “Mi vakhnar, ov Yeroosaghem, Siyoni aghchig, aha takavorût kezi gooka ishoo mû avanagin vûra nûsdadz”.

Hisoosi ashagerdnerû ays polorû chûhasgûtsan adenin, payts yerp Hisoos paravorvetsav ayn aden hishetsin, te ays gadarvadznerû Hisoosi hamar kûrvadz eyin yev irenk ayt kûrvadzûn er vor gadaretsin. Polor anonk, voronk Hisoosi hed eyin yerp aniga Ghazarosû ganchets kerezmanen yev zayn merelneren harootsanets, ayt masin vûgayootyoon goodayin. Ayt isg badjarov Yeroosaghem kûdnûvoghnerû polorn al zink timavoreloo yelan, vorovhedev lûsadz eyin, te inchbes aniga harootyan hûrashkû kordzadz er. Isg Parisetsinerû iraroo gûseyin, -Gû desnek vor pan mûn al chenk gûrnar ûnel? aha ampoghch ashkharhû iren gû hedevi?

Donin aritov gark mû Hooyner al yegadz eyin Yeroosaghem Asdoodzao yergûrbakeloo. Anonk modetsan Pilibbosi, vor Kalilyayi Petsayita kaghaken er, yev aghachelov ūsin, -Der, goozenk Hisoosû desnel.

Pilibbos yegav Anteryasin ūsav yev yergookû miyasin Hisoosi nergayatsootsin anor khûntûrankû.

Hisoos badaskhanets anonts,

-Aha Martoo Vortiyin paravorveloo zhamû hasav.

Առաքեալներու Գործերը Գիրքին (2:1-21)

Երբ Պենտեկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները միասնաբար մէկտեղուած էին: Յանկարծ սաստիկ հովի մը սուլոցին պէս ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը, ուր անոնք նստած էին: Յետոյ անոնք տեսան հրեղէն լեզուներ, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Այն օրը Երուսաղէմ քաղաքը լեցուն էր բարեպաշտ Հրեաներով, որոնք աշխարհի բոլոր երկիրներէն եկած էին: Երբ այս ձայնը լսուեցաւ, մեծ բազմութիւն մը եկաւ խոնուեցաւ եւ բոլորը անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին թէ ի՞նչպէս անոնցմէ իւրաքանչիւրը իրենց սեփական լեզուով կը խօսի: Ամէնքն ալ սքանչացումով եւ զարմանքով կ'ըսէին իրարու.

- Այս խօսողները բոլորն ալ Գալիլեացիներ չէ՞ն միթէ. ի՞նչպէս կ'ըլլայ որ մեր ծննդավայր երկիրներու լեզուներով կը խօսին, ինչպէս ահաւասիկ կը լսենք: Չէ՞ որ ահա մեր մէջ կան՝ Պարթեւներ, Սարեր, Ելամացիներ, Միջագետացիներ, Հրեաստանցիներ, Կապադովկիացիներ, Պոնտացիներ, Ասիացիներ, Փոփղիացիներ եւ Պամփիլիացիներ, Եգիպտացիներ, Կիրենիայի շրջանէն Լիպիացիներ, Հռոմէն եկած Հրեաներ եւ հրէութեան դարձած նորահաւատներ, Կրեւտացիներ եւ Արաբիացիներ: Եւ ահա բոլորս ալ մեր խօսած լեզուներով իրենցմէ կը լսենք Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին: Ապշահար, եւ շփոթի մատնուած՝ կը հարցնէին իրարու.

- Ի՞նչպէս կարելի է բացատրել ասիկա:

Իսկ ոմանք ծաղրանքով կ'ըսէին.

- Նոր գինիով գինովցած են:

Hokekalousd

Arakyalneroo Kordzerû Kirken (2:1-21)

Yerp Bendegosdeyi orû hasav, polor havadatsyalnerû miyasnapar megdeghvadz eyin. Hangardz sasdig hovi mû soolotsin bes tsayn mû hûnchets yerginken yev letsoots ampoghch doonû, oor anonk nûsdadz eyin. Hedo anonk desan hûreghen lezooner, voronk daradzvetsan yev hankchetsan ourakanchyoorin vûra. Polor nerganerû Soorp Hokiyouv letsvetsan yev ûsgûsan darper lezoonerov khosil, inchbes vor Hokin khosil goodar.

Ayn orû Yeroosaghem kaghakû letsoon er parebashd hûryanerov, voronk ashkharhi polor yergirneren yegadz eyin. Yerp ays tsaynû lûsvetsav, medz pazmootyoon mû yegav khûrnûvetsav yev polorû anagûngali yegan, vorovhedev gû lûseyin te inchbes anontsme ourakanchyoorû irents sepagan lezvov gû khosin. Amenkûn al ûskanchatsoomov yev zarmankov gûseyin iraroo,

-Ays khosoghnerû polorn al Kalilyatsiner chen mite? inchbes gûlla vor mer dzûnûntavayr yergirneroo lezoonerov gû khosin? inchbes ahavasig gû lûsenk. Che vor aha mer mech gan Bartevar, Marer, Yelamatsiner, Michakedatsiner, Hûreyasdantsiner, Gabatogyatsiner, Bondatsiner, Asyatsiner, Prikyatsiner yev Bampilyatsiner, Yekibdatsiner, Girenyayi shûrchanen Libyatsiner, Hromen yegadz Hûryaner yev hûreyootyan tartsadz norahavadner, Gredatsiner yev Arapyatsiner. Yev aha polorûs al mer khosadz lezoonerov irentsme gû lûsenk Asdoodzo medzamedz kordzeron masin.

Abshahar, yev shûpoti madnûvadz gû hatsûneyin iraroo,

-Inchbes gareli e patsadrel asiga?

Isg vomank dzaghrankov gûseyin,

-Nor kiniyov kinovtsadz yen.

Այն աստէն Պետրոս տասնըմէկ առաքեալներուն հետ ոտքի ելաւ եւ բարձրաձայն սկսաւ անոնց խօսիլ.

- Ո՛վ Հրէաստանցիներ եւ դուք բոլորդ որ հիմա Երուսաղէմ կը գտնուիք. իրականութիւնը գիտնալու համար՝ լսեցէք ինչ որ պիտի ըսեմ: Դուք կը կարծէք թէ ասոնք գինով են. բայց այդպէս չէ, որովհետեւ առտուան ժամը ինն է դէռ: Մինչդէռ ասիկա կատարումն է Յովելի մարգարէութեան, որ կ'ըսէ.

«Այնուհետեւ երբ վերջին օրերը գան,- կ'ըսէ Աստուած,- իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի ունենան եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:

Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաեւ իմ ծառաներուս եւ աղախիններուս վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի:

Երկինքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցոյց տամ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ. աշխարհ արիւնով, կրակով եւ թանձր ծուխով պիտի լեցուի արեւը պիտի խաւարի, եւ լուսինը արիւնի գոյն պիտի առնէ, նախքան Տիրոջ մեծ եւ փառահեղ օրուան գալը:

Այն աստէն ով որ Տէրը օգնութեան կանչէ՝ պիտի փրկուի»:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ Յովհաննէսի (14:25-31)

Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Միսիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրս ձեզի պիտի դրկէ իմ անունովս, անիկա ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի:

- Խաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք ու մի՛ վախճաք: Լսեցիք ինչ որ ըսի ձեզի, թէ՝ «Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի»:

Ayn aden Bedros dasnûmeg arakyalneroon hed vodki yelav yev partsratsayn ûsgûsav anonts khosil,

-Ov Hûreyasdantsiner yev took polorût vor hima Yeroosaghem gû kûdnûvik, iraganootyoonû kidnaloo hamar lûsetsek inch vor bidi ûsem. Took gû gardzek te asonk kinov yen, payts aytbes che, vorovhedev ardûvan zhamû inûn e ter. Minchter asiga gadaroomûn e Hoveli markareyootyan, vor gûse,

“Aynoochedev yerp verchin orerû kan,-gûse Asdvadz,- im Hokis bidi tapem polor martots vûra, tser dûghakûn oo aghchignerû im badkamnerûs bidi pokhantsen tsezi, tser yeridasartnerû desilkner bidi oonenan yev tser dzererû yerezner bidi desnen.

Ayn oreroon im Hokis bidi tapem nayev im dzaraneroos yev aghakhinneroos vûra, yev anonk yevûs im badkamnerûs bidi pokhantsen tsezi.

Yrginki partsoonkin vûra hûrashkner bidi tsooyts dam, yev nûshanner varû yergri vûra, ashkharh aryoonov, gragov yev tantsûr dzookhov bidi letsvi arevû bidi khavari, yev loosinû arouni kooyin bidi arne, nakhkan Diroch medz yev parahegh orvan kalû. Ayn aden ov vor Derû oknootyan ganche bidi pûrgûvi”.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Hovhannesi (14:25-31)

Ays polorû khosetsa tsezi, kani dagavin tsezi hed yem. Payts Mûkhitarichû՝ Soorp Hokin, vor Hayrûs tsezi bidi ghûrge im anoonovûs, aniga tsezi amen inch bidi sorvetsûne yev hishetsûne inch vor yes tsezi ûsi.

-Khaghaghootyoon gû toghoom tsezi, im khaghaghootyoonûs e vor goodam tsezi, vor ays ashkharhi dûvadz khaghaghootenen darper e. Mi khûrovik oo mi vakhnak.

Lûsetsik inch vor ûsi tsezi, te` “Aha gertam, payts gûrgin bidi kam tsezi”.

Եթէ զիս սիրէիք, ուրախ պիտի ըլլայիք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի՝ նախքան պատահիլը, որպէսզի երբ պատահին՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ո՛չ մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ այդ է պատճառը, որ ինծի բոլոր պատուիրածները կը կատարեմ:

Ելէ՛ք, երթանք այստեղէն:

Հոգեգալուստէն Ետք Առաջին Կիրակի
**Յակոբոս Տեառնեղբոր Ընդհանրական
Նամակէն (5:16-20)**

Հետեւաբար ձեր մեղքերը իրարու խոստովանեցէք եւ իրարու համար աղօթեցէք, որպէսզի բժշկուիք. որովհետեւ արդարի մը աղօթքը ազդեցիկ է եւ մեծապէս կ'օգնէ: Եղիա մեզի նման կ'իրքերու ենթակայ մարդ էր. բայց երբ աղօթեց որ անձրեւ չգայ, երեքուկէս տարի չանձրեւեց երկրի վրայ: Ապա դարձեալ աղօթեց, եւ երկինքը անձրեւ տեղաց ու երկիրը իր բերքը տուաւ:

Եղբայրնե՛րս, երբ ձեզմէ ոեւէ մէկը ճշմարտութեան ուղիէն մոլորի, եւ ուրիշ մը յաջողի՝ զայն վերադարձնել, զիսցէք՝ թէ մեղաւորը իր մոլար ճամբէն դարձնողը թէ՛ անոր հոգին մահուրնէ կը փրկէ եւ թէ՛ իր բազմաթիւ մեղքերուն թողութիւն կը գտնէ:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Ղուկասի (4:25-30)***

Ձեզի օրինակներով խօսիմ: Իսրայէլի մէջ բազմաթիւ այրիներ կային Եղիայի օրերուն, երբ երեքուկէս տարի երկինքը չանձրեւեց եւ ամբողջ երկրին մէջ սաստիկ սով տիրեց: Բայց Եղիա անոնցմէ ոեւէ մէկուն չղրկուեցաւ, այլ ղրկուեցաւ

Սիդոնի մօտիկ Սաբեփթա գիւղը բնակող այրի կնոջ մը:

Yete zis sireyik, oorakh bidi ûllayik vor Horûs gertam, vorovhedeu Hayrûs indzme medz e. Ays polorû tsezi ûsi nakh kan badahilû, vorbeszi yerp badahin ayn aden havadak. Aylevs yergar bidi chûkhosim tsezi, vorovhedeu aha gooka ays ashkharhi ishkhânû, vor im vûras voch meg ishkhanootyoon ooni. Payts ashkharhû bedk e kidna te yes Hayrû gû sirem yev ayt e badjarû, vor indzi polor badviradznerû gû gadarem.

Yelek, yertank aysdeghen.

Hokekaloosden Yedk Arachin Girari
**Hagopos Dyarnyeghpor Ūnthanragan
Namagen (5:16-20)**

Hedevapar tser meghkerû iraroo khosdovanetsek yev iraroo hamar aghotetsek, vorbeszi pûzhûshgûvik, vorovhedeu artari mû aghotkû aztetsig e yev medzabes gokne. Yeghya mezi nûman girkeroo yentaga mart er, payts yerp aghotets vor antsûrev chûka, yerekooges dari chantsûrevets yergri vûra. Aba tartsyal aghotets, yev yerginkû antsûrev deg hats oo yergirû ir perkû dûvav.

Yeghpayrnerûs, yerp tsezme voryeve megû jûshmardootyan ooghiyen molori, yev oorish mû hachoghi zayn veratartsûnel, kidtsek te meghavorû ir molar jampen tartsûnoghû te anor hokin mahvûne gû pûrge yev te ir pazmativ meghkeroon toghootyoûn gû kûdne.

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Ghoogasi (4:25-30)**

Tsezi orinagnerov khosim. Israyeli mech pazmativ ayriner gayin Yeghyayi oreroon, yerp yerekooges dari yerginkû chantsûrevets yev ampoghch yergrin mech sasdig sov direts. Payts Yeghya anontsme voyeve megoon chûghûrgûvetsav, ayl ghûrgûvetsav

Sitoni modig Sarepta koughû pûnagogh ayri gûnoch mû.

Նոյնպէս, Եղիսէ մարգարէի օրերուն Իսրայէլի մէջ բազմաթիւ բորոտներ կային, բայց անոնցմէ ո՛չ մէկը բժշկուեցաւ, այլ միայն Նէեման անունով Ասորի մը:

Այս ակնարկութիւնները լսելով՝ ժողովարանին մէջ գտնուողները բարկութեամբ լեցուեցան: Ելան, Յիսուսը քաղաքէն դուրս հանեցին եւ գահավէժ ընելու նպատակով զայն տարին մինչեւ կատարը այն լերան, որուն վրայ շինուած էր իրենց քաղաքը: Բայց Յիսուս անոնց մէջէն անցաւ գնաց:

*Հոգեգալուստէն Եսրք Երկրորդ Կիրակի
(Տօն Սուրբ Էջմիածնի)*

Պօղոս Առաքեալի Կողմէ

Երբայեցիներուն Գրուած Նամակէն (9:1-10)

Արդարեւ, առաջին Ուխտը եւս իրեն յատուկ պաշտամունքի կանոններ եւ երկրաւոր սրբարան մը ունէր, երկու մասերէ բաղկացած: Նախ կար վրանին առաջին սրահը, Սրբութիւն կոչուած, ուր կային աշտանակը եւ առաջաւորութեան հացերուն սեղանը: Ապա, երկրորդ վարագոյրին ետին՝ կար վրանին միւս սրահը, Սրբութիւն Սրբութեանց կոչուածը, ուր կային ոսկեայ սեղանը՝ խունկ ծխելու համար եւ Ուխտի Տապանակը՝ ներսէն ու դուրսէն ոսկեպատ: Այս Տապանակին մէջ կը պահուէին մանանայով լեցուն ոսկեայ սափորը, Ահարոնի ծաղկած գաւազանը եւ Ուխտի տասնաբանեայ պատուիրաններուն քարէ տախտակները: Տապանակին վրայ կային Աստուծոյ փառքը ներկայացնող քերովբէները, որոնք իրենց թելերով հովանի կ'ընէին Քաւութիւն կոչուած կափարիչին վրայ: Ուրիշ մանրամասնութիւններու մասին խօսիլ չեմ ուզեր հիմա:

Սրբարանը այդպէս յարդարուած էր ուրեմն: Քահանաներ պաշտամունքը կատարելու համար մշտականօրէն կը մտնէին վրանին առաջին սրահը: Բայց երկրորդ սրահը միայն քահանայապետը կը մտնէր, տարին մէկ անգամ, այն ալ՝ իր եւ ժողովուրդին անգիտութեամբ գործած մեղքերուն փոխարէն՝

զոհի արիւնը մատուցանելու համար Աստուծոյ:

Nooynbesh, Yeghise markareyi oreroon Israyeli mech pazmativ porodner gayin, payts anontsme voch megû pûzhûshgûvetsav, ayl miyayn Neyeman anoonov Asori mû.

Ays agnargootyoonnerû lûselov zhoghovaranin mech kûdnûvoghnerû pargootyamp letsvetsan. Yelan, Hisoosû kaghaken toors hanetsin yev kahavezh ûneloo nûbadagov zayn darin minchev gadarû ayn leran, voroon vûra shinvadz er irents kaghakû. Payts Hisoos anonts mechen antsav kûnats.

*Hokekaloosden Yedk Yergrort Giragi
(Don Sourp Echmiyadzni)*

Boghos Arakyali Goghme

**Yeprayetsineroon Kûrvadz Namagen
(9:1-10)**

Artarev, arachin Ookhdû yevûs iren hadoog bashdamoonki ganonner yev yergravor sûrparan mû ooner, yergoo masere paghgatsadz. Nakh gar vûranin arachin sûrahû, Sûrpootyoon gochvadz, oor gayin ashdanagû yev arachavorootyan hartseroon seghanû. Aba, yergrort varakooyrin yedin gar vûranin myoos sûrahû, Sûrpootyoon Sûrpootyants gochvadzû, oor gayin vosgya seghanû khoong dzûkheloo hamar yev Ookhdi Dabanagû nersen oo toorsen vosgebad. Ays Dabanagin mech gû bahveyin mananayov letsoon vosgya saporû, Aharoni dzaghgadzh kavazanû yev Ookhdi dasnapanya badviranneroon kare dakhdagnerû. Dabanagin vûra gayin Asdoodzo parkû nergayatsûnogh kerovpenerû, voronk irents tenerov hovani gûneyin Kavootyoon gochvadz gaparichin vûra. Oorish manramasnootyoonneroo masin khosil chem oozar hima.

Sûrparanû aytbes hartarvadz er ooremn. Kahananer bashdamoonkû gadareloo hamar mshdaganoren gû mûdneyn vûranin arachin

sûrahû. Payts yergrort sûrahû miyayn kahanayabedû gû mûdner darin meg ankam, Այդ բոլորով Սուրբ Հոգին ցոյց կու տար, թէ որքան աստէն որ վրանին առաջին սրահը կանգուն կը մնար՝ բուն Սրբաբանին մուտքը մեր առջեւ փակ էր, ինչ որ խորհրդանշականօրէն կը ցուցնէ՝ թէ ներկայիս այդ Սրբաբանը բաց է մեր առջեւ: Այնտեղ մատուցուած նուէրներն ու զոհերը չէին կրնար մաքրել պաշտամունքը մատուցանողին խղճմանքը, որովհետեւ միայն ուտելիքի, խմելիքի եւ ծիսական պէսպէս լուացումներու կապուած էին: Եւ այդ մարմնական կարգերը ի զօրու էին մինչեւ ուղղութեան, այսինքն՝ նոր կարգերու հաստատման ժամանակը:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (10:22-30)***

Ձմեռ էր. Երուսաղէմի մէջ տաճարին նաւակատիքի տօնակատարութիւնը տեղի կ'ունենար: Յիսուս տաճարին Սողոմոնի սիւնագաւիթին մէջ կ'երթէւեկէր, երբ իր շուրջ հաւաքուեցան Հրեաները եւ հարցուցին.

- Մինչեւ ե՞րբ մեր հոգին պիտի հանես. եթէ դուն ես Քրիստոսը՝ յստակ ըսէ մեզի:

Յիսուս պատասխանեց.

- Արդէն իսկ ձեզի ըսած եմ, սակայն չէք հաւատար: Այն գործերը որ Հօրս անունով կը կատարեմ, անոնք իսկ կը վկայեն՝ թէ ով եմ ես: Բայց դուք չէք հաւատար, որովհետեւ իմ ոչխարներէս չէք: Ես ոչխարներս կը ճանչնամ. անոնք ձայնս կը լսեն եւ կը հետեւին ինծի, եւ ես անոնց յաւիտենական կեանք կու տամ. անոնք բնաւ պիտի չկորսուին: Ոչ որ պիտի կարենայ զանոնք յափշտակել իմ ձեռքէս: Հայրս այդ ոչխարները ինծի տուաւ, եւ ոչ որ կրնայ յափշտակել զանոնք իմ Հօրս ձեռքէն, որովհետեւ Հայրս բոլորէն անելի մեծ է: Ես եւ Հայրս մէկ ենք:

ayn al ir yev zhoghovoortin ankidootyamp kordzadz meghkeroon pokharen zohi aryoonû madootsaneloo hamar Asdoodzo. Ayt polorov Soorp Hokin tsooyts goodar, te vorkan aden vor vûranin arachin sûrahû gankoon gû mûnar poon Sûrparanin moodkû mer archev pag er, inch vor khorhûrtanûshaganoren gû tsootsne te nergayis ayt Sûrparanû pats e mer archev. Ayndegh madootsvadz nûvernerûn oo zoherû cheyin gûrnar makrel bashdamoonkû madootsanoghin khûghjmûdankû vorovhedev miyayn oodeliki, khûmeliki yev dzisagan bes bes lûvatsoomneroo gabvadz eyin. Yev ayt marmnagan garkerû i zoroo eyin minchev ooghootyan, aysinkûn nor garkeroo hasdadman zhamanagû.

***Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (10:22-30)***

Tsûmer er, Yeroosaghemi mech dajarin navagadiki donagadarootyoonû degghi goonenar. Hisoos dajarin Soghomoni syoonakavitin mech gerteveger, yerp ir shoorch havakvetsan Hûryanerû yev hartsootsin,

-Minchev yerp mer hokin bidi hanes? yete toon yes Krisdosû hûsdag ûse mezi.

Hisoos badaskhanets,

-Arten isg tsezi ûsadz yem, sagayn chek havadar . Ayn kordzerû vor Horûs anoonov gû gadarem, anonk isg gû vûgayen te ov yem yes. Payts took chek havadar, vorovhedev im vochkharneres chek. Yes vochkharnerûs gû janchnam, anonk tsaynûs gû lûsen yev gû hedevin indzi yev yes anonts havidenagan gyank goodam, anonk pûnav bidi chûgorsûvin. Voch vok bidi garena zanonk hapûshdagel im tserkes. Hayrûs ayt vochkharnerû indzi dûvav yev voch vok gûrna hapûshdagel zanonk im Horûs tserken,

vorovhedev Hayrûs poloren aveli medz e.
Yes yev Hayrûs meg yenk.

Հոգեգալուստէն Ետք Երրորդ Կիրակի

Պօղոս Առաքեալի Կողմէ

Հռոմայեցիներուն Գրուած Նամակէն

(6:12-23)

Այսուհետեւ մեղքը թող չթագաւորէ ձեր մահկանացու մարմիններուն մէջ, զանոնք իր ցանկութեանց հնազանդեցնելով: Մեղքին անձնատուր մի՛ ըլլաք, ձեր անդամները ան-իրաւութեան գործիք դարձնելով, այլ որպէս մահուրնէ կեանքի եկած մարդիկ՝ դուք ձեզ Աստուծոյ յանձնեցէք եւ ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէք: Մեղքը ձեր վրայ պէտք չէ իշխէ, քանի դուք Օրէնքին ենթակայ չէք, այլ շնորհքին:

Ուրեմն ի՞նչ. քանի շնորհքին ենթակայ ենք եւ ոչ Օրէնքին, մե՞ղք գործենք: Բնաւ երբեք: Լաւ գիտցէք, թէ որո՞ւ ծառայութեան որ նուիրուիք եւ հնազանդիք՝ անոր ծառան եղած կ'ըլլաք: Մեղքին ծառայելով՝ մահուան կ'ենթարկուիք, մինչ Աստուծոյ հնազանդելով՝ կ'արդարանաք: Գոհութիւն Աստուծոյ, որ թէպէտ ժամանակ մը մեղքին ծառայ դարձած էիք, բայց որովհետեւ սրտանց հնազանդեցաք ձեզիաւանդուած վարդապետութեան օրինակին, մեղքի տիրապետութենէն ազատեցաք եւ արդարութեան ծառայ դարձաք: Ծառայի օրինակով կը խօսիմ, որովհետեւ այդպէս աւելի հասկնալի է ձեզի: Ինչպէս որ ժամանակ մը ձեր մարմինները անօրէնութեան տուած պղծութեան եւ անօրէնութեան կը ծառայէիք, այնպէս ալ հիմա սրբութեան տուէք ձեր մարմինները եւ արդարութեան ծառայեցէք: Երբ մեղքին ծառայ էիք, հեռու էիք արդարութենէն: Ի՞նչ շահեցաք այն ժամանակուան ձեր գործերէն, որոնցմէ կ'ամչնաք հիմա. որովհետեւ անոնց հետեւանքը մահ է: Բայց հիմա մեղքին տիրապետութենէն ազատ էք եւ Աստուծոյ ծառաները: Ձեր շահը սրբութեան նուիրուած կեանք մըն է, որուն արդիւնքը պիտի ըլլայ յաւիտե-

նական կեանքը: Որովհետեւ մեղքին վար-
ձատրութիւնը մահ է, մինչ Աստուած որպէս
Hokekaloosden Yedk Yerrort Giragi

Boghos Arakyali Goghme

Hromayetsineroon Kûrvadz Namagen

(6:12-23)

Aysoohedev meghkû togh chûtakavore tser mahganatsoo marminneroon mech, zanonk ir tsangootyants hûnazantetsûnelov. Meghkin antsnadoor mi ûllak, tser antamnerû aniravootyan kordzik tartstûnelov, ayl vorbes mahvûne gyanki yegadz martig took tsez Asdoodzo hantsnetsek yev tser marminnerû Asdoodzo tserkin mech artarootyan kordzik tartsootsek. Meghkû tser vûra bedk che ishkhe, kani took Orenkin Yentaga chek, ayl shûnorhkin.

Ooremûn inch? kani shûnorkin yentaga yenk yev voch Orenkin, meghk kordzenk? Pûnav yerpek. Lav kidtsek te voroo dzarayootyan vor nûvirvik yev hûnazantik anor dzaran yeghadz gûllak. Meghkin dzarayelov mahvan gentargûvik, minch Asdoodzo hûnazantelov gartaranak. Kohootyoon Asdoodzo, vor tebed zhamanag mû meghkin dzara tartsadz eyik, payts vorovhedev sûrdants hûnazante-tsak tsezi avantûvadz vartabedootyan orinagin, meghki dirabedootenen azadetsak yev artarootyan dzara tartsak. Dzarayi orinagov gû khosim, vorovhedev aytbes aveli hasgûnali e tsezi. Inchbes vor zhamanag mû tser marminnerû anorenootyan dûvadz bûghdzootyan yev anorenootyan gû dzarayeyik, aynbes al hima sûrpootyan dûvek tser marminnerû yev artarootyan dzarayetsek. Yerp meghkin dzara eyik, heroo eyik artarootenen. Inch shahetsak ayn zhamanagvan tser kordzeren? vorontsme gamûchnak hima, vorovhedev anonts hedevankû mah e. Payts hima meghkin dirabedootenen azad ek yev Asdoodzo dzaranerû. Tser shahû sûrpootyan nûvirvadz gyank mûn e, voroon artyoonkû bidi ûlla

havidenagan gyankû. Vorovhedevev meghkin
vartsadrootyoonû mah e, minch Asdvadz
ձրի պարգեւ՝ յաւիտեանական կեանք կու տայ
մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մատթեոսի (12:1-8)***

Շաբաթ օր մը Յիսուս ցորենի արտերուն մէջէն
կ'անցնէր: Աշակերտները անօրէցած ըլլալով՝
սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ
Փարիսեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի.
- Տէ՛ս, աշակերտներդ ի՛նչ կ'ընեն. բան մը՝ որ
մեր Օրէնքը կ'արգիլէ Շաբաթ օրով ընել:

Յիսուս պատասխանեց.

- Զէ՛ք կարդացած թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք
եւ իր հետ եղողները անօրէցան: Աստուծոյ
տունը չմտա՞ւ եւ՝ առաջաւորութեան հացերը
չկերա՞ւ, բան մը՝ որ Օրէնքին համաձայն
արտօնուած չէր իրեն եւ ոչ ալ իրեն հետ
եղողներուն, այլ միայն քահանաներուն: Կամ
չէ՞ ք կարդացած Օրէնքին մէջ, թէ Շաբաթ օրերը
քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն
Շաբաթ օրը եւ սակայն ատիկա մեղք չի
համարուիր իրենց: Ահա կ'ըսեմ ձեզի, որ
տաճարէն աւելի մեծ մէկը կայ հոս: Եթէ
իրապէս հասկնայիք թէ ի՛նչ կը նշանակէ
Աստուծոյ սա խօսքը. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ
ոչ թէ զոհ», այն ատեն չէիք դատապարտեր
անմեղները, որովհետեւ Մարդու Որդին Տէրն է
Շաբաթին:

***Հոգեգալուստէն Ետք Չորրորդ Կիրակի
Պօղոս Առաքեալի Կողմէ
Հռոմայեցիներուն Գրուած Նամակէն
(7:25-8:11)***

Բայց շնորհակալութիւն կը յայտնեմ Աստուծոյ,
մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Ապա ուրեմն, ես ինքս միտքով Աստուծոյ
Օրէնքին կը ծառայեմ, իսկ մարմինով՝ մեղքի
օրէնքին:

Եթէ այդպէս է, կը նշանակէ թէ անոնք որ
Քրիստոս Յիսուսի միացած են՝

դատապարտութեան ենթակայ չեն, քանի
մարմնաւորապէս չեն ապրիր, այլ
հոգեւորապէս:

vorbes tsûri barkev havidenagan gyank
gooda mer Diroch Hisoos Krisdosi
michotsav.

***Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Madteyosi (12:1-8)***

Shapat or mû Hisoos tsoreni arderoon
mechen gantsner. Ashagerdnerû anotetsadz
ûllalov ûsgûsan hasg pûrtsûnel yev oodel.
Yerp Parisetsinerû asiga desan, ûsin Hisoosi,
-Des, ashagerdnerût inch gûnen, pan mû vor
mer Orenkû garkile Shapat orov ûnel.

Hisoos badaskhanets,

-Chek gartatsadz te inch ûrav Tavit? yerp ink
yev ir hed yeghoghnerû anotetsan. Asdoodzo
doonû chûmûdav yev arachavorootyan
hatserû chûgerav? pan mû vor Orenkin
hamatsayn ardonvadz cher iren yev voch al
iren hed yeghoghneroon, ayl miyayn
kahananeroon. Gam chek gartatsadz Orenkin
mech? te Shapat orerû kahananerû dajarin
mech gû sûrpabûghdzen Shapat orû yev
sagayn adiga meghk chi hamarvir irents. Aha
gûsem tsezi, vor dajaren aveli medz megû ga
hos. Yete irabes hasgûnayik te inch gû
nûshanage Asdoodzo sa khoskû,
“Voghormootyoon goozem yev voch te zoh”,
ayn aden cheyik tadabarder anmeghnerû,
vorovhedevev Martoo Vortin Derûn e Shapatin.

Hokekaloosden Yedk Chorrort Giragi

***Boghos Arakyali Goghme
Hromayetsineroon Kûrvadz Namagen
(7:25-8:11)***

Payts shûnorhagalootyoon gû haydnem
Asdoodzo, mer Diroch Hisoos Krisdosi
michotsav.

Aba ooremûn, yes inkûs midkov Asdoodzo
Orenkin gû dzarayem, isg marminov meghki
orenkin.

Yete aytbes e, gû nûshanage te anonk vor Krisdos Hisoosi miyatsadz yen tadabardoot-yan yentaga chen, kani marmnavorabes chen abrir, ayl' hokevorabes.

Որովհետեւ Հոգիին Օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն:

Արդարեւ, ինչ որ Օրէնքը չէր կրնար ընել, մարդկային բնութեան տկար ըլլալուն պատճառով, Աստուած իրագործեց՝ աշխարհ դրկելով իր Որդին, որ մեղքը յաղթահարելու համար մեր մեղանշական բնութիւնը իր վրայ առաւ եւ իր մարմինին մէջ դատապարտեց մեղքը, որպէսզի մենք, որ հոգեւորապէս կ'ապրինք եւ ո՛չ մարմնաւորապէս, կարենանք լրիւ գործադրել Օրէնքին բոլոր պահանջները: Անոնք որ միայն իրենց մարմնական պահանջներով կը դեկավարուին, անոնց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ անոնք որ Հոգիին թելադրած ձեւով կ'ապրին, անոնց մտածելակերպը հոգեւոր է: Մարմնականը խորհիլը մահ կը պատճառէ, մինչ հոգեկանը խորհիլը՝ կեանք եւ խաղաղութիւն: Մարմնականին կառչած միտքը Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանիլ: Ահա թէ ինչու, անոնք որ մարմնականին կը հետեւին՝ Աստուծոյ հաճելի չեն կրնար ըլլալ:

Եթէ իրապէս Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, կը նշանակէ՝ թէ դուք այլեւս մարմնական ցանկութիւններուն համաձայն չէք ապրիր, այլ՝ Սուրբ Հոգիին կամեցած ձեւով: Իսկ ով որ Քրիստոսի Հոգին չունի, անոր չի պատկանիր: Եթէ Քրիստոս ձեր մէջն է, թեպէտեւ ձեր մարմինները պիտի մեռնին, որովհետեւ մեղանշեցիք, սակայն Սուրբ Հոգին դարձեալ կեանք պիտի տայ ձեզի, որովհետեւ արդարացաք: Այսինքն, եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, Աստուած, որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, իր Հոգիին միջոցաւ որ ձեր մէջ կը բնակի՝ պիտի կենդանացնէ նաեւ ձեր մահկանացու մարմինները:

Vorovhedev Hokiyyin Orenkû zis Krisdos Hisoosi miyatsûnelov gentanatsoots yev azadets meghki yev mahvan yentagayootenen. Artarev, inch vor Orenkû cher gûrnar ûnel, martgayin pûnootyan dûgar ûllaloon badjarov, Asdvadz irakordzets ashkharh ghûrgelov ir Vortin, vor meghkû haghtahareloo hamar mer meghanchagan pûnootyoonû ir vûra arav yev ir marminin mech tadabardets meghkû, vorbeszi menk, vor hokevorabes gabrink yev voch marmnavorabes, garenank lûriv kordzatrenl Orenkin polor bahanchnerû. Anonk vor miyayn irents marmnagan bahanchnerov gû ghegavarvin, anonts mûdadzelagerbû marmnagan e, minchter anonk vor Hokiyyin telatradz tsevov gabrin, anonts mûdadzelagerbû hokevor e. Marmnaganû khorhilû mah gû badjare, minch hokeganû khorhilû gyank yev khaghaghootyoon. Marmnaganin garchadz midkû Asdoodzo tûshnami e, vorovhedev Asdoodzo orenkneroon chi hûnazantir, voch al gûrna hûnazantil. Aha te inchoo, anonk vor marmnavorin gû hedevin Asdoodzo hajeli chen gûrnar ûllal.

Yete irabes Asdoodzo Hokin tser mech gû pûnagi, gû nûshanage te took aylevs marmnaganin tsangootyoon-neroon hamatsayn chek abrir, ayl Soorp Hokiyyin gametsadz tsevov. Isg ov vor Krisdosi Hokin chooni, anor chi badganir. Yete Krisdos tser mechûn e, tebedev tser marminnerû bidi mernin, vorovhedev meghanchetsik, sagayn Soorp Hokin tartsyal gyank bidi da tsezi, vorovhedev artaratsak. Aysinkûn, yete Asdoodzo Hokin tser mech gû pûnagi, Asdvadz, vor Hisoos Krisdosû merelneren harootsanets, ir Hokiyyin michotsav vor tser

mech gû pûnagi bidi gentanatsûne nayev tser mahganatsoo marminnerû.

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մատթէոսի (12:38-45)***

Այն ատեն Օրէնքի ուսուցիչներէն եւ Փարիսեցիներէն ոմանք ըսին Յիսուսի.

- Վարդապետ, կ'ուզենք որ հրաշք մը գործես եւ տեսնենք:

Յիսուս անոնց պատասխանեց.

- Աստուծոյ անհաւատարիմ եւ չար սերունդ, նշան մը կ'ուզէք. բայց Յովնան մարգարէին նշանէն զատ ուրիշ նշան պիտի չտրուի ձեզի: Ինչպէս Յովնան երեք օր ցերեկ ու զիշեր կէտ ձուկի փորին մէջ մնաց, նոյնպէս ալ Մարդու Որդին երեք օր, ցերեկ ու զիշեր, պիտի մնայ երկրի ընդերքին մէջ: Դատաստանի օրը Նինուէացիները ձեզի դէմ պիտի ելլեն եւ դատապարտեն ձեզ, որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ զոջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա, Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս: Դարձեալ, Դատաստանի օրը Հարաւի թագուհին պիտի ելլէ եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ անիկա իր հեռաւոր երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու համար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ մէկը կայ հոս:

- Երբ չար ոգին դուրս կ'ելլէ մարդու մը մէջէն, կ'երթայ եւ անջրդի վայրեր կը շրջի՝ հանգիստ տեղ մը գտնելու համար: Եւ երբ չի գտներ, ինքնիքէն կ'ըսէ. «Ելլեմ երթամ իմ տունս, ուրկէ ելայ»: Ուստի կը վերադառնայ իր նախկին տունը եւ զայն կը գտնէ պարապ, մաքուր եւ յարդարուած: Ապա կ'երթայ եւ կը բերէ իրմէ աւելի չար եօթը այլ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով՝ կը բնակի հոն, որով այդ մարդուն վերջը իր նախկին վիճակէն աւելի գէշ կ'ըլլայ: Գիտցէ՛ք, որ նոյնը պիտի պատահի նաեւ այս չար սերունդին:

***Krisdosi Avedaranen Ūsd Madteyosi
(12:38-45)***

Ayn aden Orenki oosootsichneren yev Parisetsineren vomank ūsin Hisoosi,

-Vartabed, goozenk vor hûrashk mû kordzes yev desnenk.

Hisoos badaskhanets,

-sdoodzo anhavadarim yev char seroont, nûhan mû goozek, payts Hovnan markareyin nûshanen zad oorish nûshan bidi chûdûrvi tsezi. Inchbes Hovnan yerek or tsereg oo kisher ged tsoogi porin mech mûnats, nooynbesh al Martoo Vortin yerek or, tsereg oo kisher, bidi mûna yergri ûnterkin mech. Tadasdani orû Ninveyatsinerû tsezi tem bidi yellen yev tadabarden tsez, vorovhedeved anonk Hovnani karozyotyamp zûghchatsin irents meghkeroon hamar. Yev aha Hovnanen aveli medz megû ga hos. Tartsyal, Tadasdani orû Haravi takoochin bidi yelle yev tadabarde tsez, vorovhedeved aniga ir heravor yergren yegav Soghomoni imasdoon oosootsoomnerû lûseloo hamar. Yev aha, Soghomonen aveli medz megû ga hos.

-Yerp char vokin toors gelle martoo mû mechen, gerta yev anchûrti vayrer gû shûrchi hankisd degh mû kûdneloo hamar. Yev yerp chi kûdner, inkniren gûse, “Yellem yertam im doonûs, oorge yela”. Oosdi gû veratarna ir nakhgin doonû yev zayn gû kûdne barab, makoor yev hartarvadz. Aba gerta yev gû pere irme aveli char yotû ayl vokin, voronts hed ners mûdnelov gû pûnagi hon, vorov ayt martoon verchû ir nakhgin vijagen aveli kesh gûlla. Kidtsek, vor nooynû bidi badahi nayev ays char seroontin.

*Հոգեգալուստէն Ետք Հինգերորդ Կիրակի
Պօղոս Առաքելի Կողմէ
Հռոմայեցիներուն Գրուած Նամակէն
(9:30-10:4)*

Ուրեմն ի՞նչ կ'եզրակացնենք: Հեթանոսները, որոնք Աստուծոյ արդարութեան չէին հետեւեր՝ արդարացան, որովհետեւ Քրիստոսի հաւատացին. մինչդէռ Իսրայէլի ժողովուրդը չարդարացաւ Մովսէսի Օրէնքին միջոցաւ, որ տրուած էր՝ մարդիկը արդարացնելու համար: Ինչո՞ւ: Որովհետեւ չհաւատաց Քրիստոսի, եւ կը կարծէր թէ Օրէնքին գործադրութեամբը պիտի արդարանայ: Ատիկա իսկ պատճառ եղաւ որ գլորին «գայթակղութեան առիթ՝ հանդիսացող քար»ին վրայ, այսինքն՝ Քրիստոսի, որուն համար մարգարէութեան մէջ գրուած է.-

«Ահա ես Միոնի մէջ կը դնեմ քար մը՝ որ գլորումի առիթ պիտի ըլլայ, ժայռ մը՝ որ գայթակղութեան առիթ պիտի հանդիսանայ: Բայց անոր հաւատացողը յուսախաբ պիտի չըլլայ»:

Եղբայրներ, սրտանց կը մաղթեմ եւ կ'աղօթեմ որ Աստուած փրկէ Իսրայէլացիները, որովհետեւ կրնամ իրենց մասին վկայել՝ թէ Աստուծոյ հանդէպ նախանձախնդիր են. միայն թէ այս նախանձախնդրութիւնը հիմնուած չէ Աստուծոյ ճշմարիտ ծանօթութեան վրայ: Անոնք չհասկցան, թէ Աստուած ի՞նչ ձեւով կ'ուզէր արդարացնել մարդիկը: Արդարանալու իրենց հասկցած ձեւին կառչեցան եւ ուստի չընդունեցին Աստուծոյ արդարութեան ուղին: Մինչդէռ Քրիստոսով Օրէնքը իր վախճանին հասած է եւ միայն Քրիստոսի հաւատացողը կ'արդարանայ:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ Մատթէոսի (13:24-30)

Յիսուս ուրիշ առակ մըն ալ խօսեցաւ անոնց ու ըսաւ.

- Մարդ մը լաւ սերմեր ցանեց իր արտին մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած էր, անոր թշնամին եկաւ, որոմ ցանեց ցորենին մէջ եւ գնաց:

Hokekaloosden Yedk Hinkerort Giragi

**Boghos Arakyali Goghme
Hromayetsineroon Kûrvadz Namagen
(9:30-10:4)**

Ooremn inch gezragatsûnek? Hetanosnerû, voronk Asdoodzo artarootyan cheyin hedever, artaratsan, vorovhedev Krisdosi havadatsin, minchter Israyeli zhoghovoortû charcharvetsav Movsesi Orenkin michotsav, vor dûrvadz er martigû artaratsûnelo hamar. Inchoo? Vorovhedev chûhavadats Krisdosi, yev gû gardzer te orenkin kordzatrootyampû bidi artarana. Adiga isg badjar yeghav vor kûlorin “kaytagghootyan arit hantisatsogh kar”in vûra, aysinkûn Krisdosi, voroon hamar markareyootyan mech kûrvadz e,-

“Aha yes Siyoni mech gû tûnem kar mû vor kûloroomi arit bidi ûlla, zhayr mû vor kaytagghootyan arit bidi hantisana. Payts anor havadatsoghû hoosakhap bidi chûlla”.

Yeghpayrner, sûrdants gû maghtem yev gaghotem vor Asdvadz pûrge Israyelatsinerû, vorovhedev gûrnam irents masin vûgayel te Asdoodzo hanteb nakhantsakhûntir yen, miyay te ays nakhantsakhûntrootyoonû himnûvadz che Asdoodzo jûshmarid dzanotootyan vûra. Anonk chûhasgûtsan, te Asdvadz inch tseovov goozer artaratsûnel martigû. Artaranaloo irents hasgûtsadz tsevin garchetsan yev oosdi chûntoonetsin Asdoodzo artarootyan ooghin. Minchter Krisdosov Orenkû ir vakhjanin hasadz e yev miyayn Krisdosi havadatsoghû gartarana.

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Madteyosi (13:24-30)**

Hisoos oorish arag mûn al khosetsav anonts oo ûsav,

-Mart mû lav sermer tsanets ir ardin mech. Kisher mû, yerp amen mart kûnatsadz er, anor tûshnamin yegav, vorom tsanets tsorenin mech yev kûnats.

Երբ սերմերը աճեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն որոմն ալ երեւցաւ: Տանտիրոջ ծառաները եկան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուն միայն լաւ սերմեր չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրկէ՞ հապա եկաւ որոմը»:

Անիկա պատասխանեց. «Ասիկա թշնամի մարդու գործ է»: Ծառաները ըսին. «Կ'ուզե՞ս որ երթանք եւ որոմը քաղենք»: «Ո՛չ», - պատասխանեց տէրը, - «Որպէսզի չըլլայ թէ որոմը քաղած ատեն ցորենն ալ միասին արմատախիլ ընէք: Զգեցէք որ երկուքն ալ միասին աճին մինչեւ հունձքի ժամանակ. այն ատեն հնձուորներուն կ'ըսեմ. Նախ որոմը քաղեցէք, խուրձեր կազմեցէք այրելու համար, եւ ապա քաղեցէք ցորենը եւ ամբարեցէք շտեմարաններու մէջ»:

Ահաւասիկ ճիշդ ասոր կը նմանի երկինքի արքայութիւնը:

*Հոգեգալուստէն Ետք Վեցերորդ Կիրակի
Պողոս Առաքեալի Կողմէ
Հռոմայեցիներուն Գրուած Նամակէն
(11:13-24)*

Բայց ձեզի՝ հեթանոսներուդ կ'ըսեմ. - Հեթանոսներուն առաքեալ ըլլալու իմ պաշտօնովս կը պարծենամ, մտածելով որ թերեւս այս ձեռով ազգակիցներուս նախանձը գրգռեմ եւ յաջողիմ անոնցմէ ոմանք փրկել: Որովհետեւ, եթէ Աստուած զանոնք մերժեց որպէսզի հեթանոս աշխարհը հաշտեցնէ իրեն հետ, կը նշանակէ թէ երբ վերստին ընդունի զանոնք՝ մեռելներու յարութիւնը տեղի պիտի ունենայ:

Թէ Աստուած վերստին պիտի ընդունի զանոնք՝ յստակ է, որովհետեւ երբ բերքին երախայրիքը Աստուծոյ ընծայուած է, կը նշանակէ թէ ամբողջը Աստուծոյ ընծայուած է. նոյնպէս, եթէ ծառին արմատները Աստուծոյ

նուիրուած են, կը նշանակէ թէ ճիւղերն ալ Աստուծոյ նւիրուած են: Ճիշդ է որ այդ ճիւղերէն ոմանք կտրուեցան, եւ դուն՝ որ վայրի ձիթենի մըն էիր՝ անոնց տեղ պատուաստուեցար եւ այդ ձիթենիին արմատներէն եկող հարուստ աւիշը ըմպեցիր: Yerp sermerû ajetsan yev ûsgûsan hasg gazmel, ayn aden voromûn al yerevtsav. Dandiroch dzaranerû yegan yev ûsin anor, “Der, toon miyayn lav sermer chûtsanetsir ardit mech? oorge haba yegav voromû?” Aniga badaskhanets, “Asiga tûshnami martoo kordz e”. Dzaranerû ûsin, “Goozes vor yertank yev voromû kaghenk?” “Voch”, badaskhanets derû, - “Vorbeszi chûlla te voromû kaghadz aden tsorenn al miyasin armadakhil ûnek. Tsûketsek vor yergookûn al miyasin ajin minchev hoontski jamanag, ayn aden hûntsvorneroon gûsem, nakh voromû kaghetsek, khoortser gazmetsek ayreloo hamar, yev aba kaghetsek tsorenû yev amparetsek ûshdemaranneroos mech”. Ahavasig jisht asor gû nûmani yerginki arkayootyoonû.

*Hokekaloosden Yedk Vetserort Giragi
Boghos Arakyali Goghme
Hromayetsineroon Kûrvadz Namagen
(11:13-24)*

Payts tsezi hetanosneroot gûsem, -Hetanosneroon arakyal ûllaloo im bashdonovûs gû bardzenam, mûdazelov vor terevûs ays tsevov azkagitsneroos nakhantsû kûrkûrem yev hachoghim anontsme vomank pûrgel. Vorovhedeve, yete Asdvadz zanonk merzhets vorbeszi hetanos ashkharhû hashdetsûne iren hed, gû nûshanage te yerp verûsdin ûntooni zanonk merelneroo harootyoonû degghi bidi oonena.

Te Asdvadz verûsdin bidi ûntooni zanonk hûsdag e, vorovhedeve yerp perkin yerakhayrikû Asdoodzo ûndzayvadz e, gû nûshanage te ampoghchû Asdoodzo ûndzayvadz e, nooynbese, yete dzarin armadnerû

Asdoodzo nûvirvadz yen, gû nûshanage te jyooghern al Asdoodzo nûvirvadz yen. Jisht e vor ayt jougheren vomank gûdûrvetsan, yev toon vor vayri tsiteni mûn eyir` anonts degh badvasdûvetsar yev ayt tsiteniyin armadneren yegogh haroosd avishû ûmbetsir.

Բայց մի՛ պարծենար եւ մի՛ արհամարհեր կոտրած ճիւղերը. մի՛ մոռնար որ դուն արմատներուն վրայ հաստատուած եւ եւ ո՛չ թէ արմատները քու վրայ: Հիմա պիտի ըսես՝ «Աստուած այդ ճիւղերը կտրեց՝ զիս պատուաստելու համար»: Իրաւ է, անոնք՝ Հրեաները կտրուեցան՝ որովհետեւ չհաւատացին, եւ դուն՝ հեթանոսդ, հաւատալուդ համար արմատին վրայ հաստատուեցար. բայց մի՛ հպարտանար, այլ՝ վախցիր: Որովհետեւ եթէ Աստուած քուն ճիւղերուն չխնայեց, թերեւս քեզի երբեք չխնայէ: Տե՛ս թէ ո՛րքան բարի է Աստուած եւ խիստ միաժամանակ: Խիստ է հաւատքի մէջ կործանածներուն հանդէպ եւ բարի՝ քեզի հանդէպ, պայմանաւ որ շարունակես անոր բարութեան արժանի մնալ. այլապէս դուն ալ պիտի կտրուիս: Նոյնպէս ալ, եթէ Հրեաները թողուն իրենց անհաւատութիւնը, կրկին պիտի պատուաստուին արմատին վրայ, որովհետեւ Աստուած կրնայ զանոնք վերստին պատուաստել: Եթէ դուն, որ իսկականին մէջ վայրի ձիթենի մըն էիր, կտրուեցար եւ պատուաստուեցար ընտանի ձիթենիին վրայ որ քու բունդ չէր, որքա՛ն աւելի դիրութեամբ պիտի պատուաստուին նոյն այդ ձիթենիին բնական ճիւղերը:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Մատթէոսի (14:13-21)***

Երբ Յիսուս Յովհաննէսի գլխատումը լսեց, առանձինը նաւակ մտնելով՝ այդտեղէն գնաց ամայի վայր մը: Շրջանի քաղաքներուն բնակիչները լսելով ասիկա, քալելով հետեւեցան իրեն: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, զբաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց:

Երեկոյեան, իր աշակերտները մօտեցան իրեն եւ ըսին.

- Ամայի տեղ ենք եւ ժամանակն ալ ուշ է. արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերը իրենց համար ուտելիք գնելու:

Payts mi bardzenar yev mi arhamarher godradz jyoogherû, mi mornar vor toon armadneroon vûra hasdadvadz yes yev voch te armadnerû koo vûrat. Hima bidi uses` “Asdvadz ayt jyoogherû gûdrets zis badvasdeloo hamar”. Irav e, anonk Hûryanerû gûdûrvetsan vorovhedev chûhavadatsin, yev toon hetanosût, havadaloot hamar armadin vûra hasdadvetsar, payts mi hûbardanar, ayl vakhtsir. Vorovhedev yete Asdvadz poon jyoogheroon chûkhûnayets, terevûs kezi yerpek chûkhûnaye. Des te vorkan pari e Asdvadz yev khisd miyazhamanag. Khisd e havadki mech gordzanadzneroon hanteb yev pari kezi hanteb, baymanav vor sharoonages anor parootyan arzhani mûnal, aylabes toon al bidi gûdûrvis.

Nooynbes al, yete Hûryanerû toghoon irents anhavadootyoonû, gûrgin bidi badvasdûvin armadin vûra, vorovhedev Asdvadz gûrna zanonk verûsdin badvasdel. Yete toon, vor isgaganin mech vayri tsiteni mûn eyir, gûdûrvetsar yev badvasdûvetsar ûndani tsiteniyin vûra vor koo poonût cher, vorkan aveli tourootyamp bidi badvasdûvin nooyn ayt tsiteniyin pûnagan jougherû.

***Hissoos Krisdosi Avedaranen Êsd
Madteyosi (14:13-21)***

Yerp Hissoos Hovhannesi kûlkhadoomû lûsets, arantsinû navag mûdnelov aytdeghen kûnats amayi vayr mû. Shûrchani kaghakneroon pûnagichnerû lûselov asiga, kalelov hedevetsan iren. Yerp hissoos navagen toors yelav, desav medz pazmootyoonû, kûtats anonts vûra yev hivantnerû pûjûshgets.

Yeregoyan, ir ashagerdnerû modetsan iren yev ûsin,

-Amayi degh yenk yev zhamanagûn al oosh e, artsage zhoghovoortû, vorbeszi yertan shûrchaga kyoogherû irents hamar oodelik kûneloo.

Յիսուս ըսաւ.

- Իրենք պէտք չունին երթալու: Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը:

Անոնք ըսին Յիսուսի.

- Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ:

Յիսուս ըսաւ.

- Հո՛ւք բերէք ասոնք:

Եւ հրամայեց որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, աչքերը երկինք բարձրացուց, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաժնեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան. եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝ տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուսողները շուրջ հինգ հազար հոգի էին, կիներն ու մանուկները չհաշուած:

*Պայծառակերպութիւն Քրիստոսի
(Վարդավառ)*

**Յովհաննէս Առաքեալի Ընդհանրական
Առաջին Նամակէն (1:1-7)**

Մենք լսեցինք, մերաչքերով տեսանք եւմեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Անիկա նոյնինքն կեանքն էր, որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, այսինքն՝ յաւիտենական կեանքին մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսեցինք՝ կը պատմենք ձեզի, որպէսզի դո՛ւք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչո՛ւ կը գրենք ձեզի այս նամակը:

Պատգամը, որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է, բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ ըսենք՝ «Հաղորդակից ենք իրեն», եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք ահա եւ ճշմարտութիւնը չենք գործադրեր:

Hisoos ûsav,

-Irenk bedk choonin yertaloo. Took dûvek anonts oodelikû.

Anonk ûsin Hisoosi,

-Hos krete vochinch oonink, patsi hink hatse yev yergoo tsooge.

Hisoos ûsav,

-Hos perek adonk.

Yev hûramayets vor zhoghovoortû nûsdetsûnen khodin vûra. Aba arav hink hatsû yev yergoo tsoogû, achkerû yergink patsratsoots, orhnets, gûdrets hatserû yev dûvav ashagerdneroon, voronk pazhnetsin zhoghovoortin. Polorûn al geran oo gûshdatsan, yev ashagerdnerû aveltsadz gûdorerû havakelov dasnûyergoo sagar letsootsin. Isg oodoghnerû shoorch hink hazar hoki eyin, ginerûn oo manoognerû chûhashvadz.

Baydzaragerbootyoon Krisdosi (Vartavar)
**Hovhannes Arakyali Ūnthanragan
Arachin Namagen (1:1-7)**

Menk lûsetsink, mer achkerov desank yev mer tserkerov shoshapetsink Vortin, Panû, vor ûsgizpen isg gyanki ûsdeghdzichûn er. Aniga nooyinkûn gyankûn er, vor haydnûvetsav. Menk desank yev gû vûgayenk, tsezi badmelov anor masin, aysinkûn havidenagan gyanki masin, vor Horû hed er yev ayjûm mezi haydnûvetsav. Inch vor desank oo lûsetsink gû badmenk tsezi, vorbeszi took al masnagits tarnak ayn haghortagtsootyan vor menk oonink Horû yev anor Vortiyin՝ Hisoos Krisdosi hed, yev tser oorakhootyoonû gadaryal ûlla. Aha te inchoo gû kûrenk tsezi ays namagû.

Badkamû, vorirme lûsetsink yev tsezi gû pokhantsenk, sa e te Asdvadz looys e, pûnav khavar chûga anor mech. Art, yete ûsenk “Haghortagits yenk iren”, yev myoos goghme sharoonagenk khavari mech abril, gû sûdenk aha yev jûshmardootyoonû chenk kordzatrêr.

Իսկ եթէ լոյսի մէջ քալենք, ինչպէս ինք լոյսի մէջ է, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մատթէոսի (16:13-17:13)***

Երբ Յիսուս Փիլիպպոսի կառուցած Կեսարիայի կողմերը եկաւ, իր աշակերտներուն հարցուց.

- Մարդիկ ի՞նչ կ'ըսեն Մարդու Որդիին մասին. ո՞վ եմ ես:

Անոնք պատասխանեցին.

- Ոմանք քեզ Յովհաննէս Մկրտիչը կը կարծեն, ոմանք՝ Եղիա մարգարէն, իսկ ուրիշներ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը:

Յիսուս հարցուց անոնց.

- Իսկ դո՞ւք ով կը կարծէք զիս:

Սիմոն Պետրոս պատասխանեց.

- Դուն Քրիստոսն ես, կենդանի Աստուծոյ Որդին:

Յիսուս ըսաւ անոր.

- Երանի՛ք քեզի, Սիմոն, Յովնանի որդի, որովհետեւ ատիկա քեզի յայտնողը մարդ մը չէր, այլ իմ Հայրս, որ երկինքի մէջ է: Քեզի կ'ըսեմ՝ թէ Ժայռ ես դուն, եւ այդ Ժայռին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, զոր մահն անգամ իր ամբողջ զօրութեամբ պիտի չկրնայ յաղթահարել: Քեզի պիտի տամ երկինքի արքայութեան բանալիները, եւ ինչ որ կապես երկրի վրայ՝ կապուած պիտի ըլլայ երկինքի մէջ, եւ ինչ որ արձակես երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ:

Ապա Յիսուս խստիւ պատուիրեց իր աշակերտներուն, որ ռեւէ մէկուն չըսեն թէ ինքն է Քրիստոսը:

Այս դէպքէն ետք, Յիսուս սկսաւ յայտնել իր աշակերտներուն, թէ պէտք է որ ինք Երուսաղէմ երթայ, ուր շատ պիտի չարչարուի աւագ քահանաներէն, Օրէնքի ուսուցիչներէն եւ երեցներէն, թէ պէտք է որ սպաննուի, եւ երրորդ օրը յարութիւն առնէ:

Isg yete looysi mech kalenk, inchbes ink looysi mech e, ayn aden jûshmardabes haghortagits gûllank iraroo, yev ir Vortvooyn Hisoosi arounû gû sûrpe mez amen meghke.

***Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Madteyosi (16:13-17:13)***

Yerp Hisoos Pilibbosi garootsadz Gesar yayi goghmerû yegav, ir ashagerdneroon hartsoots,

-Martig inch gûsen Martoo Vortiyin masin, ov yem yes?

Anonk badaskhanetsin,

Vomank kez Hovhannes Mûdûrdichû gû gardzen, vomank Yeghya markaren, isg oorishner Yeremyan gam markareneren megû.

Hisoos hartsoots anonts, -Isg took ov gû gardzek zis?

Simon Bedros badaskhanets.

-Toon Krisdosûn yes, gentani Asdoodzo Vortin.

Hisoos ûsav anor.

-Yerani kezi, Simon, Hovnani vorti, vorovhedev adiga kezi haydnoghû mart mû cher, ayl im Hayrûs, vor yergûnki mech e. Kezi gûsem te zhayr yes toon, yev ayt zhayrin vûra bidi shinem im yegeghetsis, zor mahûn ankam ir ampoghch zorootyamp bidi chûgûrna haghtaharel. Kezi bidi dam yerginki arkayootyan panalinerû, yev inch vor gabes yergri vûra gabvadz bidi ûlla yerginki mech, yev inch vor artsages yergri vûra artsagvadz bidi ûlla yerginki mech.

Aba Hisoos khûsdiv badvirets ir ashagerdneroon, vor voyeve megoon chûsen te inkûn e Krisdosû.

Ays tebkén yedk, Hisoos ûsgûsav haydnel ir ashagerdneroon, te bedk e vor ink Yeroosaghem yerta, oor shad bidi charcharvi avak kahananeren, yev Orenki oosootsichneren yev yeretsneren, te bedk e vor ûsbannûvi, yev yerrort orû harootyoon arne.

Ասոր վրայ Պետրոս զինք մէկ կողմ տարաւ եւ սկսաւ հակառակելով վիճիլ.

- Քա՛ւ լիցի, Տէ՛ր, այդպիսի բան թող չպատահի քեզի:

Յիսուս Պետրոսի դառնալով ըսաւ.

- Ետի՛ս գնա, Սատանա՛յ, դուն արգելք ես ինծի, որովհետեւ Աստուծոյ ծրագիրը չէ որ կը խորհիս, այլ մարդոց մտահոգութիւնը կ'արտայայտես:

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.

- Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ: Որովհետեւ ո՛վ որ ուզէ իր կեանքը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ո՛վ որ ինծի համար կորսնցնէ իր կեանքը՝ պիտի գտնէ զայն: Ի՞նչօգուտ, եթէ մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ, որովհետեւ ի՞նչ փրկագին պիտի տայ իր կեանքը ետ առնելու համար: Արդարեւ, Մարդու Որդին պիտի գայ իր Հօր փառքով՝ իր հրեշտակներուն հետ, եւ այն ատեն իւրաքանչիւրին իր գործերուն համաձայն հատուցում պիտի կատարէ: Վստահ եղէք, որ հոս գտնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն Մարդու Որդին որ կու գայ իր թագաւորութեամբ:

Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց. իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղան: Եւ ահա երեւցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի.

- Տէ՛ր, ի՛նչ լաւ կ'ըլլայ որ հոս մնանք. եթէ կ'ուզես՝ երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար:

Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք. ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր.

- Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ. անոր մտիկ ըրէք:

Երբ աշակերտները լսեցին ասիկա, սարսափահար երեսի վրայ գետին ինկան:

Asor vûra Bedros zink meg goghm darav yev ûsgûsav hagaragelov vijil,

-Kav litsi, Der, aytbisi pan togh chûbadahi kezi.

Hisoos Bedrosi tarnalov ûsav,

-Yedis kûna, Sadana, toon arkelk yes indzi, vorovhedev Asdoodzo dzûrakirû che vor gû khorhis, ayl martots mûdahokootyoonû gardahaydes.

Aba Hisoos ir ashagerdneroon ûsav,

-Yete megû ooze indzi hedevil togh oorana ir antsû, arne ir khachû yev yedeves ka. Vorovhedev ov vor ooze ir gyankû pûrgel bidi gorsûntsûne zayn, yev ov vor indzi hamar gorsûntsûne ir gyankû bidi kûdne zayn. Inch okood, yete mart ampoghch ashkharhû shahi, payts ir gyankû gorsûntsûne? vorovhedev inch pûrgakin bidi da ir gyankû yed arneloo hamar? Artarev, Martoo Vortin bidi ka ir Hor parkov՝ ir hûreshdagneroon hed, yev ayn aden ourakanchyoorin ir kordzeroon hamatsayn hadootsoom bidi gadare. Vûsdah yeghek, vor hos kûdnûvoghneren vomank bidi chûmernin՝ minchev desnen Martoo Vortin vor gooka ir takavorootyamp.

Vets or yedk, Hisoos ir hed arav Bedrosû, Hagopos yev Hovhannes yeghpayrnerû yev zanonk partsûr ler mû hanets, oor arantsin eyin. Hon aylagerbetsav anonts timats, ir temkû arevoo nûman loosavor tartsav yev hakoosdnerû looyisi nûman jermag yeghan.

Yev aha yerevtsan Movsesûn oo Yeghyan, voronk gû khoseyin Hisoosi hed. Bedros ûsav Hisoosi,

-Der, inch lav gûlla vor hos mûnank, yete goozes yrek vûranner shinenk, megû kezi, megû Movsesi yev myoosû Yeghyayi hamar. Minch Bedros gû khoser, aha loosavor amb mû dzadzgets zirenk,

ambin mechen tsayn mû lûsvetsav, vor gûser,

-Ays e im sireli Vortis, voroon yes hajetsa, anor mûdig ûrek. Yerp ashagerdnerû lûsetsin asiga, sarsapahar yeresi vûra kedin ingan.

Յիսուս մօտենալով՝ դպաւ անոնց եւ ըսաւ.

- Ոտքի՛ ելէք, մի՛ վախնաք:

Աշակերտները իրենց աչքերը վեր բարձրացուցին եւ Յիսուսէ զատ մարդ չտեսան: Եւ մինչ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց, ըսելով.

- Մինչեւ որ Մարդու Որդին մեռելներէն յարութիւն չառնէ, ձեր տեսածը ոեւէ մէկուն մի՛ պատմէք:

Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի.

- Հապա ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն թէ նախ Եղիան պէտք է գայ:

Յիսուս պատասխանեց.

- Ճիշդ է, Եղիան նախ գալով՝ պիտի պատրաստէ ամեն ինչ. բայց գիտցէք որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն մարդիկ զայն չճանչցան եւ անոր հետ վարուեցան ինչպէս որ ուզեցին: Նոյնպէս ալ Մարդու Որդին պիտի չարչարուի անոնց կողմէ:

Այն ատեն աշակերտները հասկցան թէ Յովհաննէս Մկրտիչի մասին կը խօսէր ան:

Մեռելոց Վարդապետի

**Յովհաննէս Առաքեալի Ընդհանրական
Առաջին Նամակէն (5:9-12)**

Եթէ մարդոց վկայութիւնը կ'ընդունինք, ինչպէս չընդունինք Աստուծոյ վկայութիւնը, որ աւելի մեծ է. իսկ Աստուծոյ վկայութիւնը՝ իր Որդիին համար տուած վկայութիւնն է: Ով որ Աստուծոյ Որդիին կը հաւատայ՝ իր մէջ ունի

այս վկայութիւնը. իսկ ով որ չի հաւատար՝ ստախօս կը հանէ զԱստուած, որովհետեւ չի հաւատար այն վկայութեան, որ Աստուած իր Որդիին համար կու տայ: Իսկ տրուած վկայութիւնը սա է, թէ Աստուած յաւիտենական կեանք տուաւ մեզի, եւ այդ կեանքին աղբիւրը Որդին ինքն է: Հետեւաբար, ով որ Աստուծոյ Որդին իր մէջ ընդունած է՝ այդ կեանքը ունի. իսկ ով որ չունի Որդին՝ յաւիտենական կեանք ալ չունի:

**Hisoos modenalov tûbav anonts yev ûsav, -
Vodki yelek, mi vakhnak.**

Ashagerdnerû irents achkerû ver partsratsootsin yev Hisoose zad mart chûdesan.

Yev minch lernen var gichneyin, Hisoos badvirets anonts ûselov,

-Minchev vor Martoo Vortin merelneren harootyoon charne, tser desadzû voyeve megoon mi badmek. Ayn aden ashagerdnerû hartsootsin Hisoosi,

-Haba inchoo Orenki oosoosichnerû gûsen te nakh Yeghyan bedk e ka?

Hisoos badaskhanets,

-Jisht e, Yeghyan nakh kalov bidi badrasde amen inch, payts kidtsek vor Yeghyan arten isg yegadz e, sagayn martig zayn chûjanchtsan yev anor hed varvetsan inchbes vor oozetsin. Nooynbes al Martoo Vortin bidi charcharvi anonts goghme.

Ayn aden ashagerdnerû hasgûtsan te Hovhannes Mûgûrdichi masin gû khoser an.

Merelots Vartavari

**Hovhannes Arakyali Ūnthanragan
Arachin Namagen (5:9-12)**

Yete martots vûgayootyoonû gûntoonink, inchbes chûntoonink Asdoodzo vûgayootyoonû? vor aveli medz e, isg Asdoodzo vûgayootyoonû ir Vortiyin hamar dûvadz vûgayootyoonûn e. Ov vor Asdoodzo Vortiyin gû havada ir mech ooni ays

vûgayootyoonû, isg ov vor chi havadar` sûdakhos gû hane zAsdvadz, vorovhedev chi havadar ayn vûgayootyan, vor Asdvadz ir Vortiyin hamar gooda. Isg dûrvadz vûgayootyoonû sa e, te Asdvadz havidenagan gyank dûvav mezi, yev ayt gyankin aghpyoorû Vortin inkûn e. Hedevapar, ov vor Asdoodzo Vortin ir mech ûntoonadz e ayt gyankû ooni, isg ov vor chooni Vortin havidenagan gyank al chooni.

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (1:1-17)***

Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Բանը: Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց. առանց անոր ո՛չ մէկ բան ստեղծեց: Կեանքը անով սկիզբ առաւ: Եւ կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ խաւարին մէջ կը փայլի. բայց խաւարը չկրցաւ հասկնալ զայն:

Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ դրկուած մարդ մըն էր, եկաւ Լոյսին համար վկայութիւն տալու, որպէսզի ամէն մարդ անոր միջոցաւ հաւատայ:

Ինք Լոյսը չէր, այլ՝ Լոյսին համար վկայ մը: Բանն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով՝ կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը: Աշխարհի մէջ էր անիկա, աշխարհը իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զինք չճանչցաւ: Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց իր իսկ ստեղծած մարդիկը զինք չընդունեցին: Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմինի կամ մարդկային կամքով, այլ Աստուծմէ ծնելով:

Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն:

Յովհաննէս անոր մասին վկայեց, յայտարարելով.

- Ասիկա է ան՝ որուն մասին կ'ըսէի. «Ան որ ինձմէ ետք պիտի գայ՝ ինձմէ մեծ է, որովհետեւ ինձմէ առաջ գոյութիւն ունէր»:

Անոր լիառատ շնորհքէն է որ մենք բոլորս շնորհքի վրայ շնորհք ստացանք. որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

***Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (1:1-17)***

Ashkharhi ūsdeghdzakordzootenen arach koyootyoon ooner Panû. Panû Asdoodzo hed er yev Panû Asdvadz er. Aniga ūsgizpen Asdoodzo hed er. Anov er vor Asdvadz amen inch ūsdeghdzets, arants anor voch meg pan ūsdeghdzets. Gyankû anov ūsgizp arav. Yev gyankû martots hamar looysûn e՝ vor khavarin mech gû payli, payts khavarû chûgûrtsav hasgûnal zayn.

Hovhannes, vor Asdoodzo goghme ghûrgûvadz mart mûn er, yegav Loosin hamar vûgayootyoon daloo, vorbeszi amen mart anor michotsav havada. Ink Loosû cher, ayl՝ Loosin hamar vûga mû. Panûn er jûshmarid Loosû, vor ashkharh kalov՝ gû loosavore ampoghch martgootyoonû. Ashkharhi mech er aniga, ashkharhû irmov ūsdeghdzûvetsav, sagayn ashkharhû zink chûjanchtsav. Ir isg ūsdeghdzadz ashkharhû yegav, payts ir isg ūsdeghdzadz martigû zink chûntoonetsin. Isg zink ûntoonoghneroon yev iren havadatsoghneroon ishkhanootyoon dûvav Asdoodzo vortiner ūllaloo, voch aryan jampov yev voch marmini gam martgayin gamkov, ayl՝ Asdoodzme dzûnelov.

Yev Panû mart yeghav yev mer michev pûnagetsav, yev menk desank anor parkû, parkû Miyadzinin, vor Hormen yegav՝ shûnorkov yev jûshmardootyamp letsoon.

Hovhannes anor masin vûgayets,
haydararelov,

-Asiga e an, voroon masin gûseyi, “An vor
indzme yedk bidi ka intsme medz e,
vorovhedev intsme arach koyootyoon
ooner”.

Anor liyarad shûnorhken e vor menk polorûs
shûnorhki vûra shûnorhk ûsdatsank,
vorovhedev Orenkû Movsesi michotsav
dûrvetsav, minch shûnorhkûn oo
jûshmardootyoonû Hisoos Krisdosi
michotsav.

Վարդապետէն Ետք Առաջին Կիրակի

Պօղոս Առաքելի Կողմէ

*Կորնթացիներուն Գրուած Առաջին Նամակէն
(1:25-30)*

Արդարեւ, Աստուծոյ տնօրինութիւնը, որ
Յոյներ յիմարութիւն կ'որակեն, իմաստնագոյն
է քան մարդկային ռեւէ իմաստութիւն. եւ
Աստուծոյ խաչը, որ Հրեաներ տկարութիւն կը
համարեն, աւելի զօրեղ է քան մարդկային
ամէն զօրութիւն:

Եղբայրնէ՛ր, դուք ձեզմէ դատեցէք. ի՛նչ էիք երբ
Աստուած ձեզ կանչեց: Ձեզմէ քանի՞ն
իմաստուն, հօգր կամ ազնուատոհմ էին
մարդկային չափանիշներով: Բայց Աստուած
ընտրեց այն՝ ինչ որ այս աշխարհը յիմար կը
սեպէ, անով իմաստունները ամօթով ձգելու
համար. ընտրեց այն՝ ինչ որ այս աշխարհը
տկար կը համարէ, անով հօգրները ամչցնելու
համար. եւ ընտրեց այն՝ ինչ որ այս աշխարհը
անարժէք, արհամարհելի եւ ոչնչութիւն կը
նկատէ, անով ոչնչացնելու համար այս
աշխարհի մեծութիւնները: Եւ ասիկա՝
որպէսզի ռեւէ մարդ չպարծենայ Աստուծոյ
առջեւ, որովհետեւ Աստուած ի՛նքն էր որ ձեզ
բերաւ Քրիստոսի միացուց, եւ մենք
Քրիստոսով ճանչցանք Աստուծոյ իմաստ-
ութիւնը եւ գտանք մեր արդարութիւնը, սրբու-
թիւնը եւ փրկութիւնը:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ

Մատթէոսի (18:10-14)

Ձգո՛ւ յշ, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն
մէկը. գիտցէք, որ անոնց հրեշտակները
երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր
Հայրս: Որովհետեւ Մարդու Որդին եկաւ
կորսուածը փրկելու համար:

Ի՞նչ կը կարծէք. եթէ մարդ մը իր հարիւր
ոչխարներէն մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր
իննսունիւր ոչխարները լերան վրայ եւ
չ'է՞րթար փնտռելու կորսուած ոչխարը:

Vartavaren Yedk Arachin Giragi

Boghos Arakyali Goghme

Gorûntatsineroon Kûrvadz Arachin

Namagen (1:25-30)

Artarev, Asdoodzo dûnorinootyoonû, vor
Hooyner himarootyoon goragen,
imasdnakooyin e kan martgayin voyeve
imasdootyoon, yev Asdoodzo khachû, vor
Hûryaner dûgarootyoon gû hamaren, aveli
zoregh e kan martgayin amen zoroootyoon.

Yeghpayrner, took tsezme tadetsek, inch eyik
yerp Asdvadz tsez ganchets. Tsezme kanin
imasdoon, hûzor gam aznûvadohm eyin
martgayin chapanishnerov? Payts Asdvadz
ûndrets ayn inch vor ays ashkharhû himar gû
sebe, anov imasdoonnerû amotov tsûkeloo
hamar ûndrets ayn inch vor ashkharhû dûgar
gû hamare, anov hûzornerû amûchtsûneloo
hamar, yev ûndrets ayn inch vor ays
ashkharhû anarzhek, arhamarheli yev
vochûnchootyoon gû nûgade, anov
vochûnchatsûneloo hamar ays ashkharhi
medzootyoonnerû. Yev asiga՝ vorbeszi
voyeve mart chûbardzena Asdoodzo archev,
vorovhedev Asdvadz inkûn er vor tsez perav
Krisdosi miyatsoots, yev menk Krisdosov
janchtsank Adoodzo imasdootyoonû yev
kûdank mer artarootyoonû, sûrpootyoonû
yev pûrgootyoonû.

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Madteyosi (18:10-14)**

Ūzkoosh, mi arhamarhek ays pokrigheren
megû, kidtsek vor anonts hûreshdagnerû
yerginki mech mishd gû desnem im
yergnavor Hayrûs. Vorovhedev Martoo
Vortin yegav

gorsûvadzû pûrgeloo hamar.

Inch gû gardzek? yete mart mû ir haryoor
vochkharneren megû gorsûntsûne, chi tsûker
inisooininû vochkharnerû leran vûra yev
chertar pûndûreloo gorsûvadz vochkharû?

Եւ եթէ պատահի որ գտնէ, վստահ եղէք որ
աւելի՛ կ'ուրախանայ այդ ոչխարին համար,
քան թէ իննսունինը ոչխարներուն համար,
որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ
երկինքի մէջ է, չ'ուզեր որ այս փոքրիկներէն
մէկը կորսուի:

*Վարդապետէն Ետք Երկրորդ Կիրակի
Պօղոս Առաքեալի Կողմէ
Կորնթացիներուն Գրուած Առաջին Նամակէն
(6:15-7:11)*

Չէ՞ք գիտեր թէ ձեր մարմինները Քրիստոսի
անդամներն են:

Քրիստոսի անդամները առնենք պոռնիկի
անդամ դարձնենք: Բնա՛ւ երբեք: Չէ՞ որ գիտէք
թէ պոռնիկին միացողը անոր հետ մէկ մարմին
կը կազմէ, որովհետեւ գրուած է. «*Երկուքը մէկ
մարմին պիտի ըլլան*»: Նոյնպէս ալ, ով որ
Տիրոջ միանայ՝ անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ:
Հետեւաբար պոռնկութենէ հեռո՛ւ փախէք:
Բոլոր միւս մեղքերը որ մարդ կը գործէ, իր
մարմինին հետ կապ չունին. բայց
պոռնկութիւն ընողը իր մարմինին դէմ կը
մեղանչէ: Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները
տաճարն են Սուրբ Հոգիին որ Աստուծմէ առիք
եւ ձեր մէջ կը բնակի: Գիտցէք որ դուք չէ՞ք ձեր
անձերուն տէրը, այլ Աստուած՝ որ փրկագինով
ձեզ գնեց: Հետեւաբար այնպէս ապրեցէք՝ որ
Աստուած փառաւորուի ձեր մարմիններով:

Ձեր նամակին մէջ ինծի գրած էիք նաեւ այն
մասին, թէ մարդ լաւ կ'ընէ՝ եթէ բնաւ
չամուսնանայ: Բայց որպէսզի պոռնկութեան
մէջ չիյնաք՝ ամէն մարդ թող իր կինը ունենայ
եւ ամէն կին՝ իր ամուսինը, որպէսզի կնոջ
պէտքերը այրը գոհացնէ եւ ամուսինին
պէտքերը՝ կինը: Որովհետեւ կինը իր
մարմինին տէրը չէ, այլ ամուսինը. ո՛չ ալ այրը
իր մարմինին տէրն է, այլ՝ կինը: Երկար ատեն
հեռու մի՛ մնաք իրարմէ: Եթէ կ'ուզէք աղօթքի
նուիրուիլ, կրնաք փոխադարձ համաձայն-
ութեամբ ժամանակ մը իրարմէ հեռու մնալ.
բայց յետոյ վերադարձէ՛ք ձեր կենակցութեան,

Yev yete badahi vor kûdne, vûsdah yeghek
vor aveli goorakhana ayt vochkharin hamar,
kan te inisooininû vochkharneroon hamar,
voronk gorsûvadz chen. Nûmanabes al
Hayrûs, vor yerginki mech e, chooser vor ays
pokrigheren megû gorsûvi.

*Vartavaren Yedk Yergrort Giragi
Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Arachin
Namagen (6:15-7:11)*

Chek kider te tser marminnerû Krisdosi
antamnerûn yen?

Krisdosi antamnerû arnenk bornigi antam
tartsûnenk? Pûnav yerpek. Che vor kidek te
bornigin miyatsoghû anor hed meg marmin
gû gazme, vorovhedev kûrvadz e, “Yergookû
meg marmin bidi ûllan”. Nooynbes al, ov vor
Diroch miyana anor hed meg hoki gûlla.
Hedevapar bornûgootene heroo pakhek.
Polor myoos meghkerû vor mart gû kordze,
ir marminin hed gab chooni, payts
bornûgootyoon ûnoghû ir marminin tem gû
meghanche. Chek kider vor tser marminnerû
dajarûn yen Soorp Hokiya vor Asdoodzme
arik yev tser mech gû pûnagi? Kidtsek vor
took chek tser antseroon derû, ayl Asdvadz՝
vor pûrgakinov tsez kûnets. Hedevapar
aynbes abretsek՝ vor Asdvadz paravorvi tser
marminnerov.

Tser namagin mech indzi kûradz eyik nayeve ayn masin, te mart lav gûne yete pûnav chamoosnana. Payts vorbeszi bornûgootyan mech chinak amen mart togh ir ginû oonena yev amen gin`ir amoosinû, vorbeszi gûnoch bedkerû ayrû kohatsûne yev amoosinin bedkerû ginû. Vorovhedev ginû ir marminin derû che, ayl amoosinû, voch al ayrû ir marminin derûn e, ayl`ginû. Yergar aden heroo mi mûnak irarme. Yete goozek aghotki nûvirvil, gûrnak pokhatarts hamatsayn-ootyamp zhamanag mû irarme heroo mûnal, payts hedo veratartsek tser genagtsootyany, որպէսզի չըլլայ որ Սատանան ձեզ փորձութեան մղէ՝ ձեր անժուժկալութենէն օգտուելով: Հրահանգ մը չէ այս տուածս, այլ պարզապէս ներողամիտ կեցուածք: Որովհետեւ ես պիտի ուզէի որ ամէն մարդ ինծի պէս ապրէր, բայց Աստուած իւրաքանչիւրին իրեն յատուկ շնորհք մը տուած է. մէկուն՝ այսպէս ապրելու շնորհք, միւսին՝ այնպէս:

Սակայն ամուրիներուն եւ այրիներուն կ'ըսեմ.- Աւելի լաւ կ'ընեն՝ եթէ ինծի պէս մնան. բայց եթէ չեն կրնար տոկալ՝ թող ամուսնանան, որովհետեւ նախընտրելի է ամուսնանալ քան ցանկութեամբ եռալ: Իսկ ամուսնացած զոյգերուն հետեւեալ պատուերը կու տամ, ո՛չ թէ ես, այլ Տէրը.- Ոեւէ կին իր ամուսինէն թող չբաժնուի. իսկ եթէ բաժնուի, կա՛մ առանց ամուսնութեան թող ապրի եւ կամ դարձեալ հաշտուի իր ամուսինին հետ: Նոյնպէս, ոեւէ այր իր կինը թող չձգէ:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մատթէոսի (19:3-12)***

Փարիսեցիներ Յիսուսը փորձելու մտադրութեամբ մօտեցան անոր եւ հարցունցին.

- Մեր Օրէնքով մէկը իրաւունք ունի՞ ոեւէ պատճառով իր կինը արձակելու:

Յիսուս անոնց պատասխանեց.

- Չէ՞ք կարդացած Սուրբ գիրքերուն մէջ, թէ Աստուած սկիզբէն «*արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ քսաւ անոնց. “Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան”*»: Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուրեմն ոեւէ մէկը թող չբաժնէ անոնք՝ որ Աստուած միացուց:

Փարիսեցիները դարձեալ հարցունցին.

- Հապա ինչո՞ւ Մովսէս օրէնք սահմանեց՝ բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել զայն:

Յիսուս պատասխանեց.

vorbeszi chûlla vor Sadanan tsez portsootyany mûghe tser anzhoozhgalootenen okdûvelov. Hûrahank mû che ays dûvadzûs, ayl barzabes neroghamid getsvadzk. Vorovhedev yes bidi oozeyi amen mart indzi bes abrer, payts Asdvadz ourakanchyoorin iren hadoog shûnorhk mû dûvadz e, megoon` aysbes abreloo shûnorhk, mousin` aynbes.

Sagayn amoorineroon yev ayrineroon gûsem,- Aveli lav gûnen yete indzi bes mûnan, payts yete chen gûrnar dogal togh amoosnanan, vorovhedev nakhûndreli e amoosnanal kan tsangootyamp yeral. Isg amoosnatsadz zooykeroon hedevyal badverû goodam, voch te yes, ayl Derû,- Voyeve gin ir amoosinen togh chûpazhnûvi, isg yete pazhnûvi, gam arants amoosnootyany togh abri yev gam tarsyal hashdûvi ir amoosinin hed. Nooynbes, voyeve ayr ir ginû togh chûtsûke.

***Hisoos Krisdosi Avedaranen Âsd
Madteyosi (19:3-12)***

Parisetsiner Hisoosû portseloo mûdatrootyamp modetsan anor yev hartsootsin,

-Mer Orenkov megû iravoonk ooni voyeve badjarov ir ginû artsageloo?

Hisoos anonts badaskhanets,

-Chek gartatsadz Soorp kirkeroon mech, te Asdvadz ûsgizpen “aroo yev ek ûsdeghdzets martigû yev ûsav anonts, Ays badjarov ayrû bidi tsûke ir hayrûn oo mayrû yev ir gûnoch miyana, yev yergookû meg marmin bidi ûllan”.

Hedevapar aylevs yergoo chen, ayl meg marmin. Ooremn voyeve megû togh chûpazhne anonk vor Asdvadz miyatsoots.

Parisetsinerû tartsyal hartsootsin,

-Haba inchoo Movses orenk sahmanets pazhanman tooght dal gûnoch yev artsagel zayn?

Hisoos badaskhanets,

- Մովսէս ձեր խստասրտութեան պատճառով արտօնեց արձակել ձեր կիները, սակայն ստեղծագործութեան ժամանակ արձակելու խօսք չկար: Գիտցէք նաեւ, թէ ո՛վ որ իր կինը կ'արձակէ առանց պոռնկութեան պատճառի եւ ուրիշ մը կ'առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ, եւ ով որ արձակուած կինը կ'առնէ՝ ան ալ շնութիւն ըրած կ'ըլլայ:

Աշակերտները ըսին Յիսուսի.

- Եթէ ամուսնութիւնը այդպէս դատապարտութեան պատճառ կրնայ ըլլալ այր մարդուն եւ կնոջ համար, աւելի լաւ է չամուսնանալ:

Յիսուս ըսաւ.

- Բայց ամէն մարդ չի կրնար առանց ամուսնութեան մնալ, այլ միայն անոնք՝ որոնց Աստուած կարողութիւն տուած է: Որովհետեւ մարդիկ չեն ամուսնանար ա՛յն պարագաներուն, երբ ծնունդով ներքինի են, կամ՝ մարդոց կողմէ ներքինի եղած են եւ կամ՝ իրենք զիրենք ներքինի դարձուցած են երկինքի արքայութեան համար: Ով որ կրնայ ընդունիլ իմ հաստատումս, թող կատարէ զայն:

Վարդապետէն Ետք Երկրորդ Կիրակի

Պողոս Առաքեալի Կողմէ

Տիմոթէոսի Գրուած Առաջին Նամակէն

(1:1-11)

Ես՝ Պողոս, որ Քրիստոս Յիսուսի առաքեալն եմ՝ մեր փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի հրամանով, քեզի՝ կը գրեմ,

հաւատքի հարազատ որդիս, Տիմոթէոս: Թող Հայրն Աստուած եւ մեր Տէրը Քրիստոս Յիսուս՝ շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Երբ Մակեդոնիա կ'երթայի, խնդրեցի որ Եփեսոս մնաս եւ խօսիս քանի մը հոգիներու, որպէսզի դադրին օտար վարդապետութիւններ ուսուցանել եւ չգրադին սկիզբ ու վերջ չունեցող առասպելներով եւ ազգահամարներով, որոնք վէճերու դուռ կը բանան, փոխանակ օգնելու մարդոց հաւատքին եւ Աստուծոյ ծրագրին իրականացման: Գերագոյն պատուիրանը սերն է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէն բխած սերը:

-Movses tser khûsdasûrootyan badjarov ardonets artsagel tser ginerû, sagayn ûsdeghdzakordzootyan zhamanag artsageloo khosk chûgar. Kidtssek nayeve, te ov vor ir ginû gartsage arants bornûgootyan badjari yev oorish mû garne՝ shûnootyoon ûradz gûlla, yev ov vor artsagvadz ginû garne an al shûnootyoon ûradz gûlla.

Ashagerdnerû ûsin Hisoosi,

-Yete amosnootyoonû aytbes tadabardootyan badjar gûrna ûllal ayr martoon yev gûnoch hamar, aveli lav e chamosnanal.

Hisoos ûsav,

-Payts amen mart chi gûrnar arants amosnootyan mûnal, ayl miyayn anonk՝ voronts Asdvadz garoghootyoon dûvadz e. Vorovhedev martig chen amosnunar ayn barakaneroon, yerp dzûnoontov nerkini yen, gam martots goghme nerkini yeghadz yen yev gam irenk zirenk nerkini tartsootsadz yen yerginki arkayootyan hamar. Ov vor gûrna ûntoonil im hasdadoomûs, togh gadare zayn.

Vartavaren Yedk Yerrorrt Giragi

Boghos Arakyali Goghme Dimoteyosi

Kûrvadz Arachin Namagen (1:1-11)

Yes Boghos, vor Krisdos Hisoosi arakyalûn yem mer pûrgich Asdoodzo yev mer hoosyû yeghogh Krisdos Hisoosi hûramanov, kezi gû

kûrem, havadki harazad vortis, Dimoteyos. Togh Hayrn Asdvadz yev mer Derû Krisdos Hisoos shûnorhk, voghormootyoon yev khaghaghootyoon barkeven kezi.

Yerp Magetonya gertayi, khûntretsi vor Yepesos mûnas yev khosis kani me hokineroo, vorbeszi tatrin odar vartabed-oootyoonner oosootsanele yev chûzpaghin ûsgizp oo verch choonetsogh arasbelnerov yev azkahamarnerov, voronk vejeroo toor gû panan, pokhanag okneloo martots havadkin yev Asdoodzo dzûrakin iraganatsman. Kerakooyñ badviranû sern e, anarad sûrde, makoor khûghjîmûdanke yev angeghdz havadken pûkhadz serû.

Շատեր այս պատուերները մոռցած, դատարկ վիճաբանութեանց մէջ մտնելով՝ մեզի Օրէնք սորվեցնելու ելեր են, մինչդեռ ո՛չ իրենց խօսածը գիտեն, ո՛չ ալ Աստուծոյ Օրէնքը, որուն մասին այնքան վստահութեամբ կը ճառեն:

Գիտենք թէ Օրէնքը լաւ է՝ երբ պէտք եղած ձեւով գործադրուի: Սակայն գիտենք նաեւ, թէ Օրէնքը արդարներուն համար դրուած չէ, այլ՝ անօրէններուն եւ անհնազանդներուն, ամբարիշտներուն ու մեղաւորներուն, սրբութիւնները ոտնակոխ ընողներուն ու պիղծերուն, հայր ու մայր անարգողներուն, մարդասպաններուն, պոռնկութիւն ընողներուն, արուագէտներուն, մարդ առեւանգողներուն, ստախօսներուն, սուտ երդում ընողներուն, եւ բոլոր այն արարքներուն համար, որոնք հակառակ են իմ փոխանցած առողջ ուսուցումներուս. պատուերներու, որոնք համաձայն են երանելի Աստուծոյ փառքը պատմող Աւետարանին, որ եւ հաւատարմօրէն քարոզեցի:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Յովհաննէսի (2:1-11)***

Յիսուսի Գալիլէա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանա քաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր

աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին: Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ.

- Գինի չունիմ:

- Մա՛յր, մեզի ի՛նչ,- պատասխանեց Յիսուս,- իմ ժամանակս տակաւին չէ՛ հասած:

Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն.

- Ինչ որ ըսէ ձեզի՝ կատարեցէ՛ք:

Հրեաներու ծիսական մաքրութեան սովորութեան համաձայն, հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիթր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն.

- Կարասները ջուրով լեցուցէք:

Shader ays badvernerû mortsadz, tadarg vijapanootyants mech mûdnelov mezi Orenk sorvetsûneloo yeler yen, minchter voch irents khosadzû kiden, voch al Asdoodzo Orenkû, voroon masin aynkan vûsdahootyamp gû jaren.

Kidenk te Orenkû lav e՝ yerp bedk yeghadz tsevov kordzatrûvi. Sagayn kidenk nayeve, te Orenkû artarneroon hamar tûrvadz che, ayl՝ anorenneroon yev anhûnazantneroon, amparishdneroon oo meghavorneroon, sûrpootyoonnerû vodnagokh ûnoghneroon oo bighdzeroon, hayr oo mayr anarkoghneroon, martasbanneroon, bornûgootyoon ûnoghneroon, arvakedneroon, mart arevankoghneroon, sûdakhosneroon, sood yertoomb ûnoghneroon, yev polor ayn ararkneroon hamar, voronk hagarag yen im pokhantsadz aroghch oosootsoomnerooos, badvernerooos, voronk hamatsayn yen yeraneli Asdoodzo parkû badmogh Avedaranin, vor yes havadarmoren karojetsi.

***Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (2:1-11)***

Hisoosi Kalilya hasneloon yerrort orû harsanik mû gar Gana kaghakin mech, yev Hisoosi mayrû hone er. Hisoos yev ir

ashagerdnerûn al hûravirvadz eyin
harsanikin. Yerp kinin
bagsetsav, Hisoosi mayrû iren ûsav,
-Kini choonin.

-Mayr, mezi inch,- badaskhanets Hisoos,- im
zhamanagûs dagavin che hasadz.

Sagayn ir mayrû ûsav ûsbasavorneroon,

-Inch vor ûse tsezi gadaretsek.

Hûryaneroo dzisagan makrootyan
sovorootyan hamatsayn, hon kare vets
garasner gayin, vorontsme ourakanchyoorû
ootsoonen haryoor litûr garner. Hisoos ûsav
ûsbasavorneroon,

-Garasnerû choorov letsootsek.

Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան:
Յետոյ ըսաւ անոնց.

- Հիմա առէք եւ սեղանապետին տարէք:

Անոնք ալ տարին: Սեղանապետը համտեսեց
գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ թէ ուրկէ
էր. թէեւ սպասաւորները, որոնք ջուրը
լեցուցած էին, գիտէին: Այն ատեն
սեղանապետը փեսային ըսաւ.

- Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ,
իսկ երբ գինովման՝ այն ատեն հասարակը,
մինչ դուն ընտիր գինին պահէր եւ մինչեւ
հիմա:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց
Գալիլեայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր
փառքը յայտնեց, եւ աշակերտները
հաւատացին իրեն:

*Վարդապետէն Ետք Չորրորդ Կիրակի
Պօղոս Առաքեալի Կողմէ
Տիմոթէոսի Գրուած Առաջին Նամակէն
(4:12-5:10)*

Եւ որպէսզի ռեւէ մէկը քեզ չարհամարիէ՝
երիտասարդ ըլլալուդ համար, հաւատացեալ-
ներուդ օրինակ եղիր՝ խօսքովդ, վարմունքովդ,
սիրովդ, հաւատքովդ եւ մաքուր կենցաղովդ:
Մինչեւ զալս հոգ տար իրենց՝ Աստուծոյ
խօսքէն կարդալով, յորդորելով զիրենք եւ

ստրվեցնելով: Անփոյթ մի՛ գտնուիր այն
շնորհքին նկատմամբ, որ մարգարեական
հոգիով քեզի տրուեցաւ, երբ երեցները ձեռք
դրին քու վրայ: Այս ըսածներուս մասին խորիւ
եւ զանոնք գործի վերածելու աշխատէ,
որպէսզի ամէն մարդ յայտնապէս տեսնէ քու
յառաջդիմութիւնդ: Ուշադիր եղիր՝ թէ՛ դուն
քեզի եւ թէ՛ ստրվեցուցածիդ, եւ միշտ ալ
այդպէ՛ս մնա, գիտնալով որ այդ ձեւով ո՛չ
միայն ինքզինքդ կը փրկես, այլ նաեւ բոլոր քեզ
լսողները:

Երբեք խստութեամբ մի՛ յանդիմաներ ծեր
մէկը, այլ՝ մեղմութեամբ յորդորէ զայն, ինչպէս
հօրդ պիտի ընէիր:

Yev ûsbasavornerû letsootsin minchev peran.
Hedo ûsav anonts,

-Hima arek yev seghanabedin darek.

Anonk al darin. Seghanabedû hamdesets
kiniyi pokhavadz choorû, payts chûkidtsav te
oorge er, teyev ûsbasavornerû, voronk
choorû letsootsadz eyin, kideyin. Ayn aden
seghanabedû pesayin ûsav, -Amen mart nakh
ûndir kinin gû hûramtsûne, isg yerp kinovnan
ayn aden hasaragû, minch toon ûndir kinin
baher yes minchev hima.

Hisoos ir ays arachin hûrashkû gadarets
Kalilyayi Gana kaghakin mech. Hon an ir
parkû haydnets, yev ashagerdnerû havadatsin
iren.

Ays tebken yedk Hisoos ir morû,
yeghpayrneroon yev ashagerdneroon hed
Gaparnayoom kûnats yev kani mû or hon
mûnats.

Vartavaren Yedk Chorrort Giragi

**Boghos Arakyali Goghme Dimoteyosi
Kûrvadz Arachin Namagen (4:12-5:10)**

Yev vorbeszi voyeve megû kez charhamarhe,
yeridasart ûllaloot hamar, havadatsyalneroot
orinag yeghir՝ khoskovût, varmoonkovût,
sirovût, havadkovût yev makoor
gentsaghovût. Minchev kalûs hok dar irents
Asdoodzo khosken gartalov, hortorelov
zirenk yev sorvetsûnelov. Anpooyt mi

kûdnûvir ayn shûnorhkin nûgadmamp, vor markareyagan hokiyov kezi dûrvetsav, yerp yeretsnerû tserk tûrin koo vûrat. Ays ûsadzneroos masin khorhe yev zanonk kordzi veradzelo ashkhade, vorbeszi amen mart haydnabes desne koo harachtimootyoonût. Ooshatir yeghir te toon kezi yev te sorvetsootsadzit, yev mishd al aytbes mûna, kidnalov vor ayt tsevov voch miyayn inkzinkût gû pûrges, ayl nayev polor kez lûsoghnerû.

Yerpek khûsdootyamp mi hantimanager dzer megû, ayl meghmootyamp hortore zayn, inchbes horût bidi ûneyir.

Երիտասարդները եղբորդ տեղը սեպէ, պառաւները՝ մօրդ, իսկ երիտասարդուհիները քրոջդ տեղը դիր եւ ամենայն մաքրութեամբ մօտեցիր անոնց: Պատուէ եւ խնամէ ա՛յն այրիները՝ որոնք իսկապէս որբեւայրի են: Իսկ երբ այրի մը զաւակներ ու թոռներ ունի, պէտք է անո՛նք նային իրեն, որպէսզի սորվին բարեպաշտութիւնը նախ տան մէջ կիրարկել՝ ծնողներէն իրենց տրուած խնամքին փոխարէն հոգ տանելով անոնց, որովհետեւ Աստուծոյ համար ա՛յդ է իրաւ եւ ընդունելի բարեպաշտութիւնը: Իսկական այրին ան է՝ որ մէկը չունի, յոյսը միայն Աստուծոյ վրայ դրած է եւ գիշեր-ցերեկ աղօթքով ու խնդրանքով կ'անցընէ իր ժամանակը: Իսկ հանգստութիւն ու վայելք փնտռող այրին կենդանի մեռած մըն է արդէն: Այնպիսիներուն այս պատուէրները տուր, որպէսզի անարատ ըլլան: Իսկ մէկը՝ որ իրեններուն եւ մանաւանդ իր ընտանիքի անդամներուն հոգ չի տանիր, այնպիսին իր հաւատքը ուրացած մըն է, շատ աւելի գէշ՝ քան անհաւատ մը:

Այրի սեպէ միայն այն կիները՝ որոնք վաթսուներ անց են, մէկ անգամ ամուսնացած, եւ բարի գործերով վկայուած են, այսինքն՝ զաւակներ մեծցուցած, հիւրասէր եղած, ճամբորդ հաւատացեալներուն խոնարհաբար ծառայած, նեղութեան մէջ եղողներուն օգնած, եւ իրենք զիրենք ամբողջութեամբ բարեգործութեան տուած են:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ Յովհաննէսի ((3:13-21)

Ո՛չ որ երկինք ելաւ՝ բացի Մարդու Որդիէն, որ երկինքէն իջաւ, եւ որ երկինքի մէջ է: Եւ ինչպէս Մովսէս պոյնձէ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ:

Yeridasartnerû yeghport deghû sebe, baravnerû morût, isg yeridasarttoohinerû kûrochût deghû tir yev amenayn makrootyamp modetsir anonts. Badve yev khûname ayn ayrinerû voronk isgabes vorpevayri yen. Isg yerp ayri mû zavagner oo torner ooni, bedk e anonk nayin iren, vorbeszi sorvin parebashdootyoonû nakh dan mech girargel dzûnoghneren irents dûrvadz khûnamkin pokharen hok danelov anonts, vorovhedeved Asdoodzo hamar ayt e irav yev ûntooneli parebashdootyoonû. Isgagan ayrin an e vor megû chooni, hoosû miyayn Asdoodzo vûra tradz e yev kisher – tsereg aghotkov oo khûntrankov gantsûne ir zhamanagû. Isg hankûsdootyoon oo vayelk pûndrogh ayrin gentani meradz mûn e arten. Aynbisineroon ays badverû door, vorbeszi anarad ûllan. Isg megû vor ireninneroon yev manavant ir ûndaniki antamneroon hok chi danir, aynbisin ir havadkû ooratsadz mûn e, shad aveli kesh kan anhavad mû.

Ayri sebe miyayn ayn ginerû՝ voronk vatsoonû ants yen, meg ankam amosnatsadz, yev pari kordzerov vûgayvadz yen, aysinkûn zavagner medztsootsadz, hyooraser yeghadz, jamport havadats-yalneroon khonarhapar dzarayadz, neghootyan mech yeghoghneroon oknadz,

yev irenk zirenk ampoghchootyamp
parekordzootyan dûvadz yen.

Hisoos Krisdosi Avedaranen Üsd Hovhannesi (3:13-21)

Voch vok yergink yelav patsi Martoo
Vortiyen, vor yerginken ichav, yev vor
yerginki mech e. Yev inchbes Movses
bûghintse otsû partsratsoots anabadin mech,
nooynbesh al Martoo Vortin bedk e partsrana,
vorbeszi anor havadatsoghû havidenagan
gyank oonena. Vorovhedev Asdvadz aynkan
sirets ashkharhû, vor minchev isg ir miyadzin
Vortin dûvav, vorbeszi anor havadatsoghû

Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց
աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին
տուաւ, որպէսզի անոր հաւատացողը
չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ:
Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ
դրկեց՝ ո՛չ թէ որպէսզի աշխարհը դատա-
պարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ
կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ
ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատա-
պարտուած է, Աստուծոյ միածին Որդիին
չհաւատալուն համար:

- Եւ դատապարտութիւնը այս է.- Լոյսը
աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն
աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը
գործէին: Ով որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ
լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը
յայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ
ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի
ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին
համաձայն գործուած են:

*Վարդապետէն Ետք Հինգերորդ Կիրակի
Պօղոս Առաքեալի Կողմէ*

***Տիմոթէոսի Գրուած Երկրորդ Նամակէն
(2:15-19)***

Ջանա՛ Աստուծոյ աչքին ընտիր ըլլալ,
այնպիսի մշակ մը՝ որ իր գործերուն համար
ամենալիք բան մը չունի, որպէս մէկը՝ որ ուղիղ
կերպով կ'ուսուցանէ Աստուծոյ ճշմարիտ
պատգամը:

Հեռո՛ւ կեցիր հաւատքի ճշմարտութիւնները
խեղաթիրող պարապ վիճաբանութիւններէ,
որոնք հետզհետէ մարդիկը Աստուծմէ
հեռացնելու կը ծառայեն միայն: Այդպիսի
խօսքերու ձգած թոյնը քաղցկեղի պէս կը կրծէ
մարդս: Այդպիսի խեղաթիրող վիճասէրներ
էին Հիմենէոս եւ Ֆիլետոս, որոնք
ճշմարտութենէն շեղեցան եւ շատերու
հաւատքը քանդեցին, ըսելով՝ թէ մեռելներու
յարութիւնը արդէն տեղի ունեցած է: Բայց
Աստուծոյ դրած հաստատուն հիմը կանգուն
կը մնայ: Անոր վրայգրուած է. «Տէրը կը
ճանչնայ անոնք՝ որոնք իրն են», եւ «Ով որ
Տիրոջ անունը կը կրէ՝ թող հեռու մնայ անիրաւ
գործերէ»:

chûgorsûvi, ayl havidenagan gyank oonena.
Vorovhedev Asdvadz ir Vortin ashkharh
ghûrgets voch te vorbeszi ashkharhû
tadabarde, ayl vorbeszi ashkharhû pûrge. Ov
vor gû havada anor chi tadabardûvir, isg ov
vor chi havadar anor arten isg tadabardûvadz
e, Asdoodzo miyadzin Vortiyin
chûhavadaloon hamar.

-Yev tadabardootyoonû ays e,- Loosyû
ashkharh yegav, payts martig khavarû
loosyen aveli siretsin, vorovhedev
charootyoon gû kordzeyin. Ov vor char kordz
gû gadare gade loosyû yev loosin chi kar,
vorbeszi ir kordzerû chûhaydnûvin. Sagayn
ov vor gû gadare inch vor jûshmarid e՝
loosin gooka, vorbeszi haydni ûlla te ir
kordzerû Asdoodzo gamkin hamatsayn
kordzûvadz yen.

Vartavaren Yedk Hinkerort Giragi

**Boghos Arakyali Goghme Dimoteyosi
Kûrvadz Yergrort Namagen (2:15-19)**

Chana Asdoodzo achkin ûndir ûllal, aynbisi
mûshag mû vor ir kordzeroon hamar
amûchnalik pan mû chooni, vorbes megû vor
ooghig gerbov goosootsane Asdoodzo
jûshmarid badkamû.

Heroo getsir havadki jûshmardootyoonnerû kheghatyoorogh barab vijapanootyoonere, voronk hedûzhede martigû Asdoodzme heratsûneloo gû dzarayen miyayn. Aytbisi khoskeroo tsûkadz toohnû kaghtskeghi bes gû gûrdze martûs. Aytbisi kheghatyoorogh vijaserne eyin Himeneyos yev Filedos, voronk jûshmardootenen sheghetsan yev shaderoo havadkû kantetsin, ûselov te merelneroo harootyoonû arten degghi oonetsadz e. Payts Asdoodzo tûradz hasdadoon himû gankoon gû mûna. Anor vûra kûrvadz e, “Derû gû janchna anonk voronk irûn yen”, yev “Ov vor Diroch anoonû gû gûre togh heroo mûna anirav kordzere”.

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Յովհաննէսի (6:39-47)**

Զիս դրկող Հօրս կամքն է, որ չկորսնցնեմ ո՛չ իսկ մէկը բոլոր անոնցմէ՝ որ ինծի տուաւ, այլ յարուցանեմ զայն վերջին օրը: Հօրս կամքը հետեւեալն է.- Ով որ տեսնէ Որդին եւ հաւատայ անոր՝ յաւիտենական կեանք պիտի ունենայ, եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը:

Հրեաները սկսան տրտնջալ իրեն դէմ, որովհետեւ ըսած էր՝ թէ «Ես եմ երկինքէն իջած հացը», եւ կը հարցնէին.

- Այս մարդը Յովսէփի որդին՝ Յիսուսը չէ՞, որուն հայրն ու մայրը կը ճանչնանք. ինչպէ՞ս ուրեմն կ'ըսէ՝ «Ես երկինքէն իջայ»:

Յիսուս անոնց պատասխանեց.

- Կը բաւէ՞ դուք ձեզի քրթմնջէք: Ոեւէ մէկը չի կրնար ինծի գալ՝ եթէ զիս դրկող Հայրը զայն ինծի չբերէ. եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը: Մարգարէութիւններուն մէջ գրուած է. «Ամէն մարդ Աստուծմէ ստրված պիտի ըլլայ»: Ով որ Հօրմէս կը լսէ եւ իրմէ կը ստրվի՝ ինծի կու գայ: Ոչ ոք Հայրը տեսած է, բացի անկէ՝ որ Աստուծմէ է, որովհետեւ միայն անիկա տեսած է Հայրը: Ու ես կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ինծի հաւատայ յաւիտենական կեանք ունի:

Բարեկենդան Ս. Աստուածածնի Վերափոխման

Պօղոս Առաքեալի Կողմէ

**Կորնթացիներուն Գրուած Առաջին Նամակէն
(13:11-14:5)**

Երբ երեխայ էի՝ երեխայի պէս կը խօսէի, երեխայի պէս կը խորհէի եւ երեխայի պէս կը տրամաբանէի. իսկ երբ տղամարդ դարձայ, բոլոր երեխայական բաները մէկ կողմ դրի: Նոյնպէս ալ, մենք այժմ զԱստուած կը տեսնենք աղօտ կերպով, կարծես հայելիի մը մէջէն. բայց երբ ամէն բանի կատարումը գայ՝ զայն պիտի տեսնենք դէմ առ դէմ: Այժմ միայն մասնակիօրէն կը ճանչնամ զԱստուած, բայց այն ատեն պիտի ճանչնամ ամբողջապէս, ճիշդ ինչպէս ի՛նք զիս կը ճանչնայ:

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Hovhannesi (6:39-47)**

Zis ghûrgogh Horûs gamkûn e, vor chûgorsûntsnem voch isg megû polor anontsme vor indzi dûvav, ayl harootsanem zayn verchin orû. Horûs gamkû hedevyalûn e, - Ov vor desne Vortin yev havada anor՝ havidenagan gyank bidi oonena, yev yes bidi harootsanem zayn verchin orû.

Hûryanerû ûsgûsan dûrdûnchal iren tem, vorovhedev ûsadz er te “Yes yem yerginken ichadz hatsû”, yev gû hartsûneyin,

-Ays martû Hovsepi vortin Hisoosû che? voroon hayrûn oo mayrû gû janchnank, inchbes ooremn gûse, “Yes yerginken icha”?

Hisoos badaskhanets,

-Gû pave took tsezi kûrtmûnchek. Voyeve megû chi gûrnar indzi kal yete zis ghûrgogh Hayrû zayn indzi chûpere, yev yes bidi harootsanem zayn verchin orû. Markareyootyoonneroon mech kûrvadz e, “Amen mart Asdoodzme sorvadz bidi ûlla”. Ov vor Hormes gû lûse yev irme gû sorvi indzi gooka. Voch vok Hayrû desadz e, patsi ange vor Asdoodzme e, vorovhedev miyayn aniga desadz e Hayrû. Oo yes gûsem tsezi, te ov vor indzi havada havidenagan gyank ooni.

Paregentan Soorp Asdvadzadzni Verapokhman
Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Arachin
Namagen (13:11-14:5)

Yerp yerekha eyi yerekhayi bes gû khoseyi, yerekhayi bes gû khorheyi yev yerekhayi bes gû dramapaneyi, isg yerp dûghamart tartsa, polor yerekhayagan panerû meg goghm tûri. Nooynbesh al, menk ayzhûm zAsdvadz gû desnenk aghod gerbov, gardzes hayeliyi mû mechen, payts amen pani gadaroomû ka' zayn bidi desnenk tem ar tem. Ayzhûm miyayn masnagioren gû janchnam zAsdvadz, payts ayn aden bidi janchnam ampoghchabes, jisht inchbes ink zis gû janchna.

Ներկայիս, ուրեմն, միակ կարելոր բաներն են՝ հաւատքը, յոյսը եւ սէրը. իսկ այս երեքն մեծագոյնը՝ սերն է:

Ուրեմն՝ սիրոյ հետամուտ եղէք: Միաժամանակ հոգեւոր պարգեւներուն փափաքող եղէք, մանաւանդ մարգարէութեան: Որովհետեւ, օրինակ, անծանօթ լեզուներով խօսողը մարդոց չէ որ կը խօսի, այլ՝ Աստուծոյ. որովհետեւ ո՛չ որ զինք կը հասկնայ, թէպէտեւ անիկա Հոգիին զօրութեամբ խորհուրդներ կը պատմէ: Մինչդէռ մարգարէութիւն ընողը մարդոց կը խօսի՝ անոնց հաւատքը ամրապնդելու, զանոնք մխիթարելու եւ քաջալերելու համար: Լեզուներ խօսողը միայն ի՛նք կ'օգտուի, մինչդէռ Աստուծոյ պատգամները հոշակողը՝ ամբողջ եկեղեցիին շինութիւն կը բերէ: Ես պիտի ուզէի որ բոլորդ ալ լեզուներ խօսիք, բայց կը նախըտրեմ որ մարգարէութիւն ընէք. որովհետեւ մարգարէութիւն ընողը աւելի՛ օգտակար կ'ըլլայ, քան լեզուներով խօսողը, բացի այն պարագայէն՝ երբ թարգմանող մը գտնուի, եւ ամբողջ եկեղեցին օգտուի:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ Մարկոսի (2:1-12)

Քանի մը օրեր ետք Յիսուս վերադարձաւ Կափառնաւում: Անմիջապէս որ լուր տարածուեցաւ թէ տան մէջ կը գտնուի, շատեր հաւաքուեցան հոն, այնքան՝ որ դրան առջեւ իսկ տեղ չէր մնացած: Եւ Յիսուս Աստուծոյ խօսքը կը քարոզէր անոնց:

Այդ միջոցին Յիսուսի բերին անդամալոյծ մը, որ չորս հոգիներ շալկած էին: Երբ բազմութեան պատճառով չկրցան զայն Յիսուսի մօտ բերել, քակեցին տունին տանիքը եւ առաստաղը բանալով՝ անդամալոյծը մահիճով վար իջեցուցին: Յիսուս անոնց հաւատքը տեսնելով, ըսաւ անդամալոյծին.

- Որդեա՛կ, մեղքերդ ներուա՛ծ ըլլան քեզի:

Օրէնքի ուսուցիչներէն ոմանք, որոնք հոն նստած էին, սկսան մտովի քննադատել զայն.

Nergayis, ooremûn, miyag garevor panerûn yen՝ havadkû, hooysû, yev serû, isg ays yereken medzakooynû sern e.

Ooremûn՝ siro hedamood yeghek. Miyazhamanag hokevor barkevneroon papakogh yeghek, manavant markareyootyan. Vorovhedev, orinag, andzanot lezoonerov khosoghû martots che vor gû khosi, ayl՝ Asdoodzo, vorovhedev voch vok zink gû hasgûna, tebedev aniga Hokiyyin zoroootyamp khorhoortner gû badme. Minchter markareyootyooun ûnoghû martots gû khosi anonts havadkû amrabûnteloo, zanonk mûkhitareloo yev kachalereloo hamar. Lezooner khosoghû miyayn ink gokdûvi, minchter Asdoodzo badkamnerû hûrchagoghû՝ ampoghch yegegghetsiyyin shinootyoon gû pere. Yes bidi oozeyi vor polorût al lezooner khosik, payts gû nakhûndûrem vor markareyootyoon ûnek, vorovhedev markareyootyoon ûnoghû aveli okdagar gûlla, kan lezoonerov khosoghû, patsi ayn barakayen yerp tarkmanogh mû kûdnûvi, yev ampoghch yegegghetsin okdûvi.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Margosi (2:1-12)

Kani mû orer yedk Hisoos veratartsav Gaparnayoom. Anmichabes vor loor daradzvetsav te dan mech gû kûdnûvi, shader havakvetsan hon, aynkan vor tûran archev isg degh cher mûnatsadz. Yev Hisoos Asdoodzo khoskû gû karozer anonts.

Ayt michotsin Hisoosi perin antamalooydz mû, vor chors hokiner shalgadz eyin. Yerp pazmootyan badjarov chûgûrtsan zayn Hisoosi mod perel, kagetsin doonin danikû yev arasdaghû panalov antamalooydzû mahijov var ichetsootsin. Hisoos anonts havadkû desnelov, ûsav antamalooydzin, -Vortyag, meghkerût nervadz ûllan kezi.

Orenki oosootsichneren vomank, hon nûs-dadz eyin, ûsgûsan mûdovi kûnnatadel zayn, «Ինչպէ՞ս կը համարձակի ասանկ բան ըսել. ըրածը հայիոյութիւն է: Աստուծմէ զատ ո՞վ կրնայ մեղքերը ներել»:

Յիսուս վայրկեանին գիտցաւ անոնց մտածումը եւ ըսաւ.

- Ինչո՞ւ այդպէս կը մտածէք: Ո՞ր մէկը դիւրին է. անդամալոյծին՝ «Մեղքերդ ներուած են քեզի» ըսէ՞լը, թէ՛ «Ել՛, մահիձդ առ եւ տո՛ւնդ գնա» ըսելը: Բայց պէտք է գիտնաք, թէ Մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու:

Ու դառնալով անդամալոյծին, ըսաւ.

- Քեզի կ'ըսեմ, ե՛լ, ա՛ռ մահիձդ եւ տո՛ւնդ գնա: Անդամալոյծը անմիջապէս բոլորին դիմաց ոտքի ելաւ, վերցուց իր մահիձը եւ դուրս ելաւ: Բոլորն ալ զարմացան. կը փառաւորէին զԱստուծաւ եւ կ'ըսէին.

- Այսպիսի բան բնաւ տեսած չէինք:

*Վերափոխումն Ս. Աստուածածնի
Պօղոս Առաքելի Կողմէ
Չաղատացիներուն Գրուած Նամակէն
(3:29-4:7)*

Արդ ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանիք՝ կը նշանակէ թէ դուք Աբրահամի զաւակներ էք եւ պիտի ժառանգէք ինչ որ Աստուծաւ անոր խոստացաւ:

Բայց գիտցէ՛ք նաեւ, թէ ժառանգորդ մը թէպէտ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի խնամակալներու եւ հոգաբարձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակակէտը: Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուծաւ աշխարհի որկեց իր Որդին, որ կնոջմէ մը ծնաւ եւ Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուծաւ մեր սիրտերուն մէջ “Inchbes gû hamartsagi asang pan ûsel, ûradzû hayhoyootyoon e. Asdoodzme zad ov gûrna meghkerû nerel?”

Hisoos vargyanin kidsav anonts mûdadzoomû yev ûsav,

-Inchoo aytbes gû mûdadzek. Vor megû tyoorin e, antamalooydzin “Meghkerût nervadz yen kezi” ûselû? te “Yel, mahijt ar yev doon kûna” ûselû? Payts bedk e kidnak, te Martoo Vortin yergri vûra ishkhanootyoon ooni meghkerû nereloo.

Oo tarnalov antamalooydzin ûsav.

-Kezi gûsem, yel, ar mahijût yev doont kûna. Antamalooydzû anmichabes polorin timats vodki yelav, vertsoots ir mahijû yev toors yelav. Polorûn al zarmatsan, gû paravoreyin zAsdvadz yev gûseyin,

-Aysbisi pan pûnav desadz cheyink

*Verapokhoomûn Soorp Asdvadzadzni
Boghos Arakyali Goghme
Kaghadatsineroon Kûrvadz Namagen
(3:29-4:7)*

Art ooremûn, yete Krisdosi gû badganik gû nûshanage te took Aprahami zavagner ek yev bidi zharankech inch vor Asdvadz anor khosdatsav.

Payts kidthsek nayeve, te zharankort mû tebed
 ampoghch jarankootyan isgagan derûn e,
 payts vorkan aden vor anchapahas e
 darperootyoûn chooni dzarayê mû, kani
 khûnamagalneroo yev hokapartsooneroo
 yentaga e, minchev hasni ir horû voroshadz
 zhamanagagedû. Nooynûn e mer al barakan.
 Vorkan aden vor hokevorabes anchapahas
 eyink pûnootyan oozheroon gentargûveyink
 oo gû dzarayeyink. Payts hima harmar
 zhamanagû hasadz hamarelov, Asdvadz
 ashkharh ghûrgets ir Vortin, vor gûnochme
 mû dzûnav yev Orenkin dag abretsav,
 vorbeszi mez Orenkin keroottenen pûrge yev
 Asdoodzo vortiner tartsûne. Art, vorovhedeve
 ir vortinern yenk Asdvadz mer sirderoon
 րկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած
 «Աբբա», այսինքն «Հայր» կը կոչենք: Ուստի
 այլևս ծառայ չէք, այլ՝ որդի. եւ քանի որդի էք՝
 Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
 Դուկասի (2:1-7)***

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր
 հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ
 գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը
 կատարելու: Այս առաջին մարդահամարը
 տեղի ունեցաւ Սուրիայի կառավարիչ
 Կիրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր
 ծննդավայր քաղաքը կ'երթար իր անունը
 արձանագրել տալու համար: Յովսէփ, Դաւիթի
 ցեղէն եւ ազգատոհմէն ըլլալուն համար,
 Գալիլեայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր
 անունը արձանագրել տալու համար գնաց
 Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը, Դաւիթ
 թագաւորին ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար
 իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթլեհէմի մէջ Մարիամի ծննդաբերութեան
 ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ
 զաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ
 մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ
 իրենց համար տեղ չկար:

Մեռելոց Վերափոխման

***Պողոս Առաքեալի Կորնթ
 Կորնթացիներուն Գրուած Երկրորդ
 Նամակէն (6:16-7:1)***

Ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին եւ
 մեհեաններուն միջեւ:

Արդարեւ, մե՛նք ենք կենդանի Աստուծոյ
 տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.-

*«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ
 պիտի ապրիմ»:*

*Եւ իրենց Աստուծը պիտի ըլլամ եւ անոնք՝ իմ
 ժողովուրդս»:*

Ահա թէ ինչո՞ւ Աստուած կը հրահանգէ մեզի.-
 mech ghûrgets ir Vortiyin Hokin, vorov
 zAsdvadz “Appa”, aysinkn “Hayr” gû
 gochenk. Oosdi aylevs dzara chek, ayl vorti,
 yev kani vorti ek, Asdoodzo khosdoomû bidi
 zharankeke.

***Hisoos Krisdosi Avedaranen Ûsd
 Ghoogasi (2:1-7)***

Ayt oreroon Okosdos gaysûr hramanakir
 hanets ir gaysrootyan sahmanneroon mech
 kûdnûvogh polor pûnagichneroon
 martahamarû gadareloo. Ays arachin
 martahamarû degghi oonetsav Sooryayi
 garavarich Gireniyosi oreroon. Amen mart ir
 dzûnûntavayr kaghakû gertar ir anoonû
 artsanakrel daloo hamar. Hovsep, Taviti
 tseghen yev azkadohmen ûllaloon hamar,
 Kalilyayi Nazaret kaghaken yelav yev ir
 anoonû artsanakrel daloo hamar kûnats
 Hûreyasdani Petlehem kaghakû, Tavit
 takavorin dzûnûntavayrû. Iren gûngeranar ir
 nûshanadzû Maryam, vor hûghi er.

Petlesemi mech Maryami dzûnûnta-
 perootyan zhamanagû hasav yev dzûnav ir
 antranig zavagû, vor pattets khantsaroori
 mech yev tûrav mûsoori mû mech,
 vorovhedeve bantogin mech irents hamar
 deggh chûgar.

Merelots Verapokhman

**Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Yergrort
Namagen (6:16-7:1)**

Inch nûmanootyoon ga Asdoodzo dajarin yev mehyanneroon michev?

Artarev, menk yenk gentani Asdoodzo dajarû, inchbes Asdvadz ink ûsav,-

“Anonts mech bidi pûnagim yev anonts hed bidi abrim. Yes irents Asdvadzû bidi ûllam yev anonk im zhoghovoortûs”.

Aha te inchoo Asdvadz gû hûrahanke mezi,-

«Անջատ եւ հեռո՛ւ կեցէք հեթանոսներէն. պիղծ քաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ: Ես ձեզի Հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս ու աղջիկներս պիտի ըլլաք,- կ'ըսէ ամենակալ Տէրը»:

Սիրելիներ՛ք, այս խոստումները մեզի եղած են: Ուստի հեռո՛ւ մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (1:39-56)**

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Ջաքարիայի տունը մտնելով՝ Եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ, եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ.

- Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ օրհնեա՛լ է զաւակը որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՛նչ երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինծի կ'այցելէ. որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ք թէ իմ որ հաւատացիր,

որովհետեւ Աստուծոյ կողմէ թեզի ըսուածները պիտի կատարուին:

Մարիամ ըսաւ.

«Տէրը պիտի գովաբանեմ. ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծով, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեզութիւնը»:

Ասկէտք բոլոր սերունդները երանի պիտի տան ինծի, քանի հզօրն Աստուած ինծի համար մեծամեծ գործեր կատարեց. սուրբ է անունը անոր»:

Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ մարդոց վրայ:

“Anchad yev heroo getsek hetanosneren, bighdz paneroo mi tûbchik, yev yes tsez bidi ûntoonim. Yes tsezi Hayr bidi ûllam yev took im dûghakûs oo aghchignerûs bidi ûllak,- gûse amenagal Derû”.

Sireliner, ays khosdoomnerû mezi yeghadz yen. Oosdi heroo mûnank marmnagan yev hokegan amen bûghdzootene, menk mez gadarelaves makrenk Asdoodzo yergyooghovû abrelov.

**Hisoos Krisdosi Avedaranen Êsd
Ghoogasi (1:39-56)**

Nooyn oreroon, Maryam jampa yellelov ajabarankov kûnats Hootayi lernayin shûrchani kaghakneren megû. Hon Zakaryayi doonû mûdnelov Yeghisapeti voghchyyoon dûvav. Yerp Yeghisapet Maryami voghchyyoonû lûsets, ir vorovaynin mech yerekhan sharzhetsav, yev Yeghisapet Soorp Hokiyov nershûnchûvadz partsratsayn ûsav, -Gineroon mech orhnyal yes toon yev orhnyal e zavagû vor gû gûres vorovaynit mech. Inch yerchangoootyoon, vor Dirochûs mayrû indzi gaytsele, vorovhedev yerp voghchyyoonût lûsetsi, yerekhas oorakhootyamp sharzhetsav vorovaynis mech. Yerani kezi vor havadatsir,

vorovhedev Asdoodzo goghme kezi
ûsvadznerû bidi gadarvin.

Maryam ûsav,

-“Derû bidi kovapanem, aha hokis
goorakhana Asdoodzmov, im Pûrgichovûs,
vorovhedev an desav ir aghakhinin
hezootyoonû.

Asge yedk polor seroontnerû yerani bidi dan
indzi, kani hûzor Asdvadz indzi hamar
medzamedz kordzer gadarets, soorp e anoonû
anor.

Polor zhamanagneroon mech voghormoot-
yamp an gû nayi asdvadzavakh martots vûra.

*Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ,
ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր
խորհուրդներով:*

*Գահագրկեց արքաները եւ բարձրացուց
խոնարհները:*

*Անօթիները բարիքներով լիացուց, մինչ
հարուստները դատարկաձեռն արձակեց:*

*Պաշտպան եղաւ իր ծառային՝ Բարայէլի,
հաւատարիմ մնալով իր ողորմութեան,
ինչպէս որ խոստացած էր մեր հայրերուն՝
Աբրահամի եւ անոր զաւակներուն»:*

Մարիամ Եղիսաբէթի մօտ շուրջ երեք ամիս
մնալէ ետք վերադարձաւ իր տունը:

Վերափոխումէն Ետք Առաջին Կիրակի

Պօղոս Առաքելի Կողմէ

Կորնթացիներուն Գրուած Երկրորդ

Նամակէն (6:16-7:1)

Ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին եւ
մեհեաններուն միջեւ:

Արդարեւ, մե՛նք ենք կենդանի Աստուծոյ
տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.-

*«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ
պիտի ապրիմ:*

*Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք՝ իմ
ժողովուրդս»:*

Ահա թէ ինչո՞ւ Աստուած կը հրահանգէ մեզի.-

*«Անջատ եւ հեռո՛ւ կեցէք հեթանոսներէն. պիղծ
բաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ:*

*Ես ձեզի Հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս
ու աղջիկներս պիտի ըլլաք,- կ'ըսէ ամենակալ
Տէրը»:*

Միրելինե՛ր, այս խոստումները մեզի եղած են:
Ուստի հեռո՛ւ մնանք մարմնական եւ հոգեկան
ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս
մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ Ղուկասի (1:39-56)

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝
աճապարանքով գնաց Յուդայի լեռնային
շրջանի քաղաքներէն մէկը:

Ir pazoogov an zoroityoon tsooyts dûvav,
vochûnchatsoots hûbardnerû irents polor
khorhoortnerov.

Kahazûrgets arkanerû yev partsratsoots
khonarhnerû.

Anotinerû pariknerov liyatsoots, minch
haroosdnerû tadargatsern artsagets.

Bashdban yeghav ir dzarayin Israyeli,
havadarim mûnalov ir voghormootyan,
inchbes vor khosdatsadz er mer hayreroon
Aprahami yev anor zavagneroon”.

Maryam Yeghisapeti mod shoorch yerek
amis mûnale yedk veratartsav ir doonû.

Verapokhoomen Yedk Arachin Giragi

Boghos Arakyali Goghme

Gorûntatsineroon Kûrvadz Yergrort

Namagen (6:16-7:1)

Inch nûmanootyoon ga Asdoodzo dajarin yev
mehyanneroon michev?

Artarev, menk yenk gentani Asdoodzo
dajarû, inchbes Asdvadz ink ûsav,-

“Anonts mech bidi pûnagim yev anonts hed
bidi abrim. Yes irents Asdvadzû bidi ûllam
yev anonk im zhoghovoortûs”.

Aha te inchoo Asdvadz gû hûrahanke mezi,-

“Anchad yev heroo getsek hetanosneren,
bighdz paneroo mi tûbchik, yev yes tsez bidi
ûntoonim. Yes tsezi Hayr bidi ûllam yev took

im dûghakûs oo aghchignerûs bidi ûllak,-
gûse amenagal Derû”.

Sireliner, ays khosdoomnerû mezi yeghadz
yen. Oosdi heroo mûnank marmnagan yev
hokegan amen bûghdzootene, menk mez
gadarelaves makrenk Asdoodzo yergyoo-
ghovû abrelov.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Ghoogasi (1:39-56)

Nooyn oreroon, Maryam jampa yellelov
ajabarankov kûnats Hootayi lernayin
shûrchani kaghakneren megû.

Հոն Զաքարիայի տունը մտնելով՝ Եղիսաբեթի
ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբեթ Մարիամի
ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան
շարժեցաւ, եւ Եղիսաբեթ Սուրբ Հոգիով
ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ.

- Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ օրհնեա՛լ է
զաւակը որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՛նչ
երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինծի
կ'այցելէ. որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի,
երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որո-
վայնիս մէջ: Երանի՛ք թե՛ղի որ հաւատացիր,
որովհետեւ Աստուծոյ կողմէ թե՛ղի ըսուածները
պիտի կատարուին:

Մարիամ ըսաւ.

*«Տէրը պիտի գովաբանեմ. ահա հոգիս
կ'ուրախանայ Աստուծոյ, իմ Փրկիչովս,
որովհետեւ ան տեսաւ իր աղախինին
հեգութիւնը:*

*Ասկէտք բոլոր սերունդները երանի պիտի
տան ինծի, քանի հզօրն Աստուած ինծի համար
մեծամեծ գործեր կատարեց. սուրբ է անունը
անոր:*

*Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան
կը նայի աստուածավախ մարդոց վրայ:*

*Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ,
ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր
խորհուրդներով:*

*Գահազրկեց արքաները եւ բարձրացուց
խոնարհները:*

*Անօթիները բարիքներով լիացուց, մինչ
հարուստները դատարկաձեռն արձակեց:*

*Պաշտպան եղաւ իր ծառային՝ Բարայէլի,
հաւատարիմ մնալով իր ողորմութեան,
ինչպէս որ խոստացած էր մեր հայրերուն՝
Աբրահամի եւ անոր զաւակներուն»:*

Մարիամ Եղիսաբեթի մօտ շուրջ երեք ամիս
մնալէ ետք վերադարձաւ իր տունը:

Hon Zakaryayi doonû mûdnelov Yeghisapeti
voghchooyin dûvav. Yerp Yeghisapet Mar-
yami voghchooyinû lûsets, ir vorovaynin
mech yerekhan sharzhetsav, yev Yeghisapet
Soorp Hokiyoov nershûnchûvadz partsratsayn
ûsav,

-Gineroon mech orhnyal yes toon yev
orhnyal e zavagû vor gû gûres vorovaynit
mech. Inch yerchangootyoon, vor Dirochûs
mayrû indzi gaytsele, vorovhede v yerp
voghchooyinû lûsetsi, yerekhas oorakh-
ootyamp sharzhetsav vorovaynis mech.
Yearnî kezi vor havadatsir, vorovhede v
Asdoodzo goghme kezi ûsvadznerû bidi
gadarvin.

Maryam ûsav,-

“Derû bidi kovapanem, aha hokis goorakhana
Asdoodzmov, im Pûrgichovûs, vorovhede v
an desav ir aghakhinin hezootyoonû.

Asge yedk polor seroontnerû yerani bidi dan
indzi, kani hûzor Asdvadz indzi hamar
medzamedz kordzer gadarets, soorp e anoonû
anor.

Polor zhamanagneroon mech voghorm-
ootyamp an gû nayi asdvadzavakh martots
vûra.

Ir pazoogov an zoroootyoon tsooyts dûvav,
vohûnchatsoots hûbardnerû irents polor
khorhoortnerov.

Kahazûrgets arkanerû yev partsratsoots khonarhnerû.

Anotinerû pariknerov liyatsoots, minch haroosdnerû tadargatsern artsagets.

Bashdban yeghav ir dzarayin Israyeli, havadarim mûnalov ir voghormootyan, inchbes vor khosdatsadz er mer hayreroon Aprahami yev anor zavagneroon”.

Maryam Yeghisapeti mod shoorch yerek amis mûnale yedk veratartsav ir doonû.

*Վերափոխումէն Ետք Երկրորդ Կիրակի
Պօղոս Առաքեալի Կողմէ
Կորնթացիներուն Գրուած Երկրորդ
Նամակէն (1:1-11)*

Ես, Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալը, եւ Տիմոթէոս՝ մեր եղբայրը, կը գրենք ձեզի՝ Կորնթոսի մէջ հաստատուած Աստուծոյ եկեղեցիին եւ ամբողջ Աքայիայի մէջ գտնուող քրիստոնէաներուդ: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Օրհնեալ ըլլայ Աստուած, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ հայրաքար կը գրաս եւ որպէս Աստուած կը մխիթարէ ու կը զօրացնէ մեզ՝ մեր բոլոր նեղութիւններուն մէջ, որպէսզի մենք կարենանք Աստուծմէ մեր վայելած օգնութիւնն ու մխիթարութիւնը տալ անոնց՝ որոնք ամէն տեսակի նեղութեանց մէջ են: Որովհետեւ, որքան շատ բաժնեկից կ'ըլլանք Քրիստոսի չարչարանքներուն, այնքան աւելի մեծ կ'ըլլայ իր օգնութիւնն ու մխիթարութիւնը մեզի: Մենք նեղութեանց կ'ենթարկուինք՝ ձեզի օգնելու եւ Աստուծոյ փրկութիւնը ձեզի բերելու համար. եւ եթէ Աստուած կ'օգնէ մեզի՝ կրկին ձեզի օգնելու համար է, որպէսզի մեր օրինակով սորվիք, թէ Աստուած ձեզ ալ պիտի զօրացնէ՝ որ համբերութեամբ կարենաք տանիլ այն չարչարանքները որ մենք հիմա կը

կրենք: Ուստի ձեր վրայ հաստատուն յոյս ունինք, զիտնալով որ՝ քանի՜ մեր չարչարանքներուն մասնակից էք՝ մեր ունեցած մխիթարութեան ալ մասնակից պիտի ըլլաք:

Եղբայրներ, կ'ուզեմ որ զիտնաք՝ թէ ի՞նչ նեղութիւն կրեցինք Ասիա նահանգին մէջ: Մեր կարողութենէն ա՛յնքան վեր էր բերը, որ գրեթէ ապրելու յոյսը կորսնցուցինք: Զգացինք որ մահուան վճիռը կախուած է մեր վրայ: Բայց ասիկա եղաւ, որպէսզի սորվինք մենք մեզի չապաւինիլ, այլ՝ Աստուծոյ, որ կը յարուցանէ մեռելները: Ա՛ն էր որ այդպիսի տհաւոր մահուրնէ մը փրկեց մեզ,

*Verapokhoomen Yedk Yergrort Giragi
Boghos Arakyalı Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Yergrort
Namagen (1:1-11)*

Yes, Boghos, Asdoodzo gamkov Hisoos Krisdosi arakyalû, yev Dimoteyos mer yeghpayrû, gû kûrenk tsezi Gorûntosi mech hasdadvadz Asdoodzo yegeghetsiyin yev ampoghch Akayiayi mech kûdnûvogh krisdonyanerooot. Togh Asdvadz mer Hayrû yev Der Hisoos Krisdos shûnorhk yev khaghaghootyoon barkeven tsezi. Orhnyal ûlla Asdvadz, mer Der Hisoos Krisdosi Hayrû, vor hayrapar gû kûta yev vorbes Asdvadz gû mûkhitare oo gû zoratsûne mez mer polor neghootyoonneroon mech, vorbeszi menk garenank Asdoodzme mer vayeladz oknootyoonûn oo mûkhitarootyoonû dal anonts voronk amen desagi neghootyants mech yen. Vorovhedev, vorkan shad pazhnegits gûllank krisdosi charcharankneroon, aynkan aveli medz gûlla ir oknootyoonûn oo mûkhitarootyoonû mezi. Menk neghootyants gentargûvink tsezi okneloo yev Asdoodzo pûrgootyoonû tsezi pereloo hamar, yev yete Asdvadz gokne mezi gûrgin tsezi okneloo hamar e, vorbeszi mer orinagov sorvik, te Asdvadz tsez al bidi

zoratsûne vor hamperootyamp garenak danil ayn charcharanknerû vor menk hima gû gûrenk. Oosdi tser vûra hasdadoon hooysonink, kidnalov vor kani mer charcharankneroon masnagits ek mer oonetsadz mûkhitarootyan al masnagits bidi ûllak. Yeghpayrner, goozem vor kidnak te inch neghootyoon gûretsink Asiya nahankin mech. Mer garoghootenen aynkan ver er perû, vor krete abreloo hooyssû gorsûntsootsink. Ûzkatsink vor mahvan vûjirû gakhvadz e mer vûra. Payts adiga yeghav, vorbeszi sorvink menk mezi chabavinil, ayl Asdoodzo, vor gû harootsane merelnerû. An er vor aytbisi ahavor mahvûne mû pûrgets կը փրկէ, եւ վստահ ենք որ յառաջիկային եւս պիտի փրկէ՝ մեզի համար ձեր կատարած աղօթքներուն օգնութեամբ: Եւ ձեր աղօթքները, որոնց շնորհիւ Աստուած իր հովանին անպակաս պիտի ընէ մեր վրայէն, պատճառ պիտի ըլլան որ շատեր մեզի համար գոհութիւն տան Աստուծոյ:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մարկոսի (4:35-41)***

Նոյն օրը երեկոյեան, Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.

- Եկեք լիճին միւս կողմը անցնինք:
Աշակերտները ձգեցին ժողովուրդը եւ բարձրացան այն նաւակին մէջ, ուր Յիսուս կը գտնուէր: Հոն ուրիշ նաւակներ ալ կային: Յանկարծ զօրաւոր հով մը փոթորկեց լիճը: Ալիքները նաւակին զարնուելով՝ ներս կը թափէին, զայն լեցնելու աստիճան, մինչ Յիսուս նաւակին յետսակողմը բարձի մը վրայ կը քնանար: Աշակերտները արթնցուցին զինք եւ ըսին.

- Վարդապետ, հոգո՛ւ չէ՞ որ մենք կը կորսուինք: Յիսուս ոտքի ելլելով սաստեց հովը, ըսելով.

- Դադրէ՛, - եւ լիճին ըսաւ. - Հանդարտէ՛: Հովը դադրեցաւ եւ կատարեալ հանդարտութիւն տիրեց: Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.

- Ինչո՞ւ այդպէս վախկոտ էք. տակաւի՞ն հաւատք չունիք:

Անոնք չափազանց վախցան եւ իրարու կ'ըսէին.

- Ո՞վ է արդեօք այս մարդը, որ նոյնիսկ հովն ու ծովը կը հնազանդին իրեն:

***Վերափոխումէն Ետք Երրորդ Կիրակի
Պօղոս Առաքեալի Կողմէ
Կորնթացիներուն Գրուած Երկրորդ
Նամակէն (2:12-3:3)***

Երբ Տրովադա հասաւ, Քրիստոսի Աւետարանը քարոզելու համար, Տէրը իմ առջեւ յաջողութեան դուռը բացաւ: Բայց եւ չափազանց մտահոգ էի, որովհետեւ հոն չգտայ mez, gû pûrge yev vûsdah yenk vor harachigayin yevûs bidi pûrge mezi hamar tser gadaradz aghotkneroon oknootyamp. Yev tser aghotknerû, voronts shûnorhiv Asdvadz ir hovanin anbagas ûne mer vûrayen badjar bidi ûllan vor shader mezi hamar kohootyoon dan Asdoodzo.

***Hisoos Krisdosi Avedaranen Ûsd Margosi
(4:35-41)***

Nooyn orû yeregoyan, Hisoos ir ashagerdneroon ûsav,

-Yegek lijn myoos goghmû antsnink.
Ashagerdnerû tsûketsin zhoghovoortû yev partsratsan ayn navagin mech, oor Hisoos gû kûdnûver. Hon oorish navagner al gayin. Hangardz zoravor hov mû potorgets lijû. Aliknerû navagin zarnûvelov ners gû tapeyin, zayn letsûneloo asdijan, minch Hisoos navagin hedsagoghmû partsi mû vûra gû kûnanar. Ashagerdnerû artûntsootsin zink yev ûsin,

-Vartabed, hokût che vor menk gû gorsûvink? Hisoos vodki yellelov sasdet hovû, ûselov,

-Tatre,- yev lijn ûsav,- Hantarde.
Hovû tatretsav yev gadaryal hantardootyoon direts. Aba Hisoos ir ashagerdneroon ûsav,

-Inchoo aytbes vakhgod ek, dagavin havadk choonik?

Anonk chapazants vakhtsan yev iraroo gûseyin,

-Ov e artiyok ays martû, vor nooynisg hovûn oo dzovû gû hûnazantin iren!

Verapokhoomen Yedk Yerrort Giragi

**Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Yergrort
Namagen (2:12-3:3)**

Yerp Drovata hasa, Krisdosi Avedaranû karozeloo hamar, Derû im archevûs hachoghootyan toorû patsav. Payts yes chapazants mûdahok eyi, vorovhedev hon chûkûda

Տիտոսը, մեր եղբայրը: Ուստի Տրովադացիներէն հրաժեշտ առնելով՝ Մակեդոնիա հասաւ:

Արդ, գոհութիւն Աստուծոյ, որ Յիսուս Քրիստոսի յաղթական երթին մասնակից կը դարձնէ մեզ, եւ մեր միջոցաւ իր զիտութեան բոյրը կը տարածէ ամենուրեք: Փրկութեան ճամբուն մէջ գտնուողներուն մէջ ապրինք, թէ՛ կորուստի ճամբուն մէջ գտնուողներուն, մեր կեանքերը Քրիստոսի ձեռքով Աստուծոյ ընծայուած անուշահոտ խունկի պէս իրենց բոյրը կը տարածեն: Կորուստի ճամբուն մէջ գտնուողներուն համար՝ մահաբոյր եւ մահաբեր կը թուի մեր կեանքը, բայց փրկութեան ճամբուն մէջ գտնուողներուն համար՝ կեանքի բուրմունք է, կեանքի տանող: Սակայն ո՞վ կրնայ այսպիսի կեանք մը ապրիլ: Անշուշտ ո՛չ անոնք՝ որոնք Աստուծոյ խօսքը վաճառքի կը հանեն, այլ՝ մենք, որ անկեղծօրէն կը խօսինք Աստուծոյ առջեւ՝ որպէս Քրիստոսի միացած Աստուծոյ պատգամաւորները:

Բայց ասիկա ըսելով, արդեօք ուրիշներու պէս մենքմեզ գովաբանած կ'ըլլանք: Պէտք ունի՞նք միթէ ձեզմէ յանձնարարական առնելու կամ այդպիսի նամակներով ձեզի ներկայանալու, ինչպէս ոմանք կ'ընեն: Որովհետեւ մեր լաւագոյն յանձնարարականը, որ ձեր սիրտերուն մէջ գրուած է՝ դուք էք, ձեր կեանքերով, որ ամէն մարդ կրնայ ճանչնալ ու կարդալ, եւ

կրնայ յստակօրէն տեսնել՝ թէ Քրիստոսի նամակն էք դուք, պարզապէս մեր ձեռքով գրուած: Գրուած՝ ո՛չ թէ մելանով, այլ՝ կենդանի Աստուծոյ Հոգիով. ո՛չ թէ քարեղէն տախտակներու, այլ՝ ձեր սիրտերու մարմնեղէն տախտակներուն վրայ:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մարկոսի (6:30-44)**

Առաքեալները վերադարձան Յիսուսի մօտ եւ անոր պատմեցին ինչ որ կատարեցին եւ ստրվեցուցին:

Յիսուս ըսաւ անոնց.

Didosû, mer yeghpayrû. Oosdi Drovata-tsineren hûrazheshd arnelov Magetonya hasa. Art, kohootyoon Asdoodzo, vor Hisoos Krisdosi haghtagan yertin masnagits gû tartsûne mez, yev mer michotsav ir kidootyan pooyrû gû daradze amenoorek.

Pûrgootyan jampoon mech kûdnûvoghneroon mech abrink, te goroosdi jampoon mech kûdnûvoghneroon, mer gyankerû Krisdosi tserkov Asdoodzo ûndzayvadz anooshahod khoongi bes irents pooyrû gû daradzen. Goroosdi jampoon mech kûdnûvoghneroon hamar mahapooyr yev mahaper gû tûvi mer gyankû, payts pûrgootyan jampoon mech kûdnûvoghneroon hamar gyanki poormoonk e, gyanki danogh. Sagayn ov gûrna aysbisi gyank mû abril? Anshooshd voch anonk voronk Asdoodzo khoskû vajarki gû hanen, ayl menk, vor angeghdzoren gû khosink Asdoodzo archev vorbes Krisdosi miyatsadz Asdoodzo badkamavornerû.

Payts asiga ûselov, artyok oorishneroo bes menk mez kovapanadz gûllank? Bedk oonink mite tsezme hantsnararagan arneloo gam aytbisi namagnerov tsezi nergayanaloo? inchbes vomank gûnen. Vorovhedev mer lavakooyn hantsnararaganû, vor tser

sirderoon mech kûrvadz e took ek, tser gyankerov, vor amen mart gûrna janchnal oo gartal, yev gûrna hûsdagoren desnel te Krisdosi namagûn ek took, barzabes mer tserkov kûrvadz. Kûrvadz voch te melanov, ayl gentani Asdoodzo Hokiyov, voch te kareghen dakhdagneroo, ayl tser sirderoo marmneghen dakhdagneroon vûra.

Hisoos Krisdosi Avedaranen Ūsd Margosi (6:30-44)

Arakyalnerû veratartsan Hisoosi mod yev anor badmetsin inch vor gadaretsin yev sorvetsootsin.

Hisoos ūsav anonts,

- Եկէք երթանք ամայի տեղ մը, ուր առանձին կրնանք ըլլալ եւ հոն քիչ մը կը հանգչինք:

Որովհետեւ ժողովուրդէն շատերուն երթալ-գալուն պատճառով ուտելու իսկ առիթ չէին ունեցած: Հետեւաբար իրենք առանձինն նաւակ առին եւ գացին ամայի վայր մը: Երբ ժողովուրդը տեսաւ անոնց երթալը եւ գիտցաւ թէ Յիսուս անոնց հետ է, շրջակայ քաղաքներու բնակիչներէն շատեր լիճին եզերքէն վազելով՝ անոնցմէ առաջ հասան անոնց երթալիք վայրը: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ եւ տեսաւ ամբոխը, գրաց անոնց, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու կը նմանէին: Ապա սկսաւ շատ բաներ ուսուցանել անոնց:

Երբ բաւական ժամանակ անցաւ, աշակերտները մօտեցան Յիսուսի եւ ըսին.

- Ամայի տեղ ենք, եւ արդէն բաւական ուշ է. արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի շրջակայ ազարակներն ու գիւղերը երթան իրենց համար ուտելիք գնելու, որովհետեւ ուտելիք չունին:

Յիսուս անոնց ըսաւ.

- Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը:

Անոնք հարցունցին.

- Կ'ուզե՞ս որ երթանք եւ երկու հարիւր արծաթ դահեկանի հաց գնենք զանոնք կերակրելու համար:

Յիսուս ըսաւ. - Քանի՞ հաց ունիք, գացէք ստուգեցէք:

Աշակերտները ստուգեցին եւ ըսին.

- Հինգ հաց եւ երկու ձուկ:

Յիսուս հրամայեց աշակերտներուն, որ ժողովուրդը խումբ-խումբ նստեցնեն դալար խոտին վրայ, եւ անոնք հարիւրական եւ յիսունական հոգիներէ բաղկացած խումբերով նստան: Ապա Յիսուս առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, աչքերը երկինք բարձրացուց, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն՝ որպէսզի բաշխեն, եւ երկու ձուկերը բաժնեց ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան, եւ աւելցած հացի եւ ձուկի կտորները հաւաքելով՝ տասներկու սակառ լեցունցին: Իսկ ուտողներուն թիւը, միայն այր մարդիկը հաշուած, շուրջ հինգ հազար էր:

-Yegek yertank amayi degh mû, oor arantsin gûrnank ūllal yev hon kich mû gû hankchink. Vorovhedeve zhoghovoorten shaderoon yertal –kaloon badjarov oodeloo isg arit cheyin oonetsadz.

Hedevapar irenk arantsinûn navag arin yev katsin amayi vayr mû. Yerp zhoghovoortû desav anonts yertalû yev kidtsav te Hisoos anonts hed e, shûrchaga kaghakneroo pûnagicheneren shader lijn yezerken vazelov anontsme arach hasan anonts yertalik vayrû. Yerp Hisoos navagen toors yelav yev desav ampokhû, kûtats anonts, vorovhedeve hoviv choonetsogh vochkharneroo gû nûmaneyin. Aba ūsgûsav shad paner oosoostanel anonts.

Yerp pavagan zhamanag antsav, ashagerdnerû modetsan Hisoosi yev ūsin,

-Amayi degh yenk, yev arten pavagan oosh e, artsage zhoghovoortû, vorbeszi shûrchaga akaragnerûn oo kougherû yertan irents hamar oodelik kûneloo, vorovhedeve oodelik choonin. Hisoos anonts ūsav,

-Took dûvek anonts oodelikû.

Anonk hartsootsin, -Goozes vor yertank yev yergoo haroor ardzat tahegani hats kûnenk zanonk geragreloo hamar?

Hisoos ūsav, -Kani hats oonik? katsek ūsdooketsek.

Ashagerdnerû ûsdooketsin yev ûsin, -Hink hats yev yergoo tsoog.

Hisoos hûramayets ashagerdneroon, vor zhoghovoortû khoomp – khoomp nûsdetsû-nen talar khodin vûra, yev anonk harooragan yev hisoonagan hokinere paghgatsadz khoomperov nûsdan. Aba Hisoos arav hink hatsû yev yergoo tsoogû, acgkerû yergink partsatsoots, orhnets, gûdrets hatserû yev dûvav ashagerdneroon vorbeszi pashkhen, yev yergoo tsoogerû pazhnets zhoghovoortin. Polorûn al geran oo gûshdatsan, yev aveltsadz hatsi yev tsoogi gûdorerû havakelov dasnûyergoo sagar letsootsin. Isg oodoghneroon tivû miyayn ayr martigû hashvadz, shoorch hink hazar er.

Բարեկենդան Խաչվերացի

Պողոս Առաքելայի Կողմէ

Կորնթացիներուն Գրուած Երկրորդ

Նամակէն (7:4-16)

Մեծ վստահութիւն ունիմ ձեր վրայ. մեծապէս հպարտ եմ ձեզմով: Մեր կրած բոլոր նեղութեանց մէջ ինքզինքս մեծապէս մխիթարուած եւ անսահմանօրէն ուրախ կը զգամ: Որովհետեւ Մակեդոնիա մեր հասնելէն ի վեր երբեք հանգիստ չունեցանք, այլ՝ ամէն կողմէ նեղութիւն: Մէկ կողմէ արտաքին թշնամիները կը նեղէին մեզ, իսկ ներքնապէս՝ մեր վախը: Բայց Աստուած, որ կը մխիթարէ սրտաբեկները, Տիտոսի գալովը մեզ մխիթարեց:

Ուրախացուցիչը միայն Տիտոսի գալը չէր: Ուրախացանք մանաւանդ, երբ լսեցինք թէ ինչպէս գոհ մնացած էր ձեզմէ: Մեզի պատմեց թէ անձկութեամբ կը սպասէք ինծի, թէ ո՞րքան ցաւած էք պատահածին համար եւ թէ ինչպէս կապուած էք ինծի: Չէք կրնար երեւակայել որքա՛ն ուրախ եմ: Ճիշդ է որ նամակովս քիչ մը վշտացուցի ձեզ, բայց հիմա չեմ զոջար ըրածիս, թէպէտ գրելէս ետք զոջացեր էի. քանի կը տեսնեմ թէ այդ նամակս միայն կարճ ժամանակ մը վշտացուցեր է ձեզ: Ուրախ եմ հիմա, ո՛չ թէ ձեզ տրտմեցուցած ըլլալուս

համար, այլ՝ որովհետեւ այդ տրտմութիւնը պատճառ եղաւ որ ձեր վարմունքը փոխէք: Եւ որովհետեւ ձեր տրտմութիւնը Աստուծոյ գործին ծառայեց, եւ պէտք չունիմ այլեւս խստութեամբ գալու ձեզի: Աստուած երբեմն մեզ կը ցաւցնէ՝ ապաշխարութեան միջոցաւ փրկութեան առաջնորդելու նպատակով, որուն համար չենք զոջար բնաւ: Մինչդեռ աշխարհի ցաւը մահուան կ'առաջնորդէ: Արդ, տեսէք թէ Աստուծոյ պատճառած ցաւը ինչպէս անտարբերութենէն դուրս բերաւ ձեզ եւ մղեց՝ որ դուք ձեզ արդարացնէք: Զայրացաք, տագնապեցաք, անձկութեամբ լեցուեցաք: Բայց յետոյ նախանձախնդրութեամբ վառեցաք

Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Yergrort
Namagen (7:4-16)

Medz vûsdahootyoon oonim tser vûra, medzabes hûbard yem tsezmov. Mer gûradz polor neghootyants mech inkzinkûs medzabes mûkhitarvadz yev ansahmanoren oorakh gûzkam. Vorovhedev Magetonya mer hasnelen i ver yerpek hankisd choonetsank, ayl amen goghme neghootyoon. Meg goghme ardakin tûshnaminerû gû negheyin mezi, isg nerknabes mer vakhû. Payts Asdvadz, vor gû mûkhitare sûrdapegnerû, Didosi kalovû mez mûktarets. Oorakhatsootsichû miyayn Didosi kalû cher. Oorakhatsank manavant, yerp lûsetsink te inchbes koh mûnatsadz er tsezme. Mezi badmets te antsgootyamp gûsbasek indzi, te vorkan tsavadz ek badahadzin hamar yev te inchbes gabvadz ek indzi. Chek gûrnar yerevagayel vorkan oorakh yem. Jisht e vor namagovûs kich mû vûshdatsootsi tsez, payts hima chem zûghchar ûradzis, tebed kreles yedk zûghchatser eyi, kani gû desnem te ayt namagûs miyayn garj zhamanag mû vûshdatsootser e tsez. Oorakh yem hima, voch te tsez dûrdmetsootsadz ûllaloos hamar, ayl vorovhedev ayt dûrdmootyoonû badjar yeghav vor tser varmoonkû pokhek. Yev vorovhedev tser dûrdmootyoonû Asdoodzo kordzin dzarayets, yes bedk choonim aylevûs khûsdootyamp kaloo tsezi. Asdvadz yerpemûn mez gû tsavtsûne abashkharootyan michotsav pûrgootyan arachnorteloo nûbadagov, voroon hamar chenk zûghchar pûnav. Minchter ashkharhi tsavû mahvan garachnorte. Art, desek te Asdoodzo badjaradz tsavû inchbes andarperootenen toors perav tsez yev mûghets vor took tsez artaratsûnek. Zayratsak, daknabetsak, antsgootyamp letsvetsak. Payts hedo nakhantsakhûntrootyamp varetsak yev

եւ սխալը մեջտեղէն վերցուցիք, եւ ամէն կերպով ցոյց տուիք, թէ դուք յանցանք չունիք այդ խնդրին մէջ: Հիմա ըսեմ, թէ նախորդ նամակը գրելուս պատճառը միայն այդ յանցաւոր մարդը չէր, ո՛չ ալ անոր հայրը՝ որուն դէմ գործուեցաւ յանցանքը. այլ՝ որպէսզի յայտնուի այն հոգածութիւնը, որ փոխադարձաբար իրարու հանդէպ ունինք Աստուծոյ առջեւ: Ուստի մենք մեզ միմիջարուած կը զգանք:

Մեր զգացած միմիջարութեան վրայ Տիտոս աւելի՛ եւս ուրախացուց մեզ, ուրախութեամբ պատմելով՝ թէ ի՛նչպէս բոլորդ ալ գոհ ձգած էք զինք: Ձեզի համար պարծանքս յայտնած էի իրեն, եւ ամօթով չմնացի. եւ ինչպէս ձեզի խօսածներս բոլորը ճշմարիտ էին, նոյնպէս ալ Տիտոսի յայտնած պարծանքս ճշմարտուեցաւ: Գիտէ՞ք թէ որքան մեծ սիրով Տիտոս կը խօսէր ձեր մասին. կը յիշէր՝ թէ ինչպիսի՜ երկիւղած յարգանքով ընդունէր էք զինք: Արդ, ուրախ եմ որ կատարեալ վստահութիւն ունիմ ձեր վրայ:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Մարկոսի (7:31-37)

Յիսուս Տիրոսի սահմաններէն մեկնելով, Սիդոնի վրայով անցաւ Դեկապոլիսի սահմաններէն եւ եկաւ Գալիլեայի լիճին եզերքը: Եւ ահա իրեն բերին խուլ եւ համր մարդ մը, խնդրելով որ ձեռքը դնէ անոր վրայ: Յիսուս զայն ամբոխէն հեռու՝ մէկ կողմ տարաւ, մատները անոր ականջներուն մէջ դրաւ, յետոյ թքեց եւ դպաւ անոր լեզուին: Ապա երկինք նայեցաւ, հառաչեց եւ ըսաւ.

- Եփփաթա՛, որ կը նշանակէ՝ «Բացուէ՛»:

Նոյն վայրկեանին անոր ականջները բացուեցան, եւ լեզուն բացուելով՝ սկսաւ կանոնաւոր կերպով խօսիլ: Յետոյ Յիսուս պատուիրեց ժողովուրդին, որ ոեւէ մէկուն չըսեն: Սակայն ի՛նչքան ալ անիկա կը պատուիրէր որ չտարածեն, անոնք առաւել չափով կը պատմէին այս մասին: Մարդիկ ծայր աստիճան կը զարմանային եւ կ'ըսէին.

sûkhalû mechdeghen vertsootsik, yev amen gerbov tsooyts dûvik, te took hantsank choonik ayt khûntrin mech. Hima ûsem, te nakhort namagû kûreloos badjarû miyayn ayt hantsavor martû cher, voch al anor hayrû voroon tem kordzûvetsav hantsankû, ayl vorbeszi haydnûvi ayn hokadzootyoonû, vor pokhatartsapar iraroo hanteb oonink Asdoodzo archev.Oosdi menk mez mûkhitarvadz gûzkank.

Mer ûzkatsadz mûkhitarootyan vûra Didos aveli yevûs oorakhatsoots mez, oorakhooryamp badmelov te inchbes polorût al koh tsûkadz ek zink. Tsezi hamar bardzankûs haydnadz eyi iren, yev amotov chûmûnatsi, yev inchbes tsezi khosadznerûs polorû jûshmarid eyin, nooynbes al Didosi haydnadz bardzankûs jûshmardûvetsav. Kidek te vorkan medz sirov Didos gû khoser tser masin? gû hisher te inchbisi yergooghadz harkankov ûntooner ek zink. Art, oorakh yem vor gadaryal vûsdahootyoon oonim tser vûra.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Margosi (7:31-37)

Hisoos Dourosi sahmanneren megnelov, Sitoni vûrayov antsav Tegabolisi shaman-neren yev yegav Kalilyayi lijn yezerkû. Yev aha iren perin khool yev hamûr mart mû, khûntûrelov vor tserkû tûne anor vûra. Hisoos zayn ampokhen heroo meg goghm darav, madnerû anor aganchneroon mech tûrav, hedo tûkets yev tûbav anor lezooyin. Aba yergink nayetsav, harachets yev ûsav, -Yeppata, vor gû nûshanage “Patsve”.

Nooyn vayrgyanin anor aganchnerû patsvetsan, yev lezoon patsvelov ûsgûsav ganonavor gerbov khosil. Hedo Hisoos badvirets zhoghovoortin, vor voyeve megoon chûsen. Sagayn inchkan al aniga gû badvirer vor chûdaradzen, anonk aravel chapov gû badmeyin ays masin. Martig dzayr asdijan gû zarmanayin yev gûseyin,

- Այս մարդը ամեն ինչ լաւ կը կատարէ, նոյնիսկ խուլերուն լսել կու տայ եւ համբերուն խօսիլ:

Խաչվերաց

Պօղոս Առաքեալի Կողմէ Գաղատացիներուն Գրուած Նամակէն (6:14-18)

Գալով ինծի, քա՛ւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ աշխարհը մեռած է այլեւս ինծի համար, ինչպէս եւ մեռած եմ աշխարհին համար: Կարելորդ մարդուն թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ, այլ՝ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղ-ուրիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլոր անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխարհիկ հոգերով թող զիս չնեղէ, որովհետեւ եւ Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վերքերուն սպիները կը վկայեն:

Եղբայրնե՛ր, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ Յովհաննէսի (3:13-21)

Ո՛չ որ երկինք ելաւ՝ բացի Մարդու Որդիէն, որ երկինքէն իջաւ, եւ որ երկինքի մէջ է: Եւ ինչպէս Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ Մարդու Որդին պետք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց՝ ո՛չ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ:

-Ays martû amen inch lav gû gadare,
nooynisg khooleroon lûsel gooda yev
hamreroon khosil.

Khachverats

Boghos Arakyali Goghme
Kaghadatsineroon Kûrvadz Namagen
(6:14-18)

Kalov indzi, kav litsi vor mer Diroch Hisoos
Krisdosi khachen zad oorish panov
bardzenam. Ayt khachin michotsav
ashkharhû meradz e aylevs indzi hamar,
inchbes yes meradz yem ashkharhin hamar.
Garevorû martoos tûlpadvadz gam antûlpad
ûllalû che, ayl nor araradz ûllalû.

Togh Asdoodzo khaghaghootyoonûn oo
voghormootyoonû ûllan polor anonts hed
voronk ays ûsgûzpoonkin hamatsayn gabrin,
polor anonts voronk ir ûnderyal
zhoghovoortû gû gazmen.

Aysoohedev, khûntrem, voyeve megû
ashkharhig hokerov togh zis chûneghe,
vorovhedev yes Hisoosi gû badganim,
inchbes marminis vûra verkeroon ûsbinerû
gû vûgayen.

Yeghpayrner, mer Der Hisoos Krisdosi
shûnorhkû tser polorin hed ûlla. Amen.

Hisoos Krisdosi Avedaranen Âsd
Hovhannesi (3:13-21)

Voch vok yergink yelav patsi Martoo
Vortiyen, vor yerginken ichav, yev vor
yerginki mech e. Yev inchbes Movses
bûghintse otsû partsratsoots anabadin mech,
nooynbess al Martoo Vortin bedk e partsrana,
vorbeszi anor havadatsoghû havidenagan
gyank oonena. Vorovhedev Asdvadz aynkan
sirets ashkharhû, vor minchev isg ir miyadzin
Vortin dûvav, vorbeszi anor havadatsoghû
chûgorsûvi, ayl havidenagan gyank oonena.
Vorovhedev Asdvadz ir Vortin ashkharh
ghûrgets voche te vorbeszi ashkharhû
tadabarde, ayl vorbeszi ashkhahû pûrge.

Ով որ կը հաւատայ անոր՝ չի դա-
տապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր՝
արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ
միաձին Որդիին չհաւատալուն համար:

- Եւ դատապարտութիւնը այս է.- Լոյսը
աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն
աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը
գործէին: Ով որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ
լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը
յայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ
ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի
ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին
համաձայն գործուած են:

Մենելոց Խաչվերացի

Պօղոս Առաքելի Կողմէ

Կորնթացիներուն Գրուած Առաջին Նամակէն
(2:6-10)

Սակայն հոգեւոր կատարելութեան հասա-
ներուն իմաստութիւն ալ կը քարոզենք: Բայց
մեր քարոզածը ո՛չ այս աշխարհի
իմաստութիւնն է, ո՛չ ալ այս աշխարհը
կառավարող ոյժերունը, որոնց իշխանութիւնը
շուտով պիտի խափանուի: ⁷Մեր քարոզածը
Աստուծոյ իմաստութիւնն է, որ թաքուն էր եւ
մեզմէ ծածկուած կը մնար մինչեւ հիմա, բայց
որ Աստուած սկիզբէն իսկ, յաւիտեաններէն
առաջ մեզի տալ սահմանած էր, որպէսզի անով
մենք փառաւորուինք: Այս աշխարհի
իշխաններէն ռեւէ մէկը չհասկցաւ այդ
իմաստութիւնը. որովհետեւ եթէ հասկցած
ըլլային՝ խաչը չէին հաներ Տէրը, որ այդ փառքը
պարգեւողն է: Սակայն, ինչպէս գրուած է.-

*«Աստուած զինք սիրողներուն համար
պատրաստեց այնպիսի փառք մը, որ ռեւէ աչք
չէ տեսած, ռեւէ ականջ չէ լսած, եւ ռեւէ մէկուն
միտքէն իսկ չէ անցած»:*

Բայց Աստուած մեզի յայտնեց այդ խորհուրդը
իր Հոգիին միջոցաւ, որովհետեւ Հոգին, որ
ամէն ինչ կը քննէ, զիտէ Աստուծոյ նոյնիսկ
ամենածածուկ ծրագիրները:

Ov vor gû havada anor chi tadabardûvir, isg ov vor chi havadar anor arten isg tadabar-dûvadz e, Asdoodzo miyadzin Vortiyin chûhavadaloon hamar.

-Yev tadabardootyoonû ays e,- Loosyû ashkharh yegav, payts martig khavarû loosyen aveli siretsin, vorovhedev char-oootyoon gû kordzeyin. Ov vor char kordz gû gadare gade loosyû yev loosyin chi kar, vorbeszi ir kordzerû chûhaydnûvin. Sagayn ov vor gû gadare inch vor jûshmarid e loosyin gooka vorbeszi haydni ûlla te ir kordzerû Asdoodzo gamkin hamatsayn kordzûvadz yen.

Merelots Khachveratsi

**Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Arachin
Namagen (2:6-10)**

Sagayn hokevor gadarellootyán hasadzneroon imasdoootyoon al gû karozenk. Payts mer karozađzû voch ays ashkharhi imasdoootyoonûn e, voch al ays ashkharhû garavarogh oozheroönû, voronts ishkhanoootyoonû shoodov bidi khapanvi. Mer karozađzû Asdoodzo imasdoootyoonûn e, vor takoon er yev mezme dzadzgûvadz gû mûnar minchev hima, payts vor Asdvadz ûsgizpen isg, havidyanneren arach mezi dal sahmanadz er, vorbeszi anov menk paravorvink. Ays ashkharhi ishkhanneren voyeve megû chûhasgûtsav ayt imasdoootyoonû, vorovhedev yete hasgûtsadz ûllayin khachû cheyin haner Derû, vor ayt parkû barkevoghûn e. Sagayn, inchbes kûrvadz e,-

“Asdvadz zink siroghneroon hamar badrasdets aynbisi park mû, vor voyeve achk che desadz, voyeve aganch che lûsadz, yev voyeve megoon midken isg che antsadz”.

Payts Asdvadz mezi haydnets ayt khorhoortû ir Hokiyyin michotsav, vorovhedev Hokin, vor amen inch gû kûnne, kide Asdoodzo nooynisg amenadzadzoog dzûrakirnerû.

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Յովհաննէսի (3:22-36)**

Այս հանդիպումէն ետք Յիսուս իր աշակերտներով Հրեաստանի գաւառները գնաց, ուր անոնց հետ կը շրջէր ու կը մկրտէր: Եկաւ Այենոն, Սաղիմի մօտիկ, ուր Յովհաննէս ալ մկրտութիւն կ'ընէր, որովհետեւ առատ ջուր կար հոն: Ժողովուրդը Յովհաննէսին կու գար եւ կը մկրտուէր: Ասիկա կը պատահէր Յովհաննէսի բանտարկութենէն առաջ:

Յովհաննէսի աշակերտներէն ոմանք Հրեայի մը հետ սկսան վիճաբանիլ՝ մաքրութեան վերաբերող ծէսերու մասին: Այդ աշակերտները Յովհաննէսին եկան եւ ըսին.

- Վարդապետ, ան որ քեզի հետ էր Յորդանան գետին միւս կողմը եւ որուն մասին վկայութիւն տուիր, ահաւասիկ ինք ալ կը մկրտէ, ու բոլորն ալ իրեն կ'երթան:

Յովհաննէս պատասխանեց.

- Մարդ ինքնիրմէ ոչինչ կրնայ ընել, եթէ իրեն վերէն՝ Աստուծմէ տրուած չէ: Դուք ներկայ էիք, երբ ձեզի ըսի՝ թէ ես Քրիստոսը չեմ, այլ իրմէ առաջ ղրկուած մէկը: Ով որ հարսը ունի՝ ա՛ն է փեսան. իսկ փեսային բարեկամը, որ մօտը կանգնած է, փեսային ձայնը լսելով մեծապէս կ'ուրախանայ: Ես նոյն այդ ուրախութիւնն է որ ունիմ, եւ իմ ուրախութիւնս կատարեալ է: Ասկէ ետք իր հեղինակութիւնը պէտք է զօրանայ, իսկ ես հրապարակէ պէտք է քաշուիմ:

- Ան որ Աստուծմէ կու գայ՝ բոլորէն գերիվեր է: Ան որ այս աշխարհէն է՝ այս աշխարհին կը պատկանի եւ երկրաւոր բաներու մասին կը խօսի. ան որ երկինքէն կու գայ՝ բոլորէն գերիվեր է. անիկա կը վկայէ իր տեսածներուն եւ լսածներուն մասին, սակայն իր վկայութիւնը ոչ ոք կ'ընդունի: Ով որ անոր վկայութիւնը կ'ընդունի, հաստատած կ'ըլլայ թէ Աստուած ճշմարիտ է: Ան որ Աստուծոյ կողմէ ղրկուած է՝ Աստուծոյ խօսքերը կը քարոզէ, որովհետեւ Աստուած իր Հոգին ամբողջապէս անոր տուած է:

Hisoos Krisdosi Avedaranen Ūsd Hovhannesi (3:22-36)

Ays hantiboomen yedk Hisoos ir ashagerd-
nerov Hūreyasdani kavarnērū kûnats, oor
anonts hed gû shûrcher oo gû mûgûrder.

Yegav Ayenon, Saghimi modig, oor
Hovhannes al mûgûrdootyoon gûner,
vorovhedev arad choor gar hon.
Zhoghovoortû Hovhannesi gookar yev gû
mûgûrdûver. Asiga gû badaher Hovhannesi
pandargootenen arach.

Hovhannesi ashagerdneren vomank Hūryayi
mû hed ûsgûsan vijapanil makrootyan
veraperogh dzeseroo masin. Ayt
ashagerdnerû

Hovhannesi yegan yev ūsin,

-Vartabed, an vor kezi hed er Hortanan kedin
myoos goghmû yev voroon masin
vûgayootyoon dûvir, ahavasig inkûn al gû
mûgûrde, oo polorûn al iren gertan.

Hovhannes badaskhanets,

-Mart inknirme vochinch gûrna ûnel, yete
iren veren Asdoodzme dûrvadz che. Took
nerga eyik, yerp tsezi ūsi te yes Krisdosû
chem, ayl irme arach ghûrgûvadz megû. Ov
vor harsû ooni an e pesan, isg pesayin
paregamû, vor modû ganknadz e, pesayin
tsaynû lûselov medzabes goorakhana. Yes
nooyin ayt orakhootyoonûn e vor oonim, -
yev im oorakhootyoonûs gadaryal e. Asge
yedk ir heghinagootyoonû bedk e zorana, isg
yes hûrabarage bedk e kashvim.

-An vor Asdoodzme gooka poloren keriver e.
An vor ays ashkharhen e ays ashkharhin gû
badgani yev yergravor paneroo masin gû
khosi, an vor yerginken gooka poloren
keriver e, aniga gû vûgaye ir desadzneroon
yev lûsadzneroon masin, sagayn ir
vûgayootyoonû voch vok gûntooni. Ov vor
anor vûgayootyoonû gûntooni, hasdadadz
gûlla te Asdvadz jûshmarid. An vor
Asdoodzo goghme ghûrgûvadz e Asdoodzo
khoskere gû karoze, vorovhedev Asdvadz ir
Hokin ampoghchabes anor dûvadz e.

Հայրը կը սիրէ Որդին եւ ամէն ինչ անոր
յանձնած է: Ով որ կը հաւատայ Որդիին՝
յաւիտենական կեանքը կ'ունենայ, իսկ ան որ
չի հնազանդիր Որդիին՝ կեանք պիտի չունե-
նայ, այլ՝ Աստուծոյ պատիժը պիտի գայ անոր
վրայ:

Խաչվերացէն Ետք Առաջին Կիրակի

Պօղոս Առաքեալի Կողմէ

*Կորնթացիներուն Գրուած Երկրորդ Նամակէն
(10:18-11:10)*

Իսկապէս ընտրուածը ան չէ՝ որ ինքզինք կը
գովէ, այլ ան՝ որ Տիրոջ կողմէ կը գովուի:

Սակայն կը յուսամ քիչ մը ներողամիտ կ'ըլլաք՝
եթէ անմտօրէն եւ ալ պարծենամ, ըրածներս
յիշեցնելով ձեզի: Իսկ դուք համբերութեամբ
լսեցէք:

Եւ ձեզի հանդէպ Աստուծոյ նախանձա-
խնդրութեամբ լեցուած՝ կ'ուզեմ որ միայն
Քրիստոսը սիրէք, ինչպէս մաքուր կոյս մը որ
իր սէրը կը վերապահէ անոր՝ որ իր ամուսինը
պիտի ըլլայ: Բայց կը վախնամ որ ձեր միտքը
ապականի եւ հեռանաք Քրիստոսի հանդէպ
ամբողջական եւ մաքուր նուիրումէն, ճիշդ
ինչպէս Եւան խաբուեցաւ օձին խորամանկ
սուտերէն: Կը վախնամ որ նոյնքան
դիւրութեամբ ընդունիք ո՛րեւէ մէկը՝ որ մեր
քարոզածէն տարբեր փրկիչ մը, ձեր ստացած
Հոգիէն տարբեր հոգի մը, կամ ձեր ընդունած
Աւետարանէն տարբեր աւետարան մը կը
քարոզէ ձեզի:

Չեմ գիտեր թէ եւ ձեր այդ նշանաւոր
"առաքեալ"ներէն բանով մը ետ կը մնա՞մ:
Թէպէտ ճարտար խօսող մը չեմ, բայց խօսածս
գիտեմ: Եւ կարծեմ ատիկա ապացուցանեցի
ձեզի ամէն ինչով: Արդեօք մե՞ղք գործեցի, որ
Աստուծոյ Աւետարանը ձրիօրէն քարոզեցի
ձեզի եւ ինքզինքս խոնարհեցուցի՝ ձեզ
բարձրացնելու համար: Ձեռով մը միւս
եկեղեցիները կողոպտած եղայ, ապրուստս
անոնցմէ առնելով, որպէսզի ձեզի ծառայեմ
ձրիօրէն: Ձեր քով եղած ատենս նոյնիսկ երբ
կարիքի մէջ եղայ՝ ձեզմէ ոեւէ մէկուն բեռ չեղայ:

Hayrû gû sire Vortin yev amen inch anor hantsnadz e. Ov vor gû havada Vortiyin havidenagan gyankû goonena, isg an vor chi hûnazantir Vortiyin gyank bidi choonena, ayl Asdoodzo badizhû bidi ka anor vûra.

Khachveratsen Yedk Arachin Giragin

**Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Yergrort
Namagen (10:18-11:10)**

Isgabes ûndervadzû an che vor inkzink gû kove, ayl an vor Diroch goghme gû kovvi. Sagayn gû hoosam kich mû neroghamid gûllak yete anmûdoren yes al bardzenam, ûradznerûs hishetsûnelov tsezi. Isg took hamperootyamp lûsetsek.

Yes tsezi hanteb Asdoodzo nakhantsa-khûntrootyamp letsvadz goozem vor miyayn Krisdosû sirek, inchbes makoor gooys mû vor ir serû gû verabahe anor vor ir amoosinû bidi ûlla. Payts gû vakhnam vor tser midkû abagani yev heranak Krisdosi hanteb ampoghchagan yev makoor nûviroomen, jisht inchbes Yevan khapvetsav otsin khoramang sooderen. Gû vakhnam vor nooyinkan toorootyamp ûntoonik voyeve megû vor mer karozađen darper pûrgich mû, tser ûsdatşadz Hokiye darper hoki mû, gam tser ûntoonadz Avedaranen darper avedaran mû gû karoze tsezi.

Chem kider te yes tser ayt nûshanavor “arakyal”-neren panov mû yed gû mûnam? Tebed jardar khosogh mû chem, payts khosadzûs kidem. Yev gardzem adiga abatsootsanetsi tsezi amen inchov. Artyok meghek kordzetsi? vor Asdoodzo Avedaranû tsûrioren karozađen tsezi yev inkzinkûs khonarhetsootsi tsez partsratsûneloo hamar. Tsevov mû myoos yegeghetsinerû goghobdadz yegha, abroosdûs anontsme arnelov, vorbeszi tsezi dzarayem tsûrioren. Tser kov yeghadz adenûs nooynisg yerp gariki mech yegha tsezme voyeve megoon

Մակեդոնիայէն եկած եղբայրները հոգացին պետքերս: Եւ ինչպէս անցեալին զգուշացայ, ասկէ ետք եւս ամէն կերպով պիտի զգուշանամ ձեզի բեռ ըլլալէ: Բայց Քրիստոսի ճշմարտութեամբը, որ իմ ներսիդիս է, կ'ըսես՝ թէ այս բաներով պիտի պարծենամ ամբողջ Աքայիայի մէջ, բոլորին պատմելով:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մարկոսի (10:1-12)**

Յիսուս հոնկէ ելլելով՝ եկաւ Հրէաստանի սահմանները, Յորդանան գետին դիմացի կողմը, եւ դարձեալ ժողովուրդը խոնուեցաւ իր շուրջ, եւ ինք իր սովորութեան համաձայն նորէն անոնց կ'ուսուցանէր:

Փարիսեցիները Յիսուսը փորձելու մտադրութեամբ մօտեցան անոր եւ հարցունցին.

- Մեր Օրէնքին համաձայն մէկը իրաւունք ունի՞ իր կինը արձակելու:

Յիսուս անոնց պատասխանեց.

- Մովսէս ի՞նչ օրէնք սահմանեց ձեզի:

Անոնք պատասխանեցին.

- Մովսէս մեզի արտօնութիւն տուաւ բաժանման թուղթ տալու կնոջ եւ արձակելու զայն:

Յիսուս ըսաւ անոնց.

- Մովսէս ձեր խստասրտութեան պատճառով այդ օրէնքը սահմանեց: Սակայն սկիզբէն, արարածներու ստեղծագործութեան ժամանակ, Աստուած «արու եւ էգ ստեղծեց մարդիկը» եւ ըսաւ անոնց. «Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»: Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ՝ մէկ մարմին: Արդ, ռեւէ մէկը թող չբաժնէ անոնք՝ որ Աստուած միացուց:

Տան մէջ աշակերտները դարձեալ նոյն նիւթին շուրջ հարցունցին Յիսուսի: Անիկա պատասխանեց.

- Ով որ իր կինը արձակէ եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ առաջինին դէմ: ¹²Կինն ալ, եթէ իր ամուսինէն արձակուելէն ետք ուրիշի մը հետ ամուսնանայ՝ կը շնայ:

per chegha, Magetonyayen yegadz yeghpayrnerû hokatsin bedkerûs. Yev inchbes antsyalin ûzkooshatsa, asge yedk yevûs amen gerbov bidi ûzkooshanam tsezi per ûllale. Payts Krisdosi jûshmard-ootyampû, vor im nersitis e, gûsem te ays panerov bidi bardzenam ampoghch Akaiyayai mech, polorin badmelov.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Margosi (10:1-12)

Hisoos honge yellelov yegav Hûreyasdani sahmannêrû, Hortanan kedin timatsi goghmû, yev tartsyal zhoghovoortû khûrnûvetsav ir shoorch, yev ink ir sovorootyan hamatsayn noren anonts goosootsaner.

Parisetsinerû Hisoosû portseloo mûdatroot-yamp modetsan anor yev hartsootsin, -Mer Orenkin hamatsayn megû iravoonk ooni ir ginû artsageloo?

Hisoos anonts badaskhanets,

-**Movses** inch orenk sahmanets tsezi?

Anonk badaskhanetsin,

-**Movses** mezi ardonootyoon dûvav pazhan-man tooght daloo gûnoch yev artsageloo zayn. Hisoos ûsav anonts,

-**Movses** tser khûsdasûrootyan badjarov ayt orenkû sahmanets. Sagayn ûsgizpen, araradzneroo ûsdegdhdzakordzootyan zhama-nag, Asdvadz “aroo yev ek ûsdegdhdzets martigû” yev ûsav anonts, ‘Ays badjarov ayrû bidi tsûke ir hayrûn oo mayrû yev ir gûnoch miyana, yev yergookû meg marmin bidi ûllan”. Hedevapar aylevûs yergoo chen, ayl meg marmin. Art, voyeve megû togh chûpazhne anonk vor Asdvadz miyatsoots.

Dan mech ashagerdnerû tartsyal nooyin nooutin shoorch hartsootsin Hisoosi. Aniga badaskhanets,

-**Ov** vor ir ginû artsage yev oorish mû arne shûnootyoon ûradz gûlla arachinin tem. Ginûn al, yete ir amoosinen artsagvelen yedk oorishi mû hed amoosnana gû shûna.

Խաչվերացէն Ետք Երկրորդ Կիրակի

(Վարագայ Խաչ)

Պօղոս Առաքեալի Կողմէ

Գաղտաղիներուն Գրուած Նամակէն

(6:14-18)

Գալով ինծի, քա՛ւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ աշխարհը մեռած է այլեւս ինծի համար, ինչպէս եւ մեռած եմ աշխարհին համար: Կարելորդ մարդու թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ, այլ՝ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլոր անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխարհիկ հոգերով թող զիս չնեղէ, որովհետեւ եւ Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վերքերուն սպիները կը վկայեն:

Եղբայրնե՛ր, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ

Մատթէոսի (24:30-36)

Ապա Մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ, եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն Մարդու Որդին, որ կու գայ ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը:

Թզենին ձեզի թող օրինակ ըլլայ: Երբ տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, զիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, զիտցէք թէ Մարդու Որդիին գալուստը մօտ է եւ արդէն հասնելու վրայ:

*Khachveratsen Yedk Yergrort Giragi
(Varaka Khach)*

**Boghos Arakyali Goghme
Kaghadatsineroon Kûrvadz Namagen
(6:14-18)**

Kalov indzi, kav litsi vor mer Diroch Hisoos Krisdosi khachen zad oorish panov bardzenam. Ayt khachin michotsav ashkharhû meradz e aylevs indzi hamar, inchbes yes meradz yem ashkharhin hamar. Garevorû martoos tûlpadvadz gam antûlpad ûllalû che, ayl' nor araradz ûllalû.

Togh Asdoodzo khaghaghootyoonûn oo voghormootyoonû ûllan polor anonts hed voronk ays ûsgûzpoonkin hamatsayn gabrin, polor anonts voronk ir ûndûryal zhoghovoortû gû gazmen.

Aysoohedev, khûntrem, voyeve megû ashkharhig hokerov togh zis chûneghe, vorovhedev yes Hisoosi gû badganim, inchbes marmnis vûra verkeroon ûsbinerû gû vûgayen.

Yeghpayrner, mer Der Hisoos Krisdosi shûnorhkû tser polorin hed ûlla. Amen.

**Hisoos Krisdosi Avedaranen Âsd
Madteyosi (24:30-36)**

Aba Martoo Vortiyin nûshanû bidi yerevi yerginki mech, yev ashkharhi polor zhoghovoortnerû bidi voghpan, yerp desnen Martoo Vortin, vor gooka amberoos vûra pazmadz zorootyamp yev medz parkov. Yerp medzatsayn poghû hûnche, an ir hûreshdagnerû bidi ghûrge, vorbeszi havaken ir ûndûryalnerû ashkharhi chors goghmeren, yerginki meg dzayren minchev myoosû.

Tûzenin tsezi togh orinag ûlla. Yerp desnek vor anor joogherû gû gagooghnan yev derev gartsagen, kidek te amarû mod e. Nooynbesh al, yerp polor ûsadznerûs gadarvin, kidtsek te Martoo Vortiyin kaloosdû mod e yev arten hasneloo vûra.

Վստահ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

- Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ ալ Որդին, բայց միայն Հայրը:

Խաչվերացէն Եւք Երրորդ Կիրակի

Պօղոս Առաքելի Կողմէ

**Կորնթացիներուն Գրուած Երկրորդ Նամակէն
(13:5-13)**

Քննեցէ՛ք դուք ձեզ, տեսնելու համար թէ նոյն հաւատքին մէջ կը մնա՞ք: Փորձեցէ՛ք դուք ձեզ. Քրիստոս Յիսուսի ներկայութիւնը կը զգա՞ք ձեր ներսիդին, թէ պարզապէս իր անունը կը կրէք: Յուսամ գիտէք, թէ մենք այդ փորձը յաջողապէս կատարած ենք: Եւ կը խնդրենք Աստուծմէ, որ չարիք չգործէք: Ասիկա ըսելով՝ չենք ուզեր մենք մեզ ընտիր ցոյց տալ. ընդհակառակը, կ'ուզենք որ դուք բարին գործէք, նոյնիսկ մեզ ամօթով ձգելու չափ: Որովհետեւ Աստուծոյ ճշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, այլ միայն կրնանք անոր համար աշխատիլ: Ուրախութեամբ յանձն կ'առնենք տկարանալ, միայն թէ դուք զօրանաք: Ուստի կ'աղօթենք որ հետզհետէ կատարեալ ըլլաք: Ասիկա հեռուէն կը գրեմ ձեզի, որպէսզի երբ գամ՝ պէտք չունենամ խստութեամբ վարուելու ձեզի հետ այն իշխանութեամբ՝ որ Տէրը ինծի տուաւ ուղղելու համար, եւ ո՛չ թէ պատժելու:

Կը փակեմ նամակս, եղբայրներ. ո՛րչ եղէք: Կատարեալ ըլլալու աշխատեցէք, քաջալերուեցէ՛ք: Համերաշխ եւ խաղաղութեամբ ապրեցէք իրարու հետ, եւ այն ատեն խաղաղութեան ու սիրոյ Աստուծօր ձեզի հետ պիտի ըլլայ:

Սուրբ համբոյրով ողջունեցէք իրար: Այստեղի քրիստոնէաները կ'ողջունեն ձեզ:

Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիին հաղորդութիւնը ձեր բոլորին հետ ըլլան: Ամէն:

Vûsdah yeghek, vor ays seroontû chantsadz asonk polorû bidi badahin. Noohnisg yete yerginkûn oo yergirû anhedanan, khoskerûs bidi chanhedanan.

-Sagayn voch vok kide te yerp bidi ka ayt orû gam zhamû, voch yerginki hûreshdagnerû, voch al Vortin, payts miyayn Hayrû.

Khachveratsen Yedk Yerrort Giragi
Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Yergort
Namagen (13:5-13)

Kûnnetsek took tsez desneloo hamar te nooyn havadkin mech gû mûnak? Portsetsek took tsez, Krisdos Hisoosi nergayootyoonû gûzkak tser nersûtin? te menk ayt portsû hachoghaves gadaradz yenk. Yev gû khûntrenk Asdoodzme, vor charik chûkordzek. Asiga ûselov chenk oozet menk mez ûndir tsooyts dal, ûnthagaragû, goozenk vor took parin kordzek, noohnisg mez amotov tsûkeloo chap. Vorovhedev Asdoodzo jûshmardootyan tem vochinch gûrnak ûnel, ayl miyayn gûrnank anor hamar ashkhadil. Oorakhootyamp hantsûn garnenk dûgaranal, miyayn te took zoranak. Oosdi gaghotenk vor hedûzhede gadaryal ûllak. Asiga herooyen gû kûrem tsezi, vorbeszi yerp kam bedk choonenam khûsdootyamp varveloo tsezi hed ayn ishkhanootyamp vor Derû indzi dûvav oogheloo hamar, yev voch te badjeloo.

Gû pagem namagûs, yeghpayrner, voghch yeghek. Gadaryal ûllaloo ashkhadetsek, kachalervetsek. Hamerashkh yev khaghaghootyamp abretsek iraroo hed, yev ayn aden khaghaghootyan oo siro Asdvadzû tsezi hed bidi ûlla.

Soorp hampourov voghchoonetsek irar. Aysdeghi krisdonyanerû goghchounen tsez. Der Hisoos Krisdosi shûnorhkû, Asdoodzo serû yev Soorp Hokiyyin haghortoootyoonû tser polorin hed ûllan. Amen.

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մարկոսի (11:27-33)

Յիսուս եւ իր աշակերտները դարձեալ Երուսաղէմ եկան: Մինչ Յիսուս տաճարին մէջ կը պտտէր, իրեն մօտեցան աւագ քահանաները, Օրէնքի ուսուցիչներն ու երէցները եւ հարցունցին.

- Ի՞նչ իշխանութեամբ կը կատարես այս բաները: Ո՞վ քեզի այդ իշխանութիւնը տուաւ:

Յիսուս պատասխանեց անոնց.

- Լա՛ւ, ձեզի պիտի ըսեմ թէ ի՛նչ իշխանութեամբ կ'ընեմ ասոնք, եթէ դուք ալ իմ հարցումիս պատասխանէք: Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը Աստուծմէ՞ տրուած էր իրեն թէ մարդոցմէ: Պատասխանեցէ՛ք տեսնեմ:

Անոնք սկսան իրարու միջեւ խորհիլ եւ ըսել.

- Եթէ ըսենք՝ «Աստուծմէ տրուած էր», մեզի պիտի ըսէ՝ թէ ինչո՞ւ չհաւատացիք իրեն. իսկ «Մարդոցմէ էր» չենք կրնար ըսել՝ ժողովուրդէն վախնալով, որովհետեւ ամէն մարդ գիտէ թէ Յովհաննէս ճշմարտապէս մարգարէ է:

Ուստի պատասխանեցին Յիսուսի.

- Չենք գիտեր:

Յիսուս ալ իրենց հարցումին պատասխանելով ըսաւ.

- Այն ատեն՝ ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ի՛նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները:

Տօն Թարգմանչած

Պօղոս Առաքեալի Կողմէ
Կորնթացիներուն Գրուած Առաջին Նամակէն
(12:4-11)

Թէպէտ շնորհքները զանազան են, բայց նոյն Հոգին է տուողը: Զանազան հոգեւոր պաշտօններ կան, այդ, բայց նոյն Տէրն է զայն բաշխողը: Նոյնպէս ալ, ծառայելու զանազան կարողութիւններ կան, բայց նոյն Աստուածն է որ զանոնք կու տայ իւրաքանչիւրին: Սուրբ Հոգին ամէն մէկուն մէջ կը յայտնուի տարբեր ձեւով մը, հասարակաց օգուտին համար:

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd Margosi
(11:27-33)**

Hisoos yev ir ashagerdnerû tarsyal Yeroosaghem yegan. Minch Hisoos dajarin mech gû bûdûder, iren modetsan avak kahannanerû, Orenki oosoosichnerûn oo yeretsnerû yev hartsootsin,

-Inch ishkhanootyamp gû gadares ays panerû? Ov kezi ayt ishkhanootyoonû dûvav?

Hisoos badaskhanets anonts,

-Lav, tsezi bidi ûsem te inch ishkhanootyamp gûnem asonk, yete took al im hartsoomis badaskhanek. Hovhannesi mûgûrdeloo ishkhanootyoonû

Asdoodzme dûrvadz er iren te martotsme?

Badaskhanetsek desnem.

Anonk ûsgûsan iraroo michev khorhil yev ûsel,

-Yete ûsenk “Asdoodzme dûrvadz er”, mezi bidi ûse te inchoo chûhavadatsik iren, isg “Martotsme er” chenk gûrnar ûsel zhoghovoorten vakhnalov, vorovhedev amen mart kide te Hovhannes jûshmardabes markare e.

Oosdi badaskhanetsin Hisoosi,

-Chenk kider.

Hisoos al irents hartsoomin badaskhanelov ûsav, -Ayn aden yes al tsezi chem ûser te inch ishkhanootyamp gûnem ays panerû.

Don Tarkmanchats

**Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Arachin
Namagen (12:4-11)**

Tebed shûnorhknerû zanazan yen, payts nooyin Hokin e dûvoghû. Zanazan hokevor bashdonner gan, ayo, payts nooyin Derûn e zayn pashkhoghû. Nooyinbes al, dzarayeloo zanazan garoghootyoonner gan, payts nooyin Asdvadzûn e vor zanonk gooda yoorakan-chyoorin. Soorp Hokin amen megoon mech gû haydnûvi darper tsevov mû, hasaragats okoodin hamar.

Այսպէս, Սուրբ Հոգին մէկուն կարողութիւն կու տայ իմաստութեամբ յորդորելու, միւսին՝ նոյն Հոգին կարողութիւն կու տայ հոգեւոր գիտութեան հասնելու եւ ուսուցանելու: Նոյն Հոգին երրորդի մը հաւատք կու տայ, ուրիշի մը՝ բժշկելու զօրութիւն. ուրիշի մը՝ հրաշագործութեան կարողութիւնը կու տայ, ուրիշի մը՝ մարգարեական պատգամախօսութիւն, ուրիշ մէկուն՝ Հոգիէն տրուած պարգեւները ճանչնալու կարողութիւն, ուրիշի մը՝ յափշտակութեան մէջ լեզուներ խօսելու շնորհք, իսկ ուրիշի մը՝ այդ լեզուներով խօսուածը մեկնաբանելու կարողութիւն: Միեւնոյն Հոգին է որ այս բոլորը կը կատարէ՝ իւրաքանչիւրին յատուկ շնորհք մը տալով, ինչպէս որ ինք կ'ուզէ:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մատթէոսի (7:6-12)***

Ոեւէ սրբութիւն շունչուն մի՛ տաք, ձեր մարգարիտներն ալ խոզերուն առջեւ մի՛ նետէք, որպէսզի չըլլայ թէ զանոնք կոխկոտեն եւ դառնան ձեր վրայ յարձակին:

Խնդրեցէ՛ք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտռեցէ՛ք եւ պիտի գտնէք, բաղիւնեցէ՛ք եւ պիտի բացուի ձեզի: Որովհետեւ խնդրողը պիտի ստանայ, փնտռողը պիտի գտնէ եւ բաղիւնողին առջեւ դուռը պիտի բացուի: Ձեր մէջ կա՞յ հայր մը, որուն զաւակը հաց ուզէ եւ ինք քար տայ անոր, եւ կամ օձ տայ՝ երբ զաւակը ձուկ խնդրէ: Արդ, եթէ դուք որ չար էք՝ զիտէք ձեր զաւակներուն լաւ պարգեւներ տալ, ձեր երկնաւոր Հայրը որքա՞ն աւելի լաւ պարգեւներ պիտի տայ անոնց, որոնք իրեն կը դիմեն:

Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէք դուք անոնց. այս սկզբունքը իր մէջ կը խտացնէ Օրէնքն ու մարգարէներու ուսուցումները:

Aysbes, Soorp Hokin megoon garoghootyoon gooda imasdootyamp hortoreloo, myoosin nooyn Hokin garoghootyoon gooda hokevor kidootyán hasneloo yev oosootsaneloo. Nooyn Hokin yerrorti mû havadk gooda, oorishi mû pûjûshgeloo zoroootyoon, oorishi mû hûrashakordzootyan garoghootyoonû gooda, oorishi mû markareyagan badkamakhosootyoon, oorish megoon Hokiyeñ dûrvadz barkevnerû janchnaloo garoghootyoon, oorishi mû hapûshdagootyan mech lezooner khoseloo shûnorhk, isg oorishi mû ayt lezoonerov khosvadzû megnapaneloo garoghootyoon. Miyevnooyñ Hokiyeñ e vor ays polorû gû gadare yoorakanchyoorin hadoog shûnorhk mû dalov, inchbes vor ink gooze.

Hisoos Krisdosi Avedaranen Ûsd Madteyosi (7:6-12)

Voyeve sûrpootyoon shooneeron mi dak, tser markaridnerûñ al khozeroon archev mi nedek, vorbeszi chûlla te zanonk gokhgûrden yev tarnan tser vûra hartsagin.

-Khûntretsek Asdoodzme yev bidi da tsezi, pûndretsek yev bidi kûdnek, paghetsek yev bidi patsvi tsezi. Vorovhedeñ khûntroghû bidi ûsdana, pûndûroghû bidi kûdne yev paghohghin archev toorû bidi patsvi. Tser mech ga hayr mû, vroom zavzgû hats ooze yev ink kar da anor? yev gam ots da yerp zavagû tsoog khûntre. Art, yete took vor char ek kidek tser zavagñeroon lav barkevner dal, tser yergnavor Hayrû vorkan aveli lav barkevner bidi da anonts, voronk ireñ gû timen.

Inch vor goozek vor martig ûnen tsezi, nooyñû ûrek took anonts, ays ûsgûzpoonkû ir mech gû khûdatsûne Orenkûñ oo markareñeroo oosootsoomnerû.

Խաչվերացէն Ետք Չորրորդ Կիրակի

Պօղոս Առաքեալի Կողմէ

***Գաղտացիներուն Գրուած Երկրորդ Նամակէն
(2:1-10)***

Այնուհետեւ, տասնըչորս տարի ետք կրկին Երուսաղէմ գացի Բառնաբասին հետ, Տիտոսն ալ միասին առնելով: Գացի, որովհետեւ Աստուած յայտնեց որ երթամ: Այնտեղ, Երուսաղէմի եկեղեցիին զեկոյց տուի հեթանոսներուն մէջ կատարած քարոզութեանս մասին: Առանձնաբար զեկոյց տուի նաեւ եկեղեցւոյ ղեկավարներուն, որպէսզի զուր տեղը աշխատած չըլլամ եւ չաշխատիմ: Անոնք բնաւ չստիպեցին որ թլփատուի ինծի ընկերացող Տիտոսը, որ հեթանոս Յոյն մըն էր: Թլփատութիւն պահանջողները քանի մը կեղծ քրիստոնէաներ էին, որոնք հաւատացեալներու շարքերուն մէջ սպրդած էին՝ Յիսուս Քրիստոսով մեր ունեցած ազատութիւնը լրտեսելու եւ մեզ Մովսիսական օրէնքներու ծառայութեան մէջ պահելու համար: Բայց վայրկեան մը իսկ տեղի չտուինք անոնց, որպէսզի վստահ ըլլաք՝ թէ ճշմարիտ էր ինչ որ ձեզի քարոզեցինք:

Գալով անոնց՝ որոնք եկեղեցւոյ ղեկավարները կը համարուէին, ինծի համար բնաւ կարելորութիւն չունի թէ անցեալին ինչ եղած են անոնք: Աստուած մարդոց միջեւ խտրութիւն չի դնէր: Արդ, ղեկավար համարուած այդ առաքեալները ոեւէ նոր բան չըսին ինծի այս մասին: Ընդհակառակը, երբ տեսան թէ Աստուած ինծի վստահած է հեթանոսներու քարոզութիւնը, ինչպէս Պետրոսի յանձնած էր Հրեաներու քարոզութիւնը –որովհետեւ Աստուած ինչպէս Պետրոսի առաքելութիւնը յաջողցուց Հրեաներուն մէջ, նոյնպէս ալ իմ առաքելութիւնս յաջողցուց հեթանոսներուն մէջ –, այն ատեն՝ Յակոբոս, Կեփաս եւ Յովհաննէս, որոնք եկեղեցւոյ սիւները կը համարուէին, ճանչցան Աստուծմէ ինծի տրուած շնորհքը, իմ եւ Բառնաբասի ձեռքը

Khachveratsen Yedk Chorrort Giragi
Boghos Arakyali Goghme
Kaghadatsineroon Kûrvadz Namagen
(2:1-10)

Aynoohedev, dasnûchors dari yedk gûrgin Yeroosaghem katsi Parnapasin hed, Didosûn al miyasın arnelov. Katsi, vorovhedev Asdvadz haydnets vor yertam. Ayndegh, Yeroosaghemi yegeghetsiyin zegooyts dûvi hetanosneroon mech gadaradz karozyootyanûs masin. Arantsnapar zegooyts dûvi nayev yegeghetsvo ghegavarneroon, vorbeszi zoor deghû ashkhadadz chûllam yev chashkhadim. Anonk pûnav chûsdibetsin vor tûlpadvı indzi ûngeratsogh Didosû, vor hetanos Hooyın mûn er. Tûlpadootyoon bahanchoghnerû kani mû geghdz krisdonyaner eyin, voronk havadatsyalneroo sharkeroon mech sûbûrtadz eyin Hisoos Krisdosov mer oonetsadz azadootyoonû lûrdeseloo yev mez Movsisagan orenkneroo dzarayootyan mech baheloo hamar. Payts vayrgyan mû isg deghi chûdûvink anonts, vorbeszi vûsdah ûllak te jûshmarid er inch vor tsezi karozyetsink.

Kalov anonts voronk yegeghetsvo ghegavarnerû gû hamarveyin, indzi hamar pûnav garevorootyoon chooni te antsyalin inch yeghadz yen anonk. Asdvadz martots michev khûdrootyoon chi tûner. Art, ghegavar hamarvadz ayt arakyalnerû voyeve nor pan chûsin indzi ays masin. Ūnthagaragû, yerp desan te Asdvadz indzi vûsdahadz e hetanosneroo karozyootyoonû, inchbes Bedrosi hantsnadz er Hûryaneroo karozyootyoonû – vorovhedev Asdvadz inchbes Bedrosi arakelootyoonû hachoghtsoots Hûryaneroon mech, nooyınbes al im arakelootyoonûs hachoghtsoots hetanosneroon mech-, ayn aden Hagopos, Gepas yev Hovhannes, voronk yegeghetsvo syoonerû gû hamarveyin, janchtsan Asdoodzme indzi dûrvadz shûnorhkû, im yev Parnapasi tserkû

թօթուելով հաւանութիւն տուին որ մենք հեթանոսներուն մէջ աշխատինք, իսկ իրենք՝ Հրեաներուն: Միայն խնդրեցին, որ Երուսաղէմի աղքատներուն օգնել չմոռնանք. բան մը, որուն համար ես սրտանց աշխատեցայ:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մարկոսի (12:35-44)**

Յիսուս տաճարին մէջ ուսուցանելու ընթացքին հարցուց ժողովուրդին.

- Օրէնքի ուսուցիչները ի՞նչպէս կ'ըսեն՝ թէ Քրիստոս Դաւիթի Որդին է, երբ Դաւիթ ինք Սուրբ Հոգիէն ներշնչուած՝ կ'ըսէ.-

«Տէրը ըսաւ իմ Տիրոջս.- Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

Եթէ Դաւիթ զայն տէր կը կոչէ, ինչպէ՞ս ուրեմն Քրիստոսը անոր որդին է:

Ժողովուրդը հաճոյքով մտիկ կ'ընէր Յիսուսի, որ իր ուսուցումները շարունակելով՝ կ'ըսէր.

- Զգո՛յ՜ք եղէք Օրէնքի ուսուցիչներէն, որոնք կը սիրեն փառաւոր զգեստներով շրջիլ, հրապարակներու վրայ մարդոցմէ յարգալիր բարեւներ ընդունիլ, ժողովարաններու մէջ առաջին աթոռները գրաւել եւ ընթրիքներու ընթացքին՝ պատուոյ տեղերը: Մէկ կողմէ այրիներուն տուները անոնց ձեռքէն կը յափշտակեն, իսկ միւս կողմէ կեղծաւոր- ութեամբ իրենց աղօթքը կ'երկարեն: Ասոր համար աւելի՛ խիստ դատապարտութիւն պիտի ընդունին:

Յիսուս կեցած էր տաճարի գանձանակին մօտ եւ կը դիտէր ժողովուրդը, որ դրամ կը նետէր գանձանակին մէջ: Շատ մը հարուստներ մեծ գումարներ նետեցին: Աղքատ այրի մըն ալ եկաւ եւ նետեց երկու լումայ, որ քանի մը դահեկան կ'ընէ: Յիսուս մօտը կանչեց իր աշակերտները եւ ըսաւ անոնց.

- Վստա՛հ գիտցէք, որ այս թշուառ այրին բոլորէն շատ դրամ նետած եղաւ գանձանակին մէջ, որովհետեւ միւսները իրենց աւելորդ գումարներէն նետեցին, մինչ անիկա, հակառակ չքաւոր ըլլալուն, ինչ որ ունէր՝ նետեց, իր ամբողջ ապրուստը:

totvelov havanootyoon dûvin vor menk hetanosneroon mech ashkhadink, isg irenk Hûryaneroon. Miyayn khûntretsin, vor Yeroosaghemî aghkadneroon oknel chûmor-nank, pan mû, voroon hamar yes sûrdants ashkhadetsa.

Hisoos Krisdosi Avedaranen Âsd Margosi (12:35-44)

Hisoos dajarin mech oosoosaneloo ûntatskin hartsoots zhoghovoortin,

-Orenki oosootsichnerû inchbes gûsen te Kûrisdos Taviti Vortin e? yerp Tavit ink Soorp Hokiye nershûnchûvadz gûse.

“Derû ûsav im Dirochûs,- Ach goghmûs nûsde, minchev tûshnaminerût vodkeroot dag tûnem vorbes badvantan”.

Yete Tavit zayn der gû goche, inchbes ooremûn Krisdosû anor vortin e?

Zhoghovoortû hajooykov mûdig gûner Hisoosi, vor ir oosoosoomnerû sharoona-gelov gûser,

-Ûzkoosh yeghek Orenki oosootsichneren, voronk gû siren paravor ûzkesdnerov shûrchil, hûrabaragneroo vûra martotsme harkalir parevner ûntoonil, zhoghovaran-neroo mech arachin atonerû kûravel yev ûntrikneroo ûntatskin badvo degherû. Meg goghme ayrineroon doonerû anonts tserken gû hapûshdagen, isg myoos goghme geghdzavorootyamp irents aghotkû gergaren. Asor hamar aveli khisd tadabardootyoon bidi ûntoonin.

Hisoos getsadz er dajari kantsanagin mod yev gû tider zhoghovoortû, vor tûram gû neder kantsanagin mech. Shad mû haroosdner medz koomarner nedetsin. Aghkad ayri mûn al yegav yev nedets yergoo looma, vor kani mû tahegan gûner. Hisoos modû ganchets ir ashagerdnerû yev ûsav anonts.

-Vûsdah kidtsek, vor ays tûshvar ayirin poloren shad tûram nedadz yeghav kantsanagin mech, vorovhedev myoosnerû irents avelort koomarneren nedetsin, minch aniga, hagarag chûkavor ûllaloon, inch vor ooner` nedets, ir ampoghch abroosdû.

Խաչվերացէն Ետք Հինգերորդ Կիրակի

Պօղոս Առաքեալի Կողմէ

Գաղտաղիներուն Գրուած Երկրորդ Նամակէն (4:3-18)

Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ ղրկեց իր Որդին, որ կ'նոցմէ մը ծնաւ եւ Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ ղրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Աբբա», այսինքն «Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ՝ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

Ճիշդ է որ նախապէս երբ զԱստուած չէիք ճանչնար՝ չաստուածներու կը ծառայէիք: Բայց հիմա որ զԱստուած ճանչցանք եւ մանաւանդ Աստուած ալ ձեզ ճանչցաւ, ի՞նչպէս կրկին կը վերադառնաք բնութեան տկար ու խեղճ ոյժերու պաշտամունքին եւ վերստին կ'ուզէք անոնց ծառայել. յատուկ կարեւորութիւն կու տաք որոշ օրերու եւ ամիսներու, որոշ ժամանակներու կամ տարիներու: Կը վախնամ որ ձեզի համար տարած ամբողջ աշխատանքս զուր անցած ըլլայ:

Կը խնդրեմ, եղբայրնէ՛ր, ինծի պէս եղէք, քանի ես ալ ժամանակ մը ձեզի պէս էի:

Ձեզի դէմ բնաւ գանգատ մը չունիմ: Ընդհակառակը. հարկաւ զիտէք թէ սկիզբը, երբ Աւետարանը ձեզի քարոզելու եկայ, տկար էի մարմնով. եւ հակառակ անոր որ հիւանդ վիճակովս փորձանք եղայ ձեզի, չանարգեցիք զիս, ո՛չ ալ արհամարհեցիք. այլ զիս ընդունեցիք այնպէս՝ ինչպէս Աստուծոյ հրեշտակը կամ Քրիստոս Յիսուսը պիտի ընդունէիք. եւ ուրախութեամբ ըրիք ասիկա: Հիմա ի՞նչ պատահեցաւ:

Khachveratsen Yedk Hinkerort Giragi
Boghos Arakyali Goghme
Kaghdotsineroon Kûrvadz Namagen
(4:3-18)

Nooyîn e mer al barakan. Vorkan aden vor hokevorabes anchapahas eyink pûnootyan oozheroon gentargûveyink oo gû dzarayeyink. Payts hima harmar zhamanagû hasadz hamarelov, Asdvadz ashkharh ghûrgets ir Vortin, vor gûnochme mû dzûnav yev Orenkin dag abretsav, vorbeszi mez Orenkin kerootenen pûrge yev Asdoodzo vortiner tartsûne. Art, vorovhedev ir vortinerûn yenk Asdvadz mer sûnderoon mech ghûrgets ir Vortiyin Hokin, vorov zAsdvadz “Appa”, aysinkn “Hayr” gû gochenk. Oosdi aylevûs dzara chek, ayl vorti, yev kani vorti ek Asdoodzo khosdoomû bidi zharanke.

Jisht e vor nakhabes yerp zAsdvadz cheyik janchnar chasdvadzneroo gû dzarayeyik. Payts hima vor zAsdvadz janchtsak yev manavant Asdvadz al tsez janchtsav, inchbes gûrgin gû veratarnak pûnootyan dûgar oo kheghj oozheroo bashdamoonkin? yev verûsdin goozek anonts dzarayel, hadoog garevorootyoon goodak vorosh oreroo yev amisneroo, vorosh zhamanagneroo gam darineroo. Gû vakhnam vor tsezi hamar daradz ampoghch ashkhadankûs zoor antsadz ûlla.

Gû khûntrem, yeghpayrner, indzi bes yeghek, kani yes al zhamanag mû tsezi bes eyi.

Tsezi tem pûnav kankad mû choonim. Ûnthagaragû, hargav kidek te ûsgizpû, yerp Avedaranû tsezi karozelelo yega, dûgar eyi marmnov, yev hagarag anor vor hivant vijagovûs portsank yegha tsezi, chanarketsik zis, voch al arhamarhetsik, ayl zis ûntoonetsik aynbes inchbes Asdoodzo hûresgdagû gam Krisdos Hisoosû bidi ûntooneyik, yev oorakhootyamp ûrik adiga. Hima inch badahetsav?

Կրնամ վկայել ձեզի համար, որ եթե կարելի ըլլար՝ ձեր աչքերը կը հանէիք եւ կու տայիք ինծի: Միթէ ճշմարիտը խօսած ըլլալու համար թշնամի՞ եղայ ձեզի: Մի՛ կարծէք թէ ձեզի հանդէպ մասնաւոր հետաքրքրութիւն ցուցաբերող այդ մարդիկը ձեր բարիքը կը խորհին:

Ո՛չ: Անոնք կ’ուզէն ձեզ ինձմէ բաժնել, որպէսզի ամբողջութեամբ իրենց հետեւիք: Բայց երանի տէ՛ւաբար բարիին նախանձախնդիր ըլլայիք, եւ ո՛չ միայն երբ որ ես ձեր մէջ ներկայ եմ:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (4:14-24)

Յիսուս Գալիլեա վերադարձաւ Սուրբ Հոգիին զօրութեամբ, եւ ամբողջ գաւառին մէջ իր համբաւը տարածուեցաւ: Անոնց ժողովարաններուն մէջ կ’ուսուցանէր՝ արժանանալով բոլորին հիացումին ու գովասանքին:

Եկաւ Նազարէթ քաղաքը, ուր մեծցած էր, եւ իր սովորութեան համաձայն Շաբաթ օր ժողովարան գնաց: Երբ ոտքի ելաւ կարդալու համար օրուան ընթերցուածը, իրեն տուին Եսայի մարգարէին գիրքը: Բացաւ եւ գտաւ այն տեղը ուր կ’ըսէր.-

«Տիրոջ Հոգին վրաս է. որովհետեւ զիս օծեց եւ ղրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները մխիթարելու, զերիներուն ազատութիւն բերելու, կոյրներուն աչքերը բանալու, հարստահարուածները ազատելու եւ յայտարարելու՝ թէ ահա հասած է ժամանակը, երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը»:

Ապա գոցեց գիրքը, տուաւ պաշտօնեային եւ նստաւ: Ժողովարանին մէջ գտնուողներուն բոլորին աչքերը իրեն սեւեռած էին, երբ ըսաւ.

- Այս մարգարէութիւնը որ դուք լսեցիք, ահա այսօր իրականացաւ:

Ամենքն ալ տպաւորուած էին իրմէ եւ հիանալով անոր շնորհալի խօսքերուն վրայ՝ կ’ըսէին.

- Այս մարդը Յովսէփի որդին չէ՞:

Gûnam vûgayel tsezi hamar, vor yete gareli ûllar tser achkerû gû haneyik yev goodayik indzi. Mite jûshmaridû khosadz ûllaloos hamar tûshnami yegha tsezi? Mi gardzek te tsezi hanteb masnavor hedakûrkrootyoon tsootsaperogh ayt martigû tser parikû gû khorhin.

Voch. Anonk goozen tsez intsme pazhnel, vorbeszi ampoghchootyamp irents hedevek. Payts yerani devapar pariyin nakhantsa-khûntir ûllayik, yev voch miyayn yerp vor yes tser mech nerga yem.

Hisoos Krisdosi Avedaranen Ûsd Ghoogasi (4:14-24)

Hisoos Kalilya veratartsav Soorp Hokiyan zorootyamp, yev ampoghch kavarin mech ir hampavû daradzvetsav. Anonts zhoghovaranneroon mech goosootsaner arzhanalov polorin hiyatsoomin oo kovasankin. Yegav Nazaret kaghakû, oor medztsadz er, yev ir sovorootyan hamatsayn Shapat or zhoghovaran kûnats. Yerp vodki yelav gartaloo hamar orvan ûntertsûvadzû, iren dûvin Yesayi markareyin kirkû. Patsav yev kûdav ayn deghû oor gûser,-

“**Diroch** Hokin vûras e, vorovhedev zis odzets yev ghûrgets aghkadneroon pûrgootyan avedis daloo, sûrdapegnerû mûkhitareloo, kerineroon azadootyoon pereloo, gooyreroon achkerû panaloo, harûsdaharvadznerû azadeloo yev haydarareloo te aha hasadz e zhamanagû, yerp Derû bidi pûrge ir zhoghovoortû”.

Aba kotsets kirkû, dûvav bashdonyayin yev nûsdav. Zhoghovaranin mech kûdnûvoghneroon polorin achkerû iren severadz eyin, yerp ûsav,

-**Ays** markareyootyoonû vor took lûsetsik, aha aysor iraganatsav. **Amenkûn** al dûbavorvadz eyin irme yev hiyanalov anor shûnorhali khoskeroon vûra gûseyin, -**Ays** martû Hovsepin vortin che?

Յիսուս ըսաւ.

- Անտարակոյս ինծի պիտի ըսէք հետեւեալ առածը. «Բժիշկ, դուն քեզ բժշկէ»: Եւ ինչ որ լսեցինք՝ որ գործեր եւ Կափառնաումի մէջ, այստեղ՝ քու հայրենի գաւառիդ մէջ ալ կատարէ:

Եւ աւելցուց.

- Բայց դուք ալ զիտէք, որ մարգարէն իր ծննդավայրին մէջ յարգ չունի:

Խաչվերացէն Ետք Վեցերորդ Կիրակի

(Գիւտ Խաչի)

Պօղոս Առաքեալի Կողմէ

*Կորնթացիներուն Գրուած Առաջին Նամակէն
(1:18-24)*

Խաչին մասին քարոզութիւնը յիմարութիւն կը թուի կորուստի ճամբուն մէջ գտնուողներուն համար, մինչ մեզի՝ փրկութեան ճամբուն մէջ գտնուողներու համար Աստուծոյ զօրութիւնն է անիկա: Արդարեւ մարգարէութեան մէջ գրուած է.-

«Իմաստուններուն իմաստութիւնը պիտի խափանեն, խելացիներուն խելքը պիտի կորսնցնեն»:

Այն ատեն ո՞ր պիտի մնան իմաստունները կամ ուսեալները եւ կամ այս աշխարհի հարցերը քննողները: Չէ՞ որ Աստուած ցոյց տուաւ՝ թէ այս աշխարհի իմաստութիւնը յիմարութիւն է: Որովհետեւ աշխարհը իր ունեցած իմաստութեամբ չկրցաւ ճանչնալ զԱստուած եւ անոր իմաստութիւնը, ուստի Աստուած ուզեց յիմարութիւն համարուած խաչին քարոզութեամբ փրկել անոնք՝ որ կը հաւատան: Եւ թէպէտ Հրեաներ հրաշք կ'ուզեն, իսկ Յոյներ իմաստութիւն կը փնտռեն, մենք խաչուած Քրիստոսը կը քարոզենք, որ գայթակղութիւն է Հրեաներուն համար եւ յիմարութիւն՝ հեթանոսներուն համար, թէպէտ նոյն այդ Հրեաներէն ու Յոյներէն կանչուածներուն եւ դարձի եկածներուն համար՝ անիկա Քրիստոսն է, Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը:

Hisoos ûsav,
-Andaragooyis indzi bidi ûsek hedevyal
aradzû, “Pûjishg, toon kez pûjûshge”. Yev
inch vor lûsetsink vor kordzer yes
Gaparnayoomi mech, aysdegh koo hayreni
kavarit mech al gadare.

Yev aveltsoots,
-Payts took al kidtsek, vor markaren ir
dzûnûntavayrin mech hark chooni.

*Khachveratsen Yedk Vetserort Giragi (Kyood
Khachi)*

**Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Arachin
Namagen (1:18-24)**

Khachin masin karozyootyoonû himar-
ootyoon gû tûvi goroosdi jampoon mech
kûdnûvoghneroon hamar, minch mezi
pûrgootyan jampoon mech kûdnûvoghneroos
hamar Asdoodzo zoroootyoonûn e aniga.
Artarev markareyootyan mech kûrvadz e,-
“Imasdoonneroon imasdootyoonû bidi
khapanem, khelatsineroon khelkû bidi
gorsûntsûnem”.

Ayn aden oor bidi mûnan imasdoonnerû gam
oosyalnerû yev gam ays ashkharhi hartserû
kûnnoghnerû?

Che vor Asdvadz tsooyts dûvav te ays
ashkharhi imasdootyoonû himarootyoon e?
Vorovhedev ashkharhû ir oonetsadz imas-
ootyamp chûgûrtsav janchnal zAsdvadz yev
anor imasdootyoonû, oosdi Asdvadz oozets
himarootyoon hamarvadz khachin karozy-
ootyamp pûrgel anonk vor gû havadan. Yev
tebed Hûryaner hûrashk goozen, isg Hooyner
imasdootyoon gû pûndûren, menk khachvadz
Krisdosû gû karozenk, vor kaytagghootyoon
e Hûryaneroon hamar yev himarootyoon
hetanosneroon hamar, tebed nooyin ayt
Hûryaneren oo Hooyneren ganchûvadz-
neroon yev tartsi yegadzneroon hamar aniga
Krisdosûn e, Asdoodzo zoroootyoonû yev
Asdoodzo imasdootyoonû.

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մատթէոսի (24:27-36)**

Որովհետեւ Մարդու Որդին պիտի գայ
կայծակի նման, որ երբ փայլատակէ՝ կը
լուսաւորէ ամբողջ երկնակամարը, արեւելքէն
արեւմուտք: Անգղները կը հաւաքուին հոն՝ ուր
դիակ կայ:

- Նեղութեան այդ օրերէն անմիջապէս ետք
արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի
չփայլի. երկինքէն աստղերը պիտի իյնան եւ
երկնային մարմինները պիտի սասանին: Ապա
Մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի
մէջ, եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի
ողբան, երբ տեսնեն Մարդու Որդին, որ կու գայ
ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ
փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր
հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն
իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն,
երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը:

Թզենին ձեզի թող օրինակ ըլլայ: Երբ տեսնէք
որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ
կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս
ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք
թէ Մարդու Որդիին գալուստը մօտ է եւ արդէն
հասնելու վրայ: Վստահ եղէք, որ այս սերունդը
չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին:
Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան,
խօսքերս պիտի չանհետանան:

- Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ
օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ
ալ Որդին, բայց միայն՝ Հայրը:

**Խաչվերացէն Ետք Եօթներորդ Կիրակի
Պողոս Առաքեալի Կողմէ
Եփեսացիներուն Գրուած Նամակէն
(1:1-14)**

Ես, Պողոս, Աստուծոյ կամքով Քրիստոս Յիսուսի
առաքեալը, կը գրեմ Եփեսոս բնակող
եղբայրներուդ, Քրիստոս Յիսուսի հաւատացող-
ներուդ: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս
Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն
ձեզի:

**Hisoos Krisdosi Avedaranen Ūsd
Madteyosi (24:27-36)**

Vorovhedev Martoo Vortin bidi ka gaydzagi nūman, vor yerp payladage` gū loosavore ampoghch yernagamarū, arevelken arevmoodk. Ankūghnerū gū havakvin hon oor tiyag ga.

-Neghootyan ayt oreren anmichabes yedk arevū bidi khavari yev loosinū aylevs bidi chūpayli, yerginken asdgheerū bidi inan yev yernayin marminnerū bidi sasanin. Aba Martoo Vortiyin nūshanū bidi yerevi yerginki mech, yev ashkharhi polor zhoghovoortnerū bidi voghpan, yerp desnen Martoo Vortin, vor gooka ameroon vūra pazmadz zorootyamp yev medz parkov. Yerp medzatsayn poghū hūnche, an ir hūreshdagnerū bidi ghūrge, vorbeszi havaken ir ūnderyalnerū ashkharhi chors goghmeren, yerginki meg dzayren minchev myoosū.

Tūzenin tsezi orinag togh ūlla. Yerp desnek vor anor jyoogherū gū gagooghnan yev derev gartsagen, kidek te amarū mod e. Nooynbesh al, yerp polor ūsadznerūs gadarvin, kidtsek te Martoo Vortiyin kaloosdū mod e yev arten hasneloo vūra. Vūsdah yeghek, vor ays seroontū chantsadz asonk polorū bidi badahin. Nooynisg yete yerginkūn oo yergirū anhedanan, khoskerūs bidi chanhedanan. Sagayn voch vok kide te yerp bidi ka ayt orū gam zhamū, voch yergūnki hūreshdagnerū, voch al Vortin, payts miyayn Hayrū.

Khachveratsen Yedk Yotnerort Giragi
Boghos Arakyali Goghme
Yepesatsineroon Kūrvadz Namagen
(1:1-14)

Yes, Boghos, Asdoodzo gamkov Krisdos Hisoosi arakyalū, gū kūrem Yepesos pūnagogh yeghpayrneroot, Krisdos Hisoosi havadatsoghneroot. Togh Asdvadz mer Hayrū yev Der Hisoos Krisdos shūnorhk yev khaghaghootyoon barkeven tsezi.

Օրհնեալ է Աստուած, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով մեզ օրհնեց երկինքի մէջ ամէն տեսակ հոգեւոր օրհնութեամբ: Անիկա աշխարհի գոյութենէն իսկ առաջ մեզ ընտրած էր՝ Քրիստոսի միջոցաւ իրեն պատկանելու համար, որպէս սուրբ եւ անարատ ժողովուրդ, եւ իր սիրով մեզ նախասահմանեց՝ Յիսուս Քրիստոսի ձեռքով իր որդիները ըլլալու, որովհետեւ ա՛յդ էր իր կամքը եւ ծրագիրը:

Ուստի գովենք զինք այն փառքին համար՝ որ մեզի շնորհեց իր սիրելի Որդիին միջոցաւ: Արդարեւ, անով փրկուեցանք եւ անոր արիւնով մեր մեղքերուն թողութիւն գտանք: Որքա՛ն մեծ է իր շնորհքը, որ առատօրէն տուաւ մեզի՝ ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ: Որովհետեւ իր կամքին համաձայն մեզի յայտնեց շատ կանուխէն պատրաստած իր ծրագիրը, որ Քրիստոսով պիտի իրագործուի: Եւ այդ ծրագիրը սա է, որ երբ ժամանակները իրենց լրումին հասնին՝ Քրիստոս իրմով պիտի բովանդակէ ամէն ինչ՝ որ կայ երկինքի մէջ եւ երկրի վրայ:

Քրիստոսի միջոցաւ է որ ժառանգորդ դարձանք փրկութեան: Աստուած, որ ամէն ինչ կը յաջողցնէ ըստ իր առաջադրած ծրագրին ու կամքին, անով առաջուց հրաւիրեց մեզ՝ իր փառքը գովերգելու. մենք՝ որ Քրիստոսի յուսացողներուն առաջիններէն եղանք: Դուք ալ, երբ լսեցիք ճշմարիտ քարոզութիւնը, այսինքն Աւետարանը՝ որ ձեզի փրկութիւն բերաւ, հաւատացիք Քրիստոսի եւ խոստացուած Սուրբ Հոգիով կնքուեցաք: Եւ Սուրբ Հոգին գրաւական է՝ թէ պիտի ժառանգենք Աստուծոյ խոստումը, երբ Աստուած պիտի փրկէ իր սեփական ժողովուրդը, որպէսզի իր փառքը գովերգենք:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (8:17-21)**

Չկայ ծածուկ բան որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան՝ որ չգիտցուի եւ երեւան չգայ:

Orhnyal e Asdvadz, mer Diroch Hisoos Krisdosi Hayrû, vor Krisdosov mez orhnets yerginki mech amen desag hokevor orhnootyamp. Aniga ashkharhi koyootenen isg arach mez ûndradz er Krisdosi michotsav iren badganeloo hamar, vorbes soorp yev anarad zhoghovoort, yev ir sirov mez nakhasahmanets Hisoos Krisdosi tserkov ir vortinerû ûllaloo, vorovhede vortinerû ayt er ir gamkû yev dzûrakirû.

Oosdi kovenk zink ayn parkin hamar vor mezi shûnorhets ir sireli Vortiyin michotsav. Artarev, anov pûrgûvetsank yev anor aryoonov mer meghkeroon toghootyoon kûdank. Vorkan medz e ir shûnorkû, vor aradoren dûvav mezi amenayn imasdootyamp yev kidootyamp. Vorovhede vortinerû gamkin hamatsayn mezi haydnets shad ganookhen badrasdadz ir dzûrakirû, vor Krisdosov bidi irakordzûvi. Yev ayt dzûrakirû sa e, vor yerp zhamanagnerû irents lûroomin hasnin Krisdos irmov bidi povantage amen inch vor ga yerginki mech yev yergûri vûra.

Krisdosi michotsav e vor zharankort tartsank pûrgootyan. Asdvadz, vor amen inch gû hachoghtsûne ûsd ir arachatrads dzûrakrin oo gamkin, anov arachoots hûravirets mez ir parkû koverkeloo, menk vor Krisdosi hoosatsoghneroon arachinneren yeghank. Took al, yerp lûsetsik jûshmarid karozyootyoonû, aysinkn Avedaranû vor tsezi pûrgootyoon perav, havadatsik Krisdosi yev khosdatzsvadz Soorp Hokiyov gûnkûvetsak. Yev Soorp Hokin kûravagan e te bidi zharankenk Asdoodzo khosdoomû, yerp Asdvadz bidi pûrge ir sepagan zhoghovoortû, vorbeszi ir parkû koverkenk.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Ghoogasi (8:17-21)

Chûga dzadzoog pan vor chûhaydnûvi yev gam kaghdni pan vor chûkidtsûvi yev Yerevan chûka.

Ուրեմն ուշադիր եղէք թէ ի՛նչպէս կ'ընդունիք այս խօսքերը, որովհետեւ ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողին պիտի առնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը կարծէ թէ ունի:

Յիսուսի մայրն ու եղբայրները իրեն եկան, բայց խուռն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտենալ:

Լուր տուին իրեն, ըսելով.

- Մայրդ եւ եղբայրներդ դուրսն են եւ կ'ուզեն քեզ տեսնել:

Յիսուս ըսաւ.

- Մայրս ու եղբայրներս ասոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն:

Խաչվերացէն Ետք Ութերորդ Կիրակի

Պօղոս Առաքեալի Կողմէ

Եփեսացիներուն Գրուած Նամակէն

(5:15-33)

Հետեւաբար ձեր ապրելակերպին ուշադրութիւն ըրէք: Մի՛ ապրիք անմտօրէն, այլ՝ իմաստուններու պէս: Օգտագործեցէ՛ք ժամանակը, որովհետեւ այս օրերը չար են: Ուստի անմտութիւն մի՛ ընէք. հասկցէք թէ ի՛նչ կ'ուզէ Տէրը ձեզմէ: Գերին մի՛ դառնաք գինիին, որ անատակութեան կը տանի. այլ մասնաւորաբար Սուրբ Հոգիով լեցուեցէք, իրարու հետ սաղմոսներով, օրհնութիւններով եւ հոգեւոր երգերով խօսեցէք, եւ ձեր սիրտերուն մէջ միշտ երգեցէք ու սաղմոս ըսէք Տիրոջ, ամէն բանի համար միշտ շնորհակալութիւն յայտնելով Հօր Աստուծոյ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով:

Քրիստոսի հանդէպ ձեր պատկառանքը արտայայտեցէ՛ք՝ իրարու հնազանդելով:

Կինե՛ք, հնազանդեցէ՛ք ձեր ամուսիններուն, ինչպէս Տիրոջ պիտի հնազանդէիք. որովհետեւ ամուսին մը իր կնոջ գլուխն է, այնպէս՝ ինչպէս Քրիստոս գլուխն է եկեղեցիին, իր մարմինին, որուն Փրկիչն է ինք: Հետեւաբար, ինչպէս եկեղեցին

Ooremûn ooshatir yeghek te inchbes gûntoonik ays khoskerû, vorovhedev oonetsoghin bidi dûrvi, isg choonetsoghen bidi arnûvi nooynisg ayn inch vor gû gardze te ooni.

Hisoosi mayrûn oo yeghpayrnerû iren yegan, payts khorûn pazmootyan badjarov chûgûrtsan iren modenal.

Loor dûvin iren, ûselov,

-Mayrût yev yeghpayrnerût toorsûn yen yev goozen kez desnel.

Hisoos ûsav,

-Mayrûs oo yeghpayrnerûs asonk yen, voronk Asdoodzo khoskû gû lûsen yev gû kordzatren.

Khachveratsen Yedk Ooterort Giragi
Boghos Arakyali Goghme
Yepesatsineroon Kûrvadz Namagen
(5:15-33)

Hedevapar tser abrelagerbin ooshatrootyoon ûrek. Mi abrik anmûdoren, ayl imasdoon-neroo bes. Okdakordzetsek zhamanagû, vorovhedev ays orerû char yen. Oosdi anmûdootyoon mi ûnek, hasgûtsek te inch gooze Derû tsezme. Kerin mi tarnak kiniyin, vor anaragootyan gû dani, ayl masnavorapar Soorp Hokiyov letsvetsek, iraroo hed saghmosnerov, orhnootyoonnerov yev hokevor yerkerov khosetsek, yev tser sirderoon mech mishd yerketsek oo saghmos ûsek Diroch, amen pani hamar mishd shûnorhagalootyoon haydnelov Hor Asdoodzo, mer Diroch Hisoos Krisdosi anoonov.

Krisdosi hanteb tser badgarankû ardahaydetsek iraroo hûnazantelov.

Giner, hûnazantetsek tser amoosinneroon, inchbes Diroch bidi hûnazanteyik, vorovhedev amoosin mû ir gûnoch kûlookhûn e, aynbes inchbes Krisdos kûlookhûn e yegghetsiyin, ir marminin, voroon Pûrgichûn e ink. Hedevapar, inchbes yegeghetsin

Քրիստոսի կը հնազանդի, այնպէս ալ կիները ամէն բանի մէջ իրենց ամուսիններուն թող հնազանդին:

Այրե՛ր, սիրեցե՛ք ձեր կիները այնպէս՝ ինչպէս Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր կեանքը տուաւ անոր համար, որպէսզի ջուրի լուացումով զայն մաքրէ եւ իր խօսքով սրբէ, այնպէս մը՝ որ եկեղեցին իրեն ներկայանայ ամբողջական փառքով, առանց ոեւէ արատի՝ կամ խորշումի կամ ուրիշ թերութեան, այլ ըլլայ սուրբ եւ անարատ: Ճիշդ նոյն ձեւով, ամուսիններ պարտին իրենց կիները սիրել որպէս իրենց մարմինը. որովհետեւ իր կինը սիրողը իր սեփական մարմինը սիրած կ'ըլլայ, եւ չկայ մէկը որ իր մարմինը անտեսէ. ամէն մարդ ալ կը սնուցանէ եւ կը խնամէ իր մարմինը, ինչպէս Քրիստոս կը սնուցանէ եւ կը խնամէ եկեղեցին՝ իր մարմինը, որուն անդամներն ենք բոլորս, անոր մարմինէն ու ոսկորներէն: Սուրբ գիրքին մէջ գրուած է. «*Ահա այս պատճառով այրը պիտի թողու իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան*»: Աստուծոյ ծրագրին կապուած կարելոր ճշմարտութիւն մըն է ասիկա, որ ըստ իս՝ Քրիստոսի եւ եկեղեցիին կը վերաբերի: Բայց նոյնը կը վերաբերի նաեւ ձեզմէ իւրաքանչիւրին, որովհետեւ իւրաքանչիւր այր պէտք է իր կինը սիրէ իր անձին պէս, եւ ամէն կին պէտք է յարգէ իր ամուսինը:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ Ղուկասի (8:49-57)

Մինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ եւ անոր ըսաւ.

- Աղջիկդ մեռաւ, այլեւս մի՛ յոգնեցներ Վարդապետը:

Յիսուս ասիկա լսելով՝ ըսաւ ժողովրդապետին.

- Մի՛ վախնար, միայն հաւատա՛ւ եւ աղջիկդ պիտի ապրի:

Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ, չձգեց որ ոեւէ մէկը ներս մտնէ՝ բացի Պետրոսէն,

Krisdosi gû hûnazanti, aynbes al ginerû amen
pani mech irents amoosinneroon togh
hûnazantin.

Ayrer, siretsek tser ginerû aynbes inchbes
Krisdos sirets yegeghetsin yev ir gyankû
dûvav anor hamar, vorbeszi choori
lûvatsoomov zayn makre yev ir khoskov
sûrpe, aynbes mû vor yegeghetsin iren
nergayana ampoghchagan parkov, arants
voyeve aradi gam khorshomi gam oorish
terootyan, ayl ûlla soorp yev anarad. Jisht
nooyt tsevov, amoosinner bardin irents
ginerû sirel vorbes irents marninû,
vorovhedeve ir ginû siroghû ir sepagan
marminû siradz gûlla, yev chûga megû vor ir
marminû andese, amen mart al gû sûnootsane
yev gû khûname ir marminû, inchbes Krisdos
gû sûnootsane yev gû khûname yegeghetsin`
ir marminû, voroon antamnerûn yenk
polorûs, anor marminen oo vosgorneren.
Soorp kirkin mech kûrvadz e, “Aha ays
badjarav ayrû bidi toghoo ir hayrûn oo mayrû
yev ir gûnoch miyana, yev yergookû meg
marmin bidi ûllan”. Asdoodzo dzûrakin
gabvadz garevor jûshmardootyoon mûn e
asiga, vor ûsd is` Krisdosi yev yegeghetsiyin
gû veraperi. Payts nooytû gû veraperi nayeve
tsezme yoorakanchyoorin, vorovhedeve
yoorakanchyoor ayr mart bedk e ir ginû sire
ir antsin bes, yev amen gin bedk e harke ir
amoosinû.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Ghoogasi (8:49-57)

Minch Hisoos gû khoser, zhoghovûrtabedin
doonen megû yegav yev anor ûsav,

-Aghchigût merav, aylevûs mi hoknetsûner
Vartabedû. Hisoos asiga lûselov ûsav
zhoghovûrtabedin,

-Mi vakhnar, miyayn havada yev aghchigût
bidi abri.

Yerp Hisoos zhoghovûrtabedin doonû hasav,
chûtsûkets vor voyeve megû ners mûdne`

Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն
ու մօրմէն: Ներս գտնուողները բոլորն ալ կու
լային ու կ'ողբային: Յիսուս ըսաւ անոնց.

- Մի՛ լաք, աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ:

Անոնք զինք կը ծաղրէին, որովհետեւ զիտէին
որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս
հանեց, ապա բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձ-
րաձայն ըսաւ.

- Աղջի՛կս, ոտքի՛ ել:

Անմիջապէս անոր հոգին վերադարձաւ եւ
ոտքի կանգնեցաւ: Ապա Յիսուս հրամայեց որ
ուտելիք տան աղջկան, մինչ ծնողները
ապշահար եղած էին: Յիսուս անոնց
պատուիրեց որ պատահածին մասին ռեւէ
մէկուն քան չըսեն:

Խաչվերացէն Եւրբ Իններորդ Կիրակի

Պօղոս Առաքեալի Կողմէ

Փիլիպպեցիներուն Գրուած Նամակէն

(1:1-11)

Պօղոս եւ Տիմոթէոս, Քրիստոս Յիսուսի
ծառանքս, կը գրենք ձեզի՝ Քրիստոս Յիսուսի
միացած բոլոր հաւատացեալներուդ, որ
Փիլիպպէի կողմերը կը բնակիք, ինչպէս նաեւ
Եպիսկոպոսներուն ու սարկաւագներուն: Թող
Աստուած մեր Հայրը եւ Տէրը Յիսուս Քրիստոս
շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Ամէն անգամ որ ձեզ յիշեմ՝ գոհութիւն կը
յայտնեմ իմ Աստուծոյս: Ամէն անգամ որ ձեր
բոլորին համար կ'աղօթեմ՝ ուրախութեամբ
կ'աղօթեմ, որովհետեւ առաջին օրէն մինչեւ
հիմա ձեր մասնակցութիւնը բերիք աւետա-
րանչութեան գործին: Եւ վստահ եմ՝ թէ
Աստուած, որ այդ բարի գործը սկսաւ ձեր մէջ,
զայն իր կատարումին պիտի հասցնէ մինչեւ
Քրիստոս Յիսուսի օրը գայ: Իրաւունք կը
համարեմ այսպէս խորհիլ ձեր բոլորին մասին,
եւ ձեզ սրտիս մէջ ունիմ, որովհետեւ բոլորդ ալ
մասնակից եղաք ինծի վիճակուած շնորհքին,
ըլլա՛յ բանտարկութեանս ընթացքին, ըլլա՛յ
երբ ազատ վիճակով Աւետարանը կը
պաշտպանէի ու կը հաստատէի:

patsi Bedrosen, Hagoposen, Hovhannesen yev aghchûgan hormen oo mormen. Ners kûdnûvoghnerû polorûn al goolayin oo goghpayin. Hisoos ûsav anonts, -Mi lak, aghchigû meradz che, ayl gû kûnana. Anonk zink gû dzaghreyin, vorovhedevid kideyin vor aghchigû meradz e. Hisoos polorûn al toors hanets, aba pûrnets aghchûgan tserken yev partsratsayn ûsav, -Aghchigûs, vodki yel.

Anmichabes anor hokin veratartsav yev vodki ganknetsav. Aba Hisoos hûramayets vor oodelik dan aghchûgan, minch dzûnoghnerû abshahar yeghadz eyin. Hisoos anonts badvirets vor badahadzin masin voyeve megoon pan chûsen.

Khachveratsen Yedk Inerort Giragi
Boghos Arakyali Goghme
Pilibbetsineroon Kûrvadz Namagen
(1:1-11)

Boghos yev Dimoteyos, Krisdos Hisoosi dzaranerûs, gû kûrenk tsezi Krisdos Hisoosi miyatsadz polor havadatsyalneroot, vor Pilibbeyi goghmerû gû pûnagik, inchbes nayeve yebisgobosneroon oo sargavakneroon. Togh Asdvadz mer Hayrû yev Derû Hisoos Krisdos shnorhk yev khaghaghootyoon barkeven tsezi.

Amen ankam vor tsez hishem kohootyoon gû haydnem im Asdoodzoos. Amen ankam vor tser polorin hamar gaghotem oorakhootyamp gaghotem, vorovhedevid arachin oren minchev hima tser masnagtsootyoonû perik ave-daranchootyan kordzin. Yev vûsdah yem te Asdvadz, vor ayt pari kotdzû ûsgûsav tser mech, zayn ir gadaroomin bidi hastsûne minchev Krisdos Hisoosi orû ka. Iravoonk gû hamarem aysbes khorhil tser polorin masin, yev tsez sûrdis mech oonim, vorovhedevid polorût al masnagits yeghak indzi vijagvadz shûnorhkin, ûlla pandargootyanûs ûntatskin, ûlla yerp azad vijagov Avedaran gû bashdbaneyi oo gû hasdadeyi.

Միայն Աստուած գիտէ՝ թէ որքա՛ն կարօտցած եմ ձեզ, Քրիստոս Յիսուսի գորովովը:

Իմ աղօթքս է, որ ձեր սերը աւելի եւ աւելի աճի աստուածգիտութեամբ եւ կատարեալ դատողութեամբ, որպէսզի կարենաք լաւը ընտրել եւ Քրիստոս իր գալստեան օրը ձեզ գտնէ մաքուր եւ ամբասիր, ¹¹եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ արդար գործերով հարստացած՝ պատճառ ըլլաք որ Աստուած փառաւորուի եւ գովուի:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (9:44-50)

- Լաւ մտիկ ըրէք եւ մի՛ մոռնաք ասիկա. Մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը:

Սակայն աշակերտները չհասկցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որպէսզի չհասկնան: Միւս կողմէ ալ՝ կը վախնային իրեն հարցնելու այս մասին:

Աշակերտները սկսան վիճաբանիլ թէ իրենցմէ ո՞վ է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր քով կանգնեցնելով՝ ըսաւ.

- Ով որ ընդունի այս մանուկը իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս կ'ընդունի՝ ընդունած կ'ըլլայ զիս դրկողը: Որովհետեւ ով որ ձեր բոլորին մէջ փոքրիկն է, ան է մեծը:

Յովհաննէս ըսաւ.

- Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ չար ոգիներ կը հանէր եւ մենք արգիլեցինք իրեն, որովհետեւ մեզի հետ չի շրջիր:

Յիսուս ըսաւ.

- Արգելք մի՛ ըլլաք իրեն. որովհետեւ ան որ հակառակ չէ ձեզի, կը նշանակէ թէ ձեր կողմն է:

Miyayn Asdvadz kide te vorkan garodtsdz yem tsez, Krisdos Hisoosi korovovû.

Im aghotkûs e, vor tser serû aveli aji asdvadzakidootyamp yev gadaryal tadoghootyamp, vorbeszi garenak lavû ûndrel yev Krisdos ir kalûsdyan orû tsez kûdne makoor yev ampasir, yev Hisoos Krisdosi michotsav artar kordzerov harûsdatsadz badjar ûllak vor Asdvadz paravorvi yev kovvi.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Ghoogasi (9:44-50)

Lav mûdig ûrek yev mi mornak asiga, Martoo Vortin bidi madnûvi martots tserko. Sagayn ashagerdnerû chûhasgûtsan khoskin imasdû, vorovhedev Asdvadz irentsme dzadzgadz er vorbeszi chûhasgûnan. Myoos goghme al gû vakhnayin iren hartsûneloo ays masin.

Ashagerdnerû ûsgûsan vijapanil te irentsme ov e medzû? Hisoos kidnalov anonts mûdadzoomû, manoog mû arav yev ir kov ganknetsûnelov ûsav,

-Ov vor ûntooni ays manoogû im anoonovûs zis ûntoonadz gûlla, yev ov vor zis gûntooni ûntoonadz gûlla zis ghûrgoghû. Vorovhedev ov vor tser polorin mech pokrigûn e, an e medzû.

Hovhannes ûsav, -Vartabed, megû desank vor koo anoonovût char vokiner gû haner yev menk arkiletsink iren, vorovhedev mezi hed chi shûrchir.

Hisoos ûsav,

-Arkelk mi ûllak iren, vorovhedev an vor hagarag che tsezi, gû nûshanage te tser goghmûn e.

Բարեկենդան Յիսնակի

Պողոս Առաքելի Կողմէ

*Փիլիպպեցիներուն Գրուած Նամակէն
(4:8-24)*

Ի վերջոյ, եղբայրներ, խորհեցէք այն բաները՝ որոնք ճշմարիտ են, պարկեշտ, արդար, մաքուր, սիրելի, բարեհամբաւ, առաքինի եւ գովելի: Եւ գործքով կատարեցէք այն՝ ինչ որ ինձմէ սորվեցաք եւ ընդունեցիք, ինձմէ լսեցիք եւ իմ վրաս տեսաք. եւ Աստուած, որ խաղաղութիւն կու տայ, ձեզի հետ պիտի ըլլայ:

Մեծապէս ուրախացայ Տիրոջմով, որ վերջապէս ձեր միտքը ինկայ եւ ինձմով հետաքրքրուեցաք: Գիտեմ որ նախապէս ալ կը հետաքրքրուէիք ինձմով, բայց զայն արտայայտելու առիթը չունէիք: Ըսել չէ՛մ ուզեր թէ բանի մը կարօտ եմ, որովհետեւ ես ունեցածովս զոհ ըլլալու վարժուած եմ: Զբաւորութիւն ալ ճանչցայ, առատութիւն ալ տեսայ: Վարժուեցայ ամէն տեսակի կացութիւններու եւ պայմաններու. թէ՛ կուշտ ըլլալու եւ թէ՛ անօթի մնալու, թէ՛ առատութեան եւ թէ՛ չքաւորութեան: Ամէն ինչ կրնամ տանիլ շնորհիւ Քրիստոսի, որ զիս զօրացուց: Բայց լաւ ըրիք որ ինձի օգնեցիք ներութեանս մէջ: Դուք ալ գիտէք, ո՛վ Փիլիպպեցիներ, թէ սկիզբը երբ ես Մակեդոնիա եկայ Աւետարանը քարոզելու, ձեզմէ զատ ուրիշ ոեւէ եկեղեցի չմտածեց իր ստացած հոգեւոր բարիքներուն փոխարէն նիւթապէս ինձի օգնելու մասին. մինչ դուք մէկ-երկու անգամ մինչեւ իսկ Թեսաղոնիկէ դրկեցիք ինչ որ ինձի պէտք էր: Ո՛չ թէ ձեր տուածին մասին կը մտածեմ, այլ այն վարձատրութեան՝ որ ձեր հաշտոյն պիտի աւելնայ: Որովհետեւ ես ամէն ինչ ունիմ եւ աւելիով ունիմ, եւ Եպաֆրոդիտոսի ձեռքով ստացայ ձեր առատ նուէրները, որոնք ոեւէ խունկէ աւելի անուշահոտ եւ ոեւէ զոհէ աւելի ընդունելի են Աստուծոյ, իր կամքին համաձայն ըլլալով:

**Boghos Arakyali Goghme
Pilibbetsineroon Kûrvadz Namagen
(4:8-24)**

I vercho, yeghpayrner, khorhetsek ayn panerû voronk jûshmarid yen, bargeshd, artar, makoor, sireli, parehampav, arakini, yev koveli. Yev kordzkov gadaretsek ayn inch vor intsme sorvetsak yev ûntoonetsik, intsme lûsetsik yev im vûras desak, yev Asdvadz, vor khaghaghootyoon gooda, tsezi hed bidi ûlla.

Medzabes oorakhatsa Dirochmov, vor verchabes tser midkû inga yev intsmov hedakûrkûrvetsak. Kidem vor nakhabes al gû hedakûrkûrveyik intsmov, payts zayn ardahaydeloo aritû chooneyik. Ûsel chem oozar te pani mû garod yem, vorovhedev yes oonetsadzovûs koh ûllaloo varzhûvadz yem. Chûkavorootyoon al janchtsa, aradootyoon al desa. Varzhûvetsa amen desagi gatsootyoonneroo yev baymanneroo, te gooshd ûllaloo yev te anoti mûnaloo, te aradootyan yev te chûkavorootyan. Amen inch gûnam danil shûnorhiv Krisdosi, vor zis zoratsots. Payts lav ûrik vor indzi oknetsik neghootyanûs mech. Took al kidek, ov Pilibbetsiner, te ûsgizpû yerp yes Magetonya yega Avedaranû karozele, tsezme zad oorish voyeve yegeghetsi chûmûdadzets ir ûsdatsadz hokevor parikneroon pokharen noutabes indzi okneloo masin, minch took meg – yergoo ankam minchev isg Tesaghonige ghûrgetsik inch vor indzi bedker. Voch te tser dûvadzin masin gû mûdadzem, ayl ayn vartsadrootyan vor tser hashvooyan bidi avelna. Vorovhedev yes amen inch oonim yev aveliyov oonim, yev Yebafrotidosi tserkov ûsdatsa tser arad nûvernerû, voronk voyeve khoonge aveli anooshahod yev voyeve zohe aveli ûntooneli yen Asdoodzo, ir gamkin hamatsayn ûllalov.

Թող ամենառասն Աստուած ի՛նք փառաւորապէս հոգայ ձեր բոլոր պէտքերը, Քրիստոս Յիսուսի ձեռքով: Յաւիտեանս յաւիտենից փա՛ռք Աստուծոյ, մեր Հօրը: Ամէն:

Ողջոյն տուէք Քրիստոս Յիսուսի միացած բոլոր հաւատացեալներուն: Իմ հետս եղող եղբայրները կը բարեւեն ձեզ: Ձեզ կը բարեւեն նաեւ այստեղի բոլոր հաւատացեալները, մանաւանդ կայսրին ծառայութեան մէջ եղողները:

Տէր Յիսուս Քրիստոս իր շնորհքը պարգեւէ ձեր բոլորին: Ամէն:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (11:1-13)***

Պատահեցաւ որ Յիսուս տեղմը կ'աղօթէր: Երբ աղօթելը վերջացուց, իր աշակերտներէն մէկը ըսաւ.

- Տէ՛ր, մեզի աղօթել սորվեցուր, ինչպէս որ Յովհաննէս Մկրտիչ իր աշակերտներուն սորվեցուց:

Յիսուս ըսաւ.

- Երբ կ'աղօթէք, ըսէք.

«Հա՛յր մեր, սրբաբանուի՛ անունդ. թող գայ արքայութիւնդ: Ամենօրեայ մեր հացը շնորհէ՛ մեզի օրէ օր: Եւ ներէ՛ մեր մեղքերը, քանի մենք ալ կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք գործած են: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք»:

Եւ ապա շարունակեց.

Ենթադրենք որ ձեզմէ մէկը բարեկամ մը ունի, որուն կը դիմէ զիշեր ատեն եւ կ'ըսէ. «Բարեկա՛մ, ինձի երեք հաց փոխ տուր, որովհետեւ ճամբորդ բարեկամ մը տունս իջեւանեցաւ եւ ես հրամցնելիք բան չունիմ»: ⁷Անիկա ներսէն կը պատասխանէ, ըսելով. «Մի՛ յոգնեցներ զիս. դռները արդէն իսկ գոցած եմ եւ փոքրիկներս քովս անկողինին մէջ են. հետեւաբար չեմ կրնար ելլել տալ քեզի»: Վստահ եղէք, որ նոյնիսկ եթէ բարեկամութեան սիրոյն չելլէ եւ անոր ուզածը չտայ, սակայն թախանձանքներուն տեղի տալով՝ պիտի կատարէ անոր խնդրանքը:

Togh amenaradûn Asdvadz ink paravorabes hoka tser polor bedkerû, Krisdos Hisoosi tserkov. Havidyans havidenits park Asdoodzo, mer Horû. Amen.

Voghchoun dûvek Krisdos Hisoosi miyatsadz polor havadatsyalneroon. Im hedûs yeghogh yeghpayrnerû gû pareven tsez. Tsez gû pareven nayeve aysdeghi polor havadatsyalnerû, manavant gaysrin dzarayootyan mech yeghoghnerû. Der Hisoos Krisdos ir shûnorhkû barkeve tser polorin. Amen.

Hisoos Krisdosi Avedaranen Âsd Ghoogasi (11:1-13)

Badahetsav vor Hisoos degh mû gaghoter. Yerp aghotelû verchatsoots, ir ashagerdneren megû ûsav,

-Der, mezi aghotel sorvetsoor, inchbes vor Hovhannes Mûgûrdich ir ashagerdneroon sorvetsoots.

Hisoos ûsav, -Yerp gaghotek, ûsek,

“Hayr mer, sûrpapanvi anoonût, togh ka arkayootyoonût.

Amenorya mer hatsû shûnorhe mezi ore or.

Yev nere mer meghkerû, kani menk al gû nerenk anonts voronk mezi tem nooynbeshantsank kordzadz yen. Yev tooyl mi dar vor portsootyanyan mech inank”. Yev aba sharoonagets,

-Yentatrenk vor tsezme megû paregam mû ooni, voroon gû time kisher aden yev gûse, “Paregam, indzi yerek hats pokh door, vorovhedev jamport paregam mû doonûs ichevanetsav yev yes hûramtsûnelik pan choonim”. Aniga nersen gû badaskhane, ûselov, “Mi hoknetsûner zis, tûrnerû arten isg kotsadz yem yev pokrignerûs kovûs angoghinin mech yen, hedevapar chem gûrnar yellel dal kezi”. Vûsdah yeghek vor nooynisg yete paregamootyanyan sirooyne chelle yev anor oozadzû chûda, sagayn takhantsankneroon deghi dalov bidi gadare anor khûntûrankû.

Ես ալ ձեզի կ'ըսեմ.- Խնդրեցէ՛ք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտռեցէ՛ք եւ պիտի գտնէք, բաղխեցէ՛ք եւ պիտի բացուի ձեզի: Որովհետեւ խնդրողը կը ստանայ, փնտռողը կը գտնէ եւ բաղխողին առջեւ դուռը պիտի բացուի: Ձեր մէջ կա՞յ հայր մը, որուն զաւակը ձուկ ուզէ եւ ինք ձուկին փոխարէն օձ տայ անոր, եւ կամ կարիճ տայ՝ երբ զաւակը հաւկիթ խնդրէ: Արդ, եթէ դուք որ չար էք՝ զիտէք ձեր զաւակներուն լաւ պարգէներ տալ, ձեր երկնաւոր Հայրը որքա՛ն աւելի լաւ պարգէւ մը՝ Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որոնք իրեն կը դիմեն:

Յիսնակի Առաջին Կիրակի

Պօղոս Առաքեալի Կողմէ

*Թեսաղոնիկեցիներուն Գրուած Առաջին
Նամակէն (1:1-10)*

Մենք՝ Պօղոս, Սիդուանոս եւ Տիմոթէոս, կը գրենք ձեզի՝ Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին, որ Հօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Շնորհք եւ խաղաղութիւն ձեզի:

Մեր աղօթքներուն մէջ միշտ կը յիշենք ձեզեւ անդադար ձեզի համար գոհութիւն կը մատուցանենք Աստուծոյ: Հօր Աստուծոյ առջեւ միշտ կը յիշենք՝ թէ ի՛նչպէս կեանքի կը վերածէք ձեր հաւատքը, սերէն մղուած կը ծառայէք ուրիշներուն, եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յուսալով՝ ներդրութիւններու կը համբերէք:

Եղբայրնէ՛ր, զիտէք թէ Աստուած ձեզ սիրեց եւ ընտրեց, որովհետեւ մեր քարոզութեամբ Աստուած իր Աւետարանը յայտնեց ձեզի՝ ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ զօրութեամբ, այսինքն՝ Սուրբ Հոգիին ներգործութեամբ, եւ կատարեալ վստահութիւն ներշնչեց ձեզի: Դուք լաւ զիտէք, թէ ձեր մէջ ի՛նչպէս ապրեցանք, ձեզի օրինակ ըլլալու համար: Մեզի նմանելով՝ դուք Տիրոջ նմանած եղաք, քանի որ՝ հակառակ ձեր կրած բոլոր ներդրութիւններուն՝ Սուրբ Հոգիին պարգեւած ուրախութեամբ ընդունեցիք մեր քարոզութիւնը, եւ ձեր այս ընթացքով օրինակ եղաք Մակեդոնիայի եւ Աքայիայի բոլոր

Yes al tsezi gûsem,- Khûntûretsek Asdoodz-me yev bidi da tsezi, pûndretsek yev bidi kûdnek, pagetsek yev bidi patsvi tsezi. Vorovhedevev khûntroghû gûsdana, pûndroghû gû kûdne yev paghoghin archev toorû bidi patsvi. Tser mech ga hayr mû, voroon zavagû tsoog ooze yev ink tsoogin pokharen ots da anor? yev gam garij da yerp zavagû havgit khûntre. Art, yete took vor char ek kidek tser zavagneroon lav barkevner dal, tser yergnavor Hayrû vorkan aveli lav barkev mû Soorp Hokin bidi da anonts, voronk iren gû timen.

Hisnagi Arachin Giragi

**Boghos Arakyali Goghme
Tesaghonigetsineroon Kûrvadz Arachin
Namagen (1:1-10)**

Menk Boghos, Sighvanos yev Dimoteyos, gû kûrenk tsezi Tesaghonigetsineroo yegeghe-tsiyin, vor Hor Asdoodzo yev Der Hisoos Krisdosi gû badgani.

Shûnorhk yev khaghaghootyoon tsezi.

Mer aghotkneroon mech mishd gû hishenk tsez yev antatar tsezi hamar kohootyoon gû madootsanenk Asdoodzo. Hor Asdoodzo archev mishd gû hishenk` te inchbes gyanki gû veradzek tser havadkû, seren mûghvadz gû dzarayek oorishneroon, yev Diroch Hisoos Krisdosi hoosalov` neghootyoon-neroo gû hamperek.

Yeghpayrner, kidek te Asdvadz tsez sirets yev ûndrets, vorovhedevev mer karozyootyamp Asdvadz ir Avedaranû haydnets tsezi` voch miyayn khoskov, ayl nayevev zorozyootyamp, aysinkûn` Soorp Hokiyyin nerkordzyootyamp, yev gadaryal vûsdahootyoon nershûnchets tsezi. Took lav kidek, te tser mech inchbes abretsank, tsezi orinag ûllaloo hamar. Mezi nûmanelov took Diroch nûmanadz yeghak, kani vor` hagarag tser gûradz polor neghootyoonneroon` Soorp Hokiyyin barkevadz oorakhootyamp ûntoonetsik mer karozyootyoonû, yev tser ays ûntatskov orinag yeghak Magetonyayi yev Akayiyayi polor

հաւատացեալներուն:

Արդարեւ, դուք ձեր օրինակով Տիրոջ խօսքը հռչակեցիք ո՛չ միայն Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ, այլեւ ամէն տեղ ուր Աստուծոյ վրայ ունեցած ձեր հաւատքին համբար տարածուեցաւ: Այնպէս որ, այլեւս ո՛չ պէտքը կը զգանք բան մը աւելցնելու, ո՛չ ալ մենք մեզ ներկայացնելու, որովհետեւ ո՛ր որ երթանք՝ մարդիկ իրենք մեր մասին կը պատմեն, թէ ի՛նչպէս ձեզի եկանք, ի՛նչպէս դուք կուտքերը ձգելով Աստուծոյ դարձաք՝ կենդանի եւ ճշմարիտ Աստուծոյ ծառայելու համար, եւ թէ ի՛նչպէս կը սպասէք որ երկինքէն վերստին գայ Աստուծոյ Որդին, Յիսուսը, որ Աստուած մեռելներէն յարուցանեց, եւ որ մեզ պիտի փրկէ գալիք բարկութենէն:

***Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (12:13-31)***

Ժողովուրդէն մէկը Յիսուսի ըսաւ.

- Վարդապէ՛տ, ըսէ՛ եղբօրս, որ մեր հօր ձգած ժառանգութենէն իմ բաժինս տայ ինծի:

Յիսուս պատասխանեց.

- Ո՛վ մարդ, ո՞վ զիս դատաւոր կամ իրաւունքի բաժանարար կարգեց ձեր վրայ:

Ապա դառնալով ժողովուրդին, շարունակեց.

- Նայեցէք եւ զգուշացէ՛ք ազահութեան բոլոր տեսակներէն, որովհետեւ մարդու մը կեանքը կախեալ չէ՛ իր ամբարած հարստութենէն:

Յիսուս անոնց առակ մըն ալ խօսեցաւ եւ ըսաւ.

- Հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին: Անիկա կը մտածէր ու կ'ըսէր. «Ի՞նչ ընելու եմ, որովհետեւ հունձքս ամբարելու համար շտեմարաններուս մէջ տեղ չմնաց: Այո՛, գիտե՛մ ինչ պիտի ընեմ: Պիտի քակեմ շտեմարաններս, աւելի ընդարձակ-ները պիտի շինեմ եւ հոն ամբարեմ ցորենս եւ ամբողջ բերքերս: Ապա ես ինծի պիտի ըսեմ.

havadatsyalneroon.

Artarev, took tser orinagov Diroch khoskû
hrchagetsik voch miyayn Magetonyayi yev
Akayiyayi mech, aylev amen degh oor
Asdoodzo vûra oonetsadz tser havadkin
hampavû daradzvetsav. Aynbes vor, aylevûs
voch bedkû gûzkank pan mû aveltsûneloo,
voch al menk mez nergayatsûneloo,
vorovhede voo vor yertank` martig irenk
mer masin gû badmen, te inchbes tsezi
yegank, inchbes took goorkerû tsûkelov
Asdoodzo tartsak` gentani yev jûshmarid
Asdoodzo dzarayeloo hamar, yev te inchbes
gûsbasek vor yerginken verûsdin ka
Asdoodzo Vortin, Hisoosû, vor Asdvadz
merelneren harootsanets, yev vor mez bidi
pûrge kalik pargootenen.

Hisoos Krisdosi Avedaranen Ûsd Ghoogasi (12:13-31)

Zhoghovoorten megû Hisoosi ûsav,
-Vartabed, ûse yeghporûs, vor mer hor
tsûkadz zharankootenen im pazhinûs da
indzi.

Hisoos badaskhanets,

-Ov mart, ov zis tadavor gam iravoonki
pazhanarar garkets tser vûra?

Aba tarnalov zhoghovoortin, sharoonagets,

-Nayetsek yev ûzkooshatsek akahootyan
polor desagneren, vorovhede martoo mû
gyankû gakhya che ir amparadz
harûsdootenen.

Hisoos anonts arag mûn al khosetsav yev
ûsav,

-Haroosd mart mû gar, voroon arderû arad
perk dûvin. Aniga gû mûdadzer oo gûser,
“Inch ûneloo yem, vorovhede hoontskûs
ampareloo hamar ûshdemaranneroos mech
deghe chûmnats. Ayo, kidem inch bidi ûnem.
Bidi kagem ûshdemarannerûs, aveli
ûntartsagnerû bidi shinem yev hon amparem
tsorenûs yev ampoghch perkerûs. Aba yes
indzi bidi ûsem,

- Ով մարդ, քանի որ երկար տարիներու
համար ամբարած հարստութիւն ունիս,
հանգիստ ըրէ. կէ՛ր, խմէ՛ եւ վայելէ՛»: Բայց
Աստուած ըսաւ իրեն. «Անմիտ մարդ, այս
գիշեր իսկ հոգիդ քեզմէ պիտի առնեն. որո՞ւն
պիտի մնայ պատրաստածդ»:

Եւ Յիսուս եզրակացուց.

- Նոյնն է պարագան բոլոր անոնց, որոնք միայն
իրենց անձերուն համար հարստութիւն կը
դիզեն, փոխանակ Աստուծոյ աչքին
հարստանալու:

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.

- Ահա թէ ինչո՞ւ կ'ըսեմ ձեզի.- Մի՛
մտահոգուիք ձեր կեանքին համար՝ թէ ի՞նչ
պիտի ուտէք, եւ ո՛չ ալ ձեր մարմինին համար՝
թէ ի՞նչ պիտի հագնիք: Որովհետեւ կեանքը
աւելի կարեւոր է քան ուտելիքը, եւ մարմինը
աւելի կարեւոր՝ քան հագուստը: Դիտեցէ՛ք
ագռաւները, որոնք ո՛չ կը սերմանեն, ո՛չ կը
հնձեն, ո՛չ շտեմարաններ եւ ո՛չ ալ ամբարներ
ունին, սակայն Աստուած կը կերակրէ զանոնք:
Իսկ պիտի չկերակրէ՞ ձեզ, դուք՝ որ իր աչքին
թռչուններէն գերազանց էք: Մտահոգուիլը
կանգունով մը կ'երկարէ՞ ձեր հասակը: Եթէ
նուազագոյն բանը չէք կրնար ընել, ինչո՞ւ
ուրեմն ուրիշ բաներով կը մտահոգուիք:
Դիտեցէք եւ տեսէք թէ ի՞նչպէս կ'աճի դաշտի
շուշանը: Ո՛չ կ'աշխատի, ո՛չ կը հիւսէ:
Հաւատացէք, որ նոյնիսկ Սողոմոն իր ամբողջ
փառքին մէջ անոնցմէ մէկուն պէս գեղեցիկ
չկրցաւ հագնիլ: Եթէ Աստուած այդպէս աղուոր
կը հազցնէ խոտը՝ որ այսօր դաշտին մէջ է եւ
վաղը կրակը պիտի նետուի, ձեզ աւելի լաւ
պիտի չհազցնէ՞, թերահաւատնէ՛ր:
Հետեւաբար, մի՛ մտահոգուիք ո՛չ ձեր
ուտելիքով եւ ո՛չ ալ ձեր խմելիքով, եւ մի՛
մտատանջէք դուք ձեզ, որովհետեւ ասոնք
բոլորը հեթանոսներուն յատուկ են: Ձեր Հայրը
գիտէ որ այդ բոլորին պէտք ունիք: Այլ, ուզեցէք
որ Աստուծոյ արքայութիւնը գայ, եւ Աստուած
այդ բոլորը աւելիով պիտի տայ ձեզի:

- Ov mart, kani vor yegar darineroo hamar amparadz harûsdootyoon oonis, hankisd ûre, ger, khûme yev vayeley". Payts Asdvadz ûsav iren, "Anmid mart, ays kisher isg hokit kezme bidi arnen, voroon bidi mûna badrasdadzût?"

Yev Hisoos yezragatsoots,

-Nooynûn e barakan polor anonts, voronk miyayn irents antseroon hamar harûsdootyoon gû tizen, pokhanag Asdoodzo achkin harûsdanaloo.

Aba Hisoos ir ashagerdneroon ûsav,

-Aha te inchoo gûsem tsezi,- Mi mûdahokvik tser gyanki hamar te inch bidi oodek, yev voch al tser marminin hamar te inch bidi haknik. Vorovhedev gyankû aveli garevor e kan oodelikû, yev marminû aveli garevor e kan hakoosdû. Tidetsek akravnerû, voronk voch gû sermanen, voch gû hûntsen, voch ûshdemaranner yev voch al amparner oonin, sagayn Asdvadz gû geragre zanonk. Isg bidi chûgeragre tsez? took vor ir achkin tûrchoonneren kerazants ek. Mûdahokvilû gankoonov mû gergare tser hasagû? Yete nûvazakooyan panû chek gûrnar ûnel, inchoo ooremn oorish panerov gû mûdahokvik? Tidetsek yev desek te inchbes gaji tashdi shooshanû. Voch gashkhadi, voch gû hoouse. Havadatsek, vor nooynisg Soghomon ir ampoghch parkin mech anontsme megoon bes keghetsig chûgûrtsav haknil. Yete Asdvadz aytbes aghvor gû haktsûne khodû vor aysor tashdin mech e yev vaghû gûragû bidi nedvi, tsez aveli lav bidi chûhaktsûne? terahavadner. Hedevapar, mi mûdahokvik voch tser oodelikov yev voch al tser khûmelikov, yev mi mûdadanchek took tsez, vorovhedev asonk polorû hetanosneroon hadoog yen. Tser Hayrû kide vor ayt polorin bedk oonik. Ayl, oozetsek vor Asdoodzo arkayootyoonû ka, yev Asdvadz ayt polorû aveliyov bidi da tsezi.

Ս.Թադէոս եւ Բարթողիմէոս

Պօղոս Առաքեալի Կողմէ

*Կորնթացիներուն Գրուած Առաջին Նամակէն
(12:26-13:10)*

Եթէ մարմինին մէկ անդամը ցաւի՝ բոլոր անդամներն ալ միասին կը ցաւին, իսկ եթէ մէկ անդամը պատուրուի՝ բոլոր անդամներն ալ միասին կ'ուրախանան:

Արդ, դուք թէպէտ առանձին-առանձին անդամներ եք, բայց միասնաբար կը կազմէք Քրիստոսի մարմինը: Այդ մարմինին, այսինքն՝ եկեղեցիին մէջ Աստուած բազմաթիւ անդամներ կարգեց՝ զանազան ծառայութեանց համար. նախ՝ առաքեալները, երկրորդ՝ մարգարէները, երրորդ՝ ուսուցանողները, ապա՝ հրաշագործ զօրութիւն ունեցողները, եւ դէռ՝ բժշկելու շնորհք ունեցողները, ուրիշներուն օգնելու ընդունակները, վարչական կարողութեամբ օժտուածները, յափշտակ-ուրեան մէջ լեզուներ խօսողները եւ այդ լեզուներով խօսուածը մեկնաբանելու աստակ մարդիկը: Արդ, միթէ բոլորը առաքեալ չեն. բոլորը մարգարէ չեն. բոլորը ուսուցանող չեն. բոլորը հրաշագործ զօրութիւն ունի՞ն. միթէ բոլորը բժշկելու շնորհքով օժտուած են. բոլորը լեզուներ խօսելու պարգեւ չունին. կամ բոլորը կրնա՞ն այդ լեզուներով խօսուածը մեկնաբանել: Հետեւաբար՝ ձգտեցէք հասնիլ այն շնորհքներուն, որոնք լաւագոյնն են:

Բայց հիմա ես լաւագոյն ճամբան ցոյց պիտի տամ:

Եթէ մարդոց եւ հրեշտակներու լեզուները խօսիմ, բայց սէր չունենամ, ի՞նչ տարբերութիւն կ'ունենամ պղինձէ շէփորէն որ կը հնչէ, կամ ծնծղաներէն որ կը դողանջեն: Եթէ մարգարէութեան պարգեւը ունենամ, կարենամ բոլոր խորհուրդներու խորքը թափանցել եւ հասնիմ ամբողջական գիտութեան, եւ նոյնիսկ լեռները տեղափոխելու չափ զօրաւոր հաւատք ունենամ, բայց սէր չունենամ, ոչինչ կ'արժեմ:

Soorp Tateyos Yev Partoghomeyos
Boghos Arakyali Goghme
Gorûntatsineroon Kûrvadz Arachin
Namagen (12:26-13:10)

Yete marminin meg antamû tsavi polor antamnerûn al miyasin gû tsavin, isg yete meg antamû badvûvi polor antamnerûn al miyasin goorakhanan.

Art, took tebed arantsin–arantsin antamner ek, payts miyasin gû gazmek Krisdosi marminû. Ayt marminin, aysinkûn yegeghetsiyn mech Asdvadz pazmativ antamner garkets zanazan dzarayootyants hamar, nakh arakyalnerû, yergroort markarenerû, yerrort oosootsanoghnerû, aba hûrashakordz zoroootyoon oonetsoghnerû, yev ter pûjûshgeloo shûnorhk oonetsoghnerû, oorishneroon okneloo ûntoonagnerû, varchagan garoghootyamp ozhdûvadznerû, hapûshdagootyan mech lezooner khosoghnerû yev ayt lezoonerov khosvadzû megnapaneloo adag martigû. Art, mite polorû arakyal yen? polorû markare yen? polorû oosootsanogh yen? polorû hûrashakordz zoroootyoon oonin?. Mite polorû pûjûshgeloo shûnorhkov ozhdûvadz yen? polorû lezooner khoseloo barkevû oonin? gam polorû gûrnan ayt lezoonerov khosvadzû megnapanel? Hedevapar tsûkedsek hasnil ayn shûnorhkneroon, voronk lavakooynûn yen. Payts hima yes lavakooyn jampan tsooyts bidi dam.

Yete martots yev hûreshdagneroo lezoonerû khosim, payts ser choonenam, inch darperootyoon goonenam bûghintse sheporen vor gû hûnche, gam dzûndzghaneren vor gû ghoghanchen? Yete markareyootyan barkevû oonenam, garenam polor khorhoortneroo khorkû tapantsel yev hasnim ampoghchagan kidootyan, yev nooynisg lernerû deghapokheloo chap zoravor havadk oonenam, payts ser choonenam, vochinch garzhem.

Ի՞նչ օգուտ, եթե բոլոր ինչքերս աղքատներուն տամ եւ նոյնիսկ մարմինս կրակի մատնեմ. եթե սէր չունիմ՝ ոչինչով կ'օգտուիմ:

Սէր ունեցողը համբերատար կ'ըլլայ եւ քաղցրաբարոյ: Սէր ունեցողը չի նախանձիր, չի գոռոզանար, չի հպարտանար, անպատշաճ վարմունք չ'ունենար, միայն ինքզինք չի մտածեր, բարկութեամբ չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անիրաւութեան վրայ չ'ուրախանար, այլ՝ ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան: Սէր ունեցողը միշտ կը զիջի, միշտ կը հաւատայ, միշտ կը յուսայ եւ միշտ կը համբերէ:

Սէրը անվախճան է, մինչդեռ այս կեանքին հետ մարգարեական պատգամները վերջ պիտի գտնեն, հրեշտակներու լեզուներով խօսիլը պիտի դադրի, գիտութիւնն ալ վերջ պիտի գտնէ: Այժմ մեր գիտցածը անկատար է եւ մեր մարգարէութիւնն ալ՝ մասնակի: Բայց երբ կատարեալը գայ, այս անկատարութիւնը վերջ պիտի գտնէ:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Մատթէոսի (9:35-10:7)

Յիսուս կը շրջեր բոլոր քաղաքներն ու գիւղերը, կ'ուսուցանէր ժողովարաններուն մէջ, Աստուծոյ արքայութեան աւետիսը կու տար եւ կը բժշկէր ժողովուրդին բոլոր ախտերն ու հիւանդութիւնները: Եւ տեսնելով ժողովուրդի բազմութիւնը, գթաց անոնց, որովհետեւ յոգնած էին եւ ցրուած՝ հովիւ չունեցող ոչխարներու պէս: Այն ատեն իր աշակերտներուն ըսաւ.

- Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ: Հետեւաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ դրկէ:

Յիսուս իր մօտ կանչեց տասներկու աշակերտները եւ անոնց իշխանութիւն տուաւ՝ պիղծ ոգիները իրենց հնազանդեցնելու եւ մարդոցմէ դուրս հանելու զանոնք, ինչպէս նաեւ բժշկելու բոլոր ցաւերն ու հիւանդութիւնները:

Inch okood? yete polor inchkerûs aghkadneroon dam yev nooynisg marminûs

gûragi madnem, yete ser choonim
vochinov gokdûvim.

Ser oonetsoghû hamperadar gûlla yev
kaghtsraparo. Ser oonetsoghû chi nakhantsir,
chi korozanar, chi hûbardanar, anbadshaj
varmoonk choonenar, miyayn inkzink chi
mûdadzer, pargootyamp chi kûrkûrvir,
charootyoon chi khorhir, aniravootyan vûra
choorakhanar, ayl oorakhagits gûlla
jûshmardootyan. Ser oonetsoghû mishd gû
zichi, mishd gû havada, mishd gû hoosa yev
mishd gû hampere. Serû anvakhjan e,
minchter ays gyankin hed markareyagan
badkamnerû verch bidi kûdnen.
Hûreshdagneroo lezoonerov khosilû bidi
tatri,kidootyoonûn al verch bidi kûdne.
Ayzhûm mer kidsadzû angadar e yev mer
markareyootyoonûn al masnagi. Payts yerp
gadaryalû ka, ays angadarootyoonû verch
bidi kûdne.

Hisoos Krisdosi Avedaranen Ûsd Madteyosi (9:35-10:7)

Hisoos gû shûrcher polor kaghaknerûn oo
koougherû, goosootsaner zhoghovaraneroo
mech, Asdoodzo arkayootyan avedisû goodar
yev gû pûzhûshger zhoghovoortin polor
akhderûn oo hivantootyoonnerû. Yev
desnelov zhoghovoorti pazmootyoonû,
kûtats anonts, vorovhedev hoknadz eyin yev
tsûrvadz' hoviv choonetsogh vochkharneroo
bes. Ayn aden ir ashagerdneroon ûsav,

-Hoontskû arad e, payts mûshagnerû kich.
Hedevapar khûntretsek hoontski Dirochmen,
vor ir hoontskin hamar mûshagner ghûrge.

Hisoos ir mod ganchets dasnûyergoo
ashagerdnerû yev anonts ishkhanoootyoon
dûvav bighdz vokinerû irents hûnazante-
tsûneloo yev martotsme toors haneloo
zanonk, inchbes nayevev pûzhûshgeloo polor
tsaverûn oo hivantootyoonnerû.

Տասներկու առաքելներուն անուններն են.-
Առաջին Սիմոն, որ Պետրոս կոչուեցաւ, եւ

եղբայրը՝ Անդրեաս, Ջեբեդէոսի որդիները՝ Յա-
կոբոս եւ եղբայրը Յովհաննէս, Փիլիպպոս եւ
Բարթողոմէոս, Թովմաս եւ Մատթէոս
մաքսաւոր, Ալփէոսի որդին՝ Յակոբոս, եւ
Ղեբէոս, որ Թադէոս կոչուեցաւ, Սիմոն
Նախանձայոյ՝ եւ Յուդա Իսկարիոտացի, որ
մատնեց զինք:

Յիսուս այս տասներկու աշակերտները որկեց՝
անոնց պատուիրելով.

- Մի՛ երթաք հեթանոսներուն շրջանները եւ
Սամարացիներուն քաղաքները մի՛ մտնէք, այլ
մասնաւորաբար գացէք Իսրայէլի կորսուած
ոչխարներուն: Ու երբ կ'երթաք, քարոզեցէք՝ թէ
երկինքի արքայութիւնը մօտեցած է:

Յիսնակի Երկրորդ Կիրակի

Պօղոս Առաքելի Կողմէ

Թեսաղոնիկեցիներուն Գրուած Առաջին

Նամակէն (4:1-11)

Վերջապէս, եղբայրներ, մենք ձեզի
սորվեցուցինք ի՛նչպէս պէտք է ապրիլ
Աստուծոյ հաճելի ըլլալու համար: Թէպէտ
այդպէս կ'ապրիք արդէն, սակայն կը խնդրենք
եւ Տէր Յիսուս Քրիստոսի անունով կը թե-
լադրենք՝ որ շարունակէք յառաջանալ ներկայ
ձեր ընթացքին մէջ: Գիտէք թէ ի՛նչ
պատուէրներ տուինք ձեզի Տէր Յիսուսի
անունով, որովհետեւ Աստուծոյ կամքն է՝ որ
դուք սրբուիք եւ ամենեւին հեռու մնաք
պոռնկութենէ: Ձեզմէ իւրաքանչիւրը թող
սրբութեամբ եւ պատուով ամուսնանայ:
Կրքոտ ցանկութիւններու անձնատուր մի՛
ըլլաք հեթանոսներուն պէս, որոնք զԱստուած
չեն ճանչնար. կամ չըլլա՛յ որ մէկը եղբօր մը դէմ
մեղանչէ՝ անոր կինը յափշտակելով,
որովհետեւ այդ բոլորին համար Տէրը իր
դատաստանին մէջ անողոք պիտի ըլլայ,
ինչպէս սկիզբէն ըսինք ձեզի եւ ազդա-
րարեցինք: Միթէ Աստուած մեր պոծալից
կեանքը շարունակելո՞ւ հրաւիրեց մեզ, թէ
սրբութեամբ ապրելու:

Dasnûyergoo arakyalneroon anoonnerûn yen,
- Arachin` Simon, vor Bedros gochvetsav,
yev yeghpayrû Antreyas, Zepeteyosi vortin-
nerû Hagopos yev yeghpaytû Hovhannes,
Pilibbos yev Partoghomeyos yev Madteyos
maksavor, Alpeyosi vortin Hagopos, yev
Ghepeyos, vor Tateyos gochvetsav, Simon
Nakhantsahooyz yev Hoota Isgariyodatsi,
vor madnets zink.

Hisoos ays dasnûyergoo ashagerdnerû
ghûrgets anonts badvirelov,

-Mi yertak hetanosneroon shûrchannerû yev
Samaratsineroon kaghaknerû mi mûdnek, ayl
masnavorapar katsek Israyeli gorsûvadz
vochkharneroon. Oo yerp gertak, karozetsek
te yerginki arkayootyoonû modetsadz e.

Hisnagi Yrgrort Giragi

**Boghos Arakyal Goghme
Tesaghonigetsineroon Kûrvadz Arachin
Namagen (4:1-11)**

Verchabes, yeghpayrner, menk tsezi so
rvetsootsink te inchbes bekd e abril
Asdoodzo hajeli ûllaloo hamar. Tebed aytbes
gabrik arten, sagayn gû khûntrenk yev Der
Hisoos Krisdosi anoonov gû telatrenk vor
sharoonagek harachanal nerga tser ûntatskin
mech. Kidek te inch badverner dûvink tsezi
Der Hisoosi anoonov, vorovhedev Asdoodzo
gamkûn e vor took sûrpûvik yev amenevin
hero mûnak bornûgootene. Tsezme
yoorakanchoorû togh sûrpootyamp yev
badvov amosnana. Gûrkod tsangootyoon-
neroo antsnadoor mi ûllak hetanosneroon
bes, voronk zAsdvadz chen janchnar, gam
chûlla vor megû yeghpor mû tem meghanche
anor ginû hapûshdagelov, vorovhedev ayt
polorin hamar Derû ir tadasdanin mech
anoghok bidi ûlla, inchbes ûsgizpen ûsink
tsezi yev aztararetsink. Mite Asdvadz mer
bûghdzelits gyankû sharoonageloo hûravirets
mez? te sûrpootyamp abreloo. Anshooshd te
sûrpootyamp abreloo.

Անշուշտ թէ սրբութեամբ ապրելու: Հետե-
ւաբար, ով որ սրբութեան այս պատուերը
կ'արհամարհէ՝ մարդ մը անարգած չ'ըլլար,
այլ՝ նոյնինքն զԱստուած, որ իր Սուրբ Հոգին
կու տայ մեզի:

Գալով եղբայրսիրութեան, մեր գրելուն պէտք
չունիք, որովհետեւ ինքնին դուք Աստուծմէ
ստրված էք իրար սիրել, ինչպէս արդէն
գործնապէսայդ սերը ցոյց կու տաք ամբողջ
Մակեդոնիայի բոլոր եղբայրներուն նկատ-
մամբ: Բայց դարձեալ, եղբայրնե՛ր, կը խնդրենք
որ աւելի առատանաք ձեր սիրոյն մէջ, ջանաք
հանդարտ կեանք մը վարել, միայն ձեր գործին
նայիլ եւ ձեր աշխատանքի վաստակով ապրիլ,
ինչպէս որ պատուիրե-ցինք ձեզի:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ
Ղուկասի (13:1-9)**

Ոմանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն
Գալիլ եացիներուն մասին, որոնք Պիղատոսի
կողմէ սպաննուեցան, երբ Աստուծոյ զոհ կը
մատուցանէին: Յիսուս անոնց ըսաւ.

- Կը կարծէ՞ք թէ սպաննուող Գալիլեացիները
միւս բոլոր Գալիլեացիներէն աւելի մեղաւոր
էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ո՛չ:
Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ դուք
բոլորդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: Կամ ի՞նչ
կը մտածէք այն տասներուք մարդոց մասին,
որոնց վրայ ինկաւ աշտարակը Սելւովամի մէջ
եւ սպաննեց զանոնք: Անոնք աւելի՞ յանցաւոր
էին քան Երուսաղէմի բոլոր բնակիչները: ⁵Ո՛չ:
Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ բոլորդ ալ
նոյնպէս պիտի կորսուիք:

Անոնց հետեւալ առակը պատմեց.

- Մարդ մը կար, որ իր այգիին մէջ թզենի մը
տնկած էր: Թուզ քաղելու գնաց, բայց թզենիին
վրայ պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. «Այս
երբորդ տարին է որ կու գամ թուզ քաղելու,
բայց չեմ գտներ: Ուստի կտրե՛ գայն, ինչո՞ւ
անիմաստ կերպով տեղ գրաւէ»: Այգեպանը
պատասխանեց. «Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ.
Ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարար-
տացուցիչ կը դնեմ: Այս ձեռով թերեւս պտուղ
տայ. ապա թէ ոչ՝ գալ տարի կտրե՛ գայն»:

Hedevapar, ov vor sŭrpootyan ays badverŭ garhamarhe mart mŭ anarkadz chŭllar, ayl nooyinkŭn zAsdvadz, vor ir Soorp Hokin gooda mezi.

Kalov yeghpayrasirootyān, mer kŭreloon bedk choonik, vorovhedev inknin took Asdoodzme sorvadz ek irar sired, inchbes artēn kordznabes ayt serŭ tsooyts goodak ampoghch Magetonyayi polor yeghpayr-neroon nŭgadmamp. Payts tartsyāl, yeghpayrner, gŭ khŭntrenk vor aveli aradanak tser sirooyñ mech, chanak hantard gyank mŭ varel, miyayñ tser kordzin nayil yev tser ashkhadanki vasdagov abril, inchbes vor badviretsink tsezi.

Hisoos Krisdosi Avedaranen Ŭsd Ghoogasi (13:1-9)

Vomank yegan Hisoosi yev badmetsin ayn Kalilyatsineroon masin, voronk Bighadosi goghme ŭsbannŭvetsan, yerp Asdoodzo zoh gŭ madootsaneyin. Hisoos anonts ŭsav,

-Gŭ gardzek te ŭsbannŭvogh Kalilyatsinerŭ myoos polor Kalilyatsineren aveli meghavor eyin? vor aytbisi vakhjan mŭ oonetsan. Voch. Gŭsem tsezi, vor yete chabashkharek took polorŭt al nooyñbes bidi gorsŭvik. Gam inch gŭ mŭdadzek ayn dasnŭootŭ martots masin, voronts vŭra ingav ashdaragŭ Selovami mech yev ŭsbannets zanonk. Anonk aveli hantsavor eyin kan Yeroosaghemī polor pŭnagichnerŭ?. Voch. Gŭsem tsezi, vor yete chabashkharhek polorŭt al nooyñbes bidi gorsŭvik.

Anonts hedevyal aragŭ badmets,

-Mart mŭ gar, vor ir aykiyñ mech tŭzeni mŭ dŭngadz er. Tooz kagheloo kŭnats, payts tŭzeniyñ vŭra bŭdoogh chŭkŭdav. Aykeba-nin ŭsav, “Ays yerrort darin e vor gookam tooz kagheloo, payts chem kŭdner. Oosdi gŭdre zayñ, inchoo animasd gerbov degh kŭrave? Aykebanŭ badaskhanets, “Der togh ays dari al mŭna, yes ir shoorchī hoghŭ gŭrgin gŭ porem yev barardatsootsich gŭ tŭnem. Ays tsevov terevŭs bŭdoogh da, aba te voch kal dari gŭdre zayñ”.

Յիսնակի Երրորդ Կիրակի

Պօղոս Առաքելի Կողմէ

*Թեսաղոնիկեցիներուն Գրուած Երկրորդ
Նամակէն (1:1-12)*

Մենք՝ Պօղոս, Սիդուանոս եւ Տիմոթէոս, կը գրենք ձեզի՝ Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին, որ մեր Հօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Թող Աստուած՝ մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Եղբայրնէ՛ր, պարտք կը զգանք եւ արդար կը գտնենք ձեզի համար միշտ գոհութիւն յայտնել Աստուծոյ, որովհետեւ ձեր հաւատքը հետզհետէ աւելի կ'աճի եւ ձեզմէ իւրաքանչիւրին սերը իրարու հանդէպ աւելի կը խորանայ: Աստուծոյ եկեղեցիներուն մէջ մենք կը պարծենանք ձեզմով, այն համբերութեան եւ հաւատքին համար, որ դուք ցուցաբերեցիք ձեր կրած բոլոր հալածանքներուն եւ նեղութիւններուն մէջ:

Ձեր համբերութիւնն ու հաւատքը ապացոյցը պիտի ըլլան Աստուծոյ արդար դատաստանին, որովհետեւ դուք արժանի պիտի ըլլաք Աստուծոյ արքայութեան, որուն համար այդքան կը տանջուիք: Արդարեւ, Աստուծոյ համար արդարութիւն պիտի ըլլայ ձեզ չարչարողները տանջանքով պատժել, իսկ ձեզի՝ տանջուածներուդ՝ հանգիստ պարգեւել մեզի հետ միասին, երբ մեր Տէրը Յիսուս հրեշտակներու իր բանակով երկինքէն յայտնուի: Անիկա բոցավառ կրակով պիտի պատժէ անոնք՝ որոնք կը մերժեն զԱստուած ճանչնալ եւ հնազանդիլ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Աւետարանին: Այն օրը, այդպիսիները յաւիտենական մահուամբ պիտի պատժուին, զրկուելով Տիրոջ ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն, երբ անիկա գայ իր սուրբերուն մէջ փառաւորուելու եւ բոլոր իրեն հաւատացողներուն հիացումին առարկան ըլլալու:

Այն օրը դո՛ւք ալ անոնց մէջ պիտի ըլլաք, որովհետեւ հաւատացիք մեր տուած վկայութեան:

Boghos Arakyali Goghme
Tesaghonigetsineroon Kûrvadz Yergrort
Namagen (1:1-12)

Menk Boghos, Sighvanos yev Dimoteyos, gû kûrenk tsezi Tesaghonigetsineroo yegeghe-tsiyin, vor mer Hor Asdoodzo yev Der Hisoos Krisdosi gû badgani. Togh Asdvadz mer Hayrû yev Der Hisoos Krisdos shûnorhk yev khaghaghootyoon barkeven tsezi.

Yeghpayrner, bardk gûzkank yev artar gû kûdnenk tsezi hamar mishd kohootyoon haydnel Asdoodzo, vorovhedev tser havadkû hedûzhede aveli gaji yev tsezme yoorakanchyoorin serû iraroo hanteb aveli gû khorana. Asdoodzo yegeghe-sineroon mech menk gû bardzenank tsezmov, ayn hamperootyan yev havadkin hamar, vor took tsootsaperetsik tser gûradz polor haladzankneroon yev neghootyoonneroon mech.

Tser hamperootyoonûn oo havadkû abatsooyts bidi ûllan Asdoodzo artar tadasdanin, vorovhedev took arzhani bidi ûllak Asdoodzo arkayootyan, voroon hamar aytkan gû danchûvik. Artarev, Asdoodzo hamar artarootyoon bidi ûlla tsez charcharoghnerû danchankov badzhel, isg tsezi` danchûvadzneroot` hankisd barkevel mezi hed miyasın, yerp mer Derû Hisoos hûreshdagneroo ir panagov yerginken haydnûvi. Aniga potsavar gûragov bidi badzhe anonk voronk gû merzhen zAsdvadz janchnal yev hûnazantil mer Diroch Hisoos Krisdosi Avedaranin. Ayn orû, aytbisinerû havidenagan mahvamp bidi badzhûvin, zûrgûvelov Diroch nergayootenen yev anor paravor zorootenen, yerp aniga ka ir soorperoon mech Paravoreloo yev polor iren havadatsoghneroon hiyatsoomin arargan ûllaloo.

Ayn orû took al anonts mech bidi ûllak, vorovhedev havadatsik mer dûvadz vûgayootyan.

Ահա թէ ինչու՝ միշտ կ'աղօթենք ձեզի համար, որպէսզի Աստուած ձեզ արժանի ընէ այդ կոչումին, իր զօրութեամբ կատարէ ձեր բոլոր բարի փափաքները եւ արդիւնաւորէ ձեր հաւատքը, որպէսզի ձեզմով փառաւորուի մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը, եւ դուք փառաւորուիք իրմով, մեր Աստուծոյն եւ Տիրոջ Յիսուս Քրիստոսի պարգեւած շնորհքովը:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (14:12-24)

Ապա Յիսուս տանտիրոջ ըսաւ.

- Երբ ճաշի կամ ընթրիքի հրաւեր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, ազգականներդ եւ հարուստ դրացիներդ, որպէսզի չըլլայ որ անոնք ալ քու հրաւերիդ փոխարէն քեզ հրաւիրեն, եւ այս ձեռով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ճաշկերոյթ կու տաս, կանչէ աղքատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք փոխարէն քեզի հատուցանելիք ոչինչ ունին: Եւ զիտցած եղիր, որ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ:

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքերը լսեց, ըսաւ Յիսուսի.

- Երանի՛ անոր որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ:

Յիսուս անոր հետեւեալ առակը պատմեց.

- Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն իր ծառան ղրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. «Եկէք, ամէն ինչ պատրաստ է արդէն»: Հրաւիրեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. «Արտ մը գնեցի, պէտք է երթամ եւ տեսնեմ զայն, հետեւաբար կը խնդրեմ որ ներողամիտ գտնուի»: Միւսը ըսաւ. «Հինգ գոյգ եզ գնեցի, պէտք է երթամ փորձեմ զանոնք, հետեւաբար կը խնդրեմ որ ներողամիտ գտնուի»: Ուրիշ մը ըսաւ.

Aha te inchoo mishd gaghotenk tsezi hamar, vorbeszi Asdvadz tsez arzhanî ûne ayt gochoomin, ir zorootyamp gadare tser polor pari papaknerû yev artyoonavore tser havadkû, vorbeszi tsezmov paravorvi mer Der Hisoos Krisdosi anoonû, yev took paravorvik irmov, mer Asdoodzooyî yev Diroch Hisoos Krisdosi barkevadz shûnorhkovû.

Hisoos Krisdosi Avedaranen Âsd Ghoogasi (14:12-24)

Aba Hisoos dandiroch ûsav,

-Yerp jashi gam ûntriki hûraver goodas, mi gancher paregamnerût gam yeghpayrnerût, azkagannerût yev haroosd tûratsinerût, vorbeszi chûlla vor anonk al koo hûraverit pokharen kez hûraviren, yev ays tsevov kezi hadootsoom gadaradz ûllan. Ênthagaragû, yerp jashgerooyt goodas, ganche aghkadnerûn oo kheghantamnerû, gagherûn oo gooyrerû yev ayn aden yeraneli bidi ûllas, vorovhede v anonk pokharenû kezi hadootsanelik vochinch oonin. Yev kidsadz yeghir, vor koo hadootsoomût bidi ûsdanas artarneroo harootyan zhamanag.

Yerp seghanagitsneren megû ays khoskerû lûsets, ûsav Hisoosi, -Yerani anor vor Asdoodzo arkayootyan mech jash bidi oode.

Hisoos anor hedevyal aragû badmets,

-Mart mû gar, vor medz ûntrik mû sarkets yev shader hûravirets. Êntriki zhamoon ir dzaran ghûrgets, vorbeszi hûraviryalneroon ûse, “Yegek, amen inch badrasd e arten”.

Hûraviryalnerû ûsgûsan meg ar meg hûrazharil. Arachinû ûsav,

“Ard mu kûnetsi, bedk e yertam yev desnem zayn, hedevapar gû khûntrem vor neroghamid kûdnûvi”. Myoosû ûsav. “Hink zooyk yez kûnetsi, bedk e yertam portsem zanonk, hedevapar gû khûntrem vor neroghamid kûdnûvi”. Oorish mû ûsav,

«Տակաւին նոր ամուսնացայ, հետեւաբար չեմ կրնար գալ»: Ծառան վերադարձաւ եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները: Այն ատեն տանտերը վրդոված՝ ըսաւ ծառային. «Անմիջապէս քաղաք գնա եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ որքան որ աղբատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես՝ բոլորն ալ հոս բեր»: Քիչ ետք ծառան վերադառնալով իր տիրոջ ըսաւ. «Տէ՛ր, հրամանդ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ»: Տէրը ծառային հրամայեց. «Քաղաքէն դուրս գնա եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ ո՛վ որ գտնես՝ ստիպէ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կ’ըսեմ ձեզի, որ առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը իմ ընթրիքես պիտի ճաշակէ»:

Յիսնակի Չորրորդ Կիրակի

Պօղոս Առաքեալի Կողմէ

Եբրայեցիներուն Գրուած Նամակէն (1:1-14)

Անցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ: Աստուած զինք ամէն բանի ժառանգորդ կարգեց եւ անոր միջոցաւ էր որ տիեզերքը ստեղծեց: Որդին, Հօրը փառքին լոյսը եւ անոր էութեան ճշգրիտ պատկերը, որ իր խօսքին զօրութեամբ տիեզերքը կը պահէ, իր անձով մեր մեղքերը սրբելէ ետք՝ երկինքի մէջ նստաւ: Աստուծոյ՝ Գերագոյն Զօրութեան, աջ կողմը:

Անիկա շատ աւելի բարձր է հրեշտակներէն, ինչպէս Աստուծմէ իրեն տրուած գերազանց անունը ցոյց կու տայ. որովհետեւ ո՞ր մէկ հրեշտակին երբեւիցէ Աստուած ըսաւ. «Դուն իմ որդիս ես, այսօր քեզ ծնայ»: Կամ ո՞ր մէկ հրեշտակին ըսաւ. «Ես անոր հայր պիտի ըլլամ եւ անիկա՝ ինծի որդի»: Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին աշխարհ կը դրկէր, ըսաւ. «Աստուծոյ բոլոր հրեշտակները թող պաշտեն զայն»:

“Dagavin nor amoosnatsa, hedevapar chem gûrnar kal”. Dzaran veratartsav yev ir diroch

badmets anonts ûsadznerû. Ayn aden danderû vûrtovadz ûsav dzarayin, “Anmichabes kaghak kûna yev hûrabaragneroon oo poghotsneroon mech vorkan vor aghkad, kheghantam, gagh yev gooyr desnes polorûn al hos per”. Kich yedk dzaran veratarnalov ir diroch ûsav, “Der, hûramanût gadaretsi, payts dagavin degh ga”. Derû dzarayin hûramayets, “Kaghaken toors kûna yev jampaneroon vûra oo tashderoon mech ov vor kûdnes ûsdibe vor ka, vorbeszi doonûs letsvi. Gûsem tsezi, vor arachin hûraviryalneren voch megû im ûntrikes bidi jashage”.

Hisnagi Chorrort Giragi

Boghas Arakyali Goghme
Yeprayetsineroon Kûrvadz Namagen
(1:1-14)

Antsyalin pazmativ ankamner yev pazmativ gerbov Asdvadz mer hayreroon khosetsav markareneroon michotsav, isg ays verchin oreroon mezi khosetsav ir Vortiyin michotsav. Asdvadz zink amen pani zharankort garkets yev anor michotsav er vor diyezerkû ûsdegdhdzets. Vortin, Horû parkin looysû yev anor eyootyan jûshkûrid badgerû, vor ir khoskin zorootyamp diyezerkû gû bahe, ir antsov mer meghkerû sûrpele yedk yerginki mech nûsdav Asdoodzo Kerakooyin Zorootyach ach goghmû.

Aniga shad aveli patsûr e hûreshdagneren, inchbes Asdoodzme iren dûrvadz kerazants anoonû tsooyts gooda, vorovhedev vor meg hûreshdagin yerpevitse Asdvadz ûsav, “Toon im vortis yes, aysor kez dzûna”? Gam vor meg hûreshdagin ûsav, “Yes anor hayr bidi ûllam yev aniga indzi vorti”? Tartsyal, yerp ir antranig Vortin ashkharh gû ghûrger, ûsav, “Asdoodzo polor hûreshdagnerû togh bashden zayn”.

Աստուած իր հրեշտակներուն մասին խօսած ատեն՝ կ'ըսէ.-

«Աստուած իր հրեշտակները ստեղծեց որպէս պատգամաւոր հոգիներ, եւ իրեն ծառայողները՝ կրակի բոցի պէս»:

Մինչդեռ Որդիին կ'ըսէ.-

«Քու արթող, ո՛վ Աստուած, յաւիտենական է. արդարութեամբ կ'իշխես թագաւորութեանդ վրայ: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա թէ ինչու, ո՛վ Աստուած, քու Աստուածդ ուրախութեան իւղով օծեց քեզ, քու ընկերներէդ աւելի»:

Դարձեալ, ուրիշ տեղ մը Որդիին կ'ըսէ.-

«Դուն, ո՛վ Տէր, սկիզբէն ստեղծեցիր երկիրը: Եւ երկինքը քու ձեռագործդ է: Անոնք պիտի կորսուին. բայց դուն կաս եւ կը մնաս: Անոնք հազուստի պէս պիտի մաշին. վերարկուի մը պէս պիտի ծալլես զանոնք եւ հազուստի մը պէս փոխես: Բայց դուն միշտ նոյնն ես եւ քու տարիներդ վերջ պիտի չունենան»:

Բայց հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբեք.-

«Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

Զէ՛ որ հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (17:1-10)

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.

- Գայթակղութիւններ անպայման որ պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով ուրիշներ գայթակղութեան մէջ կ'իյնան: Նախընտրելի պիտի ըլլար, որ իր վիզին ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը նետէին, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր: Հետեւաբար, զգուշացէ՛ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ՛ զինք, եւ եթէ զոջայ՝ ներէ՛ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի դէմ մեղանչէ եւ եօթն անգամ քեզի գալով ըսէ՝

Asdvadz ir hûreshdagneroon masin khosadz aden gûse,

“Asdvadz ir hûreshdagnerû ûsdeghdzets vorbes badkamavor hokiner, yev iren dzarayoghnerû` gûragi potsi bes”.

Minchter Vortiyin gûse,

“Koo atorût, ov Asdvadz, havidenagan e, artarootyamp gishkhes takavorootyanût vûra. Artarootyoonû gû sires yev aniravootyoonû gades. Aha te inchoo, ov Asdvadz, koo Asdvadzût oorakhootyan yooghov odzets kez, koo ûngerneret aveli”.

Tartsyal, oorish degh mû Vortiyin gûse,

“Toon, ov Der, ûsgizpen ûsdeghdzetsir yergirû. Yev yerginkû koo tserakordzût e. Anonk bidi gorsûvin, payts toon gas yev gû mûnas. Anonk hakoosdi bes bidi mashin, verargooyi mû bes bidi dzalles zanonk yev hakoosdi mû bes pokhes. Payts toon mishd nooynûn yes yev koo darinerût verch bidi choonenan”.

Payts hûreshdagneren voroon ûsav yerpek?

“Ach goghmûs nûsde, minchev tûshnaminerût vodkeroot dag tûnem vorbes badvantan”.

Che vor hûreshdagnerû Asdoodzo dzarayogh hokiner yen yev ir goghme gû ghûrgûvin okneloo hamar anonts voronk pûrgootyoonû bidi zharanken.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Ghoogasi (17:1-10)

Hisoos ir ashagerdneroon ûsav,

-Kaytagghootyoonner anbayman vor bidi badahin, payts vay ayn martoon, voroon tserkov oorishner kaytagghootyan mech ginan. Nakhûndûreli bidi ûllar, vor ir vizin chaghatski kar antsûneyin yev zink dzovû nedeyin, kan te ays pokrighneren megû kaytagghetsûner. Hedevapar, ûzkooshatsek. Yete yeghpayrût meghk kordze hantimane zink, yev yete zûghcha nere iren. Nooynisg yete meg orvan mech yotn ankam kezi tem meghanche yev yotn ankam kezi kalov ûse

«Կը զոջամ», պէտք է ներես իրեն:

Առաքեալները ըսին Տիրոջ.

- Աւելցո՛ւր մեր հաւատքը:

Տէրը ըսաւ.

- Եթէ մանանեխի հատիկի մը չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին. «Արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ», պիտի հնազանդի ձեզի:

-Ենթադրենք որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՝ «Անմիջապէս գնա՛, ճաշդ կեր»: Բնականաբար ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. «Ընթրիքս պատրաստ է և գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինծի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ, անկէ ետք կրնաս ուտել ու խմել»: Կը կարծէ՞ք որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ինչ որ հրամայուած է ձեզի, ըսէք. «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք»:

Յիսնակի Չորրորդ Կիրակի

Պողոս Առաքեալի Կողմէ

Եբրայեցիներուն Գրուած Նամակէն

(4:16-5:10)

Ուստի համարձակօրէն մօտենանք Աստուծոյ շնորհքի արժողին, ողորմութիւն գտնելու եւ շնորհք ստանալու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային:

Արդարեւ, ամէն քահանայապետ, որ մարդոց մէջէն կ'ընտրուի, պաշտօն ունի՝ մարդոց կողմէ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց մեղքերուն համար նուէրներ եւ զոհեր մատուցանելու: Եւ որովհետեւ ինք ալ մարդ է, կրնայ հասկնալ մարդոց տգիտութիւնն ու փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց, քանի ինք եւս նոյն տկարութիւնները ունի: Ատոր համար է, որ ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար պէտք է զոհեր մատուցանէ:

“Gû zûghcham”, bedk e neres iren. Arakyalnerû ûsin Diroch,

-Aveltsoor mer havadkû.

Derû ûsav, -Yete mananekhi hadigi mû chap havadk oonenak yev ûsek ays tûteniyin, “Armadakhil yeghir yev dzovoon mech dûngûve”, bidi hûnazanti tsezi.

-Yentatrenk vor tsezme megû dzara mû ooni, vor hoghakordz e gam hoviv. Yerp dzaran tashden tarna yev doon mûdne, derû iren gûse, “Anmichabes kûna, jashût ger?”. Pûnaganapar voch. Ûnthagaragû, anor gûse? “Ûntrikûs badrasde yev koknotsût gabelov ûsbasarge indzi, minchev ûntrikûs verchatsûnem, ange yedk gûrnas oodel oo khûmel”. Gû gardzek vor derû ir dzarayin yerakhdabard bedk e ûlla ir hûrahanknerû gadareloon hamar? Chem gardzer. Took al nooyebes, yerp gû gadarek inch vor hûramayvadz e tsezi, ûsek, “Anbidan dzaraner yenk, inch vor bardavor eyink ûnel gadaretsik”.

Hisnagi Hinkerort Giragi

**Boghos Arakyali Goghme
Yeprayetsineroon Kûrvadz Namagen
(4:16-5:10)**

Oosdi hamartsagoren modenank Asdoodzo shûnorhki atorin, voghormootyoon kûdneloo yev shûnorhk ûsdanaloo hamar, vorbeszi anonk mezi oknen anhûrazheshdootyan barakayin.

Artarev, amen kahanayabed, vor martots mechen gûndûrvi, bashdon ooni martots goghme Asdoodzo hed haraperoortyan mech mûdneloo yev anonts meghkeroon hamar nûverner yev zoher madootsaneloo. Yev vorovhedev ink al mart e, gûrna hasgûnal martots dûkidootyoonûn oo portsarootyoonnerû yev garegtsil anonts, kani ink yevûs nooyen dûgarootyoonnerû ooni. Ador hamar e, vor inchbes zhoghovoortin aynbes al ir sepagan meghkeroon hamar bedk e zoher madootsane.

Գիտէք նաեւ, թէ ոեւէ մէկը չի՝ կրնար ինքն իրեն քահանայապետութեան պատիւը առնել,

այլ՝ Աստուած է որ զայն այդ պաշտօնին կը կանչէ, ճիշդ ինչպէս Ահարոն կոչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ քահանայապետութեան պատիւը, այլ՝ զայն ստացաւ Աստուծմէ, որ իրեն ըսաւ. «*Դուն իմ Որդիս ես. այսօր քեզ ծնայ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Դուն յաւիտեան քահանայ ես, Մելքիսեդեկ քահանային պէս»:*

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք մահուրնէ փրկել: Եւ Աստուած զինք լսեց, որովհետեւ խոնարհ էր ան եւ հնազանդ: Թէպէտ Աստուածորդի էր, բայց իր չարչարանքներու փորձառութեամբ սորվեցաւ՝ թէ ի՛նչ բան է հնազանդութիւնը: Եւ այսպէս, կատարեալ ըլլալէ ետք, յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ բոլոր անոնց համար՝ որոնք իրեն կը հնազանդին, քանի Աստուած զինք քահանայապետութեան կոչած էր, Մելքիսեդեկ քահանային պէս:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (18:9-14)**

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք իրենք իրենց համար այն համարումը ունէին թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին:

- Երկու հոգի տաճար գացին աղօթելու. մէկը՝ Փարիսեցի, միւրը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, ինքնիրեն կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ՝ շաբաթը երկու անգամ ծով կը պահեմ եւ ամբողջ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը հեռուն կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու՝ կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»:

- Կ'ըսեմ ձեզի,- եզրակացուց Յիսուս,-մաքսաւորն է որ արդարացած տուն գնաց,

Kidek nayeve, te voyeve megû chi gûrnar inkû iren kahanayabedootyan badivû arnel, ayl Asdvadz e vor zayn ayt bashdonin gû ganche, jisht inchbes Aharon gochvetsav. Nooynbesh al Krisdos, inkûn iren charav kahanayabedootyan badivû, ayl zayn ûsdatsav Asdoodzme, vor iren ûsav, “Toon im vortis yes, aysor kez dzûna”, isg oorish deghe mû gûse, “Toon havidyan kahana yes, Melkiseteg kahanayin bes”.

Ir yergravor gyanki ûntatskin, Hisoos medz aghaghagov oo artsoonkov aghotets yev aghachets Asdoodzo, vor gûrnar zink mahvûne pûrgel. Yev Asdvadz zink lûsets, vorovhedev khonarh er an yev hûnazant. Tebed Asdvadzorti er, payts ir charcharankneroo portsarootyamp sorvetsav te inch pan e hûnazantootyoonû. Yev aysbes, gadaryal ûllale yedk, havidenagan pûrgootyan badjar yeghav polor anonts hamar` voronk iren gû hûnazantin, kani Asdvadz zink kahanayabedootyan gochadz er, Melkiseteg kahanayin bes.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Ghoogasi (18:9-14)

Ays aragûn al badmets anonts, voronk irenk irents hamar ayn hamaroomû ooneyin te artar yen yev oorishnerû garhamarheyin.

-Yergoo hoki dajar katsin aghoteloo, megû Parisetsi, myoosû maksavor. Parisetsin meg goghm getsadz, inkniren gaghoter, “Asdvadz im, shûnorhagal yem kezme vor oorish martots nûman hapûshdagogh, anirav, shûnatsoogh chem, gam ays maksavorin bes al chem. Ayl shapatû yergoo ankam dzom gû bahem yev ampoghch yegamoodis dasanortû dajarin goodam”. Isg maksavorû heroon getsadz, achkerû arants ver partsratsûneloo goordzkû gû dzedzer yev gûser, “Asdvadz, nere meghavoris meghkerû”.

-Gûsem tsezi, - yezragatsoots Hisoos, - maksavorûn e vor artaratsadz doon kûnats,

եւ ո՛չ թէ Փարիսեցիս. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

Սուրբ Ստեփանոս

Գործք Առաքելոց Գիրքէն (6:8-8:2)

Ստեփանոս Աստուծոյ շնորհքով եւ զօրութեամբ լեցուն մարդ մըն էր, որ ժողովուրդին մէջ մեծամեծ հրաշքներ եւ նշաններ կը կատարէր ցոյց կու տար: Այդ իսկ պատճառով, Լիպիացիներու, Կիրենացիներու, Աղեքսանդրացիներու, Կիլիկեցիներու եւ Ասիացիներու ժողովարանէն կարգ մը Հրեաներ եկան Ստեփանոսի հետ վիճաբանելու: Սակայն չէին կրնար դէմ դնել անոր իմաստուն եւ Սուրբ Հոգիէն ներշնչուած խօսքերուն: Այն ատեն քանի մը հոգի կաշառեցին, որպէսզի անոնք վկայութիւն տան, ըսելով.

- Անձամբ լսեցինք, որ այս մարդը Մովսէսի եւ Աստուծոյ դէմ հայհոյալից խօսքեր կ'ըներ:

Այս ձեւով գրգռեցին ժողովուրդը, երեցները եւ Օրէնքի ուսուցիչները, եւ Ստեփանոսի վրայ յարձակելով՝ զայն բռնեցին Ատեան բերին: Ապա մեջտեղ բերին սուտ վկաները, որոնք կ'ըսէին.

- Այս մարդը անդադար հայհոյալից խօսքեր կ'ընէ այս սրբավայրին եւ Աստուծոյ Օրէնքին դէմ: Անձամբ լսեցինք որ կ'ըսէր՝ թէ Նազովրեցի Յիսուսը պիտի քանդէ այս տաճարը եւ պիտի փոխէ այն աւանդութիւնները որ Մովսէս մեզի տուաւ:

Ատեանին մէջ նստողները իրենց հայեացքը Ստեփանոսի դարձուցին եւ տեսան անոր դէմքը, որ հրեշտակի դէմքի կը նմանէր:

Քահանայապետը հարցուց Ստեփանոսի.

- Իրա՞նք են ըսուածները:

Եւ անիկա պատասխանեց.

- Եղբայրներ եւ հայրեր, մտի՛կ ըրէք ինծի: Երբ Աբրահամ, մեր հայրը, տակաւին Միջագետք կ'ապրէր նախքան Խառան բնակիլը, Աստուած, որուն կը պատկանի փառքը,

yev voch te Parisetsin, vorovhedev ov vor ir
antsû gû partsratsûne bidi khonarhi, yev ov
vor ir antsû khonarhetsûne bidi partsrana.

Soorp Ûsdepanos

Kordzk Arakelots Kirken (6:8-8:2)

Ûsdepanos Asdoodzo shûnorhkov yev
zorootyamp letsoon mart mûn er, vor
zhoghovoortin mech medzamedz hûrashkner
yev nûshanner gû gadarer tsooyts goodar.
Ayt isg badjarov, Libyatsineroo, Girenatsi-
neroo, Agheksantratsineroo, Giligetsineroo
yev Asyatsineroo zhoghovaranen gark mû
hûryaner yegan ûSdepanosi hed vijapaneloo.
Sagayn cheyin gûrnar tem tûnel anor
imasdoon yev Soorp Hokiye nershûn-
chûvadz khoskeroon. Ayn aden kani mû hoki
gasharetsin, vorbeszi anonk vûgayootyoon
dan ûselov,

-Antsamp lûsetsink, vor ays martû Movsesi
yev Asdoodzo tem hayhoyalits khosker
gûner.

Ays tsevov kûrkûretsin zhoghovoortû,
yeretsnerû yev Orenki oosoosichnerû, yev
ûSdepanosi vûra hartsagelov zayn pûrnetsin
Adyan perin. Aba mechdegh perin sood
vûganerû, voronk gûseyin,

-Ays martû antatar hayhoyalits khosker gûne
ays sûrpavayrin yev Asdoodzo Orenkin tem.
Antsamp lûsetsink vor gûser te Nazovretsi
Hisoosû bidi kante ays dajarû yev bidi pokhe
ayn avantoootyoonnerû vor Movses mezi
dûvav.

Adyanin mech nûsdoghnerû irents hayatskû
ûSdepanosi tartsootsin yev desan anor temkû,
vor hûreshdagi temki gû nûmaner.
Kahanayabedû hartsoots ûSdepanosi, -Irav
yen ûsvadznerû?

Yev aniga badaskhanets,

-Yeghpayrner yev hayrer, mûdig ûrek indzi.
Yerp Apraham, mer hayrû, dagavin
Michakedk gabrer nakhkan Kharan pûnagilû,
Asdvadz, voroon gû badgani parkû,

երեւցաւ անոր եւ ըսաւ. «Ե՛լ քու երկրէդ, ձգե՛
քու ազգականներդ եւ եկուր բնակէ այնտեղ՝ որ
ցոյց պիտի տամ քեզի»: Այն ատեն Աբրահամ
Քաղդէացիներու երկրէն ելաւ եւ եկաւ Խառան
բնակեցաւ. իսկ Աբրահամի հօր մահուրնէն
ետք, Աստուած զայն հոնկէ ալ հանեց եւ
փոխադրեց այս երկիրը, ուր հիմա դուք կը
բնակիք: Այս երկրին մէջ թիզ մը հող իսկ
ժառանգութիւն չտուաւ Աբրահամի. սակայն
այս երկիրը որպէս բնակավայր խոստացաւ
տալ իրեն եւ իրմէ ետք իր սերունդին, երբ դեռ
Աբրահամ զաւակ չունէր: Աստուած այսպէս
ըսաւ. «Քու սերունդդ պանդուխտ պիտի ըլլայ
օտար երկրի մը մէջ. պիտի ստրկացնեն եւ
պիտի չարչարեն զայն, չորս հարիւր տարի:
Բայց ես ինքս պիտի դատեմ այն ազգը, որուն
ստրուկ պիտի ըլլան անոնք, - կ'ըսէ Աստուած, -
որմէ ետք պիտի ելլեն հոնկէ եւ այստեղ պիտի
զան զիս պաշտելու համար»: Աստուած
թլփատութեան պատուերը տուաւ Աբրա-
համին, որպէս ուխտի նշան: Այնուհետեւ
Աբրահամ Իսահակը ծնաւ եւ ուրերորդ օրը
զայն թլփատեց: Իսահակ Յակոբը ծնաւ ու
թլփատեց, եւ Յակոբ՝ տասներկու նահապետ-
ները:

Յովսէփի եղբայրները իրեն նախանձելով՝ զայն
Եգիպտոս գացող կարաւանին ծախեցին:
Սակայն Աստուած անոր հետ էր. զայն փրկեց
բոլոր նեղութիւններէն, Եգիպտոսի թագա-
ւորին՝ փարաւոնի աջքին զայն բարձրացուց իր
իմաստութեամբ, եւ Եգիպտոսի ու փարաւոնի
տան վրայ իշխան կարգեց: Ապա երաշտ եղաւ
ամբողջ Եգիպտոսի եւ Քանաանի մէջ. սաստիկ
սով տիրեց եւ մեր հայրերը ուտելիք չէին
գտներ: Յակոբ երբ լսեց թէ Եգիպտոսի մէջ
ուտելիք կարելի է ճարել, հոն դրկեց իր
զաւակները. ասիկա մեր հայրերուն առաջին
այցելութիւնն էր Եգիպտոս: Երկրորդ
անգամին, Յովսէփ ինքզինք յայտնեց իր
եղբայրներուն, եւ փարաւոնը ճանչցաւ անոր
ազգատոհմը: Յովսէփ մարդ դրկեց եւ բերել
տուաւ իր հայրը՝ Յակոբը եւ ամբողջ
գերդաստանը, ընդամենը եօթանասուն հինգ
հոգի:

yerevtsav anor yev ûsav, “Yel koo yergret, tsûke koo azkagannerût yev yegoor pûnage ayndegh vor tsooyts bidi dam kezi”. Ayn aden Apraham Kaghteyatsineroo yergren yelav yev yegav Kharan pûnagetsav, isg Aprahami hor mahvûne yedk, Asdvadz zayn honge al hanets yev pokhatrets ays yergirû, oor hima took gû pûnagik. Ays yergrin mech tiz mû hogh isg jarankootyoon chûdûvav Aprahami, sagayn ays yergirû vorbes pûnagavayr khosdatsav dal iren yev irme yedk ir seroontin, yerp ter Apraham zavag chooner. Asdvadz aysbes ûsav, “Koo seroontût bantookht bidi ûlla odor yergri mû mech, bidi ûsdûrgatsûnen yev bidi charcharen zayn, chors haryoor dari. Payts yes inkûs bidi tadem ayn azkû, voroon ûsdroog bidi ûllan anonk, - gûse Asdvadz, - vorme yedk bidi yellen honge yev aysdegh bidi kan zis bashdeloo hamar”. Asdvadz tûlpadootyan badverû dûvav Aprahamin, vorbes ookhdi nûshan. Aynoohedev Apraham Isahagû dzûnav yev ooterort orû zayn tûlpadets. Isahag Hagopû dzûnav oo tûlpadets, yev Hagop dasnûyergoo nahabednerû.

Hovsepi yeghpayrnerû iren nakhantselov zayn Yekibdos katsogh garavanin dzakhetsin. Sagayn Asdvadz anor hed er, zayn pûrgets polor neghootyooneren, Yekibdosi takavorin` Paravoni achkin zayn partsratsoots ir imasdootyamp, yev yekibdosi oo paravoni dan vûra ishkan garkets. Aba yerashd yeghav ampoghch Yekibdosi yev Kanaani mech, sasdig sov direts yev mer hayrerû oodelik cheyin kûdner. Hagop yerp lûsets te Yekibdosi mech oodelik gareli e jarel, hon ghûrgets ir zavagnerû, asiga mer hayreroon arachin aytselootyoonûn er Yekibdos. Yergrort ankamin, Hovsep ink-zink haydnets ir yeghpayrneroon, yev paravonû janchtsav anor azkadohmû. Hovsep mart ghûrgets yev perel dûvav ir hayrû Hagopû yev ampoghch kertasanû, ûntamenû

Յակոբ Եգիպտոս իջաւ եւ հոն ալ վախճանեցաւ, թէ՛ ինք եւ թէ՛ մեր հայրերը, եւ բոլորին ալ մարմինները Սիւքեմ փոխադրուեցան եւ դրուեցան այն քարայրին մէջ, որ Աբրահամ Սիւքեմի մէջ դրամով գնեց Համորի որդիներէն:

Մեր ժողովուրդը աճեցաւ եւ բազմացաւ Եգիպտոսի մէջ, մինչեւ մօտեցաւ այն ժամանակը, երբ Աստուած Աբրահամին տուած իր խոստումը պիտի կատարէր: Ապա Եգիպտոսի վրայ իշխեց արքայական ուրիշ տուն մը, որ Յովսէփի տան վայելած իրաւունքները չճանչցաւ: Նոր փարաւոնը մեր ազգին դէմ չարացաւ եւ մեր հայրերը չարչարեց՝ անոնց մանուկները գետը նետել տալով, որպէսզի մեռնին: Այդ ժամանակ էր որ ծնաւ Մովսէս, Աստուծոյ աչքին շնորհալի մանուկ մը, որ նախ երեք ամիս իր հօրը տունը մեծցաւ, իսկ երբ գետը նետեցին՝ փարաւոնին աղջիկը զայն գտաւ, որդեգրեց եւ մեծցուց: Մովսէս եգիպտական ամբողջ իմաստութեամբ կրթուեցաւ եւ ազդեցիկ եղաւ թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով: Երբ քառասուն տարիքը բոլորեց, որոշեց իր ազգակից Իսրայէլացիներուն վիճակով հետաքրքրուիլ: Եւ տեսնելով որ անոնցմէ մին կ'անիրաւուի, զայրացաւ եւ անիրաւուածին վրէժը առաւ՝ սպաննելով Եգիպտացին: Կը խորհէր թէ իր ազգակիցները ասիկա իմանալով՝ պիտի հասկնան, թէ իր ձեռքով Աստուած պիտի փրկէ զիրենք. բայց անոնք չհասկցան: Յաջորդ օրը հանդիպեցաւ երկու ազգակիցներու, որոնք կը կռուէին, եւ փորձեց զանոնք հաշտեցնել, ըսելով. «Ո՛վ մարդիկ, իրարու եղբայրներ էք, ինչո՞ւ զիրար կ'անիրաւէք»: Իսկ ան որ իր ընկերը կ'անիրաւէր՝ մէկ կողմ հրեց զինք, պատասխանելով. «Ո՛վ քեզ մեր վրայ իշխան եւ դատաւոր կարգեց: Զի՞ս ալ սպաննել կ'ուզես, ինչպէս երէկ սպաննեցիր Եգիպտացին»: Այս պատասխանին վրայ Մովսէս փախաւ եւ որպէս պանդուխտ ապրեցաւ Մադիամ կոչուած երկրին մէջ, ուր երկու մանչ զաւակ ունեցաւ:

yotanasoon hink hoki. Hagop Yekibdos ichav yev hon al vakhjanetsav, te ink yev te mer hayrerû, yev polorin al marminnerû Syookem pokhatrûvetsan yev tûrvetsan ayn karayrin mech, vor Apraham Syookemi mech tûramov kûnets Hamori vortineren.

Mer zhoghovoortû ajetsav yev pazmatsav Yekibdosi mech, minchev modetsav ayn jamanagû, yerp Asdvadz Aprahamin dûvadz ir khosdoomû bidi gadarer. Aba Yekibdosi vûra ishkhets arkayagan oorish doon mû, vor Hovsepi dan vayeladz iravoonknerû chûjanchtsav.

Nor paravonû mer azkin tem charatsav yev mer hayrerû charcharets` anonts manoognerû kedû nedel dalov, vorbeszi mernin. Ayt zhamanag er vor dzûnav Movses, Asdoodzo achkin shnorhali manoog mû, vor nakh yerek amis ir horû doonû medztsav, isg yerp kedû nedetsin paravonin aghchigû zayn kûdav, vortekrets yev medztsoots. Movses yekibdagan ampoghch imasdootyamp gûrtûvetsav yev aztetsig yeghav te khoskov yev te kordzov. Yerp karasoon darikû polorets, voroshets ir azkagits Israyelatsineroon vijagov hedakûrkûrvil. Yev desnelov vor anontsme min ganiravvi, zayratsav yev aniravvadin vrezhû arav` ûsbannelov Yekibdatsin. Gû khorher te ir azkagitsnerû asiga imanalov bidi hasgûnan, te ir tserkov Asdvadz bidi pûrge zirenk, payts anonk chûhasgûtsan. Hachort orû hantibetsav yergoo azkagitsneroo, voronk gû gûrveyin, yev portsets zanonk hashdetsûnel, ûselov.- “Ov martig, iraroo yeghpayrner ek, inchoo zirar ganiravek”. Isg an vor ir ûngerû ganiraver meg goghm hûrets zink, badaskhanelov, “Ov kez mer vûra ishkan yev tadavor garkets? Zis al ûsbannel goozes? inchbes yereg ûsbannetsir Yekibdatsin”. Ays badaskhanin vûra Movses pakhav yev vorbes bantookhd abretsav Matyam gochvadz yergrin mech, oor yergoo manch zavag oonetsav.

Քառասուն տարիներ ետք, ահա Տիրոջ հրեշտակը իրեն երեւցաւ անապատին մէջ, Սինա լեւան մօտիկը, բոցավառ մորենիի մը մէջէն: Մովսէս նախ զարմացաւ իր տեսածին վրայ. ապա երբ մօտեցաւ աւելի լաւ տեսնելու համար, Տիրոջ ձայնը ըսաւ. «Ես քու հայրերուդ Աստուածն եմ. Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը»: Մովսէս զարհուրած՝ չէր համարձակէր նայիլ: Տէրը անոր հրամայեց. «Կօշիկներդ ոտքերէդ հանէ՛, որովհետեւ այն հողը՝ որուն վրայ կը կանգնիս՝ սուրբ է: Տեսայ Եգիպտոսի մէջ իմ ժողովուրդիս չարչարանքները, լսեցի անոնց հեծութեան ձայնը եւ ահա իջայ որ փրկեմ զանոնք: Արդ, եկո՛ւր, քեզ Եգիպտոս պիտի դրկեմ»:

Այսպէս, այն Մովսէսը որ մերժեցին, ըսելով՝ «Ո՛վ քեզ մեր վրայ իշխան եւ դատաւոր կարգեց», Աստուած զայն որպէս իշխան եւ փրկիչ դրկեց այն հրեշտակին միջոցաւ, որ Մովսէսի երեւցաւ մորենիին մէջէն: Մովսէս Եգիպտոսէն հանեց մեր ժողովուրդը, նշաններ եւ հրաշքներ կատարելով թէ՛ Եգիպտոսի մէջ, թէ՛ Կարմիր Ծովէն անցքին եւ թէ՛ անապատին մէջ քառասուն տարիներու ընթացքին: Նոյն Մովսէսն էր որ Իսրայէլացիներուն ըսաւ. «Ձեր մէջէն Աստուած ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ, անոր մտիկ ըրէք»: Մովսէսն էր որ անապատին մէջ հաւաքուած մեր ժողովուրդին համար միջնորդութիւն կ'ըներ մեր հայրերուն եւ հրեշտակին միջեւ, որ Սինա լեւան վրայ անոր հետ խօսեցաւ: Ան էր որ Աստուծոյ կենսատու պատգամները տուաւ մեզի: Սակայն մեր հայրերը չուզեցին Մովսէսի հնազանդիլ, այլ՝ անտեսեցին զինք եւ սկսան Եգիպտոսը փնտռել: Ահարոնին ըսին. «Մեզի աստուածներ շինէ, որպէսզի մեզ առաջնորդեն. որովհետեւ չենք գիտեր թէ ի՛նչ եղաւ այդ Մովսէսը, որ մեզ Եգիպտոսէն հանեց»: Նոյն այդ օրերուն հորթի կերպարանքով կուոք մը շինեցին, անոր զոհ մատուցանեցին եւ իրենց ձեռքով շինուած այդ կուոքով կ'ուրախանային:

Karasoon dariner yedk, aha Diroch hûreshdagû iren yerevtsav anabadin mech, Sina leran modigû, potsavar moreniyi mû mechen. Movses nakh zarmatsav ir desadzin vûra, aba yerp modetsav aveli lav desneloo hamar, Diroch tsaynû ûsav, “Yes koo hayreroot Asdvadz yem, Aprahami, Isahagi yev Hagopi Asdvadzû”. Movses zarhooradz`cher hamartsager nayil. Derû anor hûramayets, “Goshignert vodkeret hane, vorovhede v ayn hoghû voroon vra gû ganknis soorp e. Desa Yekibdosi mech im zhoghovoortis charcharanknerû, lûsetsi anonts hedzootyan tsaynû yev aha icha vor pûrgem zanonk. Art, yegoor, kez Yekibdos bidi ghûerdem”.

Aysbes, ayn Movsesû vor merzhetsin, ûselov “Ov kez mer vûra ishkhan yev tadavor garkets”, Asdvadz zayn vorbes ishkhan yev pûrgich ghûrgets ayn hreshdagin michotsav, vor Movsesi yerevtsav moreniyin mechen. Movses Yekibdosen hanets mer zhoghovootrû, nûshanner yev hûrashkner gadarelov te Yekibdosi mech, te Garmir Dzoven antskin yev te anabadin mech karasoon darineroo ûntatskin. NooyN Movsesûn er vor Israyelatsineroon ûsav, “Tser mechen Asdvadz indzi bes markare mû bidi hane, anor mûdig ûrek”. Movsesûn er vor anabadin mech havakvadz mer zhoghovoortin hamar michnortootyoon gûner mer hayreroon yev hreshdagin michev, vor Sina leran vûra anor hed khosetsav. An er vor Asdoodzo gensadoo badkamnerû dûvav mezi. Sagayn mer hayrerû choozetsin Movsesi hûnazantil, ayl andesetsin zink yev ûsgsan Yekibdosû pûndûrel. Aharonin ûsin, “Mezi Asdvadzner shine, vorbeszi mez arachnorten, vorovhede v chenk kider te inch yeghav ayt Movsesû, vor mez Yekibdosen hanets”. NooyN ayt oreroon horti gerbarankov goork mû shinetsin, anor zoh madootsanetsin yev irents tserkov shinvadz ayt goorkov goorakhanayin.

Աստուած ալ երես դարձուց իրենցմէ եւ ձգեց որ երկնային մարմինները պաշտեն: Այդ է պատճառը, որ մարգարեական գիրքը կ'ըսէ.-

«Ո՛վ Իսրայէլացիներ, միթէ անապատին մէջ քառասուն տարի ձեր զոհերն ու նուէրները ինծի՝ մատուցանեցիք: Մողորքի վրանը եւ Ռեմֆանի՝ աստղ-աստուծոյն պատկերները շինեցիք եւ անոնց երկրպագութիւն ըրիք: Այդ իսկ պատճառով ձեզ Բաբելոնէն ալ անդին պիտի արքայեմ»:

Գալով Վկայութեան Խորանին, մեր հայրերը զայն անապատին մէջ շինեցին այնպէս՝ ինչպէս Մովսէսի հետ խօսող հրեշտակը պատուիրեց, եւ այն օրինակով՝ որ Մովսէսի ցոյց տրուեցաւ: Մեր հայրերը իրենց կարգին զայն ստացան իրենց հայրերէն եւ Յեսուի օրով իրենց հետ բերին այս երկիրը, որ գրաւեցին այն ազգերէն՝ որոնք Աստուծոյ օգնութեամբ դուրս քշուեցան մեր հայրերուն առջեւէն: Այսպէս, Վկայութեան Խորանը հասաւ մինչեւ Դաւիթի օրերը: Դաւիթ Աստուծոյ հաճութիւնը շահեցաւ եւ ուզեց յարմար վայր մը գտնել Յակոբի Աստուծոյն տուն մը կանգնելու, եւ Մողոմոն այս տաճարը շինեց Աստուծոյ համար: Սակայն բարձրեալն Աստուած ձեռագործ տաճարներու մէջ չէ որ կը բնակի, ինչ որ մարգարէն ալ կ'ըսէ.-

«Երկինքն է իմ աթոռս, իսկ երկիրը՝ ոտքերուս պատուանդանը: Ի՞նչպիսի տուն պիտի շինեք ինծի համար,- կ'ըսէ Տէրը,- կամ ո՞ր պիտի ըլլայ իմ հանգստավայրս»:

Չէ՞ որ այս բոլորը իմ ստեղծածներս են»:

Ի՛նչքան յամառ էք դուք, որ բնաւ չէք զղջար եւ Աստուծոյ կանչը չէք լսեր, եւ այսպէս միշտ Սուրբ Հոգիին կը հակառակիք, ինչպէս ձեր հայրերը կ'ընէին անցեալին: Եղաւ մարգարէ մը որ ձեր հայրերը չհալածեցին: Անոնք սպաննեցին բոլոր այն մարգարէները, որոնք կանուխէն պատմեցին Արդարին գալուն մասին. այն Արդարին, որ դուք ձեր ձեռքով մահուան դատապարտեցիք եւ սպաննեցիք:

Asdvadz al yeres tartsoots irentsme yev tsûkets vor yergnayin marminnerû bashden. Ayt badjarû vor markareyagan kirkerû gûse,-
“Ov Israyelatsiner, mite anabadin mech karasoon dari tser zohern oo nûvernerû indzi madootsanetsik?

Moghoki vranû yev Remfani asdgh-asdoodzooyin badgernerû shinetsik yev anonts yergûgbakootyoon ûrik. Ayt isg badjarov tsez Papelonon al antin bidi aksorem”.

Kalov Vûgayootyan Khoranin, mer hayrerû zayn anabadin mech shinetsin aynbes` inchbes Movsesi hed khosogh hreshdagû badvirets, yev ayn orinagov vor Movsesi tsooyts dûrvetsav. Mer hayrerû irents garkin zany ûsdatsan irents hayreran yev Hesooyi orov irents hed perin ays yergirû, vor kravetsin ayn azkeren voronk Asdoodzo oknootyamp toors kûshvetsan mer hayreroon archeven. Aynbes, Vûgayootyan Khoranû hasav minchev Taviti orerû. Tavit Asdoodzo hajootyoonû shahetsav yev oozets harmar vayr mû kûdnel Hagopi Asdoodzooyin doon mû gankneloo, yev Soghomon ays dajarû shinets Asdoodzo hamar. Sagayn partsyaln Asdvadz tserakordz dajarneroon mech che vor gû pûnagi, inch vor markaren al gûse,-
“Yerginkn e im ators, isg yergirû vodkeroos badvantanû.

Inchbisi doon bidi shinek indzi hamar,- gûse Derû,- gam oor bidi ûlla im hankûsdavayrûs? che vor ays polorû im ûsdegdhdzadzners yen?”.

Inchkan hamar ek took, vor pûnav chek zûghchar yev Asdoodzo ganchû chek lûser, yev aysbes mishd Soorp Hokiyin gû hagaragik, inchbes tser hayrerû gûneyin antsyalin. Yeghav markare mû vor tser hayrerû chûhaladzetsin? Anonk ûsbannetsin polor ayn markarenerû, voronk ganookhen badmetsin Artarin kaloon masin, ayn Artarin, vor took tser tserkov mahvan tadabardetsik yev ûsbanetsik.

Կը պարծենաք որ հրեշտակներու ձեռքով ստացաք Օրէնքը, եւ սակայն բնաւ չկատարեցիք զայն:

Այս խօսքերը լսելով, ներկաները ներքնապէս զայրացան եւ սկսան իրենց ակռաները կրճտել անոր դէմ: Մինչ Ստեփանոս, Սուրբ Հոգիով լեցուած, աչքերը երկինք բարձրացուց եւ տեսաւ զԱստուած իր ամբողջ փառքով, ինչպէս նաեւ Յիսուսը՝ Աստուծոյ աջին կանգնած, եւ ըսաւ.

- Ահա բացուած է երկինքը, եւ կը տեսնեմ Մարդու Որդին որ Աստուծոյ աջին կանգնած է: Ատեան գտնուողները մեծ աղաղակ բարձրացուցին, զոցեցին իրենց ականջները եւ բոլորը միասին անոր վրայ յարձակեցան: Յետոյ զայն քաղաքէն դուրս հանելով՝ սկսան քարկոծել: Վկաները իրենց թիկնոցները կը յանձնէին երիտասարդի մը, որ Սօդոս կը կոչուէր: Մինչ անոնք կը քարկոծէին, Ստեփանոս այսպէս կ'աղօթէր.

- Տէ՛ր Յիսուս, ընդունէ՛ իմ հոգիս:

Յետոյ ծունկի եկաւ եւ բարձրաձայն աղաղակեց.

- Տէ՛ր, ներէ՛ իրենց այս մեղքը:

Եւ հազիւ ըսած՝ մահուամբ աչքերը փակեց: Ստեփանոսի քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սօդոսն էր:

Նոյն օրը Երուսաղէմի եկեղեցւոյ դէմ մեծ հալածանք սկսաւ, որուն հետեւանքով՝ բացի առաքեալներէն բոլոր միւսները ցրուեցան Հրէաստանի եւ Սամարիայի գիւղերը: Իսկ քանի մը բարեպաշտներ Ստեփանոսի մարմինը տարին թաղեցին, մեծ կոճ ընելով անոր վրայ:

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ Յովհաննէսի (12:23-26)

Յիսուս պատասխանեց անոնց.

- Ահա Մարդու Որդին փառաւորուելու ժամը հասաւ: Վստահ գիտցէք, որ եթէ ցորենի հատիկը հողին մէջ չիյնայ եւ չմեռնի, ինք որպէս առանձին հատիկ կը մնայ, իսկ եթէ մեռնի՝ բազմաթիւ հատիկներ կու տայ: Ով որ իր անձը կը սիրէ՝ կը կորսնցնէ զայն, իսկ ով որ

Gû bardzenak vor hreshdagneroo tserkov
ûsdatsak orenkû, yev sagayn pûnav
chûgadaretsik zayn.

Ays khoskerû lûselov, nerganerû nerknabes
zayratsan yev ûsgûsan irents agranerû
gûjûrdel anor tem. Minch ûSdepanos, Soorp
Hokiyov letsvadz, achkerû yergink
partsatsoots yev desav zAsdvadz ir
ampoghch parkov, inchbes nayev Hisoosû
Asdoodzo achin ganknadz, yev ûsav,
-Aha patsvadz e yerginkû, yev gû desnem
Martoo Vortin vor Asdoodzo achin ganknadz
e.

Adyan kûdnûvoghnerû medz aghaghag
partsratsootsin, kotsetsin irents aganchnerû
yev polorû miyasin anor vûra hartsagetsan.
Hedo zayn kaghaken toors hanelov` ûsgûsan
kargodzel. Vûganerû irents tignotsnerû gû
hantsneyin yeridasarti mû, vor Soghos gû
gochver.

Minch anonk gû kargodzeyin, ûSdepanos
aysbes gaghoter.

-Der Hisoos, ûntoone im hokis.

Hedo dzoongi yegav yev partsratsayn
aghaghagets,

-Der nere irents ays meghekû.

Yev haziv ûsadz mahvamp achkerû pagets.

ûSdepanosi kargodzoomû bahanchoghneren
megûn al Soghosûn er.

Nooyn orû Yeroosaghemi yegeghetsvo tem
haladzank ûsgsav, voroon hedevankov patsi
arakyalneren polor myoosnerû tsûrvatsan
Hûreyasdani yev Samaryayi kyoogherû. Isg
kani mû parebashdner ûSdepanosi marminû
darin taghetsin, medz godz ûnelov anor vûra.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Hovhannesi (12:23-26)

Aha Martoo Vortiyin paravorveloo zhamû
hasav. Vûsdah kidtsek, vor yete tsoreni
hadigû hoghin mech chiyna yev chûmerni,
ink vorbes arantsin hadig gû mûna, isg yete
merni pazmativ hadigner gooda. Ov vor ir
antsû gû sire gû gorsûntsûne zayn, isg ov vor

իր անձը կ'անտեսէ այս աշխարհի վրայ՝ զայն
յաւիտենական կեանքին համար պահած
կ'ըլլայ: Ով որ ուզէ ինծի ծառայել՝ պէտք է ինծի
հետեւի, եւ ինծի ծառայողը պիտի ըլլայ ինն՝
ուր ես կը գտնուիմ: Եւ Հայրս պիտի պատուէ
ինծի ծառայողը:

Յիսնակի Վեցերորդ Կիրակի

Պօղոս Առաքեալի Կողմէ

Եբրայեցիներուն Գրուած Նամակէն

(7:11-25)

Գիտենք, թէ Ղեւտացիներու քահանայութիւնն
էր հիմը սրբութեան այն օրէնքին, որ Իսրայէլի
ժողովուրդին տրուեցաւ: Արդ, եթէ կարելի
ըլլար այդ քահանայութեան միջոցաւ
կատարելութեան հասնիլ, Աստուած ի՞նչ
պէտք պիտի ունենար նոր քահանայապետ մը
տալու Մելքիսեդեկի օրինակով եւ ոչ
Ահարոնի քահանայութեան շարունակութե-
նէն: Միւս կողմէ, քահանայութեան փոխուե-
լուն հետ սրբութեան օրէնքն ալ պէտք էր
փոխուէր. որովհետեւ Քրիստոս, որուն մասին
կը խօսուի, կը պատկանէր ուրիշ ցեղի մը,
որուն անդամներէն ո՛չ մէկը քահանայութեան
պաշտօնը ստանձնեց երբեւիցէ: Արդ, յայտնի է՝
թէ մեր Տէրը Յուդայի ցեղէն էր, մինչդէռ այդ
ցեղէն զալիք քահանայութեան մը մասին
Մովսէս ռեւէ բան չըսաւ:

Փոփոխութիւնը աւելի բացորոշ է անով՝ որ կը
յայտնուի քահանայ մը որ Մելքիսեդեկի նման
է. այսինքն՝ մարմնաւոր կեանքի յատուկ
օրէնքներու եւ կարգերու համաձայն չէ՝ որ
քահանայ եղած է, այլ՝ յաւիտենական կեանքի
մէջ ի գօրու եղող օրէնքով: Անոր մասին վկայեց
Սուրբ գիրքը, ըսելով. «Դուն յաւիտեան
քահանայ ես, Մելքիսեդեկին պէս»: Բացայայտ
է, թէ նախկին պատուիրանը մէկդի կը դրուի,
անգոր եւ անօգուտ ըլլալուն համար,
որովհետեւ Օրէնքը չկրցաւ ռեւէ բան
կատարելութեան հասցնել. եւ հիմա մեզի
տրուեցաւ աւելի լաւ յոյս մը, որով Աստուծոյ կը
մօտենանք:

ir antsû gandese ays ashkharhi vûra zayn havidenagan gyankin hamar bahadz gûlla. Ov vor ooze indzi dzarayel` bedk e indzi hedevi, yev indzi dzarayoghû bidi ûlla hon oor yes gû kûdnûvim. Yev Hayrûs bidi badve indzi dzarayoghû.

Hisnagi Vetserort Giragi

Boghos Arakyali Goghme
Yeprayetsineroon Kûrvadz Namagen
(7:11-25)

Kidenkk, te Ghevdatsineroo kahanayootyoonûn er himû sûrpootyan ayn orenkin, vor Israyeli zhoghovoortin dûrvetsav. Art, yete gareli ûllar ayt kahanayootyan michotsav gadareloutyan hasnil, Asdvadz inch bedk bidi oonenar nor kahanayabed mû daloo Melkisetegi orinagov yev voch Aharoni kahanayootyan sharoonagootenen. Myoos goghme, kahanayootyan pokhveloon hed sûrpootyan orenkûn al bedk er pokhver, vorovhedev Krisdos, voroon masin gû khosvi, gû badganer oorish tseghi mû, voroon antamneren voch megû kahanayootyan bashdonû ûsdantsnets yerpevitse. Art, haydni e` te mer Derû Hootayi tseghen er, minchter ayt tseghen kalik kahanayootyan mû masin Movses voyeve pan chûsav.

Popokhootyoonû aveli patsorosh e anov vor gû haydnûvi kahana mû vor Melkisetegi nûman e, aysinkûn marmnavor gyanki hadoog orenkneroo yev garkeroo hamatsayn che vor kahana yeghadz e, ayl havidenagan gyanki mech i zoroo yeghogh orenkov. Anor masin vûgayets Soorp kirkû, ûselov, “Toon havidyan kahana yes, Melkisetegin bes”. Patsahayd e, te nakhgin badviranû megti gû tûrvi, anzor yev anokood ûllaloon hamar, vorovhedev Orenkû chûgûrtsav voyeve pan gadareloutyan hastsûnel, yev hima mezi dûrvetsav aveli lav hooys mû, vorov Asdoodzo gû modenank.

Աւելին, այս նոր քահանայութիւնը երդումով տրուեցաւ, մինչդեռ միւսներուն քահանայութիւնը երդումով տրուած չէ: Քրիստոս քահանայ եղաւ Աստուծոյ երդումով, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ.-

«Տէրը անդառնալի երդում ըրաւ, ըսելով. Դուն յաւիտեան քահանայ ես»:

Եւ այսպէս, Յիսուս գերագանց ուխտի մը երաշխաւորը եղաւ:

Ի վերջոյ, միւս քահանաները թիւով շատ կ'ըլլային, որպէսզի մէկուն կամ միւսին մահով քահանայութիւնը չընդհատուէր: Բայց որովհետեւ Յիսուս յաւիտեան կ'ապրի, իր քահանայութիւնն ալ անվախճան է: Ուստի՝ նաեւ կրնայ վերջնականապէս փրկել անոնք՝ որոնք իր միջոցաւ Աստուծոյ կու գան, որովհետեւ միշտ կենդանի ըլլալով՝ տեսաբար բարեխօս կ'ըլլայ անոնց համար:

**Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Հստ
Ղուկասի (19:11-28)**

Մինչ ժողովուրդը անոր ըսածները մտիկ կ'ընէր, Յիսուս իր խօսքը շարունակեց, եւ Երուսաղէմի մօտեցած ըլլալով ու գիտնալով որ ժողովուրդը կը կարծէ թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի, հետեւեալ առակը պատմեց անոնց.

-Ազնուական մարդ մը կար, որ հեռաւոր երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխան-ութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ: Նախ քան մեկնիլը, կանչեց իր ծառաներէն տասը հոգի եւ իւրաքանչիւրին տասը ոսկի դրամ տուաւ եւ ըսաւ. «Ծահարկեցէ՛ք այս դրամը, մինչեւ վերադարձս»: Բայց իր քաղաքացիները կ'ատէին զինք. հետեւաբար պատգամաւոր դրկեցին իր ետեւէն, ըսելով. «Զե՛նք ուզեր որ ան մեր վրայ թագաւոր դառնայ»:

Երբ ազնուականը թագաւորական իշխան-ութիւնը առաւ եւ վերադարձաւ, անմիջապէս կանչեց իր ծառաները, որոնց դրամ տուած էր, գիտնալու համար թէ ի՞նչ շահած են: Առաջինը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, մէկ տուածիդ դեմ տասը շահեցայ»: Տէրը ըսաւ. «Ապրի՛ս, բարի՛ ծառայ, քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա քեզ տասը քաղաքներու վրայ

Avelin, ays nor kahanayootyoonû yertoovom dûrvetsav, minchter mouysneroon kahanayootyoonû yertoovom dûrvadz che, inchbes Soorp kirkû gûse,-

“Derû antarnali yertoovom ûrav, ûselov, Toon havidyan kahana yes”.

Yev aysbes, Hisoos kerazants ookhdi mû yerashkhavorû yeghav.

I vercho, myoos kahannanerû tivov shad gûllayin, vorbeszi megoon gam myoosin mahov kahanayootyoonû chûnthadver. Payts vorovhedev Hisoos havidyan gabri, ir kahanayootyoonûn al anvakhjan e. Oosdi nayev gûrna verchnaganabes pûrgel anonk voronk ir michotsav Asdoodzo gookan, vorovhedev mishd gentani ûllalov devapar parekhos gûlla anonts hamar.

Hisoos Krisdosi Avedaranen Êsd Ghoogasi (19:11-28)

Minch zhoghovoortû anor ûsadznerû mûdig gûner, Hisoos ir khoskû sharonagets, yev Yeroosaghemî modetsadz ûllalov oo kidnalov vor zhoghovoortû gû gardze te Asdoodzo arkayootyoonû shoodov bidi haydnûvi, hedevyal aragû badmets anonts, -Aznûvagan mart mû gar, vor heravor yergir mû kûnats vorbeszi takavoragan ishkhanootyoon arne yev ir yergirû veratarna. Nakh kan megnilû, ganchets ir dzaraneren dasû hoki yev ouyrakanchourin dasû vosgi tûram dûvav yev ûsav, “Shahargetsek ays tûramû, minchev veratartsûs”. Payts ir kaghakatsinerû gadeyin zink, “Chenk oozar vor an mer vûra takavor tarna”.

Yerp aznûvaganû takavoragan ishkhanootyoonû arav yev veratartsav, anmichabes ganchets ir dzaranerû, voronts tûram dûvadzer, kidnaloo hamar te inch shahadz yen. Arachinû yegav yev ûsav, “Der, meg dûvadzit tem dasû shahetsa”. Derû ûsav, “Abrîs, pari dzara, kani ayt pokrig panin mech havadarim kûdnûvetsar, aha kez dasû

կառավարիչ կը նշանակեմ»: Երկրորդ ծառան ալ եկաւ եւ ըսաւ. «Մէկ տուածիդ դէմ հինգ շահեցայ»: Տէրը ըսաւ. «Քեզ ալ հինգ քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երրորդը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ, զայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած: Կը վախճայի քեզմէ, որովհետեւ խիստ մարդ մըն ես: Կ’առնես ինչ որ քուկդ չէ եւ կը հնձես ինչ որ չես սերմանած»: Տէրը ըսաւ անոր. «Զա՛ր ծառայ, քու խօսքովդ քեզ պիտի դատեմ: Քանի գիտէիր որ խիստ մարդ մըն եմ, կ’առնեմ ինչ որ իմա չէ եւ կը հնձեմ ինչ որ չեմ սերմանած, ինչո՞ւ դրամս շահարկողներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ թէ վերադարձիս զայն տոկոսով միասին պիտի պահանջէի»:

Ապա սպասաւորներուն ըսաւ. «Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէք տուէք անոր՝ որ տասնապատիկը շահած է»: Անոնք ըսին. «Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը ունի»: «Գիտցէք», - ըսաւ ան, - «ունեցողին աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի ունեցած ամենէն փոքր բաժինն ալ: Իսկ իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց թագաւոր ըլլամ, հոս բերէք եւ իմ ներկայութեանս սպաննեցէք զանոնք»:

Այս խօսքը ըսելէ ետք Յիսուս շարունակեց իր ճամբան դէպի Երուսաղէմ:

kaghakneroo vûra garavarich gû nûshanagem”. Yergroort dzaran al yegav yev ûsav, “Meg dûvadzit tem hink shahetsa”.

Derû ûsav, “Kez al hink kaghakneroo vûra garavarich gû nûshanagem”. Yerrorî yegav yev ûsav, “Der, ahavasig dûvadz tûramût, zayn bahetsi tashginagi mû mech dzûraradz. Gû vakhnayi kezme, vorovhedev khisd mart mûn yes. Garnes inch vor koogût che yev gû hûntses inch vor ches sermanadz”. Derû ûsav anor, “Char dzara, koo khoskovût kez bidi tadem. Kani kideyir vor khisd mart mûn yem, garnem inch vor imûs che yev gû hûntsem inch vor chem sermanadz, inchoo tûramûs shahargoghneroon chûdûvir? kani kideyir nayeve te veratartsis zayn dogosov miyasin bidi bahanchevi”.

Aba ûsbasavorneroon ûsav, “Arek irme tûramû yev darek dûvek anor vor dasnabadigû shahadz e”. Anonk ûsin, “Der aniga arten dasnabadigû ooni”. “Kidtsek”, - ûsav an, - “oonetsoghin aveliyov bidi dûrvi, isg choonetsoghen bidi arnûvi oonetsadz amenen pokûr pazhinûn al. Isg im tûshnaminerûs, voronk cheyin oozer vor irents takavorû ûllam, hos perek ye vim nergayootyans ûsbannetsek zanonk”.

Ays khoskû ûsele yedk Hisoos sharoonagets ir jampan tebi Yeroosaghem.